ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ

ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ՄԱՍ Ա. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 8

ԳԼՈՒԽ 1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ 9

1.1 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 9

1.2 ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ 10

1.3 ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 10

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ 12

2.1 ԲԱՐՁՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՍՑԵՆԱՐ 12

2.2 ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ 22

2.2.1. Ներածություն 22

2.2.2. Համախառն առաջարկ 24

2.2.3. Համախառն պահանջարկ 33

2.2.4. Գնային փոփոխականներ..... 36

2.2.5. Ֆինանսական շուկա 38

2.2.6. Վճարային հաշվեկշիռ 42

2.2.7. Պետական հատված 51

2.3 ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆ ՀՆԱ-Ի ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԱՆԱԿԱՆԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ 58

2.3.1. Ենթադրությունները, որոնք ընկած են տնտեսական կանխատեսումների հիմքում..... 58

2.3.2. Կանխատեսումներում առկա ռիսկերը 58

2.4 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎՐԱ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՑ ՇԵՂՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 64

2.4.1. 2020-2022 թվականներին ՄԺԾԾ հարկային եկամուտների վրա ազդող կանխատեսված մակրոտնտեսական ցուցանիշներից շեղման ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը..... 64

2.4.2. Պետական բյուջեի վրա կանխատեսված մակրոտնտեսական ցուցանիշներից շեղման ռիսկերի ազդեցության ընդհանուր գնահատականը և դրանց մեղմման հնարավորությունները 71

ԳԼՈՒԽ 3. ՀՀ 2020-2022ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ 73

3.1 ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 73

3.2 ՀՀ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ 74

ԳԼՈՒԽ 4. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ 79

4.1 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ.....79

4.2 ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓԱԹԵԹՈՒՄ 2020-2022ԹԹ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 80

4.3 2020-2022ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ 81

ՄԱՍ Բ. ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 85

ԳԼՈՒԽ 5. ՀՀ 2020-2022ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 86

5.1 ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐ 88

5.2 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ.....92

5.2.1 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 92

5.2.2 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ 114

5.2.3 ՄՇԱԿՈՒՅԹ 121

5.2.4 ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ 139

5.3 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 146

5.4 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 159

5.5 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ 172

5.6 ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ..... 179

5.7 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 188

5.8 ԷԿՈՆՈՄԻԿԱ..... 213

5.9 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ 230

5.10 ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ 233
5.10.1 ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 233
5.10.2 ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ 233
5.10.3 ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏՆԳՈՒԹՅՈՒՆ 238
5.11 ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ 248
5.12 ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 254
5.13 ՖԻՆԱՆՍՆԵՐ 264
5.14 ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 275
5.15 ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ 281
5.16 ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 285
5.17 ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 290
5.18 ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ 292
5.19 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ 296
5.20 ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ 301
5.21 ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 309
5.22 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ 315
5.23 ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 321
5.24 ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 324
5.25 ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ 327
5.26 ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 329

ԳԼՈՒԽ 6. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ 333

ԳԼՈՒԽ 7. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ 2019-2023թթ. ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԾՐԱԳԻՐ 375

ՀԱՎԵԼՎԱԾ N 1. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ 2017-2018ԹԹ. ՓԱՍՏԱՑԻ, 2019Թ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԵՎ 2019-2022ԹԹ. ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 397

ՀԱՎԵԼՎԱԾ N N 2. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 400

ՀԱՎԵԼՎԱԾ N 3. ՀՀ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳԼԽԱԴԱՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ.....421

ՀԱՎԵԼՎԱԾ N 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՆ՝ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՏԱՐՐԵՐԻ.....432

ՀԱՎԵԼՎԱԾ N 5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ.....445

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կառավարության հիմնական խնդիրներից է պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման իրատեսականությունը և նոր քաղաքական իրավիճակով պայմանավորված

եկամուտների հավաքագրման, ստվերի կրճատման, ծախսերի արդյունավետության բարձրացման լավատեսությունը «հոմանիշներ» դարձնելը: Քաղաքական նոր մոտեցումների նպատակադրման տեսանկյունից հատկապես կարևորվում են Կառավարության կողմից ստվերային տնտեսության դեմ անզիջում պայքարն ու պետական եկամուտների՝ ծրագրավորվածից էականորեն բարձր կատարողականի ապահովումը: Պետական եկամուտների քաղաքականության ոլորտում Կառավարությունը նախատեսում է կանխատեսելի հարկային միջավայրի ձևավորում, գործարար միջավայրի շարունակական բարելավում, ներդրումների կատարումը խթանելու նպատակով կապիտալի և եկամտի հարկումից աստիճանաբար սպառման հարկման վրա շեշտադրում:

Ուստի, թեպետև միջնաժամկետ ծախսերի ծրագրում 2020 թվականին 2019 թվականի հետ համեմատած կանխատեսվում է հարկեր/ՀՆԱ ցուցանիշի ընդամենը 0.5 տոկոսային կետով բարելավում (այն կկազմի 23.2 տոկոս) և անվանական հարկերի 157.3 մլրդ դրամով աճ, այնուհանդերձ պետք է ամրագրել, որ քաղաքական նոր իրողությունը այլ գործողություններ և այլ ցուցանիշներ է պարտավորեցնում:

Պետական մարմիններն առաջիկայում ձեռնամուխ են լինելու ծախսերի արդյունավետության մանրազնին ուսումնասիրմանը և ոլորտային առաջնահերթությունների վերանայմանը՝ հիմնվելով տարբեր ոլորտներում իրականացվող քաղաքականությունների ախտորոշման արդյունքների վրա, ինչն անպայմանորեն իր արտացոլումն է ստանալու առաջիկա տարիների պետական բյուջեների նախագծերում:

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրումը շարունակական գործընթաց է և, ըստ էության, իրենից ներկայացնում է «քաղաքականությունների ձևակերպում - պլանավորում – բյուջետավորում» տրամաբանական ամբողջական շղթա: Այն հնարավորություն է ընձեռում մեղմել հասանելի բյուջետային ռեսուրսների և պահանջվող ծախսերի միջև հնարավոր անհամապատասխանությունը, ինչպես նաև պետական ծախսերում կատարել առանձին բնագավառներում իրականացվող պետական քաղաքականության փոփոխություններին համարժեք փոփոխություններ: Այս առումով արդարացված է, որ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (այսուհետ՝ նաև ՄԺԾԾ) մշակումը (և/կամ վերանայումը), ըստ ժամանակի, նախորդում է տարեկան պետական բյուջեի նախագծի մշակմանը՝ դառնալով տարեկան պետական բյուջեների կազմման ուղեցույց:

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրումը ենթադրում է՝

(i) մակրոտնտեսական կայուն միջավայրին համապատասխանող բյուջետային ռեսուրսների (մուտքերի) համապարփակ և իրատեսական գնահատում,

(ii) քաղաքականությունների իրականացման նպատակով կատարվող ծախսերի՝ վարից վեր մոտեցմամբ գնահատում,

(iii) հասանելի բյուջետային ռեսուրսների և պահանջվող ծախսերի ներդաշնակության ապահովում համապատասխան մեխանիզմների օգնությամբ:

2020-2022թթ պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրումը ներառում է նաև ծրագրավորման հիմքում դրված կանխատեսումների իրականացման հետ կապված ռիսկերի բացահայտման և ներկայացման գործընթացը: Վերը նշված ռիսկերը հանգամանալի ձևով ներկայացված են սույն ծրագրի մակրոտնտեսական, հարկաբյուջետային կանխատեսումներին, ինչպես նաև պետական պարտքի կառավարման ռազմավարությանը վերաբերող գլուխներում, իսկ ռիսկերի համառոտագիրը ներկայացված է սույն ծրագրի N 2 հավելվածում:

ՀՀ 2020 – 2022թթ ՄԺԾԾ-ի մշակման գործընթացը կանոնակարգվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ վարչապետի 2019 թվականի մարտի 22-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N 289-Ա որոշմամբ սահմանված ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված մեթոդական ցուցումներով:

ՄԱՍ Ա. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1.1 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվի առնելով նախորդ տարիներին ՀՀ տնտեսության և քաղաքականության խնդիրների ախտորոշումը՝ միջնաժակմետ ծախսերի ծրագրի հիմքում էական փոփոխություն է նախագծվել: Միջնաժամկետ հորիզոնում չնայած հարկաբյուջտային քաղաքականությունը սահմնափակված է պարտքի կայունության ապահովման անհրաժեշտությամբ, սակայն այնուհանդերձ կառավարությունը հիմք ընդունելով նախորդ տարիներին քաղաքականության ոլորտում բացահայտված հիմ-նախնդիրները նախագծել է այնպիսի հարկաբյուջետային քաղաքականություն, որը համահունչ կլինի տնտեսագիտության մեջ հայտնի «ոսկյա կանոնին»: Սա այն քաղաքականությունն է, որը թույլ կտա պարտքի կայունության ապահովման սահմանափակման պայմաններում իրականացնել հարկա-բյուջետային կոնսոլիդացիա՝ միաժամանակ հիմքեր ստեղծելով հեռանկարային տնտեսական աճի համար:

Կառավարության հիմնական ռազմավարական գերակայությունները սահմանված են ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած՝ Կառավարության ծրագրով: Վերը նշված փաս-տաթղթի համաձայն Կառավարությունն առաջիկա տարիներին առավել կարևորում է պետական բյուջեի ծախսային հետևյալ գերակայությունները (սույն ծրագրի իմաստով գերակայություն են համարվում այն ոլորտները, որոնց հատկացվում են լրացուցիչ բյուջետային ռեսուրսների զգալի մասը, կամ որոնց ֆինանսավորման համար ներգրավում են վարկային ռեսուրսներ).

(i) սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում (մասնավորապես՝ կրթություն, առողջապահութ-յուն, սոցիալական պաշտպանություն), ինչպես նաև պետական կառավարման բնագավառում պետա-կան մարմինների գործունեության արդյունավետության, նպատակաուղղվածության և հասցեակա-նության մակարդակի բարձրացման, նրանց կողմից հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովում,

(ii) հանրապետության տարածքային ամբողջականությունը, տարածաշրջանում կայունությունը և Ղարաբաղյան հակամարտության կողմերի ուժերի հավասարակշռությունը պահպանելու նպա-

տակով պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ապահովում,

(iii) տնտեսության առանձին ոլորտներում (մասնավորապես՝ գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, ճանապարհային տնտեսություն և էներգետիկա) ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացում:

Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում կպահպանվի վերը նշված գերակայությունների համաձայն իրականացվելիք ծրագրերի ֆինանսավորման համար բյուջետային ռեսուրսները համալրելու պահանջը այլ՝ հիմնականում արտաքին աղբյուրներից պաշտոնական դրամաշնորհների և փոխառու միջոցների ներգրավման միջոցով: Վերը նշվածը, հաշվի առնելով նաև պետական պարտքի ցուցանիշները խելամիտ սահմաններում պահելու խնդիրը, էականորեն սահմանափակում է Կառավարության հնարավորությունները:

1.2 ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

ՄԺԾԾ-ն Կառավարության նպատակների իրագործման հիմնական գործիքներից մեկն է: Հարկաբյուջետային քաղաքականությունը ներկայացնող այս փաստաթուղթը, ոլորտների միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հետ միասին, կազմում է Կառավարության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիմնական բովանդակությունը:

Սույն ծրագրի հարկաբյուջետային քաղաքականությունը շարադրող մասը ներկայացնում է Կառավարության ընդհանուր երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները, միջնաժամկետ և կարճաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները և ռազմավարական ծախսային գերակայությունները: Դրանք տնտեսական և հարկաբյուջետային այն չափանիշներն են, որոնք դրվելու են ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման հիմքում:

1.3 ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1.3.1 Երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներ

Ընդունելով կայուն հարկաբյուջետային քաղաքականության անհրաժեշտությունը՝ Կառավարությունը ՀՀ 2020-2022թթ ՄԺԾԾ-ի մշակման ընթացքում առաջնորդվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2019 թվականի հավանության արժանացած Կառավարության գործունեության ծրագրով: Քանի որ

բյուջետային մուտքերի սղությունը և ելքերի վրա ազդող գործոնները սահմանափակում են կարճաժամկետ հեռանկարում այդ սկզբունքների իրագործման հնարավորությունները, Կառավարությունը մտադիր է շարունակել այդ սկզբունքների կիրառումը երկարաժամկետ հեռանկարում: Դրանք հիմք կծառայեն ընթացիկ քաղաքականությունների և Կառավարության երկարաժամկետ նպատակների համաձայնեցվածությունը գնահատելու համար:

1.3.2 Կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները

Կառավարությունը առկա ծախսային գերկայությունները համադրել է երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքների հետ՝ հաջորդ 3 տարիների ընդհանուր ծախսերի մակարդակը որոշելու համար:

Համախառն ներքին արդյունքի (այսուհետև՝ ՀՆԱ-ի) նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերության ցուցանիշը 2020-2022թթ կտատանվի 24.5%- 24,7 %-ի սահմաններում: Հիմք ընդունելով պետական բյուջեի եկամուտների կանխատեսումային իրական ծավալները, Կառավարությունը ծրագրում է 2020-2022թթ ծախսերի միջին տարեկան մակարդակը պահպանել ՀՆԱ-ի 26.8% - 26.9%-ի սահմաններում:

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

2.1 ԲԱՐՁՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՍՑԵՆԱՐ

2018 թվականի ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխությունից հետո կառավարության հիմնական խնդիրը մակրոտնտեսկան կայունության ապահովումն էր եւ այդ խնդիրը համարվում է լուծված:

Միջնաժամկետ հորիզոնում կառավարության հիմնական խնդիրն է անցում կատարել բարձր տնտեսական աճի սցենարին այդ անցման ուղիները ձեւակերպված են 2019 թվականի փետրվարի 8-ին ՀՀ Ազգային ժողովում ընդունված կառավարության ծրագրում:

Կառավարությունը, ըստ այդմ, բարձր տնտեսական աճի սցենարին անցնելու հնարավորությունը տեսնում է վերամշակող արդյունաբերությունը, ռազմական արդյունաբերությունը խթանող եւ խրախուսող գործողությունների մեջ:

Կառավարության ծրագրի 5.9 կետում արձանագրված է. «Միջոցներ են ձեռնարկվելու ԵԱՏՄ-ի շուկաներում վերամշակող արդյունաբերության առանձին ոլորտների նկատմամբ սահմանված ոչ տարիֆային կարգավորումների այնպիսի զարգացումների ուղղությամբ, որոնք էապես կպարզեցնեն մեր ձեռնարկությունների գործունեության պայմանները և կընդլայնեն այդ շուկաներում առաջխաղացման հնարավորությունները: Հատուկ ուշադրություն է դարձվելու արտահանման մեծ ներուժ ունեցող ոլորտներում ներդրումային ծրագրերի օժանդակությանը: Այդպիսի ներդրումային ծրագրերն աջակցվելու են արտաքին շուկաներում նշված կազմակերպությունների առաջխաղացման միջոցառումներին օժանդակության, օրենսդրությամբ սահմանված հարկային և մաքսային խթանիչ պայմաններ ստեղծելու ճանապարհով»:

Արդյունաբերական ոլորտի խթանման մասով առանձնահատուկ նշանակություն պետք է ստանա Ռազմական արդյունաբերության խթանումն ու աջակցությունը եւ կառավարությունը արդեն իսկ կոնկրետ քայլեր է իրականացրել այս ուղղությամբ: Ընդհանուր առմամբ վերամշակող եւ ռազմական արդյունաբերության խթանմանն ուղղված գործիքակազմը նկարագրված է Կառավարության ծրագրում եւ «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրում: Այս իմաստով կառավարությունը պետք

է որդեգրի նաեւ կոնկրետ ներդրումային ծրագրերի շուրջ պայմանավորվածություններ ձեռք բերելու եւ բարձր տնտեսական աճին խթանող ներդրումային ծրագրերի համար առանձնահատուկ պայմաններ ստեղծելու քաղաքականություն:

Բարձր տնտեսական աճը խթանող հաջորդ գործիքակազմը դա առաջնահերթություններ համարվող զբոսաշրջության, գյուղատնտեսության և բարձր տեխնոլոգիաների ոլորտների խթանումն է, որոնց մեջ պետք է անդրադառնալ միկրոձեռնարկություններին, փոքր և միջին ձեռնարկություններին, խոշոր ձեռնարկություններին ուղղվող հարկային և մաքսային արտոնություններին, պետական աջակցության ձևաչափերին, ենթակառուցվածքների զարգացմանը և որակի ենթակառուցվածքների կատարելագործմանը, կարգավորումների պարզեցմանը, ինովացիաների կիրառության խթանմանը, ինչպես նաև տարբեր փառատոնների, ցուցահանդեսների միջոցով Հայաստանի տեսանելիությունը բարձրացնելու քաղաքականությանը, գյուղացիական հողերի խոշորացման քաղաքականությանը՝ Կոոպերատիվ տնտեսությունների նոր խթաններ ստեղծելու և հողային ռեֆորմ իրականացնելու միջոցով:

Բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման համար կարևոր է շուկայի աջակցությունը՝ արտադրության, առևտրի և մտավոր սեփականության, արտահանմանը նպաստող քաղաքականության իրականացմամբ, թվայնացման և դրա ենթակառուցվածքների զարգացման հնարավորությունների ընդլայնմամբ:

Տնտեսական աճի զարգացման համար կարևոր դերակատարություն ունի նաև Կապիտալի շուկայի զարգացումը, որը նպաստում է նաև արժեթղթերի շուկայի զարգացմանը՝ IPO-ինստիտուտի հնարավորինս լայն ներդրմամբ, ֆինանսական ռեսուրսների հասանելիությանը, բորսայական ենթակառուցվածքների զարգացմանը:

Կարևոր է նշել նաև կանխիկի կրճատումը, որպես ստվերի կրճատման գործիքակազմ, որի հիմնական քայլերից են քարտային վճարային տերմինալների տարածումը, պետության կողմից իրականացվող վճարումների ապականխիկացումը, քաղաքացիաիրավական գործարքների անկանխիկացման պահանջների սահմանումը և այլն:

Այլ հավասար պայմաններում, ստորև ներկայացված տնտեսական աճի սցենարը կգնահատվեր որպես համեմատաբար համեստ՝ հաշվի առնելով հասարակության հավակնությունները, սակայն միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիմքում դրվել է տնտեսական աճի պոտենցիալի մոտ 5%-ին

համապատասխանող մակրոտնտեսական շրջանակ և դրան համապատասխան բյուջետային ցուցանիշների կանխատեսում հետևյալ նկատառումներով: Նախ, օբյեկտիվորեն, առանց լրացուցիչ ջանքի ներդրման, մեր երկրի տնտեսական աճի պոտենցիալը գնահատվում է մոտ 4.5% և մեծ հավանականությամբ՝ առկա ռիսկերի կառավարելի միջակայքում մնալու դեպքում, ՀՀ տնտեսական աճը կլինի մոտ 4.5%: Հարկ է նկատել, որ այսպիսին են նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների (Արժույթի միջազգային հիմնադրամ, Համաշխարհային բանկ և այլն) կանխատեսումները: Ինչը նշանակում է, որ միջնաժամկետ հատվածում միջինում 5% տնտեսական աճին հնարավոր է հասնել միայն լրացուցիչ ջանքեր ներդնելու պարագայում: Երկրորդ, չափազանց կարևորելով կառավարության ծրագրով հայտարարված սոցիալական ուղղություններով նպատակներին արագ հասնելու անհրաժեշտությունը, այդուհանդերձ նպատակահարմար է համարվել ընտրել կայունության համար լրացուցիչ ռիսկեր չառաջացնելու ուղին: Երրորդ, հաշվի առնելով, որ համաշխարհային տնտեսության աճը առաջիկա միջին ժամկետում կանխատեսվում է մոտ 3.6%, իսկ մեր հիմնական գործընկեր երկրներում և տարածաշրջանում՝ 1.5-2.3% միջակայքում, ուստի կառավարության ծրագրային հանձնառություն հանդիսացող 5% տնտեսական աճը ենթադրում է մեր երկրի տնտեսության և մյուսների միջև տարբերության կրճատում:

Եվ չնայած վերոնշյալին, կարելի է արձանագրել, որ կառավարության համար նպատակադրումը բարձր աճի ապահովումն է առնվազն առաջարկվող սցենարով, որի արդյունքները պարբերաբար վերլուծելով հնարավոր կլինի առաջիկայում ճշգրտել քաղաքականության միջոցառումները և ըստ անհրաժեշտության անդրադառնալ ոլորտային ծրագրերին:

Այս բաժնում նկարագրվում է տնտեսության ներուժի աստիճանական բարձրացման և ավելի բարձր տնտեսական աճի ապահովման այլընտրանքային մակրոտնտեսական շրջանակը (Աղյուսակ 1.): Ընդ որում այդ շրջանակի հիմքում ընկած տնտեսական աճի կանխատեսումների հավանականությունը համեմատաբար փոքր է՝ մոտ 20-25%[1], սակայն այն նախանշում է առանցքային ցուցանիշների ուղենշային այն մեծությունները, որոնց թիրախավորման դեպքում հնարավոր կլինի ապահովել ՀՀ տնտեսության ավելի արագ տեմպերով զարգացումը և ՀՀ կառավարության ծրագրի թիրախները:

[1] Տնտեսական աճի կանպատեսումների հավանականությունները ավելի մանրամասն ներկայացված են այս ՄԺԾԾ 2-րդ՝ «ՀՀ տնտեսական և հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների կանխատեսումներ» գլխի «2.2. Կանխատեսումների արդյունքում կատարված ենթադրություններն ու ռիսկերը և իրական ՀՆԱ-ի կանխատեսումների հավանականային բաշխումը» ենթագլխում:

<u>Իրական հատված:</u> **Կանխատեսվում է տնտեսական աճի տեմպերի արագացում տարեկան շուրջ 1 տոկոսային կետով, որի համար միջնաժամկետում անհրաժեշտ են ներդրումների (և՛ մասնավոր, և՛ պետական) բարձր աճի տեմպեր:** ՀՀ տնտեսության համար տնտեսական աճի մոդելի փոփոխությունը ժամանակի մարտահրավեր է դարձել: Ապագա տարիներին ՀՀ տնտեսությունը պետք է զարգանա առաջարկի վրա հիմնված տնտեսական աճի մոդելով (որն իր կենսաունակությունն ապացուցել է աշխարհի բազմաթիվ երկրներում), որտեղ տնտեսական աճի առանցքային շարժիչը պետք է լինի արտահանումը (export-led growth model): Զարգացման այս ուղղությունը նախանշվում է հենց «ՀՀ կառավարության 2019թ. ծրագրով»: Տնտեսական աճի այս մոդելի կայացմանը հատկապես մեծ նպաստում կունենան արտահանման մեծ ներուժ ունեցող ոլորտների խթանման, գործարար միջավայրի բարելավման, ներդրումների խթանման և ներգրավման նպատակաուղղված քաղաքականությունները և ենթակառուցվածքներում պետական ավելի մեծ ներդրումները, որոնց արդյունքում ներդրումները կաճեն առաջանցիկ տեմպերով՝ միջնաժամկետի վերջում հասնելով ՀՆԱ-ում շուրջ 31% մակարդակի: **Իսկ հիմնական միջոցներում ներդրումները միջնաժամկետի վերջում կհասնեն ՀՆԱ-ում 25% մակարդակի՝ ապահովելով ՀՀ կառավարության ծրագրով թիրախավորված 23-25% մակարդակը:**

Արդյունքում տնտեսական աճի տեմպերը կարագանան՝ միջնաժամկետի վերջում հասնելով 9%-ի: Ընդ որում տնտեսության կառուցվածքում արտահանելի ոլորտների, մասնավորապես՝ արդյունաբերության և արտահանելի ծառայությունների դերը կբարելավվի: Տնտեսական աճին կնպաստեն նաև մյուս ճյուղերի՝ շինարարության և գյուղատնտեսության ավելի բարձր աճերը:

<u>Արտաքին հատված:</u> **Կանխատեսվում է արտահանման տեմպերի արագացում ի հաշիվ ոչ հումքային բարձր ավելացված արժեք ստեղծող ապրանքատեսակների և արտահանելի ծառայությունների:** Արտաքին հատվածի զարգացումները արտահանմանն ուղղված բարեփոխումների ներքո էապես կբարելավվեն: Այսպես, ներդրումների բարձր աճին կհաջորդեն կանխատեսվող հորիզոնում ապրանքների և ծառայությունների արտահանման ավելի բարձր աճերը՝ միջնաժամկետի վերջում հասնելով ՀՆԱ-ի նկատմամբ 43% մակադակի: Այս զարգացումները կարտացոլեն տնտեսության արտահանելի հատվածի արտադրողական ճյուղերի էական բարելավման ազդեցությունը: **Ընդ որում կապահովվի նաև ՀՀ կառավարության ծրագրով թիրախավորված ՀՆԱ-ի նկատմամբ արտահանման 43-45% մակարդակը:**

<u>Գներ և դրամավարկային քաղաքականություն:</u> **Կանխատեսվող հորիզոնում կձևավորվի կայուն գնաճային միջավայր՝ ԿԲ նպատակային թիրախին համահունչ:** ԿԲ կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականությանը համահունչ կանխատեսվում է գնաճի տեմպերի աստիճանական արագացում և միջնաժամկետի վերջում կայունացում գնաճի թիրախի կենտրոնական 4% մակարդակում:

<u>Հարկաբյուջետային հատված:</u> Հարկաբյուջետային քաղաքականությունը կշարունակի պահպանել պարտքի կայունություն պահպանման և երկարաժամկետ տնտեսական աճի խթանման ուղղությունը: Հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի տարեկան միջինում շուրջ 0.4 տոկոսային կետ բարելավման տեմպերի պահպանման պայմաններում, տնտեսական աճի տեմպերի արագացումը հնարավորություն կընձեռի հավաքագրել լրացուցիչ հարկային եկամուտներ և հետևաբար ավելի մեծ ռեսուրսներ երկարաժամկետ տնտեսական աճը խթանող կապիտալ ծախսեր իրականացնելու համար: Այսպես, կանխատեսվող հորիզոնում կապահովվեն ավելի բարձր (2022թ. ՀՆԱ-ի նկատմամբ 8%) կապիտալ ծախսեր՝ հնարավորություն ընձեռելով ավելի շատ ներդրումների կատարել ենթակառուցվածքներում:

Բարձր տնտեսական աճի պայմաններում կանխատեսվող հորիզոնում ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ-ն աստիճանաբար կնվազի՝ 2022թ. հասնելով շուրջ 46% մակարդակի:

Այսպիսով «Բարձր տնտեսական աճի սցենարի» կանխատեսումներով կապահովի ՀՀ տնտեսության կայուն առաջընթացը և մրցունակության բարձրացումը՝ բարելավելով տնտեսության կառուցվածքը ի օգուտ արտահանելի ճյուղերի: Ընդ որում տնտեսության ներուժի բարձրացումը և աճի տեմպերի արագացումը կապահովվի ի հաշիվ ներդրումների բարձր աճի, արտահանման աճի արագացման և պետական բյուջեից ենթակառուցվածքներում կապիտալ ծախսերի ավելացման միջոցով: Բացի այդ, այս սցենարի արդյունքում կապահովվեն նաև ՀՀ կառավարության ծրագրի արտահանում/ՀՆԱ և հիմնական միջոցներում ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշների գծով առանցքային թիրախները (Աղյուսակ 2):

Աղյուսակ 1. *2020-2022թթ. ՄԺԾԾ և «Բարձր տնտեսական աճի սցենարի» հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումների համեմատական*

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	2018	2019		2020		2021		2022	
	Փաստ	ՄԺԾԾ	Բարձր աճի սցենար	ՄԺԾԾ	Բարձր աճի սցենար	ՄԺԾԾ	Բարձր աճի սցենար	ՄԺԾԾ	Բարձր աճի սցենար
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	6005.1	6455.3	6505.3	6975.4	7166.9	7615.7	8046.2	8320.6	9125.3
Իրական ՀՆԱ աճ,%	105.2	105.4	106.0	104.9	107.0	105.0	108.0	105.1	109.0
ՀՆԱ դեֆլյատոր, %	102.5	102.0	102.2	103.0	103.0	104.0	104.0	104.0	104.0
1 շնչին ընկնող ՀՆԱ, ԱՄՆ դոլար	4187.8	4412.8	4447.0	4668.1	4796.2	5001.6	5284.3	5362.6	5881.3
ՍԳԻ աճ, միջին,%	2.5	1.9	2.4	3.1	2.6	4.0	3.5	4.0	4.0
Սպառում, % ՀՆԱ-ում	92.7	92.5	91.7	90.1	89.0	88.4	86.4	86.7	83.2
Ներդրումներ, % ՀՆԱ-ում	22.4	23.5	24.8	24.7	27.3	25.1	28.9	25.6	30.7
Հիմնական միջոցներում ներդրումներ, % ՀՆԱ-ում	16.7	17.9	19.2	19.1	21.6	19.4	23.2	19.9	25.0
Արտահանում, % ՀՆԱ-ում	37.5	38.0	38.4	39.0	39.6	40.1	41.2	41.4	43.0
Ներմուծում, % ՀՆԱ-ում	52.9	52.7	54.0	52.8	54.7	52.6	55.2	52.5	55.5

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ	2018	2019		2020		2021		2022	
	Փաստ	**ՄԺԾԾ**	**Բարձր աճի սցենար**	**ՄԺԾԾ**	**Բարձր աճի սցենար**	**ՄԺԾԾ**	**Բարձր աճի սցենար**	**ՄԺԾԾ**	**Բարձր աճի սցենար**
Ապրանքների և ծառայությունների արտահանում, մլն դոլար	4669.0	4982.8	5072.5	5431.2	5665.1	5980.5	6481.1	6619.5	7535.7
Ապրանքների և ծառայությունների ներմուծում, մլն դոլար	6582.8	6911.9	7131.0	7350.1	7815.8	7841.3	8686.7	8391.6	9724.5
Ընթացիկ հաշիվ, մլն դոլար	-1130.6	-915.4	-1045.1	-911.1	-1144.0	-843.6	-1190.9	-730.4	-1151.7
Ընթացիկ հաշիվ, % ՀՆԱ-ում	-9.1	-7.0	-7.9	-6.6	-8.0	-5.7	-7.6	-4.6	-6.6

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ	2018	2019		2020		2021		2022	
	Փաստ	**ՄԺԾԾ**	**Բարձր աճի սցենար**	**ՄԺԾԾ**	**Բարձր աճի սցենար**	**ՄԺԾԾ**	**Բարձր աճի սցենար**	**ՄԺԾԾ**	**Բարձր աճի սցենար**
ՀՆԱ իրական աճ, %	**5.2**	**5.4**	**6.0**	**4.9**	**7.0**	**5.0**	**8.0**	**5.1**	**9.0**
Արդյունաբերություն	5.8	3.6	4.0	3.7	6.4	3.9	9.4	4.2	11.5
Գյուղատնտեսություն	(8.5)	0.0	1.6	0.5	3.0	1.0	3.5	2.0	4.5
Շինարարություն	0.8	1.6	1.8	2.0	4.0	2.5	6.0	3.0	8.2
Ծառայություններ	9.3	8.0	8.4	6.7	8.5	6.5	8.7	6.2	9.2

Զուտ հարկեր	8.0	5.3	6.0	5.3	7.0	5.3	8.0	5.3	9.0

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ	2018	2019		2020		2021		2022	
	Փաստ	ՄԺԾՊ	Բարձր աճի սցենար	ՄԺԾՊ	Բարձր աճի սցենար	ՄԺԾՊ	Բարձր աճի սցենար	ՄԺԾՊ	Բարձր աճի սցենար
ՀՆԱ իրական աճ, %	**5.2**	**5.4**	**6.0**	**4.9**	**7.0**	**5.0**	**8.0**	**5.1**	**9.0**
Սպառում	5.1	5.3	5.3	2.1	3.6	3.1	4.8	3.0	5.0
պետական	7.4	19.4	19.4	(4.1)	(4.1)	2.4	2.4	2.0	2.0
մասնավոր	4.8	3.0	3.0	3.2	5.0	3.2	5.2	3.2	5.5
Կապիտալ ներդրումներ	26.8	10.7	17.7	10.3	17.7	6.4	14.3	7.2	15.6
պետական	(31.7)	72.5	72.5	41.0	52.6	13.7	25.0	16.3	28.8
մասնավոր	44.2	2.0	10.0	3.0	10.0	4.0	11.0	4.0	11.0
Ապրանք. և ծառ. արտահանում	4.6	5.9	7.8	7.1	9.7	8.0	12.2	8.5	14.0
Ապրանք. և ծառ. ներմուծում	12.7	4.1	7.4	4.8	8.0	5.1	9.5	5.4	10.3

Աղյուսակ 2. *2020-2022թթ. ՄԺԾԾ և «Բարձր տնտեսական աճի սցենարի» հիմնական հարկաբյուջետային ցուցանիշների կանխատեսումների համեմատական*

	2018	2019		2020		2021		2022	
Պետական բյուջե, % ՀՆԱ-ի նկատմամբ	**Փաստ**	**ՄԺԾԾ**	**Բարձր աճի սցենար**	**ՄԺԾԾ**	**Բարձր աճի սցենար**	**ՄԺԾԾ**	**Բարձր աճի սցենար**	**ՄԺԾԾ**	**Բարձր աճի սցենար**
Պետական բյուջեի եկամուտներ և պաշտոնական դրամաշնորհներ	**22.3**	**24.1**	**24.0**	**24.5**	**24.3**	**24.4**	**24.2**	**24.7**	**24.4**
Հարկային եկամուտներ	21.0	22.7	22.5	23.2	23.1	23.5	23.3	23.9	23.7
Ոչ հարկային եկամուտներ և պաշտոնական դրամաշնորհներ	1.4	1.5	1.5	1.3	1.2	0.9	0.9	0.7	0.7
Ծախսեր	**24.1**	**26.5**	**26.3**	**26.8**	**26.5**	**26.6**	**26.3**	**26.9**	**26.4**
Ընթացիկ ծախսեր	21.6	22.3	22.2	21.2	20.6	20.6	19.5	20.2	18.4
Կապիտալ ծախսեր	2.5	4.1	4.1	5.6	5.9	6.0	6.8	6.7	8.0
Կապիտալ ծախսի լրացուցիչ հնարավորություն					**0.4**		**1.1**		**1.9**
Պետական բյուջեի դեֆիցիտ (-) / պրոֆիցիտ (+)	**-1.8**	**-2.3**	**-2.3**	**-2.3**	**-2.2**	**-2.2**	**-2.1**	**-2.2**	**-2.0**
Կառավարության պարտք/ՀՆԱ, %	**51.3**	**52.2**	**51.8**	**52.1**	**50.7**	**51.3**	**48.6**	**50.5**	**46.1**

	2018	2019		2020		2021		2022	
<u>Պետական բյուջե, մլրդ դրամ</u>									
Պետական բյուջեի եկամուտներ և պաշտոնական դրամաշնորհներ	**1341.7**	**1558.5**	**1558.5**	**1710.6**	**1742.7**	**1858.8**	**1945.8**	**2051.1**	**2227.5**
Հարկային եկամուտներ[1]	1258.1	1463.9	1463.9	1621.2	1653.2	1787.5	1874.6	1988.8	2165.3
Ոչ հարկային եկամուտներ և պաշտոնական դրամաշնորհներ	83.6	94.6	94.6	89.4	89.4	71.2	71.2	62.2	62.2
Ծախսեր	**1447.1**	**1710.1**	**1710.1**	**1868.2**	**1900.2**	**2027.7**	**2114.8**	**2235.5**	**2411.9**
Ընթացիկ ծախսեր	1299.0	1442.7	1442.7	1479.9	1479.9	1568.3	1568.3	1680.0	1680.0
Կապիտալ ծախսեր	148.1	267.4	267.4	388.3	420.3	459.4	546.4	555.5	731.9
Կապիտալ ծախսի լրացուցիչ հնարավորություն					**32.0**		**87.0**		**176.4**
Պետական բյուջեի դեֆիցիտ (-) / պրոֆիցիտ (+)	**-105.4**	**-151.6**	**-151.6**	**-157.6**	**-157.6**	**-169.0**	**-169.0**	**-184.4**	**-184.4**
Կառավարության պարտք, մլրդ դրամ	**3082.9**	**3370.6**	**3370.6**	**3636.7**	**3636.7**	**3909.7**	**3909.7**	**4204.9**	**4204.9**

2.2 ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

2.2.1. Ներածություն

Միջնաժամկետ ծախսային ծրագրի այս հատվածը ներկայացնում է ՀՀ վերջին տարիների մակրոտնտեսական զարգացումները և 2020-2022 թվականների հեռանկարները:

Մակրոտնտեսական կանխատեսումների նպատակը

Հայաստանի տնտեսության իրավիճակի միջնաժամկետ կանխատեսումները նկարագրում են այն միջավայրը, որի պայմաններում գործելու է կառավարությունը: Կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունն իր հերթին ազդում է մակրոտնտեսական միջավայրի վրա, հետևաբար մակրոտնտեսական կանխատեսումները հնարավորություն են տալիս հասկանալու, թե կառավարության որդեգրած միջնաժամկետ հարկաբյուջետային քաղաքականությունը որքանով է համահունչ տնտեսության այլ հատվածների զարգացման միտումներին:

Մակրոտնտեսական կանխատեսումների իրականացումը կարևոր է նաև այն տեսանկյունից, որ տնտեսական զարգացումները մեծ ազդեցություն ունեն կառավարության ֆինանսական ռեսուրսների վրա: Տնտեսական բարձր աճն ապահովում է տնտեսվարող սուբյեկտների ավելի մեծ եկամուտներ, որոնք իրենց հերթին ապահովում են ավելի մեծ հարկային եկամուտներ: Եվ հակառակը, տնտեսական աճի ցածր մակարդակը բերում է հարկերի ավելի ցածր մակարդակի և կառավարության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության և օժանդակության ավելի մեծ պահանջարկի: Մակրոտնտեսական կանխատեսումները նաև հիմք են հանդիսանում ապագայում բյուջեի վրա հնարավոր ծանրաբեռնվածության մեծացման հետ կապված ռիսկերի գնահատման համար:

Տնտեսության նկարագրություն

Տնտեսությունը կարելի է նկարագրել ցուցանիշների հետևյալ հիմնական խմբերով.

- Համախառն առաջարկ (չափվում է տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների իրական աճերով և համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) իրական աճով),
- Համախառն պահանջարկ (չափվում է պետական, մասնավոր հատվածների և արտաքին աշխարհի կողմից ապրանքների և ծառայությունների վրա կատարվող ծախսումներով

(սպառում/ՀՆԱ, ներդրում/ՀՆԱ, զուտ արտահանում/ՀՆԱ)),

- Գնային փոփոխականներ (ՀՆԱ դեֆլյատոր, որն իրենից ներկայացնում է տնտեսությունում ստեղծված ՀՆԱ-ի գների փոփոխությունը և գնաճ, որը չափվում է սպառողական գների (ներառյալ սպառողական, ներմուծված ապրանքների գները) ինդեքսով (ՍԳԻ)),
- Ֆինանսական համակարգի խորությունը (չափվում է փողի ագրեգատներ/ՀՆԱ, վարկեր/ՀՆԱ, ավանդներ/ՀՆԱ ցուցանիշներով և ցույց է տալիս, թե բանկային համակարգը որքանով է ներգրավված երկրի տնտեսական կյանքում),
- Արտաքին աշխարհի հետ տնտեսական հարաբերություններ (չափվում է հիմնականում երկրի ընթացիկ հաշվի հաշվեկշռով),
- Պետական հատվածի դիրքը տնտեսությունում (չափվում է հիմնականում պետական հատվածի ծախսերի և եկամուտների ծավալով (պետական ծախսեր/ՀՆԱ, հարկային եկամուտներ/ՀՆԱ)):

Աղյուսակ 1-ում ներկայացված են տնտեսության ներկա և միջնաժամկետ հեռանկարները բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները՝ ըստ վերոնշյալ գլխավոր տնտեսական բնութագրիչների: Միջնաժամկետ ծախսային ծրագրի այս հատվածում նկարագրված են նաև այն հիմնական գործոններն ու միտումները, որոնք պայմանավորում են աղյուսակ 1-ում նշված ցուցանիշները և տնտեսության զարգացման հեռանկարները:

<u>Աղյուսակ 1.</u> *<u>Վերջին տարիների միտումները և ՄԺԾԾ-ի հիմքում դրված հիմնական մակրոտնտեսական չափորոշիչները, տոկոս</u>*

ՉԱՓՈՐՈՇԻՉ	2016	2017	2018	2019	2020	2021	2022
	Փաստ	Փաստ	Փաստ	Կանխ.	Կանխ.	Կանխ.	Կանխ.
Տնտեսական աճ (ՀՆԱ-ի իրական աճ)	0.2	7.5	5.2	5.4	4.9	5.0	5.1
Սպառման մակարդակ (Սպառում/ՀՆԱ)	90.8	92.3	92.7	92.5	90.1	88.4	86.7
Ներդրումների մակարդակ (Ներդրում/ՀՆԱ)	18.0	19.3	22.4	23.5	24.7	25.1	25.6
ՀՆԱ դեֆլյատոր	100.3	102.1	102.5	102.0	103.0	104.0	104.0
12-ամսյա գնաճ	-1.1	2.6	1.8	2.4	3.6	4.0	4.0
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ	-2.3	-2.4	-9.1	-7.0	-6.6	-5.7	-4.6

2.2.2. Համախառն առաջարկ

Տնտեսությունում համախառն առաջարկն իրական արտահայտությամբ չափվում է տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների հանրագումարով: Դրա փոփոխությունը նախորդ տարվա համեմատ գնահատվում է ՀՆԱ-ի իրական աճի[2] միջոցով: Ուստի այս բաժնում կներկայացվի տնտեսության հիմնական ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների փոփոխության դինամիկան վերջին տարիներին և ապագա կանխատեսվող զարգացումները:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

2016-2018 թվականներին տնտեսության զարգացման շարժիչ ուժեր են հանդիսացել ծառայությունների և արդյունաբերության ճյուղերը: 2016-2018 թվականներին միջին տնտեսական աճը կազմել է 4.3%: Ընդ որում, 2016-2018 թվականներին միջինում աճ է արձանագրվել տնտեսության բոլոր ճյուղերում, բացառությամբ գյուղատնտեսության և անտառային տնտեսության[3]: Նշված ժամանակահատվածում ծառայությունների հաշվին ապահովվել է տնտեսական աճի շուրջ 3.7 տոկոսային կետը (իրական աճը կազմել է 7.7%), իսկ արդյունաբերության հաշվին՝ 1.5 տոկոսային կետը՝ 8.4% իրական աճի պայմաններում: Նույն ժամանակահատվածում շինարարության նվազման տեմպը դանդաղել է, կազմելով միջինում 3.5%՝ հակազդելով տնտեսական աճին 0.4 տոկոսային կետով: Գյուղատնտեսությունը միջինում նվազել է 6.2%-ով՝ 1.0 տոկոսային կետով բացասաբար ազդելով տնտեսական աճի վրա:

Հատկանշական էին 2018 թվականի իրադարձությունները: 2018 թվականին տեղի ունեցան աննախադեպ քաղաքական փոփոխություններ, որոնք կարող էին հանգեցնել տնտեսական աճի էական դանդաղման և մակրոտնտեսական անկայունության, ինչը հատուկ է նմանատիպ իրադարձություններին: Սակայն առաջացած ռիսկերը հնարավոր եղավ հաղթահարել և խելամիտ մակրոտնտեսական քաղաքականության արդյունքում ապահովել մակրոտնտեսական կայունություն և գրանցել 5.2% տնտեսական աճ, որը, չնայած դանդաղել է նախորդ տարվա համեմատ, սակայն տարածաշրջանում ամենաբարձրերից է եղել:

---

[2]ՀՆԱ-ի իրական աճ ասելով՝ հասկանում ենք տնտեսությունում ստեղծված ՀՆԱ-ի ծավալային աճը՝ առանց գնային փոփոխության:

[3]Սույն պարբերության ցուցանիշները վերաբերում են տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքին:

2019 թվականի հունվար-ապրիլին տնտեսական ակտիվության (ՏԱՑ)[4] դրական միտումները պահպանվել են: ՏԱՑ-ը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ իրական արտահայտությամբ աճել է 7.3%-ով, որը զիջում է նախորդ տարվա ցուցանիշը 2.2 տոկոսային կետով: Տնտեսական ակտիվությանը նպաստել են ծառայությունների (6.0 տոկոսային կետ), առևտրի (1.3 տոկոսային կետ), արդյունաբերության (0.9 տոկոսային կետ) և շինարարության (0.6 տոկոսային կետ) համախառն թողարկումների իրական աճերը[5]:

Կանխատեսում. Միջնաժամկետում կանխատեսվում է միջինում 5.0% տնտեսական աճ, որը հիմնականում պայմանավորված կլինի ծառայությունների և արդյունաբերության ճյուղերի աճերով: 2019 թվականի համար կանխատեսվում է 5.4%, իսկ 2020-2022 թվականներին՝ համապատասխանաբար 4.9%, 5.0% և 5.1% տնտեսական աճ: Ծառայությունների և արդյունաբերության ճյուղերի նպաստումը ՀՆԱ-ի միջին աճին կկազմի համապատասխանաբար՝ 3.4 և 0.7 տոկոսային կետ: Միջնաժամկետ կանխատեսումները հիմնվում են տնտեսության զարգացման միտումների ու առանձահատկությունների, միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված համաշխարհային տնտեսության վերաբերյալ սպասումների (տես՝ Ներդիր 1-ը), ինչպես նաև ՀՀ կառավարության միջնաժամկետ քաղաքականության ուղղությունների վրա:

Աղյուսակ 2. *ՀՆԱ-ի իրական աճն ըստ տնտեսության ճյուղերի, %*

	2016	2017	2018	2019	2020	2021	2022
	Փաստ	**Փաստ**	**Փաստ**	**Կանխ.**	**Կանխ.**	**Կանխ.**	**Կանխ.**
Ընդամենը ՀՆԱ	0.2	7.5	5.2	5.4	4.9	5.0	5.1
Արդյունաբերություն	7.6	11.8	5.8	3.6	3.7	3.9	4.2
Գյուղատնտեսություն	-5.0	-5.1	-8.5	0.0	0.5	1.0	2.0
Շինարարություն	-14.1	2.8	0.8	1.6	2.0	2.5	3.0
Ծառայություններ	3.2	10.6	9.3	8.0	6.7	6.5	6.2
Զուտ անուղղակի հարկեր	-3.7	9.7	8.0	5.3	5.3	5.3	5.3

[4]2011 թվականից ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը ամսական ՀՆԱ-ից անցում է կատարել ՏԱՑ-ի հաշվարկմանը: Ի տարբերություն Ազգային հաշիվների մեթոդաբանությամբ հաշվարկվող ՀՆԱ ցուցանիշի (որն ունի եռամսյակային և տարեկան պարբերականություն) ամսական ՏԱՑ-ը բնութագրում է տնտեսությունում ապրանքների և ծառայությունների թողարկման ծավալների փոփոխությունը, այլ ոչ թե ավելացված արժեքի փոփոխությունը: Բացի այդ, ամսական ՏԱՑ-ը չի ընդգրկում արտադրանքի զուտ հարկերը և ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունները (ՖՄԱՉԾ), որոնք ներառվում են եռամսյակային և տարեկան ՀՆԱ-ի արտադրական եղանակով հաշվարկներում:

[5]ՏԱՑ-ի աճին ճյուղերի նպաստումները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են: Գյուղատնտեսության ցուցանիշը ներառված չէ հաշվարկներում, քանի որ հրապարակվում է եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության տատանողականության հարթեցման անհրաժեշտությամբ:

<u>Գծապատկեր 1.</u> *<u>Տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված և կանխատեսվող տնտեսական աճին նպաստման չափերը</u>*

Այլ կառույցների կողմից ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները

Աղյուսակում ներկայացված են այլ կառույցների կողմից ՀՀ տնտեսական աճի 2019-2022թթ. միտումները: Այսպես, ՀՀ կենտրոնական բանկի կանխատեսումներով տնտեսական աճը միջնաժամկետում կլինի 4.8-6.6%-ի շրջանակներում: Իսկ միջազգային կառույցների կանխատեսումները հիմնականում համեմատաբար ցածր են, ինչը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ դրանք ավելի վաղ կատարված կանխատեսումներ են և չեն ներառում ՀՀ տնտեսության վերջին դրական զարգացումները:

Աղյուսակ. Այլ կառույցների կողմից ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները

	2019	**2020**	**2021**	**2022**
Արժույթի միջազգային հիմնադրամ (2019 հունիս)	4.6%	4.5%	4.5%	4.5%
Մուդիս (2019 մարտ)	4.5%	4.5%	-	-
Համաշխարհային Բանկ (2019 հունիս)	4.2%	4.9%	5.2%	-
Ֆիթչ (2019 մայիս)	4.6%	4.5%	-	-
ՀՀ կենտրոնական բանկ (2019թ. հունիս)	6.6%	4.8%	5.0%	-

Համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարները

Համաշխարհային տնտեսական ակտիվության՝ 2018թ. երկրորդ կեսից նկատվող դանդաղումը ընդհատվել է՝ տնտեսական աճը 2019թ. առաջին կեսին կայունացել է, իսկ տարվա երկրորդ կեսին, ԱՄՀ վերջին կանխատեսումների համաձայն, զարգացման տեմպերը կարագանան: Աճը հիմնականում կպայմանավորվի Չինաստանում ընդլայնող հարկաբյուջետային քաղաքականության իրականացմամբ, ինչպես նաև համաշխարհային ֆինանսական շուկայի մասնակիցների լավատեսությամբ:

Համաշխարհային տնտեսության 2018թ-ի 3.6% աճը կդանդաղի մինչև 3.3% 2019թ--ին, իսկ միջնաժամկետում կկայունանա՝ կազմելով 3.6%: Զարգացած երկրներում աճը 2019թ-ին կկազմի 1.8%, իսկ միջնաժամկետում փոքր-ինչ կդանդաղի՝ միջինում կազմելով 1.7%: Զարգացող երկրներում 2019թ-ի 4.4%-ց տնտեսական աճը կարագանա՝ միջնաժամկետում միջինում կազմելով 4.8%: Հայաստանի հիմնական գործընկեր երկրների տնտեսական աճի վերաբերյալ սպասումները՝ նախորդ կանխատեսումների համեմատ, վերանայվել են նվազման ուղղությամբ:

Համաշխարհային տնտեսական աճի կանխատեսման ռիսկերի բալանսը շեղված է դեպի ներքև: Առաջիկայում տնտեսական քաղաքականության առաջնային խնդիր պետք է լինի սխալների բացառումը՝ պահանջարկի խրախուսման և պետական պարտքի կայուն մակարդակի պահպանման միջև կոմպրոմիսային ընտրության ապահովման տեսանկյունից: Կարևորվում է արտադրության ներուժի բարձրացմանն, ներառականության և կայունության ամրապնդմանն ուղղված հստակ միջոցառումների անհրաժեշտությունը:

Աղյուսակ: Համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարները

Տոկոսային փոփոխություն	Փաստ			Կանխատեսում			
	2016	2017	2018	2019	2020	2021	2022
<u>Համաշխարհային թողարկում</u>	**3.4**	**3.8**	**3.6**	**3.3**	**3.6**	**3.6**	**3.6**
Զարգացած երկրներ	1.7	2.4	2.2	1.8	1.7	1.7	1.6
Եվրոգոտի	2.0	2.4	1.8	1.3	1.5	1.5	1.4
ԱՄՆ	1.6	2.2	2.9	2.3	1.9	1.8	1.6
Զարգացող երկրներ	4.6	4.8	4.5	4.4	4.8	4.9	4.8
Չինաստան	6.7	6.8	6.6	6.3	6.1	6.0	5.8

Արդյունաբերություն

2016-2018 թվականներին արդյունաբերության ճյուղի աճն արագացել է՝ պայմանավորված հիմնականում հանքագործական և մշակող արդյունաբերության աճերով: 2016-2018 թվականներին արդյունաբերության ճյուղում գրանցվել է ավելացված արժեքի միջին հաշվով 8.4% իրական աճ: Արդյունաբերության նշված աճը պայմանավորված է վերջին տարիների համաշխարհային պահանջարկի վերականգնմամբ, համաշխարհային տնտեսությունում ՀՀ մրցունակության բարձրացմամբ, ինչպես նաև արտահանմանն ուղղված ՀՀ կառավարության քաղաքականությամբ: Ընդ որում՝ արդյունաբերության աճին ամենամեծ նպաստումն են ունեցել հանքագործական (բացառությամբ 2018 թվականի) և մշակող արդյունաբերությունները, համապատասխանաբար՝ 0.6 և 6.6 տոկոսային կետերով, միջինում աճելով համապատասխանաբար՝ 5.8% և 11.3%: Այս զարգացումների արդյունքում վերջին տարիներին արդյունաբերության ճյուղում բարձրացել է մշակող արդյունաբերության դերակատարումը:

2019 թվականի հունվար-ապրիլին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ արդյունաբերության ճյուղն[6] աճել է՝ հիմնականում պայմանավորված մշակող արդյունաբերության աճով: Արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալի 4.5% իրական աճ: Վերջինիս հիմնականում նպաստել է մշակող արդյունաբերության 7.8% աճը (նպաստումը 5.0 տոկոսային կետ): Մշակող արդյունաբերության աճը հիմնականում պայմանավորված է եղել սննդամթերքի արտադրության 7.9% (նպաստումը 2.2 տոկոսային կետ), ծխախոտային արտադրատեսակների արտադրության 13.3% (նպաստումը 2.1 տոկոսային կետ), խմիչքների արտադրության 5.7% (նպաստումը 0.8 տոկոսային կետ), ինչպես նաև այլ ոչ մետաղական արտադրատեսակների արտադրության 17.2% աճերով (նպաստումը 0.8 տոկոսային կետ): Հանքագործական արդյունաբերության ճյուղում գրանցվել է 2.4% անկում, ինչը հիմնականում պայմանավորված է եղել մետաղական հանքաքարի արդյունահանման 2.5% նվազմամբ (նպաստումը 0.5 տոկոսային կետ): Հատկանշական է, որ նշված ժամանակահատվածում արդյունաբերության աճը պայմանավորված է եղել ներքին պահանջարկով:

Կանխատեսում. 2019 թվականին և միջնաժամկետում կանխատեսվում է արդյունաբերության աճ՝ պայմանավորված ճյուղում իրականացվող ներդրումներով և ՀՀ կառավարության արտահանման ու ներդրումների խթանմանն ուղղված կառուցվածքային քաղաքականություններով: 2019 թվականին արդյունաբերության իրական աճը կլինի շուրջ 3.6%, իսկ

[6] Այսուհետ 2019թ. զարգացումները նկարագրելիս ներկայացված են ճյուղերի թողարկման ցուցանիշները:

2020-2022 թվականներին՝ միջինում 3.9%: Նշված կանխատեսումները հիմնված են գործընկեր երկրների պահանջարկի աճի և միջազգային գների վերաբերյալ միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև ներքին պահանջարկի գնահատականների վրա:

Գյուղատնտեսություն

2016-2018 թվականներին գյուղատնտեսությունում գրանցվել է անկում: Ճյուղում 2016-2018 թվականներին նախորդ երեք տարիների նկատմամբ արձանագրվել է միջինում 6.2% նվազում: Գյուղատնտեսության ճյուղի նվազման պատճառ է հանդիսացել հիմնականում բուսաբուծության նվազումը (համախառն թողարկման նվազումը միջինում կազմել է 10.4%): Անասնաբուծությունն աճել է և դրական է նպաստել գյուղատնտեսության աճին (միջինում աճը կազմել է 1.4%):

Վերջին երեք տարիների բացասական զարգացումներից հետո 2019 թվականի հունվար-մարտին[7] ճյուղում գրանցվեց 0.8% աճ: Աճը հիմնականում պայմանավորված է եղել բուսաբուծության 48.7% աճով (նպաստումը 2.7 տոկոսային կետ): Ձկնորության 8.8% աճը նույնպես նպաստել է գյուղատնտեսության աճին (նպաստումը 1.0 տոկոսային կետ): Անասնաբուծության 3.4% նվազումը բացասաբար է ազդել գյուղատնտեսության աճին (նպաստումը 2.9 տոկոսային կետ):

Կանխատեսում. Միջնաժամկետում կանխատեսվում է գյուղատնտեսության աճի տեմպերի վերականգնում: 2019 թվականին ճյուղի աճը կվերականգնվի, իսկ 2020-2022 թվականներին միջին աճը կլինի 1.2%-ի շրջակայքում՝ մոտենալով իր հետճգնաժամային ներուժային մակարդակին:

Շինարարություն

2017-2018 թվականները շինարարության համար եղել են շրջադարձային, նախորդող տարիների բացասական զարգացումներից հետո 2017-2018 թվականներին ճյուղում գրանցվել է միջինում 1.8% աճ: Նույն ժամանակահատվածում շինարարության ճյուղի թողարկման միջին աճը կազմել է 3.4%, որը հիմնականում պայմանավորված է եղել պետական բյուջեի (11.3%), հատկապես՝ միջազգային վարկերի (17.3%) հաշվին իրականացված շինարարության աճով:

[7]Գյուղատնտեսության ցուցանիշները ներկայացված են հունվար-մարտով, քանի որ ճյուղի ցուցանիշները հրապարակվում են եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության տատանողականության հարթեցման անհրաժեշտությամբ:

Ըստ տնտեսական գործունեության տեսակների նախորդ 2 տարիներին շինարարությանը հիմնականում դրական են ազդել էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում (19.5%), տրանսպորտի (16.6%), կացության և հանրային սննդի կազմակերպման (95.3%) և կրթության (53.5%) ոլորտներում իրականացված շինարարության աճերը: Շինարարության աճին հակազդել են հիմնականում մշակույթ, զվարճություններ և հանգիստ ճյուղի՝ 32.4% և պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն ոլորտի՝ 60.0% միջին նվազումները:

2019 թվականի հունվար-ապրիլին շինարարության աճի միտումները շարունակվել են: Արձանագրվել է շինարարության ծավալների 8.0% աճ, ինչին 5.4 տոկոսային կետով նպաստել է կազմակերպությունների (աճը՝ 10.7%) և 3.9 տոկոսային կետով՝ բնակչության միջոցներով (աճը՝ 19.3%) իրականացված շինարարության աճերը:

Ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ շինարարության աճը հիմնականում պայմանավորված է եղել անշարժ գույքի հետ կապված գործունեության, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում, ինչպես նաև կացության և հանրային սննդի կազմակերպում ոլորտների աճով: Շինարարության աճին հիմնականում հակազդել են մշակույթ, զվարճություններ և հանգիստի, տեղեկատվություն և կապի, ինչպես նաև կրթություն ոլորտներում իրականացված շինարարության ծավալների նվազումները[8]:

Կանխատեսում. Միջնաժամկետում շինարարության ճյուղը կդրսևորի աճի միտում՝ պայմանավորված տնտեսությունում ներդրումներով, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից բնակարանային շինարարությանն ուղղված միջոցառումներով: Շինարարության ճյուղի ավելացված արժեքը 2019 թվականին կաճի 1.6%-ով, իսկ միջնաժամկետում՝ միջինում 2.5%-ով:

<u>Ծառայություններ</u>

2016-2018 թվականներին նախորդ երեք տարիների նկատմամբ ծառայություններն աճել են, ինչը հիմնականում պայմանավորված է եղել մշակույթ, զվարճություններ և հանգիստ, ինչպես նաև ֆինանսական և ապահովագրական գործունեության ենթաճյուղերի աճերով: Ճյուղի ավելացված արժեքը 2016-2018 թվականներին միջինում աճել է 6.6%, ինչին 2.6 տոկոսային կետով նպաստել է մշակույթ, զվարճություններ և հանգիստ (միջին աճը՝ 23.8%), 1.8 տոկոսային կետով՝ ֆինանսական և

[8] Ըստ տնտեսական գործունեության տեսակների շինարարության ծավալների վերլուծությունը ներկայացված է 2019 թվականի հունվար-մարտի ցուցանիշներով:

ապահովագրական գործունեություն (միջին աճը՝ 15.1%), ինչպես նաև 1.0 տոկոսային կետով՝ փոխադրումներ և պահեստային տնտեսություն (միջին աճը՝ 14.0%) ենթաճյուղերը:

2019 թվականի հունվար-ապրիլին ծառայությունների բարձր աճի միտումները շարունակվել են՝ սակայն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ փոքր-ինչ դանդաղ տեմպով: Մատուցված ծառայությունների ծավալը 2018 թվականի համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ իրական արտահայտությամբ աճել է 17.0%-ով, ինչին 7.8 տոկոսային կետով նպաստել է մշակույթ, զվարճություններ և հանգիստ ենթաճյուղը (աճը՝ 38.0%) և 4.3 տոկոսային կետով՝ ֆինանսական և ապահովագրական գործունեությունը (աճը՝ 18.8%): Զգալի է եղել նաև կացության և հանրային սննդի կազմակերպում ենթաճյուղի նպաստումը՝ 1.7 տոկոսային կետ (աճը՝ 29.4%):

2016-2018 թվականներին առևտրի ոլորտում գրանցվեց երկնիշ աճ. առևտրի շրջանառության բարձր աճի միտումը շարունակվեց նաև 2019 թվականի հունվար-ապրիլին: 2016-2018 թվականներին առևտրի ավելացված արժեքն աճել է միջինում 11.7%-ով: Առևտրի շրջանառությունը 2019 թվականի հունվար-ապրիլին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմաբ աճել է 9.8%-ով, ինչին 6.5 տոկոսային կետով նպաստել է մեծածախ առևտուրը (աճը՝ 13.8%) և 3.9 տոկոսային կետով՝ մանրածախ առևտուրը (աճը՝ 8.0%): Ավտոմեքենաների առևտուրը նվազել է 13.8%-ով՝ առևտրի շրջանառության աճին հակազդելով 0.6 տոկոսային կետով:

Կանխատեսում. Ծառայությունների աճը միջնաժամկետում կգերազանցի ՀՆԱ-ի աճին: 2019 թվականին ճյուղի աճը կկազմի 8.0%, իսկ 2020-2022 թվականներին՝ միջինում 6.5%: Ծառայությունների կանխատեսման հիմքում ընկած է այն ենթադրությունը, որ արտահանմանն ուղղված ՀՀ կառավարության կողմից վարվող քաղաքականության արդյունքում աստիճանաբար կմեծանա նաև ծառայությունների արտահանելի մասի դերը:

Ամփոփելով նշենք, որ միջնաժամկետում կանխատեսվում է, որ տնտեսության աճը պայմանավորված կլինի ծառայությունների և արդյունաբերության աճերով՝ հատկապես այդ ճյուղերի արտահանելի մասի աճերով: Ամբողջական առաջարկի ճյուղային կառուցվածքում վերջին տարիներին արձանագրվել է ծառայությունների և արդյունաբերության մասնաբաժնի շարունակական աճ, ինչը 2016-2018 թվականներին միջինում կազմել է ՀՆԱ-ի 67.4%, իսկ միջնաժամկետ հորիզոնում կանխատեսվում է, որ միջինում կկազմի ՀՆԱ-ի 71.2%-ը:

Գծապատկեր 2. *Տնտեսության ճյուղերի տեսակարար կշիռները ՀՆԱ-ում*

Աշխատանքի շուկա

2016-2018 թվականներին գործազրկության մակարդակը նվազման միտում է ցուցաբերել՝ 18.0%-ից հասնելով 16.3%-ի: Գործազրկության մակարդակը 2018 թվականին նախորդ տարվա նկատմամբ նվազել է 1.5 տոկոսային կետով: Զբաղվածների թվաքանակն աճել է 6.1%-ով, իսկ գործազուրկների թվաքանակը կրճատվել՝ 4.8%-ով:

ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից նոր մեթոդաբանությամբ հաշվարկված գործազրկության մակարդակը 2018 թվականին կազմել է 20.4%՝ 0.4 տոկոսային կետով նվազելով նախորդ տարվա նկատմամբ: Նոր մեթոդաբանությամբ հաշվարկված զբաղվածների թվաքանակը նախորդ տարվա նկատմամբ աճել է 1.4%-ով, իսկ գործազուրկների թիվը կրճատվել է 1.1%-ով:

2017-2018 թվականներին անվանական աշխատավարձի մակարդակը միջինում աճել է 2.9%-ով: Ընդ որում՝ աճն ուղեկցվել է արտադրողականության և իրական աշխատավարձի աճերով: Իրական արտադրողականությունը 2018 թվականին աճել է 3.7%-ով, իսկ իրական աշխատավարձը՝ 1.5%-ով, ինչը նպաստել է միավոր աշխատուժի ծախսի կրճատմանը[9]:

2019 թվականի հունվար-ապրիլ ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 6.2%-ով՝ կազմելով 177,171 դրամ[10]: Ընդ որում՝ սպառողական գների ինդեքսի 1.7% աճի պարագայում իրական աշխատավարձն աճել է

[9]Համադրելիություն ապահովելու նպատակով ներկայացված են 2017-2018թթ. զարգացումները՝ ՀՀ ՎԿ նոր մեթոդաբանությամբ:

[10]2018թ. հունվարից աշխատավարձի վերաբերյալ տեղեկատվությունը հիմնված է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման տվյալների բազայի վրա:

4.4%-ով: Պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 6.7%-ով՝ կազմելով 149,327 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ 4.8%-ով, կազմելով 192,329 դրամ:

2.2.3. Համախառն պահանջարկ

Համախառն պահանջարկը պատկերացում է տալիս տնտեսությունում եկամուտների ծախսման ուղղությունների վերաբերյալ: Համախառն պահանջարկը կազմված է ներքին և արտաքին պահանջարկներից: Ներքին պահանջարկը տեղեկատվություն է տալիս, թե ձևավորված եկամուտները ուղղվելու են սպառմանը, թե ներդրվելու են տնտեսության մեջ: Նշվածը հիմնականում բնութագրվում է պետական և մասնավոր հատվածների կողմից ստեղծված ընդհանուր եկամտում սպառման և ներդրումների մասնաբաժիններով, որոնք արտացոլվում են սպառում/ՀՆԱ և ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշներով: Իսկ արտաքին պահանջարկը տեղեկատվություն է տալիս գործընկեր երկրների կողմից հայրենական արտադրության ապրանքների և ծառայությունների վրա կատարված ծախսումների մասին:

<u>Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները</u>

2016-2018 թվականներին տնտեսական աճի շարժիչ ուժ է հանդիսացել ներքին պահանջարկը: Նշված ժամանակահատվածում, բացառությամբ 2016 թվականի, տնտեսական աճին հիմնականում նպաստել է ներքին պահանջարկը:

<u>Համախառն սպառում</u>

2016-2018 թվականներին վերջնական սպառումն իրական արտահայտությամբ աճել է՝ միջինում կազմելով շուրջ 4.8%՝ պայմանավորված մասնավոր հատվածի տնօրինվող եկամտի աճով: ՀՆԱ-ի՝ միջինում 4.3% աճի պայմաններում, համախառն պահանջարկի կառուցվածքում սպառման մասնաբաժինը վերականգնման միտումներ է դրսևորել՝ միջինում կազմելով 91.9%՝ պայմանավորված 2017-2018 թվականների զարգացումներով:

2019 թվականի առաջին եռամսյակում սպառման աճն իրական արտահայտությամբ կազմել է 11.8%՝ նախորդ տարվա 5.6% աճի ցուցանիշի դիմաց, ինչը պայմանավորված է եղել տնօրինվող եկամտի և վարկավորման ծավալների աճով:

Կանխատեսում. 2019 թվականին և միջնաժամկետում կանխատեսվում է վերջնական սպառման աճ: 2019 թվականին սպասվում է վերջնական սպառման 5.3% աճ՝ պայմանավորված տնօրինվող եկամտի, վարկավորման ծավալների և պետական սպառման աճերով: 2020-2022 թվականներին վերջնական սպառումն իրական արտահայտությամբ կաճի միջինում 2.7%-ով՝ հիմնականում պայմանավորված մասնավոր հատվածի սպառման աճով:

Համախառն ներդրումներ

2016-2018 թվականներին կապիտալ ներդրումները իրական արտահայտությամբ միջինում աճել են 11.2%: 2016 թվականի բացասական զարգացումներից հետո 2017-2018 թվականներին գրանցվել է կապիտալ ներդրումների միջինում 21.1% աճ: Ընդ որում հիմնական միջոցներում ներդրումները 2017-2018 թվականներին միջինում աճել են 7.1%-ով[11]՝ հիմնականում պայմանավորված մասնավոր ներդրումների աճով:

2019 թվականի հունվար-մարտ ամիսներին հիմնական միջոցների համախառն կուտակման աճի միտումները շարունակվել են: Չնայած 2019 թվականի հունվար-մարտ ամիսներին կապիտալ ներդրումները նվազել են 16.6%-ով[12], հիմնական միջոցների համախառն կուտակումն աճել է 10.2%-ով:

Կանխատեսում. Միջնաժամկետ հորիզոնում ներդրումների աճի միտումները կարագանան՝ պայմանավորված արտահանելի հատվածում մասնավոր ներդրումների աճով, ինչպես նաև պետական բյուջեի կապիտալ ծախսերի ավելացմամբ: 2019 թվականին կապիտալ ներդրումները կաճեն 10.7%-ով: Կրելով ՀՀ կառավարության կողմից որդեգրված ներդրումային միջավայրը խթանող քաղաքականության, պետական բյուջեի կապիտալ ծախսերի ավելացմամբ տնտեսության խթանման ազդեցությունը՝ միջնաժամկետում ներդրումները միջինում կաճեն շուրջ 8.0%՝ պայմանավորված լինելով թե՛ մասնավոր, թե՛ պետական հատվածներում ներդրումների աճով:

Զուտ արտահանում

2016-2018 թվականներին արտահանումը և ներմուծումը միջինում աճել են 14-15%-ով: Վերջին երեք տարիներին արտահանման իրական ծավալներն աճել են միջինում 14.1%-ով: Արտահանման աճը պայմանավորված է եղել արտահանելի ոլորտներում ներդումների աճով,

[11] 2018 թվականին համախառն կուտակումն աճել է 26.8%-ով, որը հիմնականում պայմանավորված է եղել նյութական շրջանառու միջոցների պաշարների աճով:

[12] Սա ըստ էության նախորդ տարվա ընթացքում նյութական շրջանառու միջոցների կուտակման բարձր տեմպերի հետևանք է, ինչը չի գրանցվել 2019թ.:

հանքավայրերի շահագործմամբ, ինչպես նաև արտահանման խրախուսմանն ուղղված՝ կառավարության կողմից վարվող քաղաքականությամբ: Ներմուծումը 2016-2018 թվականներին իրական արտահայտությամբ միջինում աճել է 15.0%-ով, ինչը պայմանավորված է եղել 2016-2018 թվականներին տնտեսությունում սպառողական և ներդրումային պահանաջարկի աճերով, ինչպես նաև 2017-2018 թվականների բարձր տնտեսական ակտիվությամբ:

2019 թվականի առաջին երեք ամիսների ընթացքում արտահանումը և ներմուծումը նվազել են, իսկ զուտ արտահանումը վատթարացել է պայմանավորված ներմուծման՝ արտահանման նկատմամբ ավելի փոքր նվազմամբ:

Կանխատեսում. Միջնաժամկետ հորիզոնում ակնկալվում է արտահանման առաջանցիկ աճ: 2019 թվականին կանխատեսվում է արտահանման 5.9% իրական աճ: Տնօրինվող եկամտի աճի պայմաններում՝ ներմուծումը նույնպես կաճի 4.1%-ով: 2020-2022 թվականներին, արտահանելի հատվածում ներդրումների ավելացման և ՀՀ կառավարության կողմից վարվող արտահանման խրախուսման քաղաքականության արդյունքում, կանխատեսվում է արտահանման ծավալների միջինում 7.8% իրական աճ, իսկ տնօրինվող եկամտի աճի պայմաններում՝ ներմուծման ծավալների միջինում 5.1% իրական աճ:

Աղյուսակ 3. *ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչների իրական աճերը, (%)*

	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Սպառում	-1.2	10.5	5.1	5.3	2.1	3.1	3.0
Ներդրում	-8.7	15.4	26.8	10.7	10.3	6.4	7.2
Արտահանում	19.1	18.7	4.6	5.9	7.1	8.0	8.5
Ներմուծում	7.6	24.6	12.7	4.1	4.8	5.1	5.4
Ընդամենը ՀՆԱ	0.2	7.5	5.2	5.4	4.9	5.0	5.1

Գծապատկեր 3. *Ծախսային բաղադրիչների տեսակարար կշիռները ՀՆԱ-ի կազմում*

Ամփոփելով նշենք, որ միջնաժամկետ հորիզոնում ամբողջական պահանջարկի աճը պայմանավորված կլինի հիմնականում ներքին սպառողական և ներդրումային պահանջարկի աճերով: Զուտ արտահանումը նույնպես կբարելավվի՝ նպաստելով տնտեսական աճին:

2.2.4. Գնային փոփոխականներ

Գների մակարդակը տնտեսության մեջ բնութագրվում է սպառողական գների ինդեքսով (ՍԳԻ) կամ ՀՆԱ դեֆլյատորով, իսկ դրանց փոփոխությունները ցույց են տալիս տնտեսությունում նկատվող գնաճի կամ գնանկման միտումները: ՍԳԻ-ն ցույց է տալիս ՀՀ սպառողական շուկայում որոշակի քանակությամբ ապրանքների (ներառյալ՝ ներմուծված) և ծառայությունների գների վարքագիծը, իսկ ՀՆԱ դեֆլյատորը՝ միայն մեր տնտեսությունում ստեղծված ապրանքների և ծառայությունների գների վարքագիծը:

<u>Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները</u>

2016-2018 թվականներին ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականությունը ունեցել է ընդլայնող ուղղվածություն: 2016 թվականին ՀՀ սպառողական շուկայում միջավայրը եղել է գնանկումային, սակայն 2017-2018 թվականներին գնաճը վերականգնվել է, ինչի արդյունքում 2016-2018 թվականներին միջին գնաճը միջինում կազմել է 0.7 տոկոս, իսկ 12-ամսյան՝ 1.1 տոկոս: 2016 թվականին գնանկմանը հիմնականում նպաստել են ներքին թույլ պահանջարկը, միջազգային շուկաներում որոշ ապրանքների գծով ձևավորված ցածր գների մակարդակը, ինչպես նաև պարենային ապրանքների ցածր գների

ձևավորումը: Արձագանքելով ձևավորված և ակնկալվող ցածր գնաճային միջավայրին, ՀՀ ԿԲ-ն 2016 թվականի փետրվարից շարունակել է իջեցնել քաղաքականության հիմնական՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8.5%-ից աստիճանաբար նվազեցնելով և 2017 թվականի փետրվարին սահմանելով 6%-ի մակարդակում: Արդյունքում, 2017 թվականի երկրորդ եռամսյակում գնանկումային միջավայրը չեզոքացավ, ինչին նպաստեցին նաև վերականգնվող ներքին պահանջարկը և որոշ գյուղատնտեսական ապրանքների գծով ձևավորված բարձր գները: 2018 թվականին 12-ամսյա գնաճը կազմել է 1.8%, ինչը հիմնականում պայմանավորվել է նախորդ տարվա համեմատ ներքին պահանջարկի որոշակի թուլացմամբ:

2019 թվականի հունվարին 12 ամսյա գնաճը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ դանդաղել է 0.8%-ի, սակայն փետրվար-մայիս ամիսներին արագացել է և մայիսին կազմել 2.8%՝ գտնվելով գնաճի թիրախային միջակայքի ստորին հատվածում:

Կանխատեսում. 2019 թվականի ընթացքում 12 ամսյա գնաճը կգտնվի տատանումների թույլատրելի միջակայքի ստորին հատվածին մոտ և կանխատեսվող հորիզոնում կկայունանա նպատակային ցուցանիշի շուրջ**:**

Գծապատկեր 4. *2016-2018 թվականներին միջին և 12-ամսյա (դեկտեմբերի դրությամբ) գնաճի նպաստումները 4 խոշոր ապրանքախմբերով, տոկոսային կետ*

<u>Դեֆլյատոր</u>

2016-2018 թվականներին ՀՆԱ ինդեքս դեֆլյատորը բավականին ցածր է եղել: Այն միջինում աճել է 1.7%-ով: Դեֆլյատորի աճին հիմնականում նպաստել է ծառայությունների և գյուղատնտեսության գների ինդեքսները՝ միջինում աճելով համապատասխանաբար 1.4%-ով և 4.7%-ով: Արդյունաբերության գների ինդեքսը համեմատաբար փոքր նպաստում է ունեցել և աճել է միջինում 1.7%-ով: Շինարարության գները բացասական նպաստում են ունեցել դեֆլյատորի աճին՝ միջինում նվազելով 1.9%-ով:

Կանխատեսում. 2019 թվականին կանխատեսվում է ՀՆԱ-ի դեֆլյատորի աճ շուրջ 2.0%: Միջնաժամկետում դեֆլյատորը նույնպես կաճի և միջին աճը կկազմի շուրջ 3.7%: Դեֆլյատորի աճի կանխատեսման հիմքում ընկած է ՍԳԻ-ի և ապրանքների միջազգային գների վերաբերյալ գնահատականները:

2.2.5. Ֆինանսական շուկա

Այս բաժնում կներկայացվեն ֆինանսական շուկաները բնութագրող երկու հիմնական՝ ֆինանսական միջնորդության և ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքների ցուցանիշները:

Ֆինանսական միջնորդության մակարդակը բնութագրում է ֆինանսական ինստիտուտների (բանկեր, վարկային կազմակերպություններ, ներդրումային ընկերություններ և այլն) ակտիվներն ու պարտավորությունները՝ ձևավորված սուբյեկտների խնայողությունները միավորելու և ներդրումների վերածելու նպատակով:

Ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքներն ազատ մրցակցության պայմաններում ցույց են տալիս փողի գինը՝ հաշվի առած ֆինանսական շուկայի մասնակիցների կողմից գնահատվող տարբեր ռիսկերի աստիճանը: Գնաճի տրված մակարդակի պայմաններում, եթե տոկոսադրույքները բարձր են, ապա ռիսկայնության աստիճանը բարձր է կամ հակառակը: Այսինքն՝ ֆինանսական շուկայի միջոցով կարգավորվում է փողի նկատմամբ առաջարկը և պահանջարկը (փողի զանգված, փողի բազա) և դրա գինը (բանկային տոկոսադրույք) տնտեսական գործունեություն ծավալողների համար:

<u>Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները</u>

Դրամավարկային հատված և ֆինանսական շուկա

2016-2018 թվականներին փողի բազայի միջին աճը կազմել է 10%: Ընդ որում՝ ՀՀ ԿԲ-ից դուրս կանխիկ դրամը միջինում աճել է 11.1%-ով (նպաստումը փողի բազայի աճին կազմել է 5.1 տոկոսային կետ), ՀՀ դրամով թղթակցային հաշիվները՝ 3.2%-ով, իսկ արտարժույթով թղթակցային հաշիվները՝ 15.8%-ով (նպաստումը փողի բազային կազմել է համապատասխանաբար՝ 0.9 և 2.3 տոկոսային կետ):

2016-2018 թվականներին փողի զանգվածի միջին աճը կազմել է 14.5%: Փողի զանգվածի աճը պայմանավորվել է առավելապես դրամային ավանդների աճով, որի նպաստումը կազմել է 8.9 տոկոսային կետ: Փողի զանգվածի աճին բանկային համակարգից դուրս կանխիկը նպաստել է 2.1 տոկոսային կետով, իսկ արտարժութով ավանդների նպաստումը կազմել է 3.5 տոկոսային կետ:

2019 թվականի հունվար-մայիս ամիսներին փողի բազայի աճի միջին տեմպը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ արագացել է, իսկ զանգվածի աճի տեմպը՝ դանդաղել:

<u>Գծապատկեր 5.</u> *<u>2016-2018 թվականին փողի բազայի և փողի զանգվածի աճին նպաստումները, տոկոսային կետ</u>*

2016-2018 թվականներին դոլարայնացման մակարդակը ՀՀ-ում շարունակաբար նվազել է: Եթե 2016 թվականի դեկտեմբերին արտարժույթով ավանդներ/ընդամենը ավանդներ հարաբերակցությունը կազմում էր 64.6%, ապա 2018 թվականի դեկտեմբերին այն կրճատվել է մինչև 60.4%:

2016-2018 թվականներին բանկերի կողմից ներգրավված ռեզիդենտների ավանդների ծավալների միջին աճը կազմել է 14.5%, որին 10.1 տոկոսային կետով նպաստել է դրամային ավանդների, 4.4 տոկոսային կետով՝ արտարժույթային ավանդների աճը:

2016-2018 թվականներին բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալի միջին աճը կազմել է 13.1%, որին 9.5 տոկոսային կետով նպաստել է դրամով վարկերի, 3.6 տոկոսային կետով՝ արտարժութային վարկերի աճը: Վարկերի աճին դրականորեն են նպաստել բոլոր ոլորտներին ուղղված վարկերի աճերը, իսկ աճը առավելապես պայմանավորել են սպառողական, արդյունաբերության, սպասարկման ոլորտի, առևտրի և հիպոթեքային վարկերը:

Նշենք, որ 2016-2018 թվականներին վարկերի աճը պայմանավորված էր հիմնականում վարկավորման պայմանների դյուրացմամբ, բանկերի կապիտալի համալրման և մրցակցության սրման գործոններով, ինչպես նաև ներքին պահանջարկի վերականգնմամբ:

Գծապատկեր 6. *2016-2018 թվականներին ռեզիդենտների վարկերի և ավանդների ծավալների աճը.*

(նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, %) և տոկոսադրույքները (մինչև 1 տարի ժամկետայնությամբ, %)

2018 թվականին ավանդների և վարկերի տոկոսադրույքները շարունակել են նախորդ տարվա նվազման միտումները: ՀՀ դրամային ավանդների (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը կազմել է 8.7%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.3 տոկոսային կետով: ՀՀ դրամով վարկավորման (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը կազմել է 12.8%՝ նվազելով 1.6 տոկոսային կետով: Արտարժույթով ավանդների (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը 2018 թվականին կազմել է 2.8%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 1.1 տոկոսային կետով: Արտարժույթով վարկավորման (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը մնացել է անփոփոխ՝ կազմելով 8%: Տոկոսադրույքների նվազումը պայմանավորված է եղել ՀՀ ԿԲ կողմից դրամավարկային պայմանների մեղմացմամբ և դրա լագային ազդեցություններով, ինչպես նաև մրցակցության սրման գործոններով:

Ֆինանսական շուկայում արտարժույթով և դրամով միջին կշռված մինչև 1 տարի ժամկետով տոկոսադրույքների միջև սպրեդը 2018 թվականին 2016 թվականի համեմատ աճել է 0.2 տոկոսային կետով՝ կազմելով շուրջ 4.7 տոկոսային կետ: Ընդ որում, դրամով վարկերի և ավանդների տոկոսադրույքների սպրեդը նվազել է 1.6 տոկոսային կետով՝ կազմելով 4.1 տոկոսային կետ, իսկ արտարժույթով վարկերի և ավանդների տոկոսադրուքների սպրեդն աճել է 1.5 տոկոսային կետով՝ կազմելով 5.2 տոկոսային կետ:

2019 թվականի հունվար-մայիս ամիսներին առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին

տրամադրած վարկերի և ռեզիդենտներից ներգրաված ավանդների միջին աճի տեմպերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ դանդաղել են, իսկ միջին կշռված կարճաժամկետ տոկոսադրույքները գրեթե նույն մակարդակում են մնացել:

2.2.6. Վճարային հաշվեկշիռ

Հայաստանի արտաքին տնտեսական գործունեության արդյունքում տեղի են ունենում տնտեսական հոսքեր դեպի հանրապետություն և հակառակ ուղղությամբ: Այդ հոսքերը արտացոլվում են երկրի վճարային հաշվեկշռում: Վճարային հաշվեկշիռը բաղկացած է երկու հիմնական բաժիններից.

- Ընթացիկ հաշիվ (հիմնականում ցույց է տալիս արտահանման և ներմուծման հետ կապված հոսքերը),
- Կապիտալի և ֆինանսական հաշիվ (ցույց է տալիս կապիտալի ներհոսքն ու արտահոսքը):

Տնտեսության արտաքին կայունության տեսանկյունից կարևոր ցուցանիշ է ընթացիկ հաշվի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ: Միաժամանակ պետք է նշել, որ արտաքին աշխարհի հետ հարաբերություններում Հայաստանը համարվում է փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, ինչը նշանակում է, որ տնտեսական հոսքերի շարժը դեպի երկիր և երկրից դուրս հնարավորինս ազատականացված է:

<u>Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները</u>

<u>Ընթացիկ հաշիվ</u>

2016-2018 թվականներին վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը շարունակել է պահպանվել ցածր մակարդակում՝ կազմելով ՀՆԱ-ի միջինում 4.6%-ը: Ընթացիկ հաշվի պակասուրդի միջին ցածր մակարդակի պահպանումը հիմնականում պայմանավորվել է դոլարային արտահայտությամբ ապրանքների և ծառայությունների արտահանման միջին աճին (17.3%) զիջող ներմուծման միջին աճով (16.6%), ինչպես նաև դրամական փոխանցումների ներհոսքի վերականգնմամբ (միջինում 0.8% աճ): Այդուհանդերձ, 2018 թվականին ներմուծման աճը առաջանցիկ էր արտահանման աճի համեմատ, ինչով պայմանավորված՝ ընթացիկ հաշվի պակասուրդը կտրուկ

խորացել է՝ կազմելով ՀՆԱ-ի 9.1% և շեղվելով իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակից[13]: Գծապատկեր 7-ում ներկայացված են ընթացիկ հաշվի միտումները և սպասումները:

Արտաքին առևտուր[14]

Ցուցաբերելով աճի արագացման միտում՝ արտաքին ապրանքաշրջանառությունը 2016-2018 թվականներին միջինում աճել է 16.2%-ով: 2018 թվականին արտաքին ապրանքաշրջանառությունն աճել է 16.4%-ով, ընդ որում՝ տեղի է ունեցել ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման դոլարային արտահայտությամբ ծավալների աճ. արտահանումն աճել է 7.8%-ով՝ կազմելով 2411.9 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 21.1%-ով՝ կազմելով 4963.2 մլն ԱՄՆ դոլար:

Ընթացիկ տարվա հունվար-ապրիլի տվյալներով արտաքին ապրանքաշրջանառության աճը կտրուկ նվազել է. նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 36.7% աճի դիմաց կազմելով 0.2% (2282.2 մլն ԱՄՆ դոլար)՝ հիմնականում ներմուծման աճի տեմպի դանդաղման հաշվին (ներմուծումն աճել է 2.5%-ով նախորդ տարվա 41.3% աճի դիմաց): Նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ տեղի է ունեցել նաև արտահանման ծավալների 4.1% նվազում (նախորդ տարի՝ 28.8% աճ):

Ներմուծում

2016-2018 թվականներին ապրանքների ներմուծումը դրսևորել է աճի միտում՝ ներմուծման ծավալները միջինում աճել են 15.8%-ով: Բնակչության տնօրինվող եկամուտների, սպառողական և ներդրումային բնույթի ապրանքների նկատմամբ պահանջարկի աճերով պայմանավորված տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ ներմուծման աճի վերականգնում՝ նշված ժամանակաշրջանին նախորդող տարվա (2015թ.) խորը անկումից հետո:

Հիմնականում պայմանավորված տնտեսական ակտիվությամբ, ներքին պահանջարկով, ինչպես նաև պաշարների կուտակմամբ 2018 թվականին արձանագրվել է ներմուծման երկնիշ՝ 21.2% աճ: Ներմուծման աճի ամենաբարձր՝ 7.5 տոկոսային կետը պայմանավորվել է կառուցվածքում ամենամեծ կշիռ (18.8%) ունեցող ներդրումային բնույթի՝ «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ»

[13] ՀՀ ՖՆ գնահատականներով այդ երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակը կազմում է 3-4%:

[14]Այսուհետ՝ ներկայացված է արտաքին առևտրի ըստ բեռնամաքսային հայտարագրերի տվյալների հրապարակվող պաշտոնական տեղեկատվությունը՝ ապրանքների արտահանումը ՖՕԲ և ներմուծումը ՍԻՖ գներով, ինչը թույլ է տալիս կատարել հնարավորինս մանրամասն վերլուծություն:

ապրանքախմբով: Ներմուծման կառուցվածքում հաջորդ մեծ կշիռ (14.5%) ունեցող՝ «Հանքահումքային արտադրանք» ապրանքախումբը ներմուծման ծավալների աճին նպաստել է 1.8 տոկոսային կետով՝ ինչը հիմնականում պայմանավորված է եղել հումքային ապրանքների գների աճով: Ներմուծման աճին զգալի է նպաստել նաև «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախումբը (2.8 տոկոսային կետով):

Ըստ ապրանքների լայն տնտեսական դասակարգման[15] 2018 թվականին ներմուծման աճին հիմնականում նպաստել են. «Միջանկյալ սպառման ապրանքները»՝ 8.9 և «Կապիտալ ապրանքները»՝ 6.9 տոկոսային կետերով՝ վկայելով տնտեսական ակտիվության աճի մասին: Իսկ «Վերջնական սպառման ապրանքները» և «Մարդատար ավտոմեքենաները» նպաստել են համապատասխանաբար՝ 2.9 և 2.5 տոկոսային կետերով:

2019 թվականի հունվար-ապրիլին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ներմուծման ծավալներն աճել են 2.5%-ով (1530.5 մլն ԱՄՆ դոլար): Ներմուծման աճին նշանակալի դրական նպաստումներ են ունեցել «Պատրաստի սննդի արտադրանք», «Հանքահումքային արտադրանք» և «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերը (համապատասխանաբար՝ 1.9, 1.7 և 1.7 տոկոսային կետերով): Ներմուծման աճին բացասական են նպաստել հիմնականում «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերը (համապատասխանաբար՝ 2.0 և 1.0 տոկոսային կետերով):

Կանխատեսում. 2019 թվականին սպասվում է ապրանքների ներմուծման 5% աճ (դոլարային արտահայտությամբ), ինչը հիմնականում պայմանավորված կլինի ներքին պահանջարկի կանխատեսվող աճով: 2020-2022 թվականներին ապրանքների ներմուծման աճի տեմպը կմնա հարաբերականորեն կայուն, միջին տարեկան աճը կկազմի շուրջ 6%, իսկ ապրանքների և ծառայությունների ներմուծման աճը՝ մոտ 7%:

Արտահանում

2016-2018 թվականներին ապրանքների արտահանման աճը արագացել է՝ միջինում կազմելով 17.8%: Հիմնականում պայմանավորված գործընկեր երկրներում պահանջարկի աճով,

[15] Ապրանքների լայն տնտեսական դասակարգմամբ (BEC) 2018 թվականի պաշտոնական տվյալները կհրապարակվեն ընթացիկ տարվա վերջին, ուստի այս հատվածում ներկայացված են ՀՀ ՖՆ գնահատականները (կիրառվել են արտաքին առևտրի 4-անիշ վիճակագրությունից BEC-ին անցման միջազգային փորձում ընդունված անցումային բանալիներ):

տնտեսության արտահանելի հատվածում կատարված ներդրումներով, մրցունակության բարձրացմամբ, ինչպես նաև արտահանման խրախուսմանն ուղղված՝ կառավարության կողմից վարվող քաղաքականությամբ 2018 թվականին արձանագրվել է արտահանման 7.8% աճ:

Արտահանման աճին ամենաբարձր՝ 4.0 տոկոսային կետով դրական է նպաստել «Մանածագործական իրեր» ապրանքախումբը, որի մասնաբաժինը արտահանման կառուցվածքում վերջին տասնամյակում դրսևորել է կայուն աճի միտում: Արտահանման աճին դրական են նպաստել նաև «Բուսական ծագման արտադրանք» և «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերը, համապատասխանաբար՝ 1.4 և 1.3 տոկոսային կետերով: Հիմնականում պայմանավորված մետաղական հանքաքարի արդյունահանման նվազմամբ արտահանման կառուցվածքում ամենամեծ՝ 26.7% կշիռ ունեցող «Հանքահումքային արտադրանք» ապրանքախումբը 1.4 տոկոսային կետով զսպել է արտահանման աճը:

2019 թվականի առաջին չորս ամիսների ընթացքում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ արտահանումը նվազել է 4.1%-ով (751.7 մլն ԱՄՆ դոլար): Արտահանման նվազմանը հիմնականում նպաստել են «Հանքահումքային արտադրանք» (4.4 տոկոսային կետ) և «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» (2.5 տոկոսային կետ) ապրանքախմբերը, ինչը հիմնականում պայմանավորվել է հանքագործական արդյունաբերության և մետաղական հանքաքարի արդյունահանման նվազմամբ, ինչպես նաև միջազգային շուկաներում մետաղների գների անկմամբ: Արտահանման նվազումը զսպել են՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի աճերը, համապատասխանաբար՝ 2.2 և 1.5 տոկոսային կետերով դրական նպաստելով արտահանմանը:

Կանխատեսում. Գործընկեր երկրների զարգացումներով (տե՛ս Ներդիր 1-ը) և հիմնականում մշակող արդյունաբերության աճով պայմանավորված 2019 թվականին սպասվում է շուրջ 6.5% արտահանման աճ (դոլարային արտահայտությամբ): Միջնաժամկետում տնտեսության արտահանելի հատվածում կատարվող ներդրումների և ՀՀ կառավարության կողմից վարվող արտահանման վրա հիմնված տնտեսական աճին և ներդրումների խթանմանն ուղղված քաղաքականությանը համահունչ ակնկալվում է ապրանքների արտահանման միջին տարեկան մոտ 11% աճ: Նույն ցուցանիշը ապրանքների և ծառայությունների համար կկազմի շուրջ 10%:

<u>Գործընկեր երկրներ</u>

Հայաստանը, լինելով փոքր և բաց տնտեսություն, արագ է արձագանքում գործընկեր երկրների տնտեսական զարգացումներին, հատկապես այն երկրների, որոնք ներկայացնում են հիմնական պահանջարկը Հայաստանյան ապրանքների նկատմամբ: **2016-2018 թվականների արտահանման միջին աճը (17.8%) գերազանցել է նախորդ երեք տարիների միջին ցուցանիշին (2.6%),** ընդ որում՝ 2016-2018 թվականների ՀՀ արտահանման աճի միջինում շուրջ 17.9 տոկոսային կետը ապահովել են. Ռուսաստանը (7.9), Շվեցարիան (5.4), Բուլղարիան (3.1) և ԱՄԷ-ն (1.5 տոկոսային կետեր): Գործընկեր երկրներ արտահանվող հիմնական ապրանքատեսակները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

<u>Աղյուսակ 4.</u> *<u>Արտահանման աշխարհագրական կառուցվածքը</u>*

	2013	2014	2015	2013-2015 միջին	2016	2017	2018	2016-2018 միջին	Հիմնական ապրանքատեսակները[16]
Ընդամենը արտահանման աճ	**7.1**	**4.6**	**-4.0**	**2.6**	**20.6**	**24.9**	**7.8**	**17.8**	
Ռուսաստանի Դաշնություն									Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ (36%); բնական կամ տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով (7.7%)
մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	22.6	19.9	16.5	19.7	20.9	24.9	27.6	24.5	
նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	4.0	-1.7	-4.1	-0.6	8.7	10.2	4.9	7.9	
Բուլղարիա									Հանքաքար, խարամ և մոխիր (99.6%)
մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	10.3	5.5	5.3	7.0	8.5	12.6	8.9	10.0	
նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	1.7	-4.5	-0.4	-1.1	4.9	7.3	-3.0	3.1	
Շվեյցարիա									Թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ (57.2%); հանքաքար, խարամ և մոխիր (32.9%); ժամացույցներ (8.2%)
մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	1.7	0.9	2.6	1.7	4.2	11.7	13.9	9.9	
նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	-3.4	-0.7	1.6	-0.8	2.4	10.4	3.4	5.4	

[16]Առանձին երկրներով հիմնական պահանջարկը հայաստանյան ապրանքների նկատմամբ որոշվել է ըստ երկիր-ապրանք կտրվածքի ՀՀ ԱՎԾ-ի վերջին պաշտոնական հրապարակման (տվյալ դեպքում՝ 2017թ. տվյալների կառուցվածքով):

Գերմանիա									Պղինձ և պղնձից արտադրատեսակներ (53.1%); ալյումին և դրանից պատրաստված արտադրատեսակներ (21.3%); հագուստ եւ հագուստի պարագաներ՝ բացի տրիկոտաժե մեքենայագործ կամ ձեռագործ հագուստից եւ պարագաներից (14.3%);
մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	5.8	10.2	9.4	8.5	7.8	5.9	5.6	6.4	
նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	-1.4	4.9	-1.2	0.8	-0.1	-0.3	0.1	-0.1	
Իրաք									Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ (93.1%)
մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	3.3	5.2	8.8	5.8	7.7	5.2	6.2	6.4	
նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	2.4	2.2	3.2	2.6	0.5	-1.1	1.5	0.3	
Վրաստան									Հանքաքար, խարամ և մոխիր (56.7%); ծխախոտ եւ ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ (9.1%)
մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	5.8	5.5	8.4	6.6	8.2	6.8	2.8	5.8	
նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	1.0	-0.1	2.6	1.2	1.5	0.3	-3.8	-0.7	
Չինաստան									Հանքաքար, խարամ և մոխիր (97.8%)
մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	4.7	11.0	11.1	8.9	5.4	5.3	4.4	5.0	
նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	2.7	6.9	-0.4	3.1	-4.6	1.2	-0.5	-1.3	
Նիդերլանդներ									Սև մետաղներ (85%); հանքաքարեր, խարամ եւ մոխիր (7.2%)
մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	4.5	4.8	3.2	4.2	2.8	4.0	5.5	4.1	
նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	-1.0	0.5	-1.8	-0.7	0.2	2.1	2.0	1.4	
Իրանի Իսլամական Հանրապետություն									Հանքային վառելիք, նավթ և նավթավերամշակման արտադրանք. բիտումային նյութեր. հանքային մոմեր (72.5%); միս և մսից սննդային ենթամթերք (19%)
մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	6.4	5.5	5.5	5.8	4.2	3.8	3.9	4.0	
նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	-1.0	-0.7	-0.2	-0.6	-0.4	0.5	0.5	0.2	
Արաբական Միացյալ Էմիրություններ									Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ (52.4%); բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք
մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	0.6	0.8	0.6	0.7	3.6	4.6	3.1	3.7	

նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	0.0	0.2	-0.2	0.0	3.7	2.1	-1.3	1.5	կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ (34.8%)
Կանադա									Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ (67.3%); ալյումին և դրանից պատրաստված արտադրատեսակներ (22.7%)
մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	5.9	6.0	7.3	6.4	7.8	0.7	1.4	3.3	
նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	0.2	0.4	1.0	0.5	2.1	-7.0	0.8	-1.3	
Միացյալ Նահանգներ									Ալյումին և դրանից պատրաստված արտադրատեսակներ (66.3%); բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ (13.9%)
մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	6.0	5.9	3.6	5.2	2.2	3.0	2.0	2.4	
նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	0.1	0.2	-2.5	-0.7	-1.0	1.5	-0.8	-0.1	
Բելգիա									Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ (61.5%); հանքաքար, խարամ և մոխիր (35.9%)
մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	8.9	4.0	2.9	5.3	2.3	2.0	2.0	2.1	
նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	0.3	-4.6	-1.3	-1.9	-0.1	0.2	0.2	0.1	

2016-2018 թվականներին ներմուծվող ապրանքների նկատմամբ երկրի սպառողական պահանջարկը բավարարվել է մեծամասամբ Ռուսաստանի հաշվին. Ռուսաստանի մասնաբաժինը միջինում կազմել է ներմուծման 28%-ը (հիմնականում ներմուծվում է հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, գազ, հացահատիկներ և ալյումին): Նշանակալի են նաև Չինաստանից[17], Գերմանիայից, Թուրքիայից, ԻԻՀ-ից և Իտալիայից ներմուծման մասնաբաժինները:

Արտահանման և ներմուծման նշված միտումների արդյունքում հիմնական գործընկեր երկրների կազմը գրեթե չի փոփոխվել, մինչդեռ ըստ աշխարհագրական կառուցվածքի արտաքին առևտրի կշիռները փոխվել են. նվազել է ԵՄ երկրների մասնաբաժինը՝ հիմնականում ի օգուտ ԵԱՏՄ երկրների: 2016-2018 թվականներին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության միջինում շուրջ

[17] Չինաստանից հիմնականում ներմուծվել են սարքավորումներ և ապարատներ, տրանսպորտային միջոցներ, դրանց մասեր, հանքային վառելանյութեր, հագուստ, Գերմանիայից՝ տրանսպորտային միջոցներ, կաթսաներ, սարքավորումներ, դրանց մասեր, Թուրքիայից՝ հագուստ և հագուստի պարագաներ, պլաստմասսայից արտադրատեսակներ, բամբակ, ԻԻՀ-ից՝ հանքային վառելիք, նավթ և նավթամթերք, պլաստմասսայից արտադրատեսակներ, Իտալիայից՝ սարքավորումներ և մեխանիկական սարքեր, դրանց մասեր, թելեր քիմիական մանածագործական նյութերից:

30.2%-ը բաժին է ընկել ԱՊՀ, 24.4%-ը՝ ԵՄ երկրներին և 45.4%-ը՝ այլ երկրներին (նախորդ՝ 2013-2015 թվականներին միջինում 29, 26.7 և 44.2%): 2016-2018 թվականներին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության մեջ ԵԱՏՄ երկների միջին կշիռը (27.6%) նախորդ երեք տարիների միջինի նկատմամբ աճել է 2.7 տոկոսային կետով, ինչը հիմնականում պայմանավորվել է դեպի այդ երկներ արտահանման նշանակալի աճով (հիմնականում՝ Ռուսաստան):

Դրամական փոխանցումներ[18]

2016-2018 թվականներին Հայաստան ներհոսող դրամական փոխանցումները միջինում աճել են մոտ 0.8%-ով: 2018 թվականին դրամական փոխանցումները կազմել են 1452.1 մլն ԱՄՆ դոլար և տարվա ընթացքում նվազել են 2.8%-ով՝ բացասական ազդելով բնակչության տնօրինվող եկամուտների աճի վրա: Ընդ որում՝ անձնական (մասնավոր) տրանսֆերտները տարվա ընթացքում կրճատվել են 2.3%-ով (15.5 մլն ԱՄՆ դոլարով), սեզոնային աշխատողների կողմից ստացված զուտ աշխատավարձը՝ 4.3%-ով (27.8 մլն ԱՄՆ դոլարով), իսկ որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատանքների դիմաց ստացված եկամուտները՝ 4.3%-ով (5.5 մլն ԱՄՆ դոլարով):

Մասնավոր տրանսֆերտների և աշխատողների դրամական փոխանցումների հիմնական աղբյուր է հանդիսանում գործընկեր երկրների տնտեսական աճը. Ռուսաստանի և ԱՄՆ-ի միջին աճերը 2016-2018 թվականներին համապատասխանաբար կազմել են 1.4 և 2.3% (տես՝ Ներդիր 1-ը): Դրամական փոխանցումների զուտ ներհոսքի կառուցվածքում մեծ կշիռ են կազմում Ռուսաստանից ներհոսող դրամական փոխանցումները (2018 թվականին՝ 96.8%[19]): Դրամական փոխանցումների վրա մեծ է նաև ռուսական ռուբլու տատանումների ազդեցությունը, այսպես՝ 2017 թվականին դոլարի նկատմամբ ռուսական ռուբլու արժևորումը ունեցել է դրական ազդեցություն դոլարային արտահայտությամբ դրամական փոխանցումների վրա՝ հանգեցնելով դրամական փոխանցումների աճի, իսկ 2018 թվականին, ինչպես նաև 2019 թվականի առաջին չորս ամիսներին՝ փոխանցումների նվազումը հիմնականում պայմանավորվել է ռուսական ռուբլու արժեզրկմամբ:

Փոխարժեք

---

[18] Ֆիզիկական անձանց դրամական փոխանցումները ներկայացված են «Դեպի ՀՀ անձնական դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի» ՀՀ ԿԲ-ի կայքում ընթացիկ տարվա հունիսի 21-ի դրությամբ հրապարակված տեղեկատվության հիման վրա (https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx):

[19] Դրամական փոխանցումների կառուցվածքը դիտարկվել է «ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրներից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը տարեկան փոխանցումներ» ՀՀ ԿԲ տվյալներով:

2016-2018 թվականներին ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ շարունակաբար արժեզրկվել է՝ միջինում շուրջ 0.4%-ով: 2018 թվականին նախորդ տարվա միջինի նկատմամբ գրանցվել է ՀՀ դրամի անվանական արժեքի 0.06% արժեզրկում: 2019 թվականի հունվար-ապրիլ ամիսներին միջին փոխարժեքը կազմել է 486.5 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց (2018 թվականի առաջին չորս ամիսներին՝ 481.4)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի միջինի նկատմամբ արժեզրկվելով 1.1%-ով:

Ամփոփելով նշենք, որ միջնաժամկետ հորիզոնում վերը նշված միտումների արդյունքում 2019 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը կկազմի ՀՆԱ-ի 7.0%-ը, իսկ 2020-2022 թվականներին՝ միջինում 5.6%-ը՝ մոտենալով իր երկարաժամկետ կայուն մակարդակին[20]: Ընդ որում՝ միջնաժամկետ հորիզոնի վերջում ապրանքների և ծառայությունների արտահանման կշիռը ՀՆԱ-ում կհասնի 41.4%-ի (2019թ-ի համար կանխատեսվում է 38% կշիռ), ապրանքների և ծառայությունների բացասական հաշվեկշիռը կկրճատվի մինչև 11.1% (2019թ-ին՝ 14.7%), իսկ դրամական զուտ փոխանցումները կշարունակեն կրճատվել՝ կազմելով ՀՆԱ-ի 8.2%-ը (2019թ-ին՝ 8.8%):

Գծապատկեր 7. *Ընթացիկ հաշվի պակասուրդը և դրա բաղադրիչները, ՀՆԱ-ում տոկոս*

[20] Տես 12-րդ հղումը:

2.2.7. Պետական հատված

ՀՀ կառավարությունը 2016-2018 թվականներին իրականացրել է զսպող հարկաբյուջետային քաղաքականություն. ընդ որում ուշադրության կենտրոնում է պահվել ՀՀ կառավարության պարտքի կայունության ապահովումը, զուգահեռաբար նպատակ էր դրվել նպաստել տնտեսական աճի վերականգնմանը և մակրոտնտեսական կայունության ապահովմանը:

Գծապատկեր 8. *Հարկաբյուջետային ազդակը*[21]

2016-2018 թվականներին ՀՀ պետական բյուջեի եկամուտները ՀՆԱ-ում միջինում կազմել են 22.6%: Ընդ որում՝ եկամուտների կշիռը վատթարացել է, բացառությամբ 2018 թվականի՝ 2017 թվականի ՀՆԱ-ի մեջ 22.2% կշիռը դարձել է 22.3%: Հարկային եկամուտները և տուրքերը 2017-2018 թվականներին ՀՆԱ-ի մեջ բարելավվել են: Մասնավորապես 2018 թվականին 20.8%-ից աճել են 21.0%-ի՝ բարելավվելով 0.2 տոկոսային կետով: Սակայն, նշված ժամանակահատվածում հարկերի իրական պատկերն արտացոլող ճշգրտված հարկային եկամուտներ և տուրքերը (առանց ԱԱՀ վերադարձի հարկեր) ՀՆԱ-ի մեջ կշռով բարելավվել են 0.5 տոկոսային կետով 2017 թվականի 20.5%-ից դարձել՝ 21.0%:

2016-2018 թվականներին ՀՀ պետական բյուջեի ծախսերը ՀՆԱ-ի մեջ նվազել են՝ միջինում կազմելով 26.6%: 2018 թվականի պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում նվազել է 2.9 տոկոսային կետով, ընդ որում՝ ընթացիկ ծախսերի կշիռը նվազել է 1.1 տոկոսային կետով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի կշիռը՝ 1.7 տոկոսային կետով: Արդյունքում 2018 թվականին պետական բյուջեի ընդամենը ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 24.1%-ը, որից ընթացիկ ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 21.6%-ը, իսկ կապիտալ ծախսերը՝ 2.5%-ը (2017 թվականի 4.3% կշռի մեջ ՀՆԱ-ի 1.6%-ը «Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական արտահանման վարկի հաշվին ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի գումարն է):

---

[21] *Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա գնահատելու համար օգտագործվել է հարկաբյուջետային ազդակի ցուցանիշը, որը բյուջեի եկամուտների ազդակի և ծախսերի ազդակի հանրագումարն է, ընդ որում 2016-2017թթ. փաստացի և 2019 թվականի բյուջեով ծրագրավորված ՌԴ-ից ստացված ռազմական վարկի հաշվարկային ծախսերը ներառված չեն:*

2016-2018 թվականների զսպող հարկաբյուջետային քաղաքականության պայմաններում պետական բյուջեի պակասուրդը նվազել է: 2018 թվականին պետական բյուջեի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի 1.8%-ը՝ 2016 թվականի համեմատ նվազելով 3.7 տոկոսային կետով:

2016-2017 թվականներին ոլորտում ախտորոշվել են որոշ առանցքային խնդիրներ. այսպես հարկաբյուջետային քաղաքականության իրականացումն ուղեկցվել է պակասուրդի մեծացմամբ, սակայն նկատվել են «ոսկյա կանոնից» շեղումներ: Այսինքն՝ պակասուրդի ընդլայնումը չի ուղեկցվել կապիտալ ծախսերի համարժեք մեծացմամբ, իսկ ընթացիկ ծախսերն իրականացվել են ավելին, քան հարկային եկամուտներն են: Ընթացիկ ծախսերի իրականացումը կարճաժամկետում խթանում է տնտեսական զարգացումը, սակայն երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման տեսանկյունից առավելապես կարևորվում է կապիտալ ծախսերի իրականացումը: Հետևաբար փոխառությունների ներգրավումը հատկապես արդյունավետ կարող է լինել տնտեսության համար, եթե դրանք ուղղվում են կապիտալ ծախսերին: Այդ նպատակով 2018թ. հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում հնարավոր է եղել ուղղել վերոնշյալ խնդիրները:

Գծապատկեր 9. *Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի և պակասուրդի կշիռը ՀՆԱ-ում, %*

Գծապատկեր 10. *Ընթացիկ ծախսերի և հարկեր, տուրքերի կշիռը ՀՆԱ-ում,%*

Կանխատեսում. 2020-2022 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի հարկաբյուջետային շրջանակը կառուցվել է 2017թ. մշակված և 2018թ.-ից ուժի մեջ մտած հարկաբյուջետային կանոնների արդիականացված համակարգի[22] հիման վրա:

Այդ կանոններին համահունչ՝ կանխատեսվող միջնաժամկետ հորիզոնում, հաշվի առնելով հարկաբյուջետային և պարտքային կայուն միջավայր ձևավորելու անհրաժեշտությունը, հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա 2020 թվականին բնութագրվելու է ընդլայնող ազդեցությամբ, իսկ 2021-2022 թվականներին՝ չեզոք ազդեցությամբ: Միջնաժամկետ հորիզոնում թիրախավորվել է ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ-ի աստիճանական նվազում և 2023 թվականին 50 տոկոսից ցածր ցուցանիշի ապահովում (տե՛ս 2020-2022 թվականների ՄԺԾԾ-ում ներառված ՀՀ կառավարության պարտքի նվազեցման 2019-2023թթ. վերանայված ծրագիրը): Այս թիրախին հասնելու նպատակով 2019 թվականին ակնկալվում է, որ ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը կկազմի ՀՆԱ-ի 2.3%-ը, իսկ միջնաժամկետ հորիզոնում կկայունանա 2.2%-ի շուրջ:

2019 թվականի համար կանխատեսվող տնտեսական զարգացումների, հարկային վարչարարության և ստվերի դեմ պայքարի արդյունքում ակնկալվում է 2019 թվականի պետական բյուջեի պլանավորված ցուցանիշի նկատմամբ հարկերի գերակատարում 62 մլրդ դրամի չափով, որի արդյունքում 2018 թվականի համեմատ ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների շուրջ 1.7 տոկոսային կետ բարելավում կարձանագրվի: Իսկ 2020-2022 թվականների հարկաբյուջետային քաղաքականության կանխատեսումները հիմնված են այն սկզբունքների վրա, որ ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների բարելավումը կկազմի միջինը շուրջ 0.4 տոկոսային կետ՝ հաշվի առնելով ինչպես հարկային օրենսդրության, այնպես էլ վարչարարության փոփոխությունները:

Հաշվի առնելով նախորդ տարիներին ՀՀ տնտեսության և քաղաքականության խնդիրների ախտորոշումը՝ հարկաբյուջետային արդիականացված կանոնների համակարգը թույլ է տվել միջնաժակմետ ծախսերի ծրագրի հիմքում էական փոփոխություն նախագծել: Միջնաժամկետ հորիզոնում չնայած հարկաբյուջտային քաղաքականությունը սահմանափակված է պարտքի կայունության ապահովման անհրաժեշտությամբ, սակայն ՀՀ կառավարությունը հիմք ընդունելով նախորդ տարիներին քաղաքականության ոլորտում բացահայտված հիմնախնդիրները նախագծել է այնպիսի հարկաբյուջետային քաղաքականություն, որը համահունչ կլինի «ոսկյա կանոնին», կայուն հիմքեր կստեղծի երկարաժամկետ տնտեսական աճի համար, այսինքն՝ կապիտալ ծախսերի

[22] Համակարգի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է 2020-2022 թվականների ՄԺԾԾ-ի մաս կազմող՝ «ՀՀ կառավարության պարտքի նվազեցման 2019-2023թթ. վերանայված ծրագիր» հատվածում:

մասնաբաժնի մեծացում և ընթացիկ ծախսերի ավելի փոքր մակարդակ՝ հարկային եկամուտների համեմատությամբ: Այսպես, եթե 2016-2018 թվականին ընթացիկ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը գերազանցել է հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը միջինը շուրջ 2.2 տոկոսային կետով, ապա կանխատեսվող հորիզոնի վերջում հարկային եկամուտներ/ՀՆԱ-ն կգերազանցի ընթացիկ ծախսերի մակարդակը միջինը շուրջ 3.0 տոկոսային կետով:

Հավելված. *Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ*

Ցուցանիշներ	**2016**	**2017**	**2018**	**2019**	**2020**	**2021**	**2022**
	փաստ	**փաստ**	**փաստ**	**ծրագիր**	**կանխ.**	**կանխ.**	**կանխ.**
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	5,067.3	5,564.5	6,005.1	6,455.3	6,975.4	7,615.7	8,320.6
Իրական ՀՆԱ ինդեքս	100.2	107.5	105.2	105.4	104.9	105.0	105.1
ՀՆԱ-ի ինդեքս դեֆլյատոր	100.3	102.1	102.5	102.0	103.0	104.0	104.0
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ), տոկոս	-1.1	2.6	1.8	2.4	3.6	4.0	4.0
Գնաճ (միջին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ), տոկոս	-1.4	1.0	2.5	1.9	3.1	4.0	4.0
ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների, տոկոս							
ՀՆԱ	0.2	7.5	5.2	5.4	4.9	5.0	5.1
Արդյունաբերություն	7.6	11.8	5.8	3.6	3.7	3.9	4.2
Գյուղատնտեսություն	-5.0	-5.1	-8.5	0.0	0.5	1.0	2.0
Շինարարություն	-14.1	2.8	0.8	1.6	2.0	2.5	3.0
Ծառայություններ	3.2	10.6	9.3	8.0	6.7	6.5	6.2
Զուտ հարկեր	-3.7	9.7	8.0	5.3	5.3	5.3	5.3
ՀՆԱ ծախսային բաղադրիչների իրական աճերը, տոկոս							
Վերջնական սպառում	-1.2	10.5	5.1	5.3	2.1	3.1	3.0

Պետական	-2.4	-2.1	7.4	19.4	-4.1	2.4	2.0
Մասնավոր	-1.0	12.7	4.8	3.0	3.2	3.2	3.2
Կապիտալի համախառն կուտակում	-8.7	15.4	26.8	10.7	10.3	6.4	7.2
Ապրանքների և ծառայությունների արտահանում	19.1	18.7	4.6	5.9	7.1	8.0	8.5
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	7.6	24.6	12.7	4.1	4.8	5.1	5.4
Արտաքին հատված (մլն ԱՄՆ դոլարով)							
Ապրանքների և ծառայությունների արտահանում	3,500.4	4,306.8	4,669.0	4,982.8	5,431.2	5,980.5	6,619.5
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	4,516.2	5,710.1	6,582.8	6,911.9	7,350.1	7,841.3	8,391.6
Ապրանքների արտահանում	1,890.7	2,385.2	2,606.2	2,775.6	3,025.4	3,358.2	3,761.2
Ապրանքների ներմուծում	2,835.1	3,760.7	4,372.2	4,590.8	4,843.3	5,133.9	5,467.6
Ապրանքների արտահանման աճ, տոկոս	16.4	26.2	9.3	6.5	9.0	11.0	12.0
Ապրանքների ներմուծման աճ, տոկոս	0.9	32.6	16.3	5.0	5.5	6.0	6.5
Ընթացիկ հաշիվ	-238.1	-279.7	-1,130.6	-915.4	-911.1	-843.6	-730.4
ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսով							
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-9.6	-12.2	-15.4	-14.7	-13.8	-12.5	-11.1

Ապրանքների և ծառայությունների արտահանում	33.2	37.4	37.6	38.0	39.0	40.1	41.4
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	42.8	49.5	52.9	52.7	52.8	52.6	52.5
Առևտրային հաշիվ	-9.0	-11.9	-14.2	-13.8	-13.1	-11.9	-10.7
Ընթացիկ հաշիվ (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները)	-2.3	-2.4	-9.1	-7.0	-6.6	-5.7	-4.6

2.3 ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆ ՀՆԱ-Ի ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԱՆԱԿԱՆԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ

2.3.1. Ենթադրությունները, որոնք ընկած են տնտեսական կանխատեսումների հիմքում

- Հայաստանը, որպես փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, շատ արագ է արձագանքում համաշխարհային տնտեսական զարգացումներին: Դրանով էլ պայմանավորված ենթադրվում է, որ ՀՀ տնտեսության զարգացումը կլինի հիմնական գործընկեր երկրների տնտեսական զարգացումների ուղղվածությանը համահունչ՝ պահպանելով ՀՀ տնտեսության աճի միտումները նաև միջնաժամկետ հատվածում: Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսումներով (տես՝ Ներդիր 1-ը) Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում, այդ թվում՝ Ռուսաստանում, ԱՄՆ-ում և Եվրոպայում միջնաժամկետ հատվածում կանխատեսվում է տնտեսությունների հետագա զարգացում, թեև 2018 թվականի բարձր տնտեսական աճը հաջորդ տարիներին կընթանա համեմատաբար դանդաղ տեմպերով:
- Ռուսաստանի տնտեսական աճի տեմպերի դանդաղմամբ պայմանավորված՝ միջնաժամկետում դեպի Հայաստան դրամական փոխանցումների ներհոսքի աճը և դրա ազդեցությունը համախառն պահանջարկի վրա հաջորդ տարիներին նույնպես կընթանա համեմատաբար դանդաղ տեմպերով:
- Արտահանման նոր շուկաներում դիրքավորման, ներդրումների ներգրավման և արտահանման խթանման քաղաքականության ազդեցությամբ պայմանավորված՝ արտահանումը ներմուծման համեմատ առաջանցիկ տեմպեր կունենա, ինչով էլ կպայմանավորվեն 2020-2022 թվականների արտաքին առևտրի զարգացումները:
- ՀՀ կառավարության բազմակողմ կառուցվածքային բարեփոխումները լագավորված դրական ազդեցություն կունենան տնտեսության զարգացման վրա: Այս պայմաններում ակնկալվում է, որ 2020-2022 թվականներին տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժ են լինելու արդյունաբերությունը և ծառայությունների ոլորտը:
- ՀՀ կառավարության հարկային բարեփոխումները (մասնավորապես ուղղակի հարկերի՝ եկամտային հարկի և շահութահարկի դրույքաչափերի նվազեցումը) կհանգեցնեն տնտեսական աճի արագացման, կխթանեն ներդրումներն ու հատկապես արտահանելի հատվածի գործունեությունը:

2.3.2. Կանխատեսումներում առկա ռիսկերը

Կանխատեսման առկա ռիսկերը պայմանավորվում են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին տնտեսական գործոններով, որոնք կարող են հանգեցնել ինչպես տնտեսական աճի տեմպերի ավելացմանը, այնպես էլ նվազմանը՝ ներկայացված կենտրոնական կանխատեսումների համեմատ:

<u>ՀՆԱ-ի աճի ուղղությամբ նպաստող ռիսկեր.</u>

Արտաքին միջավայր.

- Եթե համաշխարհային տնտեսական աճը միջնաժամկետում պահպանվի 2018 թվականի բարձր մակարդակում և գործընկեր երկրների հետագա զարգացումները լինեն ավելի բարենպաստ, քան կանխատեսումներն են, ՀՀ տնտեսական աճը կլինի ավելի բարձր: Այս իրավիճակի դրսևորումն ավելի հավանական կլինի, հատկապես, եթե Ռուսաստանի տնտեսությունը աճի ավելի արագ, քան ակնկալվում է:
- Ներքաղաքական վերջին իրադարձություններով և կառավարության կողմից վարվող ներդրումների ներգրավման քաղաքականության ազդեցությամբ պայմանավորված սպասվածից ավելի օտարերկրյա ներդրումների ներգրավման և արտահանման շուկաների ավելի արագ ընդլայնման արդյունքում տնտեսական աճի մակարդակը նույնպես կարող է կանխատեսվածից ավելի բարձր լինել:
- Պարենային և ոչ պարենային ապրանքների միջազգային շուկաներում գնաճային ցածր միջավայրը կարող է նպաստել տեղական արտադրության աճին՝ արտադրության ցածր ծախսերի միջոցով:

Ներքին միջավայր.

- ՀՀ կառավարության կողմից իրականացվող կառուցվածքային բարեփոխումների՝ հատկապես գործարար միջավայրի, արտահանման խթանման, ներդրումների ներգրավման, պետական համակարգի արդիականացման և կոռուպցիայի մակարդակի նվազեցման ուղղությամբ կառավարության կողմից իրականացվող քաղաքականության արդյունքների ավելի արագ դրսևորման դեպքում տնտեսական աճի մակարդակը կլինի կանխատեսվածից ավելի բարձր:

- Հիմնականում վարկավորման պայմանների դյուրինացմամբ պայմանավորված 2018 թվականին և 2019 թվականի առաջին ամիսներին նկատվում է վարկավորման աճի արագացում: Նշված միտումի պահպանումը դրական ազդեցություն կունենա նաև տնտեսության ակտիվացման վրա և տնտեսական աճի մակարդակը կլինի կանխատեսվածից ավելի բարձր:
- 2018 թվականին տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների և ՀՀ կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների արդյունքում տնտեսությունում ձևավորված դրական սպասումները կարող են հանգեցնել տնտեսության սպասվածից ավելի աշխուժացման:
- Ամուլսարի և Թեղուտի հանքավայրերի, ինչպես նաև Ալավերդու պղնձաձուլարանի շահագործման պայմաններում տնտեսական աճի մակարդակը կարող է կանխատեսվածից ավելի բարձր լինել:

<u>ՀՆԱ-ի աճի կանխատեսումները նվազեցնող ռիսկերը</u> կպայմանավորվեն ստորև ներկայացված և՛ արտաքին, և՛ ներքին միջավայրի զարգացումներով:

Արտաքին միջավայր.

- Համաշխարհային տնտեսական աճի կանխատեսումներում բացասական փոփոխությունների հավանականությունը ժամանակի ընթացքում մեծանում է, հատկապես՝ միջնաժամկետ հատվածում առկա է ավելի ցածր աճի սցենարի հավանականություն և ներառական աճի և կայունության ամրապնդման անհրաժեշտություն, իսկ ըստ միջազգային կազմակերպությունների կանխատեսումների միջնաժամկետում գերակշռում են դեպի ներքև ուղղվածության ռիսկերը:
- Եթե միջազգային առևտրի ներկայիս տարաձայնությունները շարունակվեն և ձեռնարկատերերի ու ներդրողների վստահությունները վատթարանան, ապա համաշխարհային վերելքի ներկայիս տեմպերի հնարավոր դանդաղումը կհանգեցնի մեր երկրից արտահանվող ապրանքների նկատմամբ պահանջարկի շարունակական անկման, ինչպես նաև մետաղների գների հնարավոր նվազումը կհանգեցնի Հայաստանից ապրանքների արտահանման նվազմանը, արտահանման հաշվին արտարժույթի ներհոսքի կրճատմանը, հետևաբար և ՀՆԱ-ի աճի տեմպերի դանդաղմանը:
- Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների և նավթի գների ցածր մակարդակի դեպքում Ռուսաստանի վերականգնման տեմպերի դանդաղումը ռիսկ է

առաջացնում ՀՀ ներհոսող տրանսֆերտների, արտահանման ծավալների, հետևաբար նաև Հայաստանի տնտեսական աճի տեմպի դանդաղման ուղղությամբ:

Ներքին միջավայր.

- Ներքին միջավայրից բխող հիմնական ռիսկը բնակլիմայական անբարենպաստ պայմանների շարունակական դրսևորման հետևանքով գյուղատնտեսության ճյուղում հնարավոր ավելի ցածր աճի արձանագրումն է: Կանխատեսվող հորիզոնում կառավարությունը շարունակելու է գյուղատնտեսության օժանդակությանն ուղղված միջոցառումների իրականացումը, սակայն բնակլիմայական անբարենպաստ պամանները կարող են լրացուցիչ ռեսուրսների ներդրման պահանջ առաջացնել՝ դանդաղեցնելով կառավարության բարեփոխումները, որի պայմաններում տնտեսական աճի մակարդակը կարող է կանխատեսվածից ավելի ցածր լինել:
- ՀՀ կառավարության կառուցվածքային բարեփոխումների արդյունքների սպասվածից ավելի ուշ արտահայտման դեպքում տնտեսական աճի նվազման ռիսկ կարող է առաջանալ:
- ՀՀ կառավարության կողմից վարվող ներդրումների ներգրավման քաղաքականության ակնկալվող արդյունքների սպասվածից ավելի ուշ արտահայտման դեպքում կարող է առաջանալ տնտեսական աճի նվազման ռիսկ:

Այս պայմաններում գնահատվում է, որ կանխատեսվող հորիզոնում տնտեսական աճի ռիսկերը կլինեն հավասարակշռված:

Իրական տնտեսական աճի կանխատեսումների հետ կապված անորոշությունների և ռիսկերի հաշվեկշռի վերաբերյալ վերոնշյալ միտումների ազդեցության քանակական գնահատականներն իրենց արտացոլումն են գտել ստորև ներկայացվող տնտեսական աճի հավանականային բաշխման գծապատկերում և համապատասխան աղյուսակում (տես՝ Գծապատկեր 11 և Աղյուսակ 5):

<u>Գծապատկեր 11.</u> *<u>Իրական ՀՆԱ-ի աճի կանխատեսման հավանականությունների</u>*

Բաշխումը[23]

Ինչպես երևում է Գծապատկեր 11-ից, իրական ՀՆԱ-ի տարեկան աճի կենտրոնական կանխատեսումներից շեղման ռիսկերը հավասարակշռված են: Կանխատեսումների բաշխման հավանականությունները առավել պարզորոշ երևում են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 5. *Իրական ՀՆԱ-ի աճի կանխատեսման հավանականությունների բաշխումը*

Տնտեսական աճի միջակայքը	Տնտեսական աճի՝ տվյալ միջակայքում ձևավորվելու հավանականությունը			
	2019	2020	2021	2022
2.5-4.5	35%	27%	24%	23%
4.5-6.5	**37%**	**41%**	**42%**	**41%**
6.5-8.5	17%	22%	24%	26%

Աղյուսակ 5-ի 1-ին սյունը իրենից ներկայացնում է տնտեսական աճի հնարավոր միջակայքերը, իսկ 2-ից 5-րդ սյուները՝ համապատասխան միջակայքերում միջնաժամկետում տնտեսական աճի գտնվելու հավանականությունները:

[23]Հավանականային կանխատեսման գրաֆիկի կառուցման ընդհանուր մեթոդաբանությունը ներկայացված է «2.3.1. 2020-2022 թվականներին ՄԺԾԾ հարկային եկամուտների վրա ազդող մակրոտնտեսական կանխատեսված ցուցանիշներից շեղման ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը» բաժնում:

Աղյուսակում ներկայացվել են տնտեսական աճի ամենահավանական միջակայքերը, որոնք միասին ծածկում են բաշխման ընդհանուր հավանականության շուրջ 90%-ը, այսինքն՝ հավանականությունը, որ տնտեսական աճը կգտնվի 2.5-ից 8.5% միջակայքում, կազմում է մոտ 90%:

2019-2022 թվականներին տնտեսական աճի ձևավորման ամենաբարձր հավանականությունը գտնվում է կենտրոնական կանխատեսումները պարունակող համապատասխան միջակայքում (Գծապատկեր 11-ում այն մուգ կարմիր է, իսկ Աղյուսակ 5-ում՝ հոծ նշումով), և ինչպես տեսնում ենք դեպի վերև և ներքև ռիսկերը հավասարակշռված են: Ուստի, ծրագրի «Համախառն առաջարկ» հատվածում ներկայացված տնտեսական աճի բազային կանխատեսման սցենարից շեղումները հավասարակշռված են:

Վերը նկարագրված ռիսկերը կարող են շեղումներ մտցնել 2020-2022 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի սցենարի հիմքում ընկած կանխատեսումներում և ենթադրություններում, ինչն էլ կարող է անդրադառնալ հարկային եկամուտների նախատեսված հոսքերի վրա: Ստորև ներկայացվում են կանխատեսումների և ենթադրությունների հետ կապված ռիսկերի ազդեցության քանակական գնահատականները:

2.4 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎՐԱ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՑ ՇԵՂՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.4.1. 2020-2022 թվականներին ՄԺԾԾ հարկային եկամուտների վրա ազդող կանխատեսված մակրոտնտեսական ցուցանիշներից շեղման ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը

Միջնաժամկետ հատվածում հարկային եկամուտների կանխատեսվող հոսքերի վրա մակրոտնտեսական բնույթի ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը հիմնվել է ստորև նկարագրված **կանխատեսումների ռիսկի և ենթադրություններից շեղումների ռիսկի** վրա:

1. Կանխատեսումների ռիսկ

Սովորաբար կանխատեսումներ իրականացնելիս ի հայտ են գալիս հանգամանքներ, որոնք կապված են լինում օգտագործվող կանխատեսման մոդելների տեղայնացումից և մասնավորեցումից, տնտեսության կառուցվածքային տեղաշարժերից[24], նոր երևույթներից (որի վերաբերյալ նախկինում տեղեկատվությունը բացակայել է) և այլն: Այս ռիսկերն ընդունված է անվանել կանխատեսման ռիսկեր: ՄԺԾԾ տեսանկյունից կարևորվում է ՀՆԱ-ի կանխատեսման ռիսկի գնահատումը, քանի որ ՄԺԾԾ սցենարի հարթ իրականացումը կախված է տնտեսությունում ստեղծված անվանական ՀՆԱ-ի մեծությունից: ՀՆԱ-ի գծով կանխատեսումների ռիսկը գնահատվել է հետճգնաժամային տարիներին միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հիմքում դրվող ՀՆԱ-ի կանխատեսված ցուցանիշների և ՀՆԱ-ի փաստացի ցուցանիշների միջև շեղման հիման վրա: Մասնավորապես, ՀՆԱ-ի միջնաժամկետ կանխատեսումներից փաստացիի շեղումները նախաճգնաժամային 2003-2008 թվականների համար եղել են 7.1-ից 9.0-ը տոկոսային կետ, իսկ հետճգնաժամային 2010-2018 թվականների համար՝ 1.9-ից 2.5 տոկոսային կետ: Այս պարագայում, հաշվի առնելով կանխատեսվածից ցածր ՀՆԱ-ի ձևավորման վերոնկարագրյալ ռիսկերի գերակշռությունը՝ որպես ռիսկ է դիտարկվել ՀՆԱ-ի կանխատեսված մակարդակից 1.9 տոկոսային կետով ավելի ցածր մակարդակի ձևավորումը 2020 թվականին, 2.2 տոկոսային կետով ցածր՝ 2021 թվականին և 2.5 տոկոսային կետով ցածր՝ 2022 թվականին:

[24]Սա որոշակիորեն կապված է նաև մոդելների սպեցիֆիկացիաների հետ, քանի որ ժամանակային շարքերի վրա հիմնված մոդելներն իրենց մեջ ներառում են տնտեսության նախորդ ժամանակահատվածի զարգացումների տեղեկատվությունը, իսկ կանխատեսվող տարում ի հայտ եկող տնտեսության կառուցվածքային տեղաշարժը միայն կարող է ներառվել հաջորդ տարվա կանխատեսումների մոդելներում:

Արդյունքում, ՀՆԱ նվազման ռիսկի ազդեցությունը հարկային եկամուտների վրա 2020, 2021 և 2022 թվականների համար գնահատվում է համապատասխանաբար 9.8, 16.1 և 22.6 մլրդ ՀՀ դրամ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

2. Ենթադրություններից շեղումների ռիսկ

ՄԺԾԾ հիմքում դրվող կանխատեսումները կառուցվում են որոշակի ենթադրությունների հիման վրա, որոնք էլ իրենց հերթին կախված են արտաքին գործոններից (օրինակ, ներքին տնտեսության գնաճը՝ միջազգային շուկաների գների կանխատեսվող վարքագծից): Սակայն միշտ չէ, որ այդ ենթադրությունները կանխատեսվող հորիզոնում իրականություն են դառնում՝ կապված ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ-ի կառավարման դաշտից դուրս ի հայտ եկող երևույթների հետ (օրինակ՝ նավթի համաշխարհային գների հնարավոր փոփոխությունները):

Ենթադրություններց շեղումների ռիսկ է ԵՏՄ անդամ պետությունների տնտեսական զարգացումները: Միաժամանակ, ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներում մաքսատուրքերի մասնաբաժինը կարող է փոփոխվել նոր պետությունների ԵՏՄ-ին անդամակցությունից:

2.1. Գնաճի շեղման հնարավոր չափը

Գնաճի ցուցանիշի շեղման հնարավոր չափ է դիտարկվում ՀՀ ԿԲ-ի կողմից դրամավարկային քաղաքականության ծրագրում (գնաճի հաշվետվություններում) ներկայացվող գնաճի նպատակային ցուցանիշի կենտրոնական արժեքից շեղման առավելագույն չափը:

ՀՀ ԿԲ-ի կողմից միջնաժամկետ հորիզոնում գնահատվում է գնաճի կայունացում նպատակային ցուցանիշի շուրջ: Կանխատեսված ցուցանիշից գնաճի շեղման ռիսկերը միջնաժամկետ հորիզոնում գնահատվում են հավասարակշռված՝ գնաճի կենտրոնական արժեքից **դեպի ներքև՝ 1.5 տոկոսային կետի չափով** (այսինքն՝ գնաճի ներքին սահմանը 2.5% է) և **դեպի վերև շեղումը՝ 1.5 տոկոսային կետի չափով** (վերին սահմանը 5.5% է):

Գնաճի շեղման ռիսկը կարող է ազդեցություն ունենալ ՀՀ պետական բյուջեի և՛ եկամտային, և՛ ծախսային կատարողականների վրա՝ անուղղակի հարկերի, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների գծով ծախսերի ուղղությամբ: Գնանկումային պայմաններում հարկերից մուտքերը կկրճատվեն և ընդհակառակը:

Արդյունքում, գների նվազման ռիսկի ազդեցությունը հարկային եկամուտների վրա 2020, 2021 և 2022 թվականների համար գնահատվում է համապատասխանաբար 3.3, 3.6 և 3.7 մլրդ ՀՀ դրամ

ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

2.2. Փոխարժեքի շեղման հնարավոր չափը

ՀՀ ԿԲ-ն և ՀՀ ՖՆ-ն փոխարժեքի կանխատեսումներ չեն իրականացնում և մակրոտնտեսական քաղաքականությունն իրականացվում է լողացող փոխարժեքի սկզբունքի հիման վրա, ընդ որում, յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի ցուցանիշների կանխատեսումների հիմքում դրվում է փոխարժեքի անփոփոխ (որոշակի պահի դրությամբ) մակարդակ: Սակայն փոխարժեքի տատանումները կազդեն ներմուծումից ՀՀ պետական բյուջե մուտքագրվող հարկային եկամուտների վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատմականորեն և՛ արժևորման, և՛ արժեզրկման ուղղությամբ փոխարժեքի տատանումների բացարձակ շեղման միջին չափը չի գերազանցել 5.0 տոկոսը՝ որպես ռիսկ է դիտարկվել ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի առավելագույնը 5% արժեզրկումը:

Արդյունքում, փոխարժեքի 5 տոկոսով արժեզրկման ռիսկի դրսևորման դեպքում, այլ հավասար պայմաններում, 2020, 2021 և 2022 թվականներին կարելի է ապահովել հարկային եկամուտների համապատասխանաբար 15.4, 17.1 և 16.9 մլրդ ՀՀ դրամ լրացուցիչ մուտք:

2.3. Ներմուծման գծով ռիսկի հնարավոր չափը

Քանի որ մաքսային սահմանին ներմուծումից գանձվող անուղղակի հարկերը էական կշիռ ունեն պետական բյուջեի ընդհանուր հարկային եկամուտներում, անհրաժեշտ է գնահատել նաև ներմուծման հնարավոր նվազման պարագայում հարկային եկամուտների նվազման ռիսկի չափը: Հետճգնաժամային տարիներին ՄԺԾԾ-ում ներմուծման գծով կանխատեսումների շեղման միջին բացարձակ չափը սահմանվում է 10.0-18.0%-ի միջակայքում, ինչն էլ հաշվի է առնվել այս գործոնի ազդեցությունը գնահատելու համար: 2020, 2021 և 2022 թվականների համար ծրագրվածից համապատասխանաբար 10.4, 12.5 և 17.9% պակաս ներմուծման ռիսկի դրսևորման պայմաններում հարկային եկամուտների վրա ազդեցությունը գնահատվում է համապատասխանաբար՝ 19.8, 26.6 և 35.4 մլրդ ՀՀ դրամ՝ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

Ամփոփելով վերը նկարագրված **կանխատեսումների ռիսկի և ենթադրություններից շեղումների ռիսկի** գնահատականները, միջնաժամկետ հորիզոնում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական ցուցանիշների՝ իրական ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի

տատանողականության և ներմուծման ռիսկերի ազդեցության քանակական ամփոփ գնահատականները ներկայացվում են ստորև.

Աղյուսակ 6. *Հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական կանխատեսումների և ենթադրությունների ռիսկերի ազդեցություն*[25]

Ռիսկի տեսակը	**Ազդեցության գնահատականը, մլրդ ՀՀ դրամ**		
	2020	**2021**	**2022**
Ռիսկերի առանձին հանդես գալու պայմաններում			
1. Կանխատեսվածից 1.9-2.5 տոկոսային կետով ավելի ցածր իրական ՀՆԱ-ի աճ	-9.8	-16.1	-22.6
2. 1.5 տոկոսային կետով ավելի ցածր գնաճի ռիսկ	-3.3	-3.6	-3.7
3. Փոխարժեքի առավելագույնը 5.0 տոկոսով արժեզրկման ռիսկ	15.4	17.1	16.9
4. Ներմուծման 10.4-17.9 տոկոսով նվազման ռիսկ	-19.8	-26.6	-35.4
Վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա հանդես գալու պայմաններում	**-18.7**	**-28.7**	**-47.2**

Այսպիսով, գնահատվում է, որ հարկային եկամուտների վրա ազդող վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա ի հայտ գալու պարագայում հարկային եկամուտների ծրագրված մակարդակից շեղումը կկազմի շուրջ 18.7 մլրդ ՀՀ դրամ 2020 թվականին, 28.7 մլրդ ՀՀ դրամ 2021 թվականին և 47.2 մլրդ ՀՀ դրամ 2022 թվականին:

Հարկային եկամուտների վրա առանձին ռիսկերի ազդեցության չափի վերաբերյալ պատկերացում են տալիս նաև ստորև ներկայացվող զգայունության գնահատականները, սակայն այս դեպքում դիտարկվում է հարկային եկամուտների աճի վրա ազդող գործոնների աճերի 1%

[25]ՀՆԱ, ներմուծման, փոխարժեքի և գների գծով հավանական ռիսկերի քանակային գնահատականը ստացվել է՝ հիմք ընդունելով այս գործոնների պատմական շարժի բացարձակ միջին սխալը:

փոփոխության ազդեցությունը, ինչը ներկայացված է հարկային եկամուտների զգայունության աղյուսակում:

Աղյուսակ 7. *Հարկային եկամուտների զգայունությունը հիմնական տնտեսական գործոնների նկատմամբ, տոկոս*

	ՀՆԱ	**Գնաճ**	**Փոխարժեք**	**Ներմուծում**
Միջին տարեկան ազդեցություն	0.23	0.11	0.17	0.06

Ինչպես երևում է աղյուսակից, հարկերի հավաքագրման առումով առավել էական գործոններ են հանդիսանում ՀՆԱ-ի և փոխարժեքի փոփոխությունները:

Հարկային եկամուտների կանխատեսումների հետ կապված անորոշությունների և ռիսկերի հաշվեկշռի վերաբերյալ գնահատականներն իրենց արտացոլումն են գտել ստորև ներկայացվող հարկային եկամուտների հավանականային բաշխման գծապատկերում և համապատասխան աղյուսակում (տես՝ Գծապատկեր 12 և Աղյուսակ 8)[26]: Հավանականային բաշխման գրաֆիկի կառուցման ժամանակ օգտագործվել է աղյուսակ 6-ում գնահատված ամբողջական ռիսկերի միաժամանակյա հանդես գալու պայմաններում ի հայտ եկող բացասական ռիսկերը:

[26]Հարկային եկամուտների գծով ռիսկերի ազդեցության գնահատականը կառուցվել է ՀՀ ֆինանսների նախարարության ռիսկերի գնահատման համակարգի ներքո կառուցված մոդելի հիման վրա:

Գծապատկեր 12. *Հարկային եկամուտների տարեկան աճի տեմպերի կանխատեսումների հավանականային բաշխումը*[27]*, տոկոս*

Կանխատեսումների բաշխման հավանականություններն առավել պարզորոշ երևում են ստորև բերվող աղյուսակում:

Աղյուսակ 8. *Հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխումը*

Հարկային եկամուտների աճի միջակայքը	Հարկային եկամուտների աճի՝ տվյալ միջակայքում ձևավորվելու հավանականությունը		
	2020	**2021**	**2022**
4-8 տոկոս	0.24	0.31	0.27
8-12 տոկոս	***0.54***	***0.50***	***0.45***
12-16 տոկոս	0.19	0.12	0.19

[27]Հավանականային կանխատեսման գրաֆիկի կառուցման ընդհանուր մեթոդաբանությունը ներկայացված է Ներդիր 2-ում:

Աղյուսակ 8-ի առաջին սյունը ներկայացնում է հարկային եկամուտների աճի միջակայքերը, իսկ 2-ից 4-րդ սյուները՝ նշված միջակայքերից յուրաքանչյուրում այդ աճի ձևավորվելու հավանականությունները՝ ըստ միջնաժամկետ կանխատեսումների:

Ակնհայտ է, որ 2020-2022 թվականների համար վերոնշյալ երեք միջակայքերի շարքում 8.0-12.0% միջակայքում հարկային եկամուտների աճի ձևավորվելու հավանականությունը ամենաբարձրն է (Գծապատկեր 12-ում այն մուգ կարմիր է, իսկ Աղյուսակ 8-ում՝ հոծ նշումով):

Ներդիր 2

Իրական ՀՆԱ-ի և հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխման գծապատկերի կառուցումը

Իրական ՀՆԱ-ի և հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխումը ներկայացնող գծապատկերները ցույց են տալիս տնտեսության զարգացման ապագա ընթացքի վերաբերյալ կառավարության գնահատականները՝ տնտեսական աճի ծրագրային ցուցանիշների վերաբերյալ, ինչպես նաև հարկային եկամուտների հավաքագրման կանխատեսվող ընթացքը:

Կանխատեսումների հավանականային բաշխման գծապատկերի կառուցման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ բոլոր կանխատեսումները ինչ-որ չափով անորոշ են: Կարևոր է հաշվի առնել ոչ միայն կոնկրետ կանխատեսված արժեքները, այլ նաև բոլոր այն վերոնշյալ ռիսկերը, որոնց արդյունքում կարող են շեղումներ առաջանալ իրական ՀՆԱ-ի կանխատեումների և հարկերի կանխատեսումների կենտրոնական արժեքներից: Հիմնվելով միայն կետային կանխատեսումների վրա հնարավոր չէ բավարար չափով տեղեկատվություն ներկայացնել դրանց հետ կապված անորոշությունների և դրանց աղբյուրների վերաբերյալ: Այդ պատճառով կարևորվում է որոշակի վստահության միջակայքի կառուցման խնդիրը, որը թույլ կտա գնահատել իրադարձությունների զարգացման հավանական ընթացքը: Իրական ՀՆԱ-ի և հարկերի կանխատեսումների հավանականային բաշխման ներկայացված գծապատկերները հիմնվում են Անգլիայի բանկի կողմից մշակված մեթոդաբանության վրա և հաշվի է առնում կանխատեսումների հավանականային բաշխման ասիմետրիկության առկայությունը:

Հայաստանի համար իրական ՀՆԱ-ի և հարկերի աճի կանխատեսումների բաշխման գծապատկերները կառուցվել են երեք չափորոշիչների հիման վրա.

1. կենտրոնական արժեքները, 2. անորոշության չափը (դիսպերսիան), որը ստանալու համար հիմք են հանդիսացել փաստացի պատմական շարքերի կանխատեսումային սխալները և 3. ռիսկերի հարաբերական հաշվեկշիռը՝ անհամաչափության գործակցի գնահատման նպատակով:

Ունենալով կանխատեսված կենտրոնական արժեքները, անորոշության չափը (ցրվածքը) և ռիսկերի հաշվեկշիռը՝ կառուցվել են իրական ՀՆԱ-ի և հարկերի կանխատեսումների հավանականային բաշխան գրաֆիկները 2020-2022 թվականների համար (տես՝ Գծապատկերներ 7 և 8):

ՀՆԱ-ի և հարկերի կանխատեսման գծապատկերներում կենտրոնական մուգ (կարմիր) ավելի նեղ միջակայքը ներառում է նաև կանխատեսման կենտրոնական սցենարը (կանխատեսված արժեքները): Որքան հավանականային կանխատեսումները հեռանում են կենտրոնական սցենարից, այնքան ավելի ցածր է դառնում դրանց իրագործման հավանականությունը, ինչը գծապատկերում արտահայտվում է ավելի թույլ գունավորմամբ: Ներկայացված բաշխումը սիմետրիկ չէ, քանի որ ապագայի համար առկա են տնտեսական աճի և հարկերի կենտրոնական կանխատեսումից ավելի ցածր մակարդակների ձևավորման ռիսկեր:

2.4.2. Պետական բյուջեի վրա կանխատեսված մակրոտնտեսական ցուցանիշներից շեղման ռիսկերի ազդեցության ընդհանուր գնահատականը և դրանց մեղմման հնարավորությունները

Կանխատեսումներում մեծ ուշադրություն է դարձվում նաև պետական բյուջեի ծախսերի պլանավորված մակարդակների ապահովումը խաթարող ռիսկերին, որոնք կարող են հանգեցնել լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման:

Աղյուսակ 9. *ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և ծախսերի, ինչպես նաև այլ հոսքերի գծով ռիսկերի ընդհանուր ազդեցությունը[28]. (ֆինանսավորման պահանջ՝ - պահանջի մեծացում, + պահանջի նվազում), մլրդ ՀՀ դրամ*

Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող ռիսկեր	2020	2021	2022
1. Կանխատեսվածից 1.9-2.5 տոկոսային կետով ավելի ցածր իրական ՀՆԱ-ի աճ	-9.8	-16.1	-22.6
2. 1.5 տոկոսային կետով ավելի ցածր գնաճի ռիսկ	5.2	6.1	7.7
3. Փոխարժեքի առավելագույնը 5.0 տոկոսով արժեզրկման ռիսկ	3.3	8.9	11.1
4. Ներմուծման 10.4-17.9 տոկոսով նվազման ռիսկ	-19.8	-26.6	-35.4
5. ԵՄ բյուջետային աջակցության դրամաշնորհների չստացման ռիսկեր	-3.2	0.0	0.0
Ընդամենը	**-24.3**	**-27.7**	**-39.2**

Աղյուսակ 9-ում ցույց են տրված գնահատված լրացուցիչ ռիսկերը, որոնք կհանգեցնեն լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման: Ակնհայտորեն երևում է, որ գնաճի տատանումների հետևանքով կնվազի նախատեսված ֆինանսավորման պահանջը և համապատասխանաբար կփոփոխվեն նաև պետական բյուջեի ծախսերը՝ նվազման ուղղությամբ:

Հաշվի առնելով մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող մակարդակից վերոնշյալ հնարավոր շեղումների ռիսկերի գնահատականները՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հավաքագրման և ծախսերի կատարման տեսանկյունից 2020-2022 թվականներին ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտի լրացուցիչ ֆինանսավորման պահանջը կկազմի շուրջ 24.0–39.0 մլրդ ՀՀ դրամ կամ

[28]Ընդհանուր ազդեցության գնահատականը հիմնված է մակրոտնտեսական ռիսկերի առանձին հանդես գալու ենթադրության վրա:

ՀՆԱ-ի 0.3-0.5%-ը: Ընդ որում՝ ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական նպատակադրումը լինելու է սոցիալական բնույթի ծախսերի կրճատման բացառումը, իսկ հնարավորության դեպքում՝ բյուջեի ծախսերի ամբողջական իրականացումը:

ԳԼՈՒԽ 3. ՀՀ 2020–2022ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

3.1 ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՄԺԾԾ առանցքային հարցերից են պետական եկամուտների քաղաքականության ուղղվածությունը և դրանց կանխատեսելիությունը միջնաժամկետ հեռանկարում: Պետական ծախսերը ներքին ֆինանսական ռեսուրսներով ապահովելու պահանջը, ինչպես և նախորդ տարիներին, պետական եկամուտների քաղաքականության հիմնական խնդիրն է, որի լուծումը հնարավորություն է ընձեռում ՀՀ կառավարությանն ի հաշիվ սեփական ռեսուրսների իրականացնել արդյունավետ ծախսային քաղաքականություն: Այս թիրախի հասանելիության տեսանկյունից առավել ընդգծվում է հարկային քաղաքականության դերը:

Հարկային եկամուտների հավաքագրումը մեծապես կախվածության մեջ կլինի մի կողմից մակրոտնտեսական զարգացումների կանխատեսվող և արձանագրվելիք միտումների համապատասխանությունից, իսկ մյուս կողմից՝ դրանց հավաքագրման բնագավառում ՀՀ կառավարության վարչարարական միջոցառումների և օրենսդրական փոփոխությունների իրականացման արդյունավետությունից:

2020-2022 թվականների պետական եկամուտների քաղաքականությունը կիրականացվի ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշմամբ հաստատված 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով ամրագրված սկզբունքներին համապատասխան:

Հարկային և մաքսային մարմինների ռազմավարական նպատակները

ՊԵԿ հիմնական խնդիրներն են լինելու հարկային և մաքսային միասնական պետական քաղաքականության իրականացումը, հարկային և մաքսային օրենսդրության ամբողջական և համահավասար կիրառումը, ՀՀ պետական բյուջեի եկամուտների ապահովումը, արդյունավետ հարկային և մաքսային հսկողության իրականացումը, ՀՀ տնտեսական անվտանգությանը նպաստումը, հարկ վճարողների և արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների կողմից պարտավորությունների օրինաչափ և հարմարավետ կատարման նպատակով՝ ժամանակակից և մրցունակ համակարգերի միջոցով որակյալ ծառայությունների մատուցումը և սպասարկումը:

Կարևորվելու են հետևյալ ուղղությունները.

- Ստվերային տնտեսության կրճատմանն ու մրցունակ բիզնես միջավայրի ձևավորմանն

ուղղված հարկային քաղաքականության ուղղում տնտեսության ներդրումային գրավչության բարձրացմանն ու տնտեսական ակտիվության մակարդակի բարելավմանը:

- Երկարաժամկետ տնտեսական աճին նպաստելու նպատակով ուղղակի հարկերի բեռի նվազեցում՝ ի հաշիվ անուղղակի հարկերի:

- Արդարացի հարկման նպատակով հարկային բեռը դեպի «վճարունակ հարկ վճարողներ» տեղափոխելու ուղղությամբ քայլերի ձեռնարկում:

- Միջազգային առևտրատնտեսական հարաբերությունները զարգացնելու նպատակով կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի աշխարհագրության ընդլայնում:

- Հարկային քաղաքականությանը զուգահեռ՝ հարկային վարչարարության պարզեցման միջոցով ստվերի կրճատում և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների գեներացում:

- Հարկային վարչարարության խտրականության բացառում:

- Ստվերային շրջանառությունների կրճատման նպատակով տնտեսությունում բոլոր գործարքների լիարժեք փաստաթղթավորման ապահովում:

- Ներդրումային գրավչության բարձրացման նպատակով հնարավորին չափ մաքսային սահմանի անցման գործընթացի պարզեցում, <<Մեկ կանգառ, մեկ պատուհան>> համակարգի ներդրում:

- Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճի ապահովում առավելագույն հնարավորի սահմաններում:

3.2 ՀՀ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

ՀՀ 2020-2022 թվականների պետական բյուջեների եկամուտները կանխատեսվել են համապատասխանաբար՝ 1,711.3, 1,859.4 և 2,050.9 մլրդ դրամի չափով: Եկամուտների տարեկան ծրագրային ծավալները կապահովվեն հիմնականում ի հաշիվ հարկային եկամուտների:

Աղյուսակ 3.1 2019-2022 թթ համար ծրագրված բյուջետային եկամուտները

(մլրդ դրամով)

Եկամտատեսակը	2019թ. սպասում[29]	2020թ	2021թ	2022թ
		կանխատեսում		
Պետական բյուջեի եկամուտներ, որից՝	1,558.5	1,711.3	1,859.4	2,050.9
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	24.1%	24.5%	24.4%	24.6%
1. Հարկային եկամուտներ	1,463.9	1,621.2	1,787.5	1,988.8
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	22.7%	23.2%	23.5%	23.9%
տոկոսով ընդհանուրի նկատմամբ	93.9%	94.7%	96.1%	97.0%
2. Այլ եկամուտներ	55.1	59.1	59.8	60.2
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	0.9%	0.8%	0.8%	0.7%
տոկոսով ընդհանուրի նկատմամբ	3.5%	3.5%	3.2%	2.9%
3. Պաշտոնական դրամաշնորհներ	3 .5	31.0	12.1	1.8
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	0.6%	0.4%	0.2%	0.02%
տոկոսով ընդհանուրի նկատմամբ	2.5%	1.8%	0.6%	0.1%

ՀՀ 2020-2022 թվականների պետական բյուջեների եկամուտները ծրագրելիս օգտագործվել են այն մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները, որոնք էական ազդեցություն ունեն առանձին եկամտատեսակների բազայի ձևավորման կամ հաշվարկման վրա: Առանձին դեպքերում հաշվի են առնվել նաև պայմանագրային հարաբերություններով կարգավորվող ցուցանիշները:

[29] ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի սպասողական ցուցանիշները 2019 թվականի համար սպասողական ՀՆԱ-ի նկատմամբ;

Հարկային եկամուտների գծով 2020-2022թթ բյուջետային մուտքերը ծրագրվել են հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի տարեկան 0.3-0.4 տոկոսային կետ աճ ապահովելու սկզբունքի հիման վրա:

Հաշվարկներում լրացուցիչ ենթադրվել է, որ հարկերի գծով 2019 թվականի համար հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի սպասողական մակարդակը ապահովելու համար բավարար հիմքեր կստեղծեն առկա օրենսդրական նախադրյալները, կիրառվելիք վարչարարական միջոցառումները, ինչպես նաև մակրոտնտեսական զարգացումները:

Գծապատկեր 3.1 ՀՀ 2020-2022թթ հարկային եկամուտները մլրդ դրամով և կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ

Պաշտոնական դրամաշնորհները 2020-2022թթ համար ծրագրվել են՝ հաշվի առնելով առկա պայմանագրերը, դոնորների հետ ձեռքբերված նախնական համաձայնությունները և Եվրամիությունից ակնկալվող դրամաշնորհների դեպքում՝ սպասումները:

ՐՈՎ)

Ցուցանիշներ	2018թ փաստ	2019թ սպասում	2020թ	2021թ	2022թ
			կանխատեսում		
Ընդամենը պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում՝	11.5	39.5	31.0	12.1	1.8
ԵՄ (Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված դրամաշնորհային ծրագրեր)	-	8.9	7.9	-	-
Այլ նպատակային դրամաշնորհներ	11.5	30.6	22.9	12.0	1.8
Արտաբյուջետային միջոցներ	0.3		0.2	0.1	

Այլ եկամուտները ներառում են բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարները, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինները, պետական ձեռնարկությունների գույքի օգտագործման վճարները, պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց վճարները (տոկոսավճարները), իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից ստացվող մուտքերը, պետական մարմինների կողմից ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից մուտքերը և այլ եկամուտները:

Այլ եկամուտները 2020-2022թթ համար ծրագրվել են համապատասխանաբար 59.1 մլրդ դրամի, 59.8 մլրդ դրամի և 60.2 մլրդ դրամի չափով, հաշվի առնելով գանձման համար պատասխանատու պետական կառավարման մարմինների կողմից ՀՀ 2020 թվականի բյուջետային գործընթացի շրջանակում համապատասխան հայտերով ներկայացված կանխատեսումները, կատարված օրենսդրական փոփոխությունները, ինչպես նաև առանձին եկամտատեսակների գծով նախորդ տարիներին արձանագրված հավաքագրման միտումները:

Այլ եկամուտների ՄԺԾԾ կանխատեսումների ընդհանուր պատկերն ըստ եկամտի հիմնական աղբյուրների հետևյալն է.

Աղյուսակ 3.3 Այլ եկամուտների կազմում հաշվառվող եկամտատեսակների գծով ՀՀ 2020-2022թթ ՄԺԾԾ շրջանակներում կատարված կանխատեսումները (մլրդ դրամներով)

Եկամտատեսակը	2020թ	2021թ	2022թ
	կանխատեսում		
Այլ եկամուտներ, այդ թվում՝	59.1	59.8	60.2
1. Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ	4.0	5.6	6.5
2. Տոկոսավճարների և շահաբաժինների տեսքով ստացվող եկամուտներ	15.2	14.2	13.1
3. Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքեր	2.5	2.6	2.5
4. Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտներ, որից՝	5.6	6.2	6.8
4.1 ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ստացվող վճարներ	5.2	5.7	6.3
4.2 Այլ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտներ	0.4	0.5	0.5
5. Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտներ	1.3	0.7	1.1
6. Արտաբյուջետային միջոցներ	30.5	30.5	30.2

ԳԼՈՒԽ 4. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

4.1 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ

Պետական բյուջեի ձևավորումը առաջիկա տարիներին շարունակելու է ընթանալ բյուջետային եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցմամբ, ընդ որում՝ բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման համար միջոցների ներգրավումն իրականացվելու է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից:

Ստորև ներկայացվում են ՀՀ 2020-2022 թվականների պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (տե՛ս Աղյուսակ 4.1):

Աղյուսակ 4.1. ՀՀ 2020-2022 թթ պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (մլն դրամ)

Ցուցանիշներ	2020	2021	2022
	ծրագիր		
Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ՝ ընդամենը	160,310.8	168,316.9	184,601.4
1. Ներքին աղբյուրներ	101,221.7	131,795.3	158,307.3
2. Արտաքին աղբյուրներ	59,089.1	36,521.6	26,294.2

Պետական բյուջեի դեֆիցիտի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2020-2022 թվականին կտատանվի ՀՆԱ-ի 2.3 %-ից 2.2% միջակայքում: Ինչպես նախորդ միջնաժամկետ ծախսային ծրագրերում, ՀՀ 2020-2022 թթ ՄԺԾԾ-ում նույնպես պահպանվել է ՀՀ պետական բյուջեի կախվածությունն արտաքին ֆինանսավորման աղբյուրներից (արտասահմանյան վարկերից և պաշտոնական դրամաշնորհներից), որը կպահպանվի նաև առաջիկա տարիներին:

Աղյուսակ 4.2. Ընդհանուր և առաջնային դեֆիցիտները (%-ով ՀՆԱ-ի նկատմամբ) 2020-2022թթ

Ցուցանիշներ	2020 ծրագիր	2021 ծրագիր	2022 ծրագիր
Ընդհանուր դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների և ծախսերի տարբերությունը	*2.3*	*2.2*	*2.2*
Առաջնային դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների և ծախսերի (առանց տոկոսավճարների) տարբերությունը	*-0.4*	*-0.3*	*-0.3*

Քանի որ պետական բյուջեի դեֆիցիտի զգալի մասը ֆինանսավորվում է փոխառու միջոցների հաշ-վին, ապա դրա մեծությունը և կառուցվածքը էապես առնչվում են պետական ներքին և արտաքին պարտքը բնութագրող ցուցանիշների հետ:

4.2 ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓԱԹԵԹՈՒՄ 2020-2022ԹԹ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ 2020-2022 թվականների պետական բյուջեների կանխատեսվող մուտքերի վերլուծությունից երևում է, որ 2019 թվականի ծրագրային մակարդակի համեմատ, 2020 թվականի անվանական ՀՆԱ-ի շուրջ 3.2% աճի պայմաններում, ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի ծախսերի ծավալի ավելացումը ծրագրավորվում է շուրջ 220.1 մլրդ դրամով: Միաժամանակ 2020 թվականի մակարդակի համեմատ պետական բյուջեի մուտքերի ծավալի 8.5 % աճ է կանխատեսվում 2021 թվականին (անվանական ՀՆԱ-ի 9.2% կանխատեսվող աճի պայմաններում) և 2021 թվականի մակարդակի համեմատ՝ 2022 թվականին՝ 10.2 %-ով (անվանական ՀՆԱ-ի 9.3 % կանխատեսվող աճի պայմաններում):

Աղյուսակ 4.3. Բյուջետային ռեսուրսների փաթեթում 2020-2022թթ կանխատեսվող փոփոխությունները

(մլն դրամ)

Ցուցանիշներ	2020թ ծրագիր	2021թ ծրագիր	2022թ ծրագիր
1. Եկամուտներ	1,711,365.9	1,859,429.1	2,050.865.3
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	24.5%	24.4%	24.6%
2. Դեֆիցիտի ֆինանսավորման զուտ աղբյուրներ	160,310.8	168,316.9	184,601.4
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	*2.3*	*2.2*	*2.2*
ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ	1,871,677	2,027,746	2,235,467
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	26.8%	26.6%	26.9%

Ցուցանիշներ	2020թ ծրագիր	2021թ ծրագիր	2022թ ծրագիր
ՆՈՒՅՆԸ՝ ԸՍՏ 2020-2021ԹԹ ՄԺԾԾ-ի	1,758,843.4	1,927,361.4	x
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	24.2	24.1	x

4.3 2020-2022ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

2019թ.ից անցում է կատարվել պետական բյուջեի ծրագրային ձևաչափին՝ (ծախսերը ներկայացվում են ըստ ԲԳԿ-ների, ծրագրերի և միջոցառումների): Նշվածով պայմանավորված 2020-2022թթ. ՄԺԾԾ նախագծի հիմնական առանձնահատկությունը այն է, որ այն ներկայացվում է ծրագրային ձևաչափով՝ ըստ ԲԳԿ-ների: Քանի որ 2019-2021թթ ՄԺԾԾ-ն ձևավորվել է ոլորտային սկզբունքով, ինչը նշանակում է, որ ոլորտին բնորոշ ծրագրերը համախմբած են եղել անկախ ծրագրի կատարողից, ուստի հաստատված 2019-2021թթ. ՄԺԾԾ-ի հետ 2020-2022թթ ՄԺԾԾ ծախսերը չեն կարող համընկնել: Սրանով պայմանավորված այս բաժնում 2019-2021թթ. հաստատված ՄԺԾԾ ոլոտային ծախսերը համադրելիության են բերվել ծրագրային ձևաչափին:

ՀՀ 2020-2022 թվականների պետական բյուջեների ծախսերի կանխատեսումները՝ ըստ ոլորտ-ների բնութագրվում են ստորև ներկայացված աղյուսակի ցուցանիշներով[30]:

Աղյուսակ 4.4. ՀՀ 2020-2022թթ պետական բյուջեների ծախսերը՝ ըստ ոլորտների (մլն դրամ)

Ցուցանիշներ	2020թ ծրագիր	2021թ ծրագիր	2022թ ծրագիր
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**1,871,676.7**	**2,027,746.0**	**2,235,466.8**
1. Սոցիալ – մշակութային ճյուղեր և գիտություն	772,480.8	802,564.2	836,786.4
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	11.1%	10.5%	10.1%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	41.3%	39.6%	37.4%

[30] 2010-2022թ. ՄԺԾԾ-ն համադրելիության է բերվել ծրագրային ձևաչափին:

Ցուցանիշներ	2020թ ծրագիր	2021թ ծրագիր	2022թ ծրագիր
2. Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության, քրեակատարողական և արտակարգ իրավիճակների համակարգեր	419,692,7	436,619,5	429,158,3
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	6.0%	5.7%	5.2%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	22.4%	21.5%	19.2%
3. Տնտեսական հարաբերություններ, շրջակա միջավայրի պաշտպանություն, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	332,982,8	344,683,1	342,556,9
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	4.8%	4.5%	4.1%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	17.8%	17.0%	15.3%
4. Պետական պարտքի սպասարկում (տոկոսավճարներ)	182,977.6	189,600.3	207,924.5
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.6	2.5	2.5
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	9.8	9.4	9.3
5. Այլ ոլորտներ (այդ թվում՝ չբաշխված միջոցներ)	163,542.7	254,278.9	419,040.6
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.3%	3.3%	5.0%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	8.7%	12.5%	18.7%

<u>Սոցիալական ոլորտի</u> 2020-2022 թվականներին կարևորվելու է հատկապես կրթության,

առողջապահության և սոցիալական ապահովության բնագավառների զարգացման ռազմավարական ծրագրերի իրականացումը:

Աղյուսակ 4.5. Սոցիալական ոլորտի 2020-2022 թվականների ծախսերը, ըստ բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների (հազ. դրամ)

	Ցուցանիշներ	2020թ ծրագիր	2021թ ծրագիր	2022թ ծրագիր
	Ընդամենը սոցիալական ոլորտի ծախսեր, այդ թվում՝	**772,480.8**	**802,564.2**	**836,786.4**
	հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ, %	*11.1*	*10.5*	*10.1*
	տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում , %	*41.3*	*39.6*	*37.4*
1	**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, այդ թվում**	**179,041.5**	**197,484.0**	**214,019.0**
	հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ, %	*2.6*	*2.6*	*2.6*
	տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում , %	*9.6*	*9.7*	*9.6*
2	**ՀՀ առողջապահության նախարարություն**	**107,213.3**	**115,287.3**	**126,350.3**
	հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ, %	*1.5*	*1.5*	*1.5*
	տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում , %	*5.7*	*5.7*	*5.7*
3	**ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն**	**486,226.0**	**489,793.0**	**496,417.0**
	հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ, %	*7.0*	*6.4*	*6.0*
	տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում , %	*26.0*	*24.2*	*22.2*

Տնտեսության ճյուղերի 2020-2022 թվականների ծախսերը նպատակաուղղված են լինելու արտադրական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին:

Աղյուսակ 4.7. ՀՀ 2020-2022թթ պետական բյուջեների ծախսերը՝ ըստ տնտեսության իրական հատվածի

(մլն դրամ)

Ցուցանիշներ	2020թ ծրագիր	2021թ ծրագիր	2022թ ծրագիր
ԸՆԴԱՄԵՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԾԱԽՍԵՐ	**332,982.8**	**344,683.1**	**342,557.0**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	**4.6**	**4.3**	**3.9**
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	**17.1**	**16.3**	**14.7**
1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	285,739.6	296,126.7	293,658.1
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	4.1	3.9	3.5
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	15.3	14.6	13.1
2. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	27,855.5	29,119.9	28,684.7
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.4	0.4	0.3
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	1.5	1.4	1.3
3. ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	6,917.2	5,941.9	5,689.2
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.1	0.1	0.1
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	0.4	0.3	0.3
4. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	12,470.5	13,494.5	14,524.9
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.2	0.2	0.2
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	0.7	0.7	0.6

Պետության կողմից հատկապես կկարևորվեն գյուղատնտեսության, էներգետիկայի, տրանս-պորտի, ճանապարհային, ջրային և բնակարանային-կոմունալ տնտեսության զարգացմանն ուղղված ծախսերը:

ՄԱՍ Բ. ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 5. ՀՀ 2020-2022ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծախսային քաղաքականության ռազմավարությունը շարադրող փաստաթղթում ընդհանուր գծերով ներկայացվում են 2020-2022թթ. ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերի ըստ բնագավառների քաղաքականության գերակայությունները: Այս գերակայությունները բխում են Կառավարության ընդհանուր ռազմավարական գերակայությունների համատեքստից (Կառավարության ծրագիր, տարբեր ոլորտներում Կառավարության կողմից ընդունված մի շարք միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր և այլն) և պետք է ծառայեն որպես հիմք՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման համար:

Հանրային կառավարման համակարգում առկա հիմնական խնդիրների մասով Կառավարության առանցքային մոտեցումներն են՝

1. Ընդհանուր և ոլորտային քաղաքականությունների մասով՝ - որևէ նախաձեռնության, գործառույթի, ծրագրի, միջոցառման համար պետք է սահմանվեն արդյունքի վերջնական և թիրախային (տարեկան) ոչ ֆինանսական այնպիսի ցուցանիշներ՝ ներառյալ ժամկետները, որոնք կարտահայտեն և՛ Կառավարության, և՛ առանձին մարմինների գործառույթների, ծրագրերի ու դրանց արդյունքների բովանդակային փոխկապակցվածությունը, կլինեն չափելի և համադրելի: Պետք է հստակ ի ցույց դրվի արդյունքների հասցեականությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացուն և (կամ) այլ շահառուին ուղղված լինելը: Կառավարության, ՀՀ Ազգային ժողովի, քաղաքացիների և հասարակության այլ անդամների համար պետք է հասանելի և հասկանալի լինեն հանրային միջոցների (բարիքի) վերաբաշխման, այդ թվում՝ իրականացվող ծախսերի և ծրագրերի նպատակները, արդյունքները և դրանց գնահատման չափանիշները. - ցանկացած գործառույթի կամ ծրագրի մասով սահմանված նպատակ (ոչ ֆինանսական ցուցանիշը) պետք է ապահովի հավելյալ ու հասցեական արժեք (արդյունք) և պետք է բխի քաղաքականության թիրախներից:

2. Պետական ռեսուրսների կառավարման մասով՝ - ռեսուրսների կառավարումը պետք է իրականացվի արդյունավետ, օգտավետ և խնայողաբար. - հանրային յուրաքանչյուր մարմին կամ կազմակերպություն, անկախ կազմակերպաիրավական կամ այլ առանձնահատկություններից, պետք է գործի օրենքով սահմանված որոշակի լիազորությունների շրջանակում՝ իրականացնելով տվյալ մարմնի նպատակներին համապատասխանող և դրանցից բխող գործառույթներ. չպետք է լինեն կրկնություններ, այլընտրանքային, զուգահեռ, փոխարինող կամ թաքնված համակարգեր և (կամ) տվյալ մարմնին ոչ բնորոշ գործառույթներ: Արդյունքում, եթե իրականացվող որևէ

գործառույթի մասով հավելյալ և հասցեական արդյունք սահմանված չէ, կամ ռեսուրսների կառավարման արդյունավետությունը, օգտավետությունը և տնտեսող լինելը երաշխավորված չեն, ապա նման գործառույթը (ծրագիրը) չպետք է իրականացվի, չպետք է նախաձեռնվի, պետք է դադարեցվի կամ կասեցվի՝ մինչև նշված պայմանների ապահովումը: Հանրային կառավարման թափանցիկության և հաշվետվողականության ապահովման, վարչական կոռուպցիայի հաղթահարման նպատակով կարևորվում է պետության կողմից ծառայությունների մատուցման ոլորտում էլեկտրոնային գործիքների ներդրման միջոցով քաղաքացի-պետություն շփման հնարավորինս սահմանափակումը, պետական մարմինների գործունեության թափանցիկության, հաշվետվողականության, տվյալների անփոփոխելիության, միասնականության և ավտոմատացման ապահովումը, ինչը կբարձրացնի որոշումների ընդունման ժամանակ կիրառվող տեղեկատվության հուսալիության և ամբողջականության աստիճանը:

Ինչպես արդեն վերը նշվել էր Կառավարությունն առաջիկա տարիների համար առավել կարևորում է պետական բյուջեի հիմնական ծախսային հետևյալ գերակայությունները.

(i) սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում (մասնավորապես՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն), ինչպես նաև պետական կառավարման բնագավառներում պետական մարմինների գործունեության արդյունավետության, նպատակաուղղվածության և հասցեականության մակարդակի բարձրացման, նրանց կողմից հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովում,

(ii) հանրապետության տարածքային ամբողջականությունը, տարածաշրջանում կայունությունը և Ղարաբաղյան հակամարտության կողմերի ուժերի հավասարակշռությունը պահպանելու նպատակով պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ապահովում,

(iii) տնտեսության առանձին ոլորտներում (մասնավորապես՝ գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, ճանապարհային տնտեսություն և էներգետիկա) ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացում:

5.1 ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Ոլորտը ներառում է Սահմանադրությամբ և օրենքով ստեղծված պետական մարմինների պահպանման հետ կապված բյուջետային ծրագրերի ու միջոցառումների շրջանակը:

2015 թվականին Հայաստանի Հանրապետությունում նոր Սահմանադրության ընդունմամբ անցում կատարվեց խորհրդարանական կառավարման համակարգին, ինչը նշանակում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների լիազորությունների նոր շրջանակների սահմանում:

Սահմանադրության նոր կարգավորումների համատեքստում 2018 թվականի մարտի 23-ին Ազգային ժողովի կողմից ընդունվեցին մի շարք օրենքներ, որոնցով սահմանվում է պետական իշխանության և պետական կառավարման համակարգի մարմինների շրջանակը, դրանց լիազորություններն ու գործառույթները, կարգավորվում են պետական մարմիններում կառավարչական իրավահարաբերությունները և այլն:

Ոլորտն ընդգրկում է պետական իշխանության մարմինների (օրենսդիր, գործադիր և դատական), Սահմանադրությամբ և օրենքով ստեղծված ինքնավար և անկախ մարմինների ընթացիկ պահպանումը և տեխնիկական միջոցներով ապահովումը: Ընդ որում, պետական մարմինների պահպանման ծախսերը, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. հունիսի 23-ի «Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման ռազմավարության շրջանակներում մեթոդական ուղեցույցերը հաստատելու մասին» 311-Ա հրամանի 1-ին կետով հաստատված «Ծրագրային բյուջետավորման ձևաչափով ծրագրերի և միջոցառումների սահմանման մեթոդական ձեռնարկի» (Հավելված 1), համարվում են Վարչական բնույթի ծախսեր, որոնք արտացոլվում են համապատասխան ծրագրերի ու միջոցառումների տեսքով: Վարչական բնույթի միջոցառումներում (կետեր՝ 195-197) ներառվում են պետական մարմինների ներքին ծառայությունները, ինչպես նաև պետական մարմնի աշխատակազմի ոլորտային ստորաբաժանումների գծով ծախսերը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հավանություն է տրվել Կառավարության 2019 թվականի ծրագրին, որով նախատեսվում է հանրային կառավարման ոլորտում շարունակաբար վեր հանել պետական բոլոր գերատեսչությունների կրկնվող գործառույթները և վերջիններիս օպտիմալացման արդյունքում բարձրացնել պետական գերատեսչությունների ծախսարդյունավետությունը և աշխատանքի արդյունավետությունը:

Պետական կառավարման համակարգում պետական ռեսուրսների կառավարման մասով Կառավարության առանցքային մոտեցումը հետևյալն է՝

- ռեսուրսների կառավարումը պետք է իրականացվի արդյունավետ, օգտավետ և խնայողաբար.

- հանրային յուրաքանչյուր մարմին կամ կազմակերպություն, անկախ կազմակերպա-իրավական կամ այլ առանձնահատկություններից, պետք է գործի օրենքով սահմանված որոշակի լիազորությունների շրջանակում՝ իրականացնելով տվյալ մարմնի նպատակներին համապատասխանող և դրանցից բխող գործառույթներ, չպետք է լինեն կրկնություններ, այլընտրանքային, զուգահեռ, փոխարինող կամ թաքնված համակարգեր և (կամ) տվյալ մարմնին ոչ բնորոշ գործառույթներ: Ընդ որում՝

- քաղաքականությանը վերաբերող գործառույթները պետք է համախմբվեն և իրականացվեն պետական մարմինների կառուցվածքում՝ որպես մասնագիտացված ստորաբաժանումներ.

- օժանդակ, սպասարկող, աջակցող և մասնագիտացված այլ գործառույթների մասով պետք է դիտարկել դրանք մասնավորին արտապատվիրելու հնարավորությունը և նպատակահարմարությունը: Անհնարին կամ ոչ նպատակահարմար լինելու դեպքում նման գործառույթները պետք է կազմակերպվեն տվյալ մարմնի աշխատակազմում գործող համապատասխան ստորաբաժանումների միջոցով՝ բացառելով նույնանման գործառույթների, ներառյալ հաստիքների և ստորաբաժանումների մի քանի միավորների կողմից իրականացումը: Այս նպատակներով պետության կողմից նոր ԾԻԳ-երի, ՊՈԱԿ-ների, Հիմնադրամների, ՓԲԸ-ների և (կամ) այլ կառույցների ստեղծումից պետք է ձեռնպահ մնալ, իսկ գործող կառույցների գործունեությունը դադարեցնել (լուծարել, միավորել կամ այլ կերպ դադարեցնել պետության մասնակցությունը), եթե նշված մոտեցումների ներքո չի հիմնավորվում դրանց ստեղծման կամ գոյության անհրաժեշտությունը.

- պետք է բացառվեն անտեղի և ռիսկային կարգավորումները, նույնանման հարցերի վերաբերյալ կամայական որոշումներ ընդունելու հնարավորությունը:

Հանրային կառավարման թափանցիկության և հաշվետվողականության ապահովման, վարչական կոռուպցիայի հաղթահարման նպատակով կարևորվում է պետության կողմից ծառայությունների մատուցման ոլորտում էլեկտրոնային գործիքների ներդրման միջոցով քաղաքացի-պետություն շփման հնարավորինս սահմանափակումը, պետական մարմինների գործունեության թափանցիկության, հաշվետվողականության, տվյալների անփոփոխելիության, միասնականության և ավտոմատացման ապահովումը, ինչը կբարձրացնի որոշումների ընդունման ժամանակ կիրառվող տեղեկատվության հուսալիության և ամբողջականության աստիճանը:

Ընդհանուր առմամբ, պետական կառավարման համակարգի բարեփոխումներին ուղղված Կառավարության կողմից իրականացվող գործողությունները միտված են լինելու պետական կառավարման համակարգում կոռուպցիոն երևույթների բացառմանը, միաժամանակ պետական իշխանության մարմինների գործունեության թափանցիկության, պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցության աստիճանի բարձրացման, կառավարման համակարգում տարբեր հանրային ու հասարակական խորհուրդների մասնակցության ապահովման և այլ մեխանիզմների գործարկմամբ:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետական կառավարման համակարգի պահպանման գծով գոյություն ունեցող բյուջետային ծրագրերը՝ դրանք հանրային իշխանության մարմինների պահպանմանն ու տեխնիկական կարողությունների զարգացմանն ուղղված ծախսային ծրագրերն են, որոնց գծով ծախսերի մակարդակը կախված է պետական կառավարման համակարգում տեղի ունեցող փոփոխություններից, այդ թվում՝ կառուցվածքային կամ գործառութային փոփոխություններից, ինչպես նաև տնտեսության մեջ տեղի ունեցող գնային և սակագնային տարբեր գործոնների փոփոխություններից:

Ընդհանուր առմամբ, պետական կառավարման համակարգում 2020-2022թթ. իրականացվելիք բյուջետային ծախսերի կառուցվածքի և ծավալների վրա հիմնականում ազդեցություն ունեն հետևյալ գործոնները.

1) «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան առանձին պաշտոնատար անձանց պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցների փոփոխությունը, պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հաշվարկվող հավելավճարները և պետական ծառայողների աշխատա-վարձերի բնականոն աճերը, ինչպես նաև աշխատանքի վարձատրության հաշվարկման համար սահմանվող բազային աշխատավարձի չափը, որը չի կարող ցածր լինել նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 80 տոկոսից և գերազանցել 120 տոկոսը, և բազային աշխատավարձի չափը մինչ օրս սահմանված է 66,140.0 դրամ:

2) ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերում առանձին մարմինների բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով պահուստային ֆոնդերի նախատեսումը,

3) պետական իշխանության մարմինների բնականոն գործունեության ապահովման համար ան-հրաժեշտ միջոցների նախատեսումը:

Միաժամանակ, պետական կառավարման համակարգի ծախսերի ծավալները զգալիորեն կախված են ընթացիկ օրենսդրական կարգավորումներից, որոնց իրագործման պահանջը բխում է ինչպես սահմանադրական բարեփոխումների, այնպես էլ կառավարման ապարատի օպտիմալացման գործընթացի հրամայականներից:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

2020-2022թթ. ՄԺԾԾ չափաքանակները հիմնվում են 2019 թվականի բյուջեի ցուցանիշների վրա, ընդ որում, առանձին ծրագրերի և միջոցառումների գծով ծախսերի հաշվարկներում հաշվի են առնվել 2019 թվականի ընթացքում որոշակի իրավական կարգավորումների արդյունքում կատարված փոփոխությունները: Ընդ որում, հանրային իշխանության մարմինների պահպանման ծախսերը ծրագրավորվել են միասնական սկզբունքի կիրառմամբ: 2020 թվականի ծախսերի ծրագրավորման նպատակով 2019 թվականի ճշտված բյուջեի ցուցանիշները ավելացվել են 1,5 տոկոսով (գնահատման համար հիմք է ընդունվել աշխատավարձի բնականոն աճը), ինչպես նաև վերոհիշյալ գործոնները:

Հանրային իշխանության մարմինների 2020-2022թթ. պահպանման ծախսերի մակարդակի փոփոխությունը կզուգակցվի ՀՆԱ-ի նկատմամբ դրանց հարաբերակցության փոփոխությամբ: Այսպես, պետական իշխանության մարմինների պահպանման համար պետական բյուջեով նախատեսված ծախսերը 2020-2020թթ. Ժամանակահատվածի համար կկազմեն համապատասխանաբար՝ ՀՆԱ-ի 1.9%, 1.7% և 1.6%-ը (2019թ-ին՝ 1.6%-ը):

Հանրային իշխանության մարմինների պահպանման ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերի ամբողջ ծավալում 2020-2022թթ. Ժամանակահատվածի համար կկազմի համա-պատասխանաբար՝ 6.1%, 5.7% և 5.2% (2019թ.՝ 6.4%):

2020-2022թթ. ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների անցկացման հետ կապված յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է 734.3 մլն դրամ:

Համաձայն 2018 թվականի մարտի 21-ի «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՕ-194-Ն օրենքի 21-րդ հոդվածի, մարդահամարը՝ որպես համատարած հաշվառում, անցկացվում է առնվազն 10 տարին մեկ անգամ: Հիմք ընդունելով ՄԱԿ-ի նախաձեռնությունը և ԱՊՀ անդամ երկրների ղեկավարների խորհրդի կողմից 2016թ. սեպտեմբերի 16-ին ք. Բիշքեկում ընդունված «2020 թվականի փուլում ԱՊՀ անդամ-երկրներում մարդահամարների անցկացման մասին» որոշումը հերթական մարդահամարները 2020 թվականին առավել մոտ ժամկետներում անցկացնելու մասին, որոշվել է Հայաստանում մարդահամարն անցկացնել 2020 թվականին:

2020 թվականին անցկացվելիք մարդահամարի անցկացման և արդյունքների ամփոփման

նպատակով միջնաժամկետ ժամանակահատվածում նախատեսվել է՝

- 2020-ին թվականին մարդահամարի անցկացման աշխատանքների համար նախատեսվել է շուրջ 1,341.2 մլն դրամ,

- 2021 թվականին մարդահամարի արդյունքների ամփոփման նպատակով նախատեսվել է շուրջ 101.8 մլն դրամ,

- 2022 թվականին մարդահամարի արդյունքների ամփոփման և հրապարակման նպատակով նախատեսվել է շուրջ 103.3 մլն դրամ:

Պետական իշխանության մարմինների գծով 2020-2022թթ. ժամանակահատվածի համար ծրագրավորված ծախսերը (ներառյալ մի շարք մարմինների արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերը), ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

(հազ դրամ)

	2020թ.	2021թ.	2022թ.
Հանրային իշխանության մարմինների պահպանման ծախսեր	113,360,718.6	115,091,673.2	116,744,547.5
Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ	734,323.9	734,323.9	734,323.9
Հերթական՝ մարդահամարի նախապատրաստման, անցկացման և ամփոփման աշխատանքներ	1,341,247.7	101,844.6	103,321.3
ՀՀ կառավարությանը ենթակա անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի պահպանում	4,709,712.6	4,868,499.0	4,763,839.0
Ընդամենը արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող ծրագրեր	11,083,838.4	11,143,397.3	11,228,712.3
ԸՆԴԱՄԵՆԸ՝	131,229,841.1	131,939,738.0	133,574,744.0

5.2 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

5.2.1 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կրթության ոլորտը ներառում է նախադպրոցական, միջնակարգ, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական կրթության

հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերը, ինչպես նաև տարբեր աստիճանների կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համակարգը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Կրթությունը մարդու հիմնարար իրավունք է, և պետության պարտավորությունն է ապահովել համընդհանուր հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն: Կրթության ոլորտը կարևոր դերակատարություն ունի ինչպես անհատի կայացման, այնպես էլ հասարակության սոցիալական և տնտեսական զարգացման բոլոր ոլորտներում: Դրանով է պայմանավորված, որ այն դասվում է կառավարության ծրագրի գերակայությունների շարքում: Կառավարության համար գերակա խնդիր է կրթության զարգացումը, ինչի շնորհիվ է միայն հնարավոր հասնել կայուն ու ներառական զարգացման և համընդհանուր բարեկեցության:

Կրթության ոլորտի գլխավոր հիմնախնդիրն է միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխան որակի ապահովումը: Այս տեսանկյունից ոլորտային քաղաքականությունը ներառում է 3 հիմնական ուղղություններ.

- դասավանդող անձնակազմի, մասնավորապես՝ ուսուցիչների, մասնագիտական որակական բարելավումը: Մասնավորապես նախատեսվում է, որ դասավանդող ուսուցիչների առնվազն 45%-ը կանցնի ատեստավորում մասնագիտական նոր չափանիշներին համապատասխան,
- կրթական ծրագրերի բովանդակային արդիականացումն ու համապատասխանեցումը աշխատաշուկայի և տնտեսության զարգացող պահանջներին: Կվերանայվեն հանրակրթական չափորոշիչները, ուսումնական պլանը և առարկայական ծրագրերը՝ նպատակ ունենալով խթանել սովորողների քննական մտածողությունը, նորարարությունը, վերլուծական և ստեղծագործական հմտությունները, առանձնակի ուշադրություն կհատկացվի STEM առարկաների և օտար լեզուների դասավանդմանը: Մասնագիտական կրթության ոլորտում կմշակվեն և կներդրվեն տնտեսության ժամանակակից պահանջներից բխող նոր մասնագիտությունների կրթական ծրագրեր՝ մեծացնելով շրջանավարտների մրցունակությունն աշխատաշուկայում, բարձրագույն կրթության ծրագրերում կխթանվի գիտահետազոտական աշխատանքների իրականացումը,
- ուսումնական հաստատությունների արդիական նյութատեխնիկական հենքի ապահովումը և սովորողակենտրոն միջավայրի ստեղծումը: Նոր թափ կհաղորդվի նախադպրոցական, դպրոցական և մասնագիտական ուսումնական հաստատությունների շենքերի վերանորոգմանն ու կառուցմանը՝ ներառելով նաև գյուղական փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցները: Միաժամանակ, հաստատությունները կապահովվեն ժամանակակից ուսումնական գույքով և սարքավորումներով, ևս 3 մարզերի հանրակրթական դպրոցներում կներդրվի «Կայուն դպրոցական

սնունդ» ծրագիրը:

Կրթության ոլորտի հաջորդ կարևոր խնդիրն է մատչելիության ապահովումը, որի ուղղությամբ նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

- կընդլայնվի նախադպրոցական ծառայությունների մատուցման շրջանակը, համայնքներին ցուցաբերվող նպատակային օժանդակության շնորհիվ կմեծանա երեխաների ընդգրկվածությունը,
- մինչև 2022 թվականը բոլոր մարզերը կանցնեն համընդհանուր ներառական կրթության, մարզերում գործող հատուկ դպրոցները կվերակազմակերպվեն տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների: Այն մարզերում, որտեղ չեն գործում հատուկ դպրոցներ, կլինի մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների պատվիրակում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին,
- մասնագիտական կրթության ֆինանսավորման աճը կուղղվի խոցելի խմբերի երիտասարդների ընդգրկվածության մեծացմանը: Կընդլայնվի մասնագիտական կրթության՝ պետական բյուջեից ֆինանսավորվող տեղերի թիվը, կընդլայնվեն ուսման վարձի զեղչային համակարգից օգտվող շահառուների խմբերը:

«Հանրակրթություն» ծրագրի գլխավոր նպատակն է՝ ապահովել դպրոցահասակ երեխաների պարտադիր կրթության՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքը՝ օրենսդրությամբ սահմանված չափորոշիչների և ծրագրերի շրջանակում: Ծրագրի թիրախը միջնաժամկետ հատվածում սովորողների համախառն ընդգրկվածության ցուցանիշի 99% ապահովումն է: Միաժամանակ, ծրագրում ներառված են քաղաքականության միջոցառումներ՝ միտված սովորողներին մատուցվող ծառայությունների որակի և մատչելիության ապահովմանը, ինչպես նաև հավասար մեկնարկային պայմաններ ստեղծելու համար հանրակրթական դպրոցների հենքի վրա ստեղծված նախադպրոցական ծառայությունների ֆինանսավորմանը:

«Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն» ծրագրի նպատակն է՝ հիմնական կրթությունից հետո ապահովել 12-ամյա պարտադիր կրթության պահանջն այն շրջանավարտների համար, որոնք չեն հավակնում բարձրագույն կրթության և նախընտրում են մասնագիտական որակավորումը, ինչպես նաև հիմնական և միջնակարգ կրթությունից հետո երեխաներին և երիտասարդներին պատրաստելու ինքնուրույն աշխատանքային գործունեության: Ծրագրի հիմնական թիրախներն են. աշխատաշուկայի պահանջներից ելնելով նոր մասնագիտությունների ներդրումը 15-ից հասցնել 22-ի, ինչպես նաև շուրջ 2.3%-ով ավելացնել հիմնական և միջնակարգ դպրոցների շրջանավարտների թվում՝ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվածների թիվը:

Ելնելով վերոնշյալ նպատակներից՝ առավել կարևորվում են հետևյալ արդյունքային ցուցանիշները.

- ՆՄՄԿ համակարգում տվյալ տարում ընդունված սովորողների թիվը մասնագիտական կրթության (նախնական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական) համակարգում տվյալ տարում ընդունված սովորողների ընդհանուր թվում 43.4%-ից հասցնել 46%-ի,
- ՆՄՄԿ համակարգում տվյալ տարում ընդունված սովորողների թիվը հիմնական և միջնակարգ դպրոցների շրջանավարտների թվում 24.75%-ից հասցնել 27%-ի,
- Ուսումնառած մասնագիտության գծով ուսումնառության ավարտից հետո 6 ամսվա ընթացքում զբաղվածություն ունեցող շրջանավարտների թիվը 38.3%-ից հասցնել 41.0%-ի,
- Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների՝ ուսումնառությունը բուհերում շարունակած շրջանավարտների թիվը 17%-ից հասցնել 19%-ի:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն» ծրագրի գլխավոր նպատակն է՝ ապահովել սոցիալապես անապահով խավերի համար բարձրագույն կրթության մատչելիությունը և խրախուսել լավագույն առաջադիմություն ցուցաբերող ուսանողներին: Ոլորտում կշարունակվեն եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ամբողջական ինտեգրմանն ուղղված բարեփոխումները: Միջնաժամկետ հատվածում ծրագրի թիրախներն են՝ ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցմամբ սովորող ուսանողների կշիռը բարձրագույն կրթություն ստացողների մեջ 18%-ից հասցնել 24%-ի, իսկ սոցիալապես անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ուսանողների կշիռն ընդհանուր ուսանողների թվաքանակի մեջ 4.1%-ից հասցնել 5%-ի:

Մինչև 2022 թվականը նախատեսվում է հասնել հետևյալ արդյունքային ցուցանիշներին՝

- ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցմամբ սովորող ուսանողների տեսակարար կշիռը բարձրագույն կրթություն ստացողների մեջ 18%-ից՝ 24%-ի,
- սոցիալապես անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ուսանողների տեսակարար կշիռն ընդհանուր ուսանողների թվաքանակի մեջ 4.1%-ից՝ 5.0%-ի:

«Ապահով դպրոց» ծրագրի նպատակն է հանրակրթական դպրոցներում բարելավել ուսումնական միջավայրը՝ ստեղծելով ապահով, պաշտպանված և երեխայակենտրոն պայմաններ: Ծրագրի արդյունքային ցուցանիշներն են.

- 2022 թվականին ունենալ աղետներին դիմակայելուն պատրաստ բարելավված միջավայրով 51 դպրոցներ (հետագայում միջոցառումը կրելու է շարունակական բնույթ),

- 2023 թվականին ապահովել հանրապետության բոլոր տարրական դասարանների և նախակրթարանների սովորողներին կայուն դպրոցական սննդով,
- Ապահովել հանրապետության գործող բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններին համացանցի հասանելիությամբ:

«Արտադպրոցական դաստիարակություն» ծրագրի հիմնական նպատակն է նպաստել հանրակրթական ուսուցման համակարգում ընդգրկված երեխաների հոգևոր և գեղագիտական, ֆիզիկական, ստեղծագործական կարողությունների զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական, կիրառական և հումանիտար գիտելիքների կատարելագործմանը: Նախատեսվում է միջնաժամկետ կտրվածքում արտադպրոցական դաստիարակության ծրագրերում 6-18 տարեկան երեխաների ընդգրկվածության մակարդակը 5.1%-ից հասցնել 10%-ի, որից 5%-ը՝ գյուղական բնակավայրերում: Միաժամանակ, արտադպրոցական դաստիարակության ոլորտում կիրականացվեն միջոցառումներ՝ դպրոցականներին արվեստին, գիտությանը, դասական երաժշտությանը ծանոթացնելու նպատակով:

«Կրթության որակի ապահովում» ծրագիրն ուղղված է կրթության բոլոր մակարդակներում որակի բարձրացման և հավաստման միջոցառումների իրականացմանը:

Ծրագրի արդյունքային ցուցանիշներն են.

- միջազգային համաթվերում (Համընդհանուր տնտեսական ֆորում, 1-7 բալային համակարգ), կրթության համակարգի որակի գնահատման 3.7 բալը հասցնել 5-ի, իսկ տարրական դպրոցների որակի գնահատման 4.1 բալը՝ 6-ի,
- պետական միասնական քննությունների արդյունքներում հայոց լեզու և հայ գրականություն, մաթեմատիկա առարկաներից 1-20 բալային համակարգում համապատասխանաբար՝ 12.9 և 11 բալերը 2021 թվականին հասցնել 15-ի,
- ազգային և միջազգային ստուգատեսների (TIMSS) արդյունքներում մաթեմատիկա և բնագիտական առարկաներից 444-481 գրանցված բալերը 2020 թվականին հասցնել 500-ի,
- հանրակրթական դպրոցների կամավոր ատեստավորմանը մասնակցած ուսուցիչների թիվը 2023 թվականին հասցնել 45%-ի:

«Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում» ծրագրի հիմնական նպատակն է՝ յուրաքանչյուր երեխայի համար կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորություն և որակի ապահովում՝ զարգացման առանձնահատկություններին համապատասխան և անհրաժեշտ պայմանների ստեղծման միջոցով, որի արդյունքային ցուցանիշներ են սահմանվել.

- հաշմանդամություն ունեցող աշակերտների համար հարմարեցված ենթակառուցվածքներ և նյութեր ունեցող դպրոցների թիվը 25%-ից 2021 թվականին հասցնել 100%-ի,
- հանրակրթական դպրոց հաճախող կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների տեսակարար կշիռը կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների ընդհանուր թվաքանակի մեջ 14%-ից 2021 թվականին հասցնել 100%-ի:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կրթության ոլորտի 7 բյուջետային ծրագրերով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հանդիսանում է բյուջեի գլխավոր կարգադրիչ.

1045 – «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն»,

1111 – «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն»,

1146 – «Հանրակրթություն»,

1148 – «Արտադպրոցական դաստիարակություն»,

1183 – «Ապահով դպրոց»,

1192 – «Կրթության որակի ապահովում»,

1193 – «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում»:

Սփյուռքի նախարարության լուծարման կապակցությամբ նախատեսվում է նոր «Կրթության ոլորտում միջազգային և սփյուռքի հետ համագործակցության զարգացում» ծրագիրը, որը ներառում է ինչպես նախարարության, այնպես էլ սփյուռքի նախարարության կողմից իրականացված որոշ միջոցառումներ:

Միջին ժամկետ հատվածում կշարունակի գերակա մնալ հանրակրթության ոլորտը: Որպես կրթության որակի ապահովման հիմնական գործոն նախարարության (կառավարության) ուշադրության կենտրոնում կլինի ուսուցիչների գործունեությունը. աստիճանաբար <u>կբարձրացվի ուսուցիչների նվազագույն աշխատավարձը</u>՝ միջին ժամկետ հատվածում այն հասցնելով շնչային ՀՆԱ-ի մակարդակին: Միաժամանակ, կստեղծվեն ուսուցիչների մասնագիտական առաջընթացը խթանող մեխանիզմներ և հնարավորություններ, կվերանայվի ուսուցիչների ատեստավորման համակարգը՝ այն կապելով լրացուցիչ վարձատրության հնարավորությունների հետ: Մշակվել է ուսուցիչների այլընտրանքային՝ կամավոր ատեստավորման համակարգ, որը կգործի պարտադիր ատեստավորմանը զուգահեռ և ուսուցիչների աշխատավարձի բարձրացման հնարավորություն կընձեռի:

Ուսուցիչների մասնագիտական առաջընթացի քաղաքականությունը կզուգորդվի մեկ այլ գերակա ուղղության՝ կրթության բովանդակային արդիականացմամբ, ինչը կիրականացվի Համաշխարհային բանկի «Կրթության բարելավման» վարկային և «ԵՄ-ն հանուն նորարարության» դրամաշնորհային ծրագրերի շրջանակում: Կրթության բովանդակային բարեփոխումներում հատուկ կարևորում են STEM առարկաները, որոնց արդյունքում ձեռքբերված կարողություններն ու գիտելիքներն առանցքային են ժամանակակից աշխարհում: Այս տեսանկյունից կշարունակվի ինժեներական լաբորատորիաների հիմնումն ու հետագա գործարկումը հանրակրթական դպրոցներում:

Միաժամանակ կշարունակվեն ՆՄՄ ոլորտում կրթական չափորոշիչների մշակման և լրամշակման, վարչական, դասավանդող անձնակազմի վերապատրաստմանն ուղղված աշխատանքները: Կընդլայնվի որակի հավատարմագրման ենթարկվող ՄԿՈՒ հաստատությունների ցանկը:

Ոլորտային ծախսային գերակայություն է կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավումը: Նախնական (արհեստագործական) և միջին ուսումնական (ՆՄՄ) հաստատությունների անմխիթար վիճակը վտանգում է կրթության որակի և արդյունավետության ապահովումը: Համապատասխան կրթական միջավայրի ստեղծումը կնպաստի համակարգի շարունակական զարգացմանը, ՆՄՄԿ ոլորտում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացմանը, մասնագիտական ներուժի կարողությունների հզորացմանը, մասնագիտական կրթության և ուսուցման հեղինակության և վարկանիշի բարձրացմանը: 2020-2022 թվականներին նախատեսվել է ուսումնական հաստատությունների հիմնանորոգում, իսկ 2021-2022 թվականներին՝ նոր ուսումնաարտադրական բազաներով վերազինում: Հիմնանորոգման դրույթն ամրագրված է նաև ՀՀ կառավարության և Եվրոպական Միության միջև 2016 թվականի դեկտեմբերին ստորագրված «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ԵՀԳ/2015/038-246 ֆինանսավորման համաձայնագրում:

Կհիմնանորոգվեն նաև Համաշխարհային բանկի «Կրթության բարելավման» վարկային և դրամաշնորհային ծրագրի շրջանակում 7 ավագ դպրոցներ 2020-2021 թվականներին, ինչպես նաև 3 հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ ՀՀ պետական բյուջեի հաշվին, որոնց ուղղությամբ աշխատանքներն սկսվել էին նախորդ տարիներին:

Նախատեսվել է իրականացնել փոքրաթիվ համակազմ ունեցող դպրոցների կառուցման կամ հիմնանորոգման աշխատանքներ, որոնցից 22-ի նախագծանախահաշվային աշխատանքները նախատեսված են 2019 թվականին: Միջոցառումն ամրագրվել է ՀՀ կառավարության ծրագրով:

ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված՝ նախադպրոցահասակ երեխաների 70% ընդգրկվածության թիրախն ապահովելու համար կշարունակվի ծախսարդյունավետ

նախադպրոցական ծառայությունների հիմնումը համայնքներում: Կշարունակվի «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակում նախակրթարանների հիմնումը: Միաժամանակ պետական բյուջեից միջոցներ են նախատեսվել փոքր համայնքներում 70 նախադպրոցական այլընտրանքային ծառայություններ հիմնելու համար: Եվս 30 ծառայություններ կստեղծվեն «ԵՄ-ն քաղաքացիների համար» ծրագրի շրջանակում (իրականացնող՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ): Այլընտրանքային, քիչ ծախսատար, կեսօրյա նախադպրոցական կրթական ծառայությունների տարբեր մոդելների ներդրմամբ ակնկալվում է՝

- երեխաների ներդաշնակ և համակողմանի զարգացման համար նպաստավոր պայմանների ապահովում և համապատասխան ուսուցում,
- գյուղական համայնքի փոքրաթիվ դպրոցները վերածել կրթամշակութային կենտրոնների, որը հնարավորություն կտա գյուղական համայնքներում միաժամանակ մեկտեղել նախակրթարանի, դպրոցի և մշակութային կենտրոնի գործառույթները: Միաժամանակ, ծրագիրը կլուծի գյուղական համայնքների փոքրաթիվ դպրոցների արդյունավետ կառավարման խնդիրը,
- բազմազան մեթոդներով իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների (խաղեր, պարապմունքներ, միջոցառումներ) միջոցով երեխաների կողմից իրենց տարիքին համապատասխան գիտելիքների, հմտությունների ձեռքբերում և առօրյայի անցկացում ապահով, ուրախ, խրախուսող և ստեղծագործական մթնոլորտում,
- երեխաների մոտ գիտելիքների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորում, որը կօգնի նրանց լինել բանիմաց, նպատակասլաց, ճկուն և հաջողակ,
- երեխաների ինքնուրույն ստեղծագործական զարգացման կարողությունների ձևավորում, համագործակցելու և թիմով աշխատելու հմտությունների ձեռքբերում, դպրոց հաճախելու հավասար մեկնարկային պայմանների ստեղծում տվյալ տարիքային խմբի բոլոր երեխաների համար:

<u>Կշարունակվի համընդհանուր ներառական կրթության ընդլայնման քաղաքականությունը:</u> Մինչև 2023 թվականը ապահովվելու է անցումը համընդհանուր ներառական հանրակրթությանը հանրապետության բոլոր մարզերում և Երևան քաղաքում: Այդ նպատակով արդեն Սյունիքի, Լոռու, Տավուշի, Արմավիրի մարզերում գործում են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ: Հատուկ դպրոցները կվերակազմավորվեն մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների, իսկ այնտեղ սովորող երեխաները կտեղափոխվեն հանրակրթական դպրոցներ: Կընդլայնվի հանրակրթական դպրոցների ներառական կրթության կարողությունների հզորացումը, լրացուցիչ ծրագրեր կիրականացվեն ուսուցիչների կարողությունների զարգացման ուղղությամբ:

Ծախսային մեկ այլ գերակայություն է դպրոցական երեխաներին սննդով ապահովման միջոցառումը:

Ներկայումս հանրապետության 6 մարզերում (Արարատ, Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ, Շիրակ, 2019 թվականի սեպտեմբերից՝ Արագածոտն) իրականացվում է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը: 2020-2022 թվականներին ծրագիրը կներդրվի Գեղարքունիքի, Արմավիրի և Լոռու մարզերում: ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրը կշարունակի օժանդակել ծրագրին՝ այդ թվում անցումային մարզերում դպրոցներում ճաշարանների և խոհանոցների վերանորոգման ու կահավորման ուղղությամբ: ԱՄՆ ՄԶԳ «Ներառական կրթության հզորացում» ծրագրով 100 դպրոցներում և 5 մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում կիրականացվեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձաց մատչելիության համար հարմարեցման վերանորոգման աշխատանքներ: 2023 թվականին ծրագրի շահառուների թիվը կկազմի շուրջ 108000: Արդյունքում Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողները կստանան առողջ, կայուն և ապահով սնունդ:

Ծախսային գերակայություն է նաև բարձրագույն կրթության մատչելիության մեծացումը՝ օժանդակելով խոցելի խմբերի երիտասարդներին՝ ընդլայնելով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման միջոցառման շահառուների խմբերը:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մատչելիությունը: Նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ-ում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրներից է պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառներում, ինչպես նաև սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերում մասնագետների պատրաստմանն աջակցելը, իսկ 2-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերով սահմանված է, որ պետությունն ապահովում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության զարգացում հետևյալ ձևերով՝

պետության պահանջներին համապատասխան՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին ֆինանսական աջակցության ապահովում.

օրենքով սահմանված կարգով բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգի ուսանողներին և ասպիրանտներին պետական ֆինանսական օժանդակություն (կրթաթոշակներ, ուսման վարձի փոխհատուցում (լրիվ և մասնակի (զեղչ), կրթական դրամաշնորհներ, վարկեր):

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից՝ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտների գծով 2020-2022 թվականների ՄԺԾԾ-ում ընդգրկված ծախսային ծրագրերի գումարը կազմում է.

2020 թվականի համար՝	179,041,539.1 հազար դրամ,
2021 թվականի համար՝	197,483,996.8 հազար դրամ,
2022 թվականի համար՝	213,793,431.0 հազար դրամ:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչի անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
Աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության որակավորում ունեցող մասնագետների պատրաստում, կրթության մատչելիության ապահովում	1045 Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	Նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգում տվյալ տարում ընդունված սովորողների թիվը՝ մասնագիտական կրթության (նախնական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական) համակարգում տվյալ տարում ընդունված սովորողների ընդհանուր	43.39	2017-2018 ուս. տարի	46	2022թ.	ՀՀ ԱԺ 14.02.2019թ. ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի <<4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ>> բաժին

		թվում, տոկոս					
		Նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգում տվյալ տարում ընդունված սովորողների թիվը՝ հիմնական և միջնակարգ դպրոցների շրջանավարտների թվում, տոկոս	24.75	2017-2018 ուս. տարի	27	2022թ.	ՀՀ ԱԺ 14.02.2019թ. ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի <<4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ>> բաժին

		Ուսումնառած մասնագիտության գծով ուսումնառության ավարտից հետո 6 ամսվա ընթացքում զբաղվածություն ունեցող շրջանավարտների թիվ (ներառված չեն բուհ տեղափոխված /ընդունված, բանակ զորակոչված, արտերկիր մեկնած, ոչ իրենց մասնագիտությամբ աշխատող շրջանավարտները), տոկոս	38.3	2017-2018 ուս. տարի	41	2022թ.	ՀՀ ԱԺ 14.02.2019թ. ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի <<4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ>> բաժին

		Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսումնառությունը բուհերում շարունակած շրջանավարտների թիվը, տոկոս	17	2017-2018 ուս. տարի	19	2022թ.	ՀՀ ԱԺ 14.02.2019թ. ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի <<4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ>> բաժին
Ապահովել մատչելի, որակյալ և մրցունակ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն	1111 Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն	Ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցմամբ սովորող ուսանողների տեսակարար կշիռը բարձրագույն կրթություն ստացողների մեջ, տոկոս	18	2018թ.	24	2022թ.	ՀՀ ԱԺ 14.02.2019թ. ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի <<4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ>> բաժին

		Խոցելի խմբերի, ինչպես նաև սոցիալապես անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող, այդ թվում սահմանամերձ համայնքների ցանկով սահմանված, ընտանիքների ուսանողների տեսակարար կշիռը ընդհանուր ուսանողների թվաքանակի մեջ, տոկոս	4.1	2018թ.	5	2022թ.	ՀՀ ԱԺ 14.02.2019թ. ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի <<4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ>> բաժին
Պարտադիր կրթության երեք մակարդակներում սովորողների ընդգրկվածության և գրագիտության	1146 Հանրակրթության ծրագիր	Պարտադիր կրթության առաջին մակարդակում ընդգրկվածությունը, տոկոս	91.3	2019թ.	99	2021թ.	ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդված

ապահովում		Պարտադիր կրթության երկրորդ մակարդակում ընդգրկվածություն, տոկոս	90.1	2019թ.	99	2021թ.	ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդված
		12-ամյա պարտադիր կրթության համակարգում ընդգրկվածություն, տոկոս	86.0	2019թ.	99	2021թ.	ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդված
Նպաստել հանրակրթական ուսուցման համակարգում ընգրկված երեխաների հոգևոր և գեղագիտական զարգացմանը, բնապահպանական և կիրառական	1148 Արտադպրոցական դաստիարակություն	Արտադպրոցական դաստիարակության ծրագրերում 6-18 տարեկան երեխաների ընդգրկվածություն, տոկոս	5.1	2019թ.	10.0	2022թ.	ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի <<4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ>> բաժին

գիտելիքների ձեռքբերմանը:		Արտադպրոցական դաստիարակության ծրագրերում գյուղական բնակավայրերի 6-18 տարեկան երեխաների տեսակարար կշիռը, տոկոս	2.5	2019թ.	5.0	2022թ.	ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի <<4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ>> բաժին
Դպրոցներին սպառնացող աղետների ռիսկի կառավարման կարողությունների հզորացում, դպրոցի անձնակազմի և աշակերտների անվտանգության ապահովման մակարդակի բարձրացում՝ կիրառելով ներառական և	1183 Ապահով դպրոց	Աշակերտների ն կայուն դպրոցական սննդով ապահովող դպրոցների տեսակարար կշիռը, տոկոս	38	2019թ	100	2023թ.	ՀՀ ԱԺ 14.02.2019թ. ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի <<4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ>> բաժին
		Բարելավված միջավայրով ուսումնական հաստատությունների թիվ	0	2018թ.	51	2022թ.	ՀՀ ԱԺ 14.02.2019թ. ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի <<4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ>> բաժին

երեխայակենտրոն մոտեցում		Համացանցի հասանելիությամբ դպրոցների թիվ, տոկոս	100	2014թ.	100	2022թ.	ՀՀ ԱԺ 14.02.2019թ. ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի <<4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ>> բաժին
Ընթացիկ աշխատանքների, բարեփոխումների և նոր նախաձեռնությունների միջոցով ֆորմալ և ոչ-ֆորմալ կրթության ոլորտում իրականացվող միջոցառումների, մատուցվող ծառայությունների բովանդակության և կազմակերպման որակի շարունակական բարելավում	1192 Կրթության որակի ապահովում	Միջազգային համաթվերում կրթության ցուցանիշների առաջընթաց. կրթության համակարգի որակի գնահատականը (Համընդհանուր տնտեսական ֆորում, 1-7 բալային համակարգ)	3.7		5	2021թ.	ՀՀ ԱԺ 14.02.2019թ. ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի <<4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ>> բաժին
		Միջազգային համաթվերում կրթության ցուցանիշների առաջընթաց. տարրական կրթության որակի գնահատականը (Համընդհանու	4.1		6	2021թ.	ՀՀ ԱԺ 14.02.2019թ. ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի <<4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ>> բաժին

		ր տնտեսական ֆորում, 1-7 բալային համակարգ)					
		Պետական միասնական քննությունների արդյունքների առաջընթաց. միասնական քննությունների միջինացված գնահատական 1-20 բալային համակարգում (Հայոց լեզու և Հայ գրականություն, Մաթեմատիկա)	(12.9;11)		(15;15)	2021թ.	ՀՀ ԱԺ 14.02.2019թ. ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի <<4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ>> բաժին
		Ազգային և միջազգային ստուգատեսնեռում (TIMSS) արդյունքների առաջընթաց.	(481;444)		(500;500)	2020թ.	ՀՀ ԱԺ 14.02.2019թ. ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի <<4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ>> բաժին

		4-րդ դասարան (Մաթեմատիկա, Բնագիտական առարկաներ)					
		Ազգային և միջազգային ստուգատեսնեռում (TIMSS) արդյունքների առաջընթաց. 8-րդ դասարան (Մաթեմատիկա, Բնագիտական առարկաներ)	(471;460)		(500;500)	2020թ.	ՀՀ ԱԺ 14.02.2019թ. ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի <<4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ>> բաժին
		Աշխատաշուկայի պահանջներից ելնելով վերջին երեք տարիների ընթացքում ներդրված նախնական և միջին մասնագիտական նոր մասնագիտութ	15	2017-2018 ուս. տարի	22	2022	ՀՀ ԱԺ 14.02.2019թ. ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի <<4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ>> բաժին

		յունների քանակ, հատ					
		Կամավոր ատեստավորմանը մասնակցած հանրակրթական դպրոցի ուսուցիչների թիվ, տոկոս	0	2018թ.	45	2023	ՀՀ ԱԺ 14.02.2019թ. ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի <<4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ>> բաժին
Յուրաքանչյուր երեխայի համար կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովում՝ զարգացման առանձնահատկություններին համապատասխան	1193. Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում	Հաշմանդամություն ունեցող աշակերտների համար հարմարեցված ենթակառուցվածքներ և նյութեր ունեցող դպրոցների թիվ, տոկոս	25		100	2021թ.	ՀՀ ԱԺ 14.02.2019թ. ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի <<4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ>> բաժին

և անհրաժեշտ պայմանների ստեղծման միջոցով		Հանրակրթական դպրոց հաճախող կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների տեսակարար կշիռը կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների ընդհանուր թվաքանակի մեջ, տոկոս	14		100	2021թ.	ՀՀ ԱԺ 14.02.2019թ. ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի <<4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ>> բաժին

5.2.2 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գիտության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակներն են. Հանրապետության գիտական ու գիտատեխնիկական ներուժի զարգացումը, գիտության ժամանակակից ենթակառուցվածքի ձևավորումը, տնտեսության մեջ գիտության և տեխնիկայի նվաճումների ներդրման խրախուսումը, հանրապետության առջև ծառացած անվտանգային և սոցիալական խնդիրների լուծմանը նպաստելը, գիտության, կրթության և արտադրության ինտեգրումը, հայագիտության զարգացումը, ինչպես նաև գիտատեխնիկական մշակույթի զարգացումը և տարածումը:

Այդ նպատակների ձեռքբերման ուղղությամբ 2020-2022 թվականների ընթացքում իրականացվելու են միջոցառումներ, որոնք ամրագրված են, մասնավորապես, ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2020 թվականների ռազմավարությամբ (հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի նիստի N 20 արձանագրային որոշմամբ), 2017-2020 թվականների ռազմավարական ծրագրով (հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 17-ի նիստի N 35 արձանագրային որոշմամբ) և ՀՀ կառավարության ծրագրով: ՀՀ գիտության ոլորտի 2019-2023 թվականների պետական քաղաքականության ուղենիշներն ամրագրվել են ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» կետի «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնում:

ՀՀ-ում միջազգայնորեն մրցունակ, Եվրոպական հետազոտական տարածքի հետ ինտեգրված և այդ հետազոտական տարածքում իր մասնագիտացման տիրույթը (խելացի մասնագիտացում) ունեցող, գիտական գերազանցությունը խթանող, հանրապետության տնտեսության պահանջներից բխող, պաշտպանունականության մակարդակի բարձրացմանը նպաստող և բարձր տեխնոլոգիական արտադրանք ապահովող ազգային գիտական համակարգ ձևավորելու նպատակով՝ 2020-2022 թվականներին շարունակվելու են՝

- ՀՀ-ում ՀՀ ԳԱԱ «ԻԿՐԱՆԵՏ կենտրոն» միջազգային կազմակերպության և Տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոնի (ICTP) փոխկապակցված կենտրոնի ֆինանսավորումը,

- համաֆինանսավորման սկզբունքով իրականացվելու են հայ-ֆրանսիական, հայ-բելառուսական, հայ-ռուսական և հայ-գերմանական, հայ-բուլղարական, հայ-իտալական համատեղ ծրագրեր: Միաժամանակ, ֆինանսավորվելու են նաև մի շարք միջազգային գիտական կառույցների կամ համագործակցությունների մասնակցությունը՝ Միջուկային Հետազոտությունների Միացյալ

Ինստիտուտի (ՄՀՄԻ–JINR), Բարձր Էներգիաների Ստերեոսկոպիկ Համակարգ (ԲԷՍՀ–H.E.S.S.), ԵՄ հետազոտությունների, գիտության և նորարարության «Հորիզոն-2020» ծրագրի անդամակցությունը՝ 2020 թվականին և «Հորիզոն Եվրոպա» ծրագրի անդամակցությունը՝ 2021-2022 թվականներին և այլն:

Պահպանվելու է նաև պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների անհատական խրախուսման ծրագրերը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2020-2022 թվականների զարգացման հիմնական թիրախները շարադրված են ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2019-2023 թվականների ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի «Գիտության ոլորտին» վերաբերող կետերում: Այդ թիրախներն են՝

- գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը,
- գիտության ոլորտում արդյունավետության վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմներ ներդրումը,
- երկրի տնտեսության կարիքներից բխող և գիտական հետազոտությունների արդի պահանջներին համապատասխանող ուղղությունների զարգացումը,
- գիտության ոլորտում երիտասարդա կադրերի ամրապնդման մեխանիզմների ներդրումը, Հայաստանում իրականացվող ծրագրերում արտասահմանում գտնվող հայ գիտանականների ներգրավումը, վերինտեգրման ծրագրերի իրականացումը,
- բեկումնային զարգացում ապահովող որոշ տեխնոլոգիական ոլորտներում գիտական, գիտակրթական և գիտատեխնոլոգիական գերազանցության կենտրոնների ստեղծումը,
- կրթություն-գիտություն կապի սրտացումը՝ ձևավորելով բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների ցանցեր ՝ ըստ գիտական գործունեության բնագավառների և ապահովելով ուսանողների, պրոֆեսորդասախոսական կազմի և գիտաշխատողների տեղաշարժը ցանցի մաս կազմող բարձրագույն ուսումնական հաստատություններում և գիտական կազմակերպություններում.
- հայերեն լեզվի գործառության ու զարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծումը,
- միջազգայնորեն մրցունակ, միջազգային գիտական նվաճումների միտված, երկրի տնտեսության մրցունակությանը և անվտանգությանն անմիջականորեն նպաստող գիտական համակարգի ստեղծումը:

Վերոնշյալ նպատակների ձեռքբերման ուղղությամբ 2020-2022 թվականներին իրականացվելու են հետևյալ միջոցառումները՝

- գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում կատարողականի վրա

հիմնված պետական ֆինանսավորման մեխանիզմների ներդրում,

- գիտության ոլորտի օպտիմալացման և կառուցվածքային բարեփոխումների ծրագրի մշակում և ներդրում,

- գիտության ոլորտի զարգացման 2021-2025 թվականների ռազմավարական ծրագրի մշակում և ներդրում,

- գիտության և տեխնիկայի զարգացման 2020-2024 թվականների գերակայությունների սահմանում և դրանց շրջանակներում ծրագրերի առաջնահերթ իրականացման մեխանիզմների ներդրում,

- տնտեսության պահանջներից բխող հետազոտությունների պատվերների ձևավորման մեխանիզմների մշակում և ներդրում,

- երկակի նշանակության ծրագրերի իրականացում,

- գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման ծրագրի մշակում և ներդրում,

- օտարերկրյա պետություններում աշխատող գիտական և (կամ) գիտակրթական կադրերի վերաինտեգրման ծրագրերի իրականացում,

- միջազգային չափանիշներին համապատասխան գիտական հետազոտություններ իրականացնելու պայմանների ձևավորման մեխանիզմների մշակում և ներդրում,

- գիտանորարարական ենթակառուցվածքների ստեղծման աջակցության մեխանիզմներ ներդրում,

- Եվրոպական հետազոտական տարածքում խելացի մասնագիտացման տիրույթի ձեռքբերմանն ուղղված ծրագրերի իրականացում,

- հայագիտական հետազոտությունների առաջանցիկ զարգացման ապահովում, այդ թվում՝ միջազգային համագործակցության զարգացման մակարդակի բարձրացում:

-

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գիտության ոլորտի 2020-2022 թվականների ծախսային գերակայություններն ու դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումներն են՝

- *Գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացում, կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմների ներդրում, տնտեսության պահանջներից բխող, ինչպես նաև երկակի նշանակություն ունեցող գիտելիքների ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խթանում՝*

Անհրաժեշտ գնահատել գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետությունը և ներդնել կատարողականի վրա հիմնված պետական ֆինանսավորման մեխանիզմներ: Այս

գործընթացին պետք է հաջորդի գիտության բնագավառի ոլորտային և միջոլորտային մոտեցմամբ օպտիմալացման և կառուցվածքային բարեփոխումների իրականացումը, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում, անկախ գերատեսչական պատկանելությունից, միևնույն գիտական ուղղության պետական գիտական կազմակերպությունների միավորումը: Պետք է հստակեցնել գիտական կազմակերպությունների տնօրենի և գիտական խորհրդի իրավասություններն ու պարտականությունները (արժևորելով տնօրենի պաշտոնը և վարչական ազդեցությունից հանելով գիտական որոշումների ընդունման գործառույթները), սահմանափակել գիտական ստորաբաժանումների ղեկավարների և տնօրենի պաշտոններն անընդմեջ զբաղեցնելու ժամանակահատվածը, հստակեցնել բուհերում գիտական ստորաբաժանումների կազմակերպահրավական կարգավիճակը՝ ապահովելով ֆինանսատնտեսական գործունեության որոշակի ինքնուրույնություն և խրախուսելով բուհերի մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորմանը (համաֆինանսավորման սկզբունքով ծրագրերի իրականացում, համատեղ լաբորատորիաների ստեղծում և այլն):

Գիտության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության բարձրացման հիմնական մեխանիզմը գիտական ծրագրերի և թեմաների ընտրության իրական մրցութային պայմանների ապահովումն է: Պահպանելով գիտության ֆինանսավորման բազմաձևությունը՝ այն պետք է իրականացվի բացառապես ծրագրային սկզբունքով և հասցեագրված:

-Երկակի հետազոտությունների ծրագրերի ծավալը պետք է մեծացնել՝ գիտահետազոտական լաբորատորիաներին տարեկան տրամադրելով պայմանագրային (թեմատիկ) գիտական թեմաների ֆինանսավորման տարեկան առավելագույն ծավալների կրկնապատիկ աջակցություն:

- *Գիտական կադրերի վերարտադրության արդյունավետ համակարգի ներդրում, գիտության ենթակառուցվածքների արդիականացում*՝

ՀՀ գիտության ոլորտի առաջընթաց զարգացման համար սկզբունքային նշանակություն ունի գիտական կադրերի արդյունավետ վերարտադրության և սահուն սերնդափոխության ապահովման հարցը: Անհրաժեշտ է մշակել և ներդնել գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման և օտարերկրյա պետություններում աշխատող գիտական և (կամ) գիտակրթական կադրերի վերաինտեգրման ծրագրեր:

Նպատակի ձեռքբերման համար իրականացվող քայլերը պետք է մի կողմից միտված լինեն գիտության ոլորտ երիտասարդ կադրերով համալրելուն, մյուս կողմից՝ միջին սերնդի գիտնականների թվաքանակի բարձրացմանը:

Գիտության ենթակառուցվածքների արդիականացման նպատակով անհրաժեշտ է շարունակել՝

գիտական սարքերի և սարքավորումների/լաբորատորիաների ձեռքբերման կամ ստեղծման ամենամյա դրամաշնորհային ծրագրերը:

- *Գիտական, գիտակրթական և գիտատեխնոլոգիական գերազանցության կենտրոնների ստեղծումը, կրթութուն-գիտություն կապի ամրապնդումը՝*

Անհրաժեշտ է մշակել և ներդնել միջազգային չափանիշներին համապատասխան գիտական հետազոտություններ իրականացնելու պայմանների ձևավորման, գիտանորարարական ենթակառուցվածքների ստեղծման աջակցության մեխանիզմներ, ինչպես նաև իրականացնել Եվրոպական հետազոտական տարածքում խելացի մասնագիտացման տիրույթի ձեռքբերմանն ուղղված ծրագրեր:

Մասնավորապես, միջազգային համագործակցության ընդլայնման նպատակով պետք է շարունակել՝

- համաֆինանսավորման սկզբունքով միջազգային ծրագրերի իրականացումը,
- անդամակցությունը գիտական կառույցներին (Միջուկային Հետազոտությունների Միացյալ Ինստիտուտի (ՄՀՄԻ–JINR), Բարձր Էներգիաների Ստերեոսկոպիկ Համակարգի (ԲԷՍՀ - H.E.S.S.) աշխատանքներին:

2020 թվականին պետք է շարունակել ԵՄ «Հորիզոն-2020» ծրագրի անդամակցությունը, իսկ 2021-2022 թվականներին ԵՄ հաջորդ շրջանակային ծրագրի՝ «Հորիզոն Եվրոպայի» անդամակցությունը, ինչի արդյունքում հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունները և գիտական կազմակերպությունները հնարավորություն կունենան ստանալու առաջավոր հետազոտական և զարգացմանն ուղղված նախագծերի իրականացման հնարավորություն և ֆինանսավորում:

- *Հայագիտական հետազոտությունների առաջանցիկ զարգացման ապահովում, այդ թվում՝ միջազգային համագործակցության զարգացման մակարդակի բարձրացում՝*

Հայագիտության ոլորտի առաջնային զարգացման ուղղությամբ անհրաժեշտ է՝

- հայագիտության ոլորտի առաջընթաց զարգացումն ապահովող ծրագրերի իրականացում՝ որպես հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանման և ՀՀ համար ռազմավարական նշանակություն ունեցող ուղղություն,
- հայագիտության բնագավառի կադրերի պատրաստման ու վերապատրաստման մեջ օտարերկրյա պետությունների, առաջին հերթին Սփյուռքի հայագետների ներգրավում, հայագիտության բնագավառում միջազգային համագործակցության զարգացում, այդ թվում՝ աշխարհի հայագիտական հաստատությունների հետ համատեղ ծրագրերի իրականացում:

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
ՀՀ գիտության ոլորտը պետք է լինի միջազգայնորեն մրցունակ, միջազգային հետազոտական տարածքի հետ ինտեգրված, տնտեսության պահանջներից բխող, ինչպես նաև երկակի նշանակության բարձր տեխնոլոգիական հետազոտություններում գերազանցությունը խթանող, հանրապետության տնտեսության մրցունակության բարձրացմանը,	*1162 Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր*	*Միջազգային գիտական միջոցառումներում և համաժողովներում ներկայացված գիտական հետազոտություններ, հատ*	*400*	2020թ.	*500*	2022թ.	*ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի ,4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԵ կետի ,Գիտության ոլորտինե վերաբերող բաժնի 1-ից 6-րդ պարբերությունների*
		Միջազգային հայտնի գիտական հանդեսներում հրապարակումների, հոդվածների, հետազոտությունների քանակ, հատ	*1000*	2020թ.	*1100*	2022թ.	

անվտանգության ապահովմանը նպաստող համակարգ		*Միջազգային հրապարակումներին հղումների քանակ, հատ*	*12000*	2020թ.	*14000*	2022թ.	

5.2.3 ՄՇԱԿՈՒՅԹ

ՀՀ կառավարության վարած մշակութային քաղաքականությանը համապատասխան մշակույթի ոլորտում իրականացվում են մշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) պահպանության, պաշտպանության, 1ուսումնասիրության, ազգային արվեստների հենքի և ավանդույթների հիմքի վրա ժամանակակից մարդու ընկալումներին ու ձգտումներին համահունչ ժամանակակից արվեստի ստեղծման և տարածման, ազգաբնակչության ստեղծագործական ներուժի խթանման, նոր մտահղացումների ու գաղափարների ներդրման անհրաժեշտ պայմանների ապահովման, ժամանակակից մշակութային մրցունակ արտադրանքի ստեղծման, մշակութային միջոցառումների իրականացման և այլ ծառայություններ:

ՀՀ կառավարության մշակութային քաղաքականությունը մշակում է ոլորտի պետական լիազոր մարմինը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, որն իրականացվում է մշակույթի ոլորտի 70 պետական ոչ առևտրային կազմակերպությունների, 4 գերատեսչությունների (ՀՀ պաշտպանության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններ, ՀՀ քաղաքաշինության կոմիտե), 10 մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի կողմից և դրամաշնորհային մշակութային ծրագրերի մրցույթի արդյունքում հաղթած հասարակական կազմակերպությունների միջոցով, ինչպես նաև Հայաստանում հավատարմագրված 42 դեսպանությունների, արտերկրում գործող ՀՀ 36 դեսպանությունների և 5 գլխավոր հյուպատոսությունների, 13 միջազգային կառույցների և 13 միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ: 2020-2022 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով մշակույթի ոլորտում ընդգրկված է 8 ծրագիր՝ 39 միջոցառում:

Մշակույթի ոլորտը կարգավորվում է «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին», «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին», «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին», «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին», «Արխիվային գործի մասին», «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին», «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքներով:

- ***Կինեմատոգրաֆիայի ծրագիր.***

Կինոարտադրանքի ստեղծման, Հայաստանում և միջազգային ասպարեզում

հայրենական կինոարտադրության ներկայացման, հայկական կինոժառանգության թվայնացման գործառույթներն իրականացվում են մշակութային քաղաքականությունն իրականացնող 2 ՊՈԱԿ-ների և դրամաշնորհային մշակութային ծրագրերի մրցույթի արդյունքում հաղթած մշակութային ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների միջոցով:

- ***Մշակութային ժառանգության ծրագիր.***

- մշակութային շարժական ժառանգության հաշվառման, գիտական ուսումնասիրության, համալրման, հանրահռչակման, թանգարանների ցուցադրությունների և մշակութային արժեքների պահպանության պայմանների ժամանակակից տեխնիկական պահանջներին համապատասխանեցման գործառույթներն իրականացվում են մշակութային քաղաքականությունն իրականացնող 36 թանգարանների, Հայաստանի ազգային արխիվի միջոցով:

- մշակութային անշարժ ժառանգության պահպանության, ուսումնասիրության, հաշվառման, վերականգնման, հանրահռչակման գործառույթներն իրականացվում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության, մշակութային քաղաքականությունն իրականացնող 2 ՊՈԱԿ-ի, 1 ՀԿ-ի միջոցով:

- ***Գրքի և գրչության ծրագիր.***

Գրական դաշտի բոլոր օղակների հավասարաչափ զարգացման, գրական արտադրանքի միջոցով գրական-մշակութային ժառանգության պահպանման, զարգացման, տարածման և հարհահռչակման, քաղաքացիական հասարակության ձևավորման, ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծման, միջազգային համագործակցության համար նպաստավոր պայմանների ստեղծման գործառույթները իրականացվում են մշակութային քաղաքականությունն իրականացնող 12 գրադարանների, դրամաշնորհային մշակութային ծրագրերի մրցույթի արդյունքում հաղթած և գրականության ցանկերը ձևավորող մրցութային հանձնաժողովների որոշումներով ամրագրված մշակութային ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջոցով:

- ***Արվեստների ծրագիր.***

Մշակութային արտադրանքի ստեղծման և ոլորտի ծառայությունների մատուցման մրցակցային դաշտի ձևավորման, դեբյուտային ստեղծագործական ծրագրերի, արվեստի փորձարարական և նորարարական ձևերի խրախուսման, անհատ ստեղծագործողների ու երևույթների արժևորման և միջազգային ասպարեզում ժամանակակից մշակույթի ներկայացման գործառույթներն իրականացվում են մշակութային քաղաքականությունն իրականացնող 37 թատերահամերգային կազմա-

կերպությունների, ինչպես նաև դրամաշնորհային մշակութային ծրագրերի մրցույթի արդյունքում հաղթած մշակութային ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների միջոցով:

- ***Մշակութային և գեղագիտական դաստիարակության ծրագիր.***

Երեխաների հոգևոր և գեղագիտական ընդունակությունների բացահայտման և զարգացման, գեղագիտական դաստիարակության մատչելիության ապահովման, մշակութային ծառայությունների որակի բարձրացման, ՀՀ ապագա քաղաքացիների ձևավորմանը նպաստող գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացման գործառույթներն իրականացվում են մշակութային ծառայություններ մատուցող պետական, համայնքային և դրամաշնորհային մշակութային ծրագրերի մրցույթի արդյունքում հաղթած մշակութային ծառայություններ մատուցող հասարակական կազմակեր-պությունների միջոցով:

- ***Մարզերի մշակութային զարգացման ծրագիր.***

Մշակույթի ապակենտրոնացման քաղաքականության շարունակականության ապահովման, մարզերում մշակութային կյանքի աշխուժացման, միջմարզային կապերի զարգացման, մշակութային գործունեության իրականացման ապահովման գործառույթներն իրականացվում են դրամաշնորհային մշակութային ծրագրերի մրցույթի արդյունքում հաղթած մշակութային ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների միջոցով:

- ***Ազգային արխիվի ծրագիր***

Արխիվային փաստաթղթերի պահպանության ապահովման, համալրման, օգտագործման և տեղեկատու-որոնողական ինքնաշխատ համակարգի ստեղծման գործառույթներն իրականացվում են «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

- Կինոարվեստի, կինոարտադրության զարգացմանն աջակցություն, հայկական ավանդույթների շարունակականության ապահովում, կինոարվեստի հանրահռչակում.

Արդյունք. կինոարտադրության ընդլայնում և տարածում, հասարակության կինոհաղորդակցության բարելավում:

Հիմք. ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին. «ստեղծել ստեղծագործական կարողությունների

լիարժեք արտահայտման և իրացման համար բարենպաստ միջավայր»:

- Մշակութային ժառանգության պահպանում, օգտագործում, համալրում և հանրահռչակում.

Արդյունք. Մշակութային ժառանգության շարունակական պահպանում, մշակութային զբոսաշրջության զարգացում և խթանում:

Հիմք. ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին. «կատարելագործել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների բնագավառի իրավական դաշտը, հստակեցնել պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր ներդրողների իրավունքներն ու պարտականությունները և նրանց միջև փոխհարաբերությունները, կատարելագործել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների օգտագործման տրամադրման մեխանիզմները և խրախուսել ֆինանսական ներդրումային հոսքերը»:

- Գրական դաշտի բոլոր օղակների հավասարաչափ զարգացում, գրական արտադրանքի միջոցով գրական-մշակութային ժառանգության պահպանում, զարգացման, տարածման և հանրահռչակման, քաղաքացիական հասարակության ձևավորում, ստեղծագործական ներուժի վերարտադրում և զարգացման համար պայմանների ստեղծում.

Արդյունք. Գրքի և գրական արտադրանքի բազմազանության ապահովում, ստեղծագործական գործընթացների խթանում:

Հիմք. ՀՀ կառավարության 2019 թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին. «ստեղծել ստեղծագործական կարողությունների լիարժեք արտահայտման և իրացման համար բարենպաստ միջավայր, իրականացնել հայկական մշակույթի ճանաչելիությանն ուղղված ծրագրեր՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս»:

- Ազգային հենքի վրա ժամանակակից թատերարվեստի, երաժշտարվեստի, կերպարվեստի և պարարվեստի զարգացում և հանրահռչակում.

Արդյունք. Մրցունակ արվեստային արտադրանքի ստեղծում, ստեղծագործական գործընթացների խթանում, արվեստի նոր նախագծերի ներդրում և մշակութային կյանքին հասարակության ներգրավում:

Հիմք. ՀՀ կառավարության 2019 թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին. «իրականացնել հայկական մշակույթի ճանաչելիությանն ուղղված ծրագրեր՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս»:

- Երեխաների հոգևոր և գեղագիտական ընդունակությունների բացահայտում և զարգացում.

Արդյունք. Ստեղծագործական ունակությունների ձևավորում և զարգացում:

Հիմք. ՀՀ կառավարության 2019 թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին. «իրականացնել կրթության ու մշակույթի կապը խթանող ծրագրեր»:

- Մարզերում մշակութային կյանքի և մշակութաստեղծ գործունեության ակտիվացում.

Արդյունք. Համայնքներում մշակույթի հասանելիության և մշակութային կյանքին մարզային բնակչության ընդգրկվածության ընդլայնում:

Հիմք. ՀՀ կառավարության 2019 թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին. «ապահովել մշակութային ծառայությունների համաչափությունը, մատչելիությունը և հասանելիությունը Հայաստանի Հանրապետության մարզերում՝ իրականացնելով մշակույթի տարածքային համաչափ զարգացման քաղաքականություն՝ Հայաստանի Հանրապետությունում մշակութային կյանքի ապակենտրոնացման և մարզերում մշակութային զարգացման աջակցության միջոցով»:

- ՀՀ ազգային արխիվային հավաքածուի պահպանության, համալրման, հաշվառման և օգտագործման ապահովում.

Արդյունք. ՀՀ ազգային արխիվային հավաքածուի պահպանության, համալրման, հաշվառման և օգտագործման ապահովում:

Հիմք. «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1), 2) կետեր. «ՀՀ կառավարությունը՝ ապահովում է արխիվային գործի բնագավառում պետական քաղաքականության իրականացումը. սահմանում է ՀՀ արխիվային հավաքածուի և արխիվային այլ փաստաթղթերի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների, պետական և համայնքային արխիվների կողմից համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման կազմակերպման միասնական կանոններ և նորմեր», 9, 15, 16, 17 հոդվածներ, ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին. «կառավարության մշակութային քաղաքականությունն ուղղված է լինելու պատմամշակութային ժառանգության պահպանմանը.....»:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2020-2022թթ. ՄԺԾԾ ժամանակատավածի համար ոլորտային գերակայությունները հավասարազոր են:

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար	Հիմնավորումներ
1) Մշակութային ժառանգության, պատմամշակութային հուշարձանների պահպանության, կատարողական արվեստների և կինոարվեստի ոլորտներում օրենսդրական դաշտի կատարելագործումը, որը ենթադրում է առկա օրենքների լրամշակում և նոր օրենքների ընդունում.	Հիմք՝ ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին: Մշակույթի ոլորտում բարեփոխումների իրականացում ու կայուն զարգացման համար հիմքերի ստեղծում, իրավական հիմքերի կարգավորում
2) Մշակութային ծառայությունների համաչափության, մատչելիության և հասանելիության ապահովում, որը ենթադրում է ստեղծագործական կարողությունների լիարժեք արտահայտման և իրացման համար բարենպաստ միջավայրի ստեղծում, մշակույթի և արվեստի բոլոր ոլորտների միջև հավասարակշռության սկզբունքի կիրառում, մշակույթի և ստեղծարարության ազատության և հավասար մեկնարկային պայմանների ապահովում, պետական միջոցների բաշխման թափանցիկության, մրցակցայնության և արդարացիության ապահովում.	Հիմք՝ ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին: Միասնական մշակութային հարթակի ձևավորում, որի միջոցով կիրականացվի միասնական մշակութային քաղաքականությունը, բնակչության մշակութային կրթության և ժամանցի որակի բարելավում, մարզային մշակութային զբոսաշրջության զարգացում, հանրապետական և միջազգային մշակութային նախագծերի իրականացման հնարավորության մշակութային ինքնավարության ապահովում, ստեղծագործ կարողությունների զարգացում, ներուժի վերհանում, ստեղծարար արտադրությունների հիմնում՝ մշակութային տնտեսության խթանում
3) Մշակութային քաղաքականությունն իրականացնող կազմակերպություններում կառավարման ժամանակակից համակարգերի ներդրում՝ խրախուսելով կառուցվածքային փոփոխությունները, վարչական աշխատանքի օպտիմալացումը և պետություն-համայնք-մասնավոր սեկտոր համագործակցությունը.	Հիմք՝ ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին: Կառավարման ժամանակակից համակարգերի ներդրում, պետություն-մասնավոր համագործակցության զարգացում

4) Մշակույթի տարածքային համաչափ զարգացման ապահովում՝ մշակութային կյանքի ապակենտրոնացման և մարզերում մշակութային կարողությունների զարգացման աջակցության միջոցով.	Հիմք՝ ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին: ՀՀ մարզերում մշակութային ծառայությունների համաչափության, մատչելիության և հասանելիության ապահովում
5) Մշակութային զբոսաշրջության խրախուսում՝ իրականացնելով զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ծրագրեր.	Հիմք՝ ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին: Հայաստանում միջազգային մշակութային զբոսաշրջության շրջանակների ընդլայնում և հասանելիության բարձրացում՝ արգելոց-թանգարանների ստեղծմամբ
6) Գեղագիտական դաստիարակության և գեղարվեստական կրթության համակարգի կատարելագործում՝ մշակութային կրթության դերի բարձրացման միջոցով.	Հիմք՝ ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին: Մշակույթի և կրթության կապի խթանում, կրթական հաստատություններում ստեղծագործ մտքի զարգացում, ընթերցանության, դասական երաժշտության և կերպարվեստի նկատմամբ հետաքրքրության մեծացում, ժամանակակից արվեստագետների արժևորում, նրանց գործունեության հանրահռչակում
7) Հայկական մշակույթի ճանաչելիության ընդարձակում Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, օտարերկրյա պետությունների հայ համայնքների հետ համագործակցության զարգացում:	Հիմք՝ ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին: Երկկողմ համագործակցության ընդլայնում՝ մշակույթի օրերի ձևաչափով, միջազգային հեղինակավոր փառատոներին, մրցույթներին, կոնֆերանսներին հայ արվեստագետների, ոլորտի մասնագետների մասնակցության ապահովում, մշակութային նպատակաուղղված դիվանագիտության, ըստ անհրաժեշտության մշակված հստակ քաղաքական օրակարգերի և թիրախավորված ծրագրերի միջոցով միջազգային համագործակցության հաստատում և ընդլայնում

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
Կինոարվեստի, կինոարտադրության զարգացմանն աջակցություն, հայկական ավանդույթների շարունակականության ապահովում, կինոարվեստի հանրահռչակում	*1056* *Կինեմատոգրաֆիայի ծրագիր*	*Նոր արտադրված կինոնկարներ, թիվ*	*22*	*2019*	*20*	*2020*	*ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին՝ «ստեղծել ստեղծագործական կարողությունների լիարժեք արտահայտման և իրացման համար բարենպաստ միջավայր»*
		Վերջին երեք տարիների ընթացքում արտադրված կինոնկարների մասնակցություն միջազգային կինոփառատոնների, թիվ	*5*	*2019*	*5*	*2021*	*ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին՝ «իրականացնել հայկական մշակույթի ճանաչելիությանն ուղղված ծրագրեր՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս»*

		Հայաստանում միջազգային կինոփառատոնների կազմակերպում, թիվ	5	2019	6	2021	ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին՝ «իրականացնել հայկական մշակույթի ճանաչելիությանն ուղղված ծրագրեր՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս»
Մշակութային ժառանգության պահպանում, օգտագործում, համալրում և հանրահռչակում	1075 Մշակութային ժառանգության ծրագիր	Ամրակայված, նորոգված և վերականգնված հուշարձանների քանակը ընդամենի նկատմամբ, տոկոս	0.07%	2020	0.07%	2022	ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին՝ «կատարելագործել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների բնագավառի իրավական դաշտը, հստակեցնել պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր ներդրողների իրավունքներն ու պարտականությունները և նրանց միջև փոխհարաբերությունները, կատարելագործել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների օգտագործման տրամադրման մեխանիզմները և

							խրախուսել ֆինանսական ներդրումային հոսքերը»
		Ուսումնասիրված և նախագծված հուշարձանների քանակը ընդամենի նկատմամբ, տոկոս	*0.02%*	*2020*	*0.06%*	*2022*	*ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին՝ «կատարելագործել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների բնագավառի իրավական դաշտը, հստակեցնել պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր ներդրողների իրավունքներն ու պարտականությունները և նրանց միջև փոխհարաբերությունները, կատարելագործել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների օգտագործման տրամադրման մեխանիզմները և խրախուսել ֆինանսական ներդրումային հոսքերը»*

		Թանգարանային հավաքածուների և ոչ նյութական ժառանգության միջազգայնացման նախագծերի քանակ	7	2019	8	2020	ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին՝ «իրականացնել հայկական մշակույթի ճանաչելիությանն ուղղված ծրագրեր՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս»
Գրական դաշտի բոլոր օղակների հավասարաչափ զարգացում, գրական արտադրանքի միջոցով գրական-մշակութային ժառանգության պահպանում, զարգացում, տարածում և հանրահռչակում, քաղաքա-ցիական հասարակության ձևավորում, ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծում, միջազգային համագործակցության համար նպաստավոր պայմանների ստեղծում	1124 Գրքի և գրչության ծրագիր	Գրքերի ձեռքբերում, անուն գիրք, հատ	17	2019	20	2021	ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին՝ «իրականացնել հայկական մշակույթի ճանաչելիությանն ուղղված ծրագրեր՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս»

		Թարգմանական ծրագրերի և աջակցություն ստացած ստեղծագործողների ու հեղինակների քանակ	34	2019	35	2022	ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. "Մշակույթը" բաժին՝ «- ստեղծել ստեղծագործական կարողությունների լիարժեք արտահայտման և իրացման համար բարենպաստ միջավայր, - իրականացնել հայկական մշակույթի ճանաչելիությանն ուղղված ծրագրեր՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս»
		Պետական աջակցություն ստացող ազգային փոքրամասնությունների, գրական, մշակութային ոչ պետական պարբերակների քանակ	26	2019	26	2022	ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին՝ «- ստեղծել ստեղծագործական կարողությունների լիարժեք արտահայտման և իրացման համար բարենպաստ միջավայր, - իրականացնել հայկական մշակույթի ճանաչելիությանն ուղղված ծրագրեր՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս»

		Հանրապետությունում իրականացվող գրական ծրագրեր, հատ	10	2019	10	2021	ՀՀ կառավարության 2019 թ. փետրվարի 8-ի ,ՀՀ կառավարության ծրագրի մասինե N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին՝ «- ստեղծել ստեղծագործական կարողությունների լիարժեք արտահայտման և իրացման համար բարենպաստ միջավայր, - իրականացնել հայկական մշակույթի ճանաչելիությանն ուղղված ծրագրեր՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս»
		Հանրապետությունում իրականացվող գրական ծրագրերում ընդգրկված ստեղծագործողներ, մարդ	160	2019	180	2021	ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. "Մշակույթը" բաժին՝ «- ստեղծել ստեղծագործական կարողությունների լիարժեք արտահայտման և իրացման համար բարենպաստ միջավայր, - իրականացնել հայկական մշակույթի ճանաչելիությանն ուղղված ծրագրեր՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս»

Նպաստել ազգային հենքի վրա ժամանակակից թատերարվեստի, երաժշտարվեստի, կերպարվեստի և պարարվեստի զարգացմանը և հանրահռչակմանը	1168 Արվեստների ծրագիր	Արվեստի տարբեր ոլորտներում նոր նախագծեր, քանակ	50	2019	60	2022	ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին՝ «աջակցել դեբյուտային ստեղծագործական ծրագրերին՝ արվեստի փորձարարական և նորարարական ձևերի խրախուսմամբ»
		Մասնակցություն արվեստի միջազգային նախագծերին, խմբերի թիվ	18	2019	25	2022	ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին՝ «իրականացնել հայկական մշակույթի ճանաչելիությանն ուղղված ծրագրեր՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս»
		Մասնակցություն արվեստի միջազգային նախագծերին, արվեստագետների թիվ	30	2019	50	2022	ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին՝ «իրականացնել հայկական մշակույթի ճանաչելիությանն ուղղված ծրագրեր՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս»

		Հանրապետությունում իրականացվող արվեստի միջազգային նախագծեր, քանակ	23	2019	28	2021	ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին՝ «իրականացնել հայկական մշակույթի ճանաչելիությանն ուղղված ծրագրեր՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս»
Մարզերում մշակութային կյանքի և մշակութաստեղծ գործունեության ակտիվացում	1196 Մարզերի մշակութային զարգացման ծրագիր	Համայնքների ընդգրկվածություն մշակութային միջոցառումներին, տոկոս ընդամենը համայնքների նկատմամբ	20	2019	30	2020	ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին՝ «ապահովել մշակութային ծառայությունների համաչափությունը, մատչելիությունը և հասանելիությունը ՀՀ մարզերում՝ իրականացնելով մշակույթի տարածքային համաչափ զարգացման քաղաքականություն՝ ՀՀ մշակութային կյանքի ապակենտրոնացման և մարզերում մշակութային զարգացման աջակցության միջոցով»

Երեխաների հոգևոր և գեղագիտական ընդունակությունների բացահայտում և զարգացում	1198 Մշակութային և գեղագիտական դաստիարակության ծրագիր	Շնորհալի երեխաների շփեմարանի համալրում, թիվ	25	2019	30	2021	ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին «իրականացնել կրթության ու մշակույթի կապը խթանող ծրագրեր»
		Միջազգային նախագծերում շնորհալի երեխաների մասնակցություն, երեխա	43	2019	45	2022	ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին՝ «իրականացնել հայկական մշակույթի ճանաչելիությանն ուղղված ծրագրեր՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս»
		Հանրապետությունում ազգային, փողային և լարային նվագարանների տարածման մակադակ, նշված գործիքներին տիրապետող երեխաների կշիռը	34	2019	44	2023	ՀՀ կառավարության 2019 թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին՝ «ապահովել մշակութային ծառայությունների համաչափությունը, մատչելիությունը և հասանելիությունը ՀՀ մարզերում՝

		ընդամենը երաժշտական կրթություն ստացող երեխաների մեջ, տոկոս					իրականացնելով մշակույթի տարածքային համաչափ զարգացման քաղաքականություն՝ Հայաստանի Հանրապետությունում մշակութային կյանքի ապակենտրոնացման և մարզերում մշակութային զարգացման աջակցության միջոցով»
ՀՀ ազգային արխիվային հավաքածուի պահպանության, համալրման, հաշվառման և օգտագործման ապահովում	1147 Ազգային արխիվի ծրագիր	Արխիվային հավաքածուի փորձաքննությամբ արժևորում և համալրում, գործերի քանակ	30000	2019	30000	2020	ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին
		ՀՀ արխիվային հավաքածուի պահպանության ապահովում, պահպանվող գործերի քանակ	4310000	2019	4450000	2020	ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին
		ՀՀ արխիվային հավաքածուի օգտագործում, ֆիզիկական և իրավաբանական անձանց հարցում-	35000	2019	50000	2020	ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին

		ների քանակ					
		Փաստաթղթերի թվայնացում և տեղեկությունների էլեկտրոնային շտեմարանի ստեղծում, թվայնացված փաստաթղթերի, ֆիլմերի, լուսա-նկարների, ձայնա-գրությունների քանակ/ մուտքագրված քարտերի քանակ	*155000/120000*	*2019*	*230000/100000*	*2020*	*ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 4.5. «Մշակույթը» բաժին*

5.2.4 ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Նախարարության առաքելությունը մեծ նվաճումների և մասսայական սպորտի ոլորտում սահմանվում է ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրով («4.6 Սպորտը» բաժին), «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-196 օրենքով, «Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով:

Հայաստանի Հանրապետության կառավարության սպորտի քաղաքականությունը մշակվում է ոլորտի պետական լիազորված մարմնի՝ Նախարարություն կողմից և իրականացվում է Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի, Հայաստանի Հանրապետության մարզական ֆեդերացիաների, հաշմանդամային սպորտով զբաղվող հասարակական կազմակերպությունների, այլ պետական և հասարակական կազմակերպությունների միջոցով:

- ❖ Մեծ նվաճումների և մասսայական սպորտի ոլորտում ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունն է՝ Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում առաջնորդվել հետևյալ սկզբունքներով.
  - բնակչության առողջության ամրապնդումը,
  - անհատի ներդաշնակ զարգացումը,
  - հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստականության ապահովումը,
  - բարձրակարգ մարզիկների պատրաստումն և միջազգային մրցասպարեզներում Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի և մարզիկների մասնակցության ապահովումը:

Սպորտի ոլորտում Նախարարության նպատակներն ու խնդիրներն են՝

- ➢ սպորտի և երիտասարդական պետական քաղաքականության նպատակների և առաջնային ուղղությունների սահմանումն ու իրականացումը.
- ➢ բնակչության առողջացման, ֆիզիկական դաստիարակության գիտականորեն հիմնավորված համակարգի ստեղծումը.
- ➢ սպորտի դերի բարձրացման, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման, բնակչության առողջության ամրապնդման, առողջ ապրելակերպի ձևավորման և ակտիվ

հանգստի կազմակերպման գործին աջակցելը.

- հաշմանդամների՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծումը.
- հանրապետությունում օլիմպիական շարժման զարգացմանը, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի և մարզաձևերի ազգային ֆեդերացիաների գործունեությանն աջակցելը.
- երիտասարդական և մանկապատանեկան կազմակերպությունների գործունեությանը պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով միջոցառումների իրականացմանն օժանդակելը.
- սպորտային և երիտասարդական քաղաքականության քարոզչության՝ զանգվածային լրատվության միջոցներով ապահովումը.

❖ Երիտասարդական պետական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության բաղկացուցիչ մասն է և ունի ռազմավարական նշանակություն:

Երիտասարդական պետական քաղաքականությունը մշակվում և իրականացվում է պետական կառավարման լիազոր մարմնի՝ Նախարարության կողմից՝ պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ: Պետական երիտասարդական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության, միջազգային իրավունքների սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Երիտասարդական պետական քաղաքականությունը կոչված է ստեղծելու իրավական, տնտեսական և կազմակերպչական պայմաններ երիտասարդության համակողմանի զարգացման, ինքնահաստատման և ինքնադրսևորման համար:

Երիտասարդական պետական քաղաքականությունը առաջնահերթությունների, ծրագրերի, միջոցառումների և մեխանիզմների համակարգ է, որն ուղղված է երիտասարդության մասնակցության, սոցիալականացման և ինքնաիրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, երիտասարդության ներուժի ներգրավմանն ու դրա զարգացմանը՝ նպաստելու Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ամրապնդմանը, սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացմանը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Նախարարությունը սպորտի և երիտասարդության ոլորտում մշակում է իր ռազմավարությունը՝

նպատակ ունենալով զարգացնելու հետևյալ թիրախները՝

- ***Մեծ նվաճումների սպորտ***

Մարզաձևերի ազգային ֆեդերացիաների և հաշմանդամային մարզական հասարակական կազմակերպությունների կողմից մարզիկների պատրաստում, ՀՀ առաջնությունների անցկացում, օլիմպիական, պարալիմպիկ խաղերին, Աշխարհի, Եվրոպայի և այլ միջազգային առաջնություններին մասնակցություն:

Արդյունք. ՀՀ առաջնությունների ընդլայնում, միջազգային սպորտային միջոցառումներին մասնակցության և նվաճումների ապահովում:

Հիմք. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագիր («4.6 Սպորտը» բաժին), «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-196 օրենք:

- ***Մասսայական սպորտ***

ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի, մրցույթների, ռազմամարզական խաղերի, մանկապատանեկան սպորտի մասսայականացմանը նպաստող միջոցառումների անցկացում:

Արդյունք. Սպորտի նկատմամբ հետաքրքրվածության և մասնակցության ընդլայնում:

Հիմք. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-196 օրենք, «Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենք:

- ***Երիտասարդության ծրագիր***

Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ.

Արդյունք. Հասարակական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցության, երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի, հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակության խթանում, երիտասարդների զբաղվածության հնարավորությունների մեծացում:

Հիմք. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշմամբ հաստատված ծրագիր («4.7 Երիտասարդությունը» բաժին):

- ***Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներ***

Արդյունք. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելմանն ուղղված քարոզչական միջոցառումներ:

Հիմք. ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետությունում 2016-2018 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» N 726-Ն որոշում:

- ***Աջակցություն երիտասարդ ընտանիքներին***

Արդյունք. «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորում:

Հիմք. ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի «Երիտասարդ ընտանիքն՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը հաստատելու մասին N 98-Ն որոշում:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2020-2022 թթ. ՄԺԾԾ ժամանակատավածի համար ոլորտային գերակայությունները հավասարազոր են :

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար	**Հիմնավորումներ**
Մեծ նվաճումների սպորտ	2019 թվականի փետրվարի 8-ի ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագիր («4.6 Սպորտը» բաժին), «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-196 օրենք:
Մասսայական սպորտ	«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» և «Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքներ, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի հրամաններ:
Երիտասարդության ծրագիր	2019 թվականի փետրվարի 8-ի ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագիր («4.7 Երիտասարդությունը» բաժին):

ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
Բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորում, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում	1041 Մեծ նվաճումների սպորտ	ՀՀ առաջնությունների մասնակիցների թիվ, մարզիկ	9760	2018թ.	9793	2020թ.	ՀՀ կառավարության 2019 թ. փետրվարի 8-ի ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65 որոշման «4.6 Սպորտը» բաժին՝ Սպորտի բնագավառում Կառավարությունը նպատակ է հետապնդում ապահովել մանկապատանեկան սպորտի զարգացումը՝ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի, մարզաձևերի ֆեդերացիաների, մարզական հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ:
		Միջազգային մարզական միջոցառումներում նվաճված մեդալների քանակ, հատ	203	2018թ.	215	2020թ.	
		Միջազգային մարզական միջոցառումներին մասնակիցների թիվ, մարզիկ	2010	2018թ.	2073	2020թ.	
Նպաստել սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքին երիտասարդների լիարժեք ներգրավմանը և	1115 Երիտասարդության ծրագիր	Երիտասարդների քաղաքացիական մասնակցության համաթիվ (Երիտասարդության զարգացման ինդեքս, ՄԱԿ)	0.274	2016թ.	0.274	2020թ.	ՀՀ կառավարության 2019 թ. փետրվարի 8-ի ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65 որոշման 4.7 Երիտասարդությունը» բաժին՝ Կառավարության ծրագրային նպատակն է բարձրացնել երիտասարդների հասարակական, քաղաքական, քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և

նրանց ստեղծագործական ներուժի ամբողջական դրսևորմանը		Երիտասարդների զբաղվածության և հնարավորության համաթիվ (Երիտասարդության զարգացման ինդեքս, ՄԱԿ)	0.379	2016թ	0.379	2020թ.	մշակութային մասնակցության մակարդակը, ինչպես նաև մշակել երիտասարդության զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ մեխանիզմներ:
		Երիտասարդների քաղաքական մասնակցության համաթիվ (Երիտասարդության զարգացման ինդեքս, ՄԱԿ)	0.39	2016թ	0.39	2020թ.	
Բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորում, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում	1163 Մասսայական սպորտ	Մասսայական սպորտային միջոցառումներին մասնակից ՀՀ և ԱՀ համայնքների քանակ, տոկոս ընդամենի նկատմամբ	80	2018թ.	82	2020թ.	«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-196 օրենք, «Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենք:
		Մասսայական սպորտային միջոցառումներին ՀՀ բնակչության մասնակցության մակարդակ,	213390	2018թ.	213400	2020թ.	

		մասնակիցների թիվ					
		Մասսայական սպորտային միջոցառումներին ԱՀ բնակչության մասնակցության մակարդակ, մասնակիցների թիվ	1538	2018թ.	2000	2020թ.	

5.3 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՈԼՈՐՏԸ

Առողջապահության ոլորտը՝ որպես սոցիալական կարևոր ոլորտ, հանդիսանում է Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Առողջապահության նախարարությունը՝ որպես առողջապահության ոլորտի լիազոր մարմին, մշակում և իրականացնում է առողջապահության բնագավառում կառավարության քաղաքականությունը, մասնավորապես իրականացնում է՝ առողջապահության զարգացման քաղաքականության և պետական նպատակային ծրագրերի մշակումը, դրանց իրականացման կազմակերպումը, սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը, բնակչության առաջնային և մասնագիտացված բժշկական օգնության ու ծառայությունների ապահովման կազմակերպումը, մոր և մանկան առողջության պահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, բնակչության առողջության բարելավման միջոցառումների կազմակերպումը և առողջական վիճակի ուսումնասիրությունը, հաշմանդամության ու մահացության նվազեցմանը միտված ծրագրերի մշակումը և իրագործումը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Առողջապահության ոլորտի հետագա զարգացումը, մատուցվող ծառայությունների մատչելիության ու որակի, բնակչության առողջությունը բնութագրող ցուցանիշների բարելավումը մեծապես կախված են ոլորտի ֆինանսավորման մակարդակից: Ծրագրային ժամանակահատվածում առողջապահության ոլորտը պետք է լինի պետական ծախսային առաջնահերթություններից մեկը, և ոլորտին հատկացումներն աճեն ավելի արագ, քան բյուջեի ընդհանուր ծախսերը:

Պետական առողջապահական ծախսերի նպատակայնության հետևողական բարձրացման, հատկացվող ֆինանսական միջոցների վերահսկման և մատուցվող ծառայությունների որակի կառավարման գործուն մեխանիզմների շարունակական բարելավման շնորհիվ առողջապահական համակարգի շահառուն ստիպված չի լինի հավելյալ վճարել պետության կողմից անվճար և արտոնյալ պայմաններով մատուցվող ծառայությունների համար և կստանա որակյալ բժշկական օգնություն և ծառայություններ: Անվճար բժշկական օգնությունը պետք է տրամադրվի միայն սոցիալական արդարության սկզբունքի հիման վրա: Միաժամանակ պետությունը պետք է կանգնած լինի անհետաձգելի բժշկական օգնության կարիք ունեցող ցանկացած մարդու կողքին:

Բնակչության առողջության առաջնային պահպանումը միջնաժամկետ հեռանկարում շարունակելու է մնալ ռազմավարական կարևոր ուղղություն: Միջնաժամկետ հատվածում շարունակականորեն ապահովելով առաջնային օղակի դերի բարձրացումը և մատուցվող ծառայությունների որակի բարելավումը՝ ապահովվելու է որակյալ և մատչելի առաջնային բուժօգնություն, ինչպես նաև սոցիալական արդարության և հավասարության սկզբունքներ հանրապետության ողջ բնակչության համար՝ անկախ սեռից ու տարիքից:

Մոր և մանկան առողջությունը շարունակելու է առանցքային դեր խաղալ պետական ծախսային քաղաքականության մեջ: Հղիների նախածննդյան և ծննդյան որակյալ բուժօգնության տրամադրման, կանանց, հղիների և նորածինների լայնածավալ սքրինինգային ծրագրերի, կանանց համար մեծ ռիսկ ներկայացնող հիվանդությունների դեպքերի վաղ հայտնաբերման ու կանխարգելման, երեխաների պատվաստումներում ընդգրկվածության մեծացման արդյունում ակնկալվում է զգալի կրճատել մանկական և մայրական մահացության ցուցանիշները:

0-18 տարեկան երեխաների հիվանդանցային բժշկական օգնությունն ու սպասարկումը ամբողջապես գտնվում է պետական հոգածության տակ և իրականացվում է պետական պատվերի շրջանակներում:

Միջնաժամկետ ժամանակահատվածում շարունակվելու են լրացուցիչ միջոցներ ուղղվել պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում կյանք փրկող գլխուղեղի սուր և ենթասուր իշեմիկ կաթվածների թրոմբոլիտիկ բուժման և մեխանիկական թրոմբէկտոմիա ծառայության զարգացմանը:

Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը ռազմավարական մեկ այլ կարևոր նպատակ է, որի շրջանակներում ապահովվելու է առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման, ախտորոշման ու կանխարգելման ճանապարհով բնակչության առողջության հիմնական ցուցանիշների բարելավում և այդ հիվանդությունների բարդությունների, հաշմանդամության և մահացության ցուցանիշների կրճատում, ինչպես նաև վարակիչ հիվանդություններով հիվանդացության նվազեցում, կառավարելի վարակիչ հիվանդություններից մահվան դեպքերի կանխում և վարակիչ հիվանդությունների նկատմամբ բնակչության անընկալության ապահովում:

Առողջապահության նախարարության հիմնական խնդիրներից է հանրապետությունում ուռուցքաբանական ծառայությունների շարունակական բարելավումը: Ուռուցքաբանական հիվանդություններով հիվանդ քաղաքացիներին մատուցվելու են որակյալ բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ, միաժամանակ վերջիններիս հնարավորինս «փրկելով» հիվանդության բուժման հետ կապված կործանարար ծախսեր կատարելու վտանգներից:

Նախատեսվում է նոր տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացնել մարդու օրգանների (երիկամ), և ոսկրածուծի/ցողունային բջիջների փոխպատվաստման ծառայություններ, որոնք կբարելավեն քրոնիկ երիկամային անբավարությամբ և արյան չարորակ հիվանդություններով տառապող անձանց կյանքի որակը և ապրելիության ցուցանիշը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)	Հիմնավորումներ
Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ	Համաձայն ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմա¬վա¬րական ծրագրի (կետ 413)՝ բուժօգնության առաջնային օղակի հետագա բարելավումն ու զարգացումը շարունակելու է մնալ ոլորտում ՀՀ կառավարության միջամտության հիմնական առաջնահերթություններից մեկը: Նախատեսվում է նաև առողջապահական ծառայությունների, բժշկական հաստատությունների և մարդկային ներուժի տեղաբաշխման ժամանակակից նորմատիվային բազայի մշակում և ներդնում, ինչպես նաև առաջնային օղակի կողմից մատուցվող ծառայությունների շրջանակների ավելացում, մասնավորապես սքրինինգային ծրագրերի միջոցով:
Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ	Համաձայն ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի (կետ 416)՝ ՀՀ բոլոր քաղաքացիների համար երաշխավորվելու է սրտի անհետաձգելի վիրահատությունը:
Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ	Համաձայն ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի (կետ 415)՝ կրկին հատուկ ուշադրության կենտրոնում են լինելու բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց հիվանդանոցային մասնագիտացված բուժօգնության ապահովման հարցերը: Ոչ վարակիչ հիվանդությունների, մասնավորապես սիրտ-անոթային հիվանդությունների, շաքարային դիաբետի, չարորակ նորագոյացությունների տարածվածությունը դրսևորում է աճի միտում, և, այս առումով, առավել ռիսկային խմբում են հայտնվում հատկապես բնակչության աղքատ և սոցիալապես անապահով խմբերը:
Շտապ բժշկական օգնության ծառայության ապահովումը	ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «ՀՀ բնակչության շտապ բժշկական օգնության և սպասարկման 2016-2020թթ. ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2016թ. ապրիլի 15-ի նիստի N 14 արձանագրային որոշումը, որի համաձայն նախատեսվում է շտապ բժշկական օգնության համապատասխանեցումը ժամանակակից պահանջներին, բնակչության համար շտապ բժշկական օգնության ծառայության մատչելիության և որակի բարելավում:
Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ	Համաձայն ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի (կետ 417)՝ շարունակվելու և խորացվելու են մոր և մանկան առողջության պահպանման բարելավման ուղղությամբ վերջին տարիներին իրականացված բարեփոխումները: Միջնաժամկետ հատվածում «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» և «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքների համաձայն իրականացվելիք գործողություններն ուղղված են լինելու հղիներին նախածննդյան և շուրջծննդյան որակյալ բուժօգնության տրամադրմանը, երեխաների՝ բացառապես կրծքով կերակրման խրախուսմանը և միկրոէլեմենտների անբավարարության կանխմանը, կանանց համար մեծ ռիսկ ներկայացնող հիվանդությունների դեպքերի վաղ

	հայտնաբերմանն ու տարածման կանխարգելմանը, երեխաների՝ պատվաստումներով ընդգրկվածության մեծացմանն ու տարածքային կտրվածքով առկա տարբերությունների վերացմանը, վաղ հասակի երեխաների բժշկական ծառայությունների հասանելիության և մատչելիության բարձրացմանը, երեխաների մտավոր և ֆիզիկական թերզարգացման կանխարգելմանն ուղղված նորածնային սքրինինգային ծրագրերի հաջորդական ներդրմանը, երեխաների մտավոր և ֆիզիկական զարգացման խանգարումների և հաշմանդամության կանխարգելմանը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Առողջապահության նախարարության ոլորտի գծով ծախսերը միջնաժամկետ հատվածում ըստ տարիների կազմում են.

2020 թվականի համար՝ 107,213,297.7 հազար դրամ,

2021 թվականի համար՝ 115,287,257.7 հազար դրամ,

2022 թվականի համար՝ 126,350,331.5 հազար դրամ:

Առողջապահության ոլորտի վերջնական արդյունքի ցուցանիշները.

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
Բնակչությանը մատչելի և որակյալ առաջնային բժշկական օգնության և սպասարկման ապահովում, առողջության վատթարացման ռիսկի գործոնների վերհանում և դրանց հնարավոր անբարենպաստ ազդեցության կանխարգելում	*1099 Առողջության առաջնային պահպանում*	*Ամբուլատոր բժշկական հաստատություններում փաստացի գրանցված բնակչությունը ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում, տոկոս*	*97.3*	*2019*	*98.5*	*2022*	Կառավարության քաղաքականությունն ուղղված է լինելու անհատի և հանրային առողջության պահպանմանն ու բարելավմանը՝ ապահովելով արդիական, բարձր որակի և համապարփակ առողջապահական ծառայությունների մատուցումը:
		ԱԱՊ հաստատություններ մեկ բնակչի հաշվով հաճախումների թիվ, հատ	*3.9*	*2019*	*4.1*	*2022*	

Մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության բացառում և նվազեցում: Կառավարելի վարակիչ հիվանդությունների դեմ պայքար	*1003 Հանրային առողջության պահպանում*	*Բոլոր պատվաստումներում համապատասխան տարիքի երեխաների ընդգրկվածություն, տոկոս*	*1 տարեկան - 91 2 տարեկան - 93 6 տարեկան - 96*	*2019*	*1 տարեկան - 92 2 տարեկան - 95 6 տարեկան - 96*	*2022*	Քաղաքականությունն ուղղված է լինելու անհատի և հանրային առողջության պահպանմանն ու բարելավմանը՝ ապահովելով արդիական, բարձր որակի և համապարփակ առողջապահական ծառայությունների մատուցումը:
		Ախտահանման ենթակա վարակիչ հիվանդությունների օջախների ընդգրկվածություն, տոկոս	*65*	*2019*	*95*	*2022*	
		Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մակարդակի գնահատական (Գերազանց, Լավ, Բավարար, Անբավարար)	*Բավարար*	*2019*	*Լավ*	*2022*	
		Հանրապետությունում արյան, արյան բաղադրամասերով և արյան պատրաստուկներով ապահովվածության	*95 (խաղաղ պայմանների համար)*	*2019*	*96 (խաղաղ պայմանների համար)*	*2022*	

		մակարդակ, տոկոս					
		Ծխողների քանակի նվազում նախորդ տարվա համեմատ (տոկոս)	*–*		*5*	*2022*	
Մոր և մանկան առողջության պահպանում, կանանց և երեխաներին մատուցվող բժշկական ծառայությունների մատչելիության և որակի բարելավում	*1200 Մոր և մանկան առողջության պահպանում*	*Մանկական (0-5 տարեկան) մահացության մակարդակ, մահեր 1000 կենդանածնի հաշվով*	*10.1*	*2019*	*8.5*	*2022*	Հատուկ ուշադրության կենտրոնում են լինելու մոր և մանկան առողջության պահպանման, վերարտադրողական առողջության բարելավման, վաղ մանկության շրջանի և դեռահասության առողջապահական խնդիրները, սրտանոթային և քաղցկեղային հիվանդությունների բուժման և վերահսկման արդյունավետության բարձրացումը:
		Մանկական (0-1 տարեկան) մահացության մակարդակ, մահեր 1000 կենդանածնի հաշվով	*8.2*	*2019*	*7*	*2022*	
		Մայրական մահացության մակարդակ, մահեր 100000 կենդանածնի հաշվով (միջին եռամյա ցուցանիշ)	*16.3*	*2019*	*15*	*2022*	

		Անպտղության ժամանակակից բուժումների արդյունավետության միջին ցուցանիշ, տոկոս	*30*	*2019*	*35*	*2022*	
Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության հասանելիության և մատչելիության մակարդակի բարձրացում, հիվանդանոցային որակյալ բժշկական օգնության ապահովում	*1207 Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն*	*Հիվանդանոցային բժշկական օգնության ծառայություններ ստացած սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված շահառուների թիվը ընդհանուր շահառուների թվում, տոկոս*	*18.1*	*2019*	*20*	*2022*	Կառավարության քաղաքականությունն ուղղված է լինելու անհատի և հանրային առողջության պահպանմանն ու բարելավմանը՝ ապահովելով արդիական, բարձր որակի և համապարփակ առողջապահական ծառայությունների մատուցումը:
		Պետական բյուջեի միջոցների հաշվին առողջության ապահովագրություն ստրամադրված անձանց թիվ, մարդ	*100000*	*2019*	*300000*	*2022*	
Ոչ վարակիչ հիվանդությունների (մասնավորապես՝ սիրտանոթային,	*1202 Ոչ վարակիչ հիվանդությունների*	*Չարորակ նորագոյացություններից մահացություն, մահեր 100,000*	*189.6*	*2019*	*183.9*	*2022*	Առողջապահության ոլորտի զարգացման ապահովումն իրականացվելու է՝ գերակա գործոն դիտարկելով

շաքարային դիաբետի և չարորակ նորագոյացությունների) բուժման արդյունավետության բարձրացում	*բժշկական օգնության ապահովում*	*բնակչի հաշվով*					վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման ու վաղ հայտնաբերման ուղղությունների զարգացումը: Սրա շրջանակներում պետք է ամրապնդել և զարգացնել առողջապահության առաջնային օղակը, խթանել առողջ ապրելակերպի տարածումը և շարունակել սքրինինգային ծրագրերի ընդլայնումը:
		Շաքարային դիաբետից մահացություն, մահեր 100,000 բնակչի հաշվով	*39.2*	*2019*	*38.0*	*2022*	
		Արյան շրջանառության համակարգի հիվանդությունների ց մահացություն, մահեր 100,000 բնակչի հաշվով	*454.5*	*2019*	*440.9*	*2022*	
Վարակիչ և բնակչության համար մեծ ռիսկ ներկայացնող հիվանդությունների (մալարիա, փուբերկուլյոզ և ՄԻԱՎ/ՁԻԱՀ 7 և այլն) արդյունվետ հակազդում և բժշկական օգնության ապահովում	*1208 Վարակիչ հիվանդությունների կանխարգելում*	*Կառավարելի վարակիչ հիվանդություններով հիվանդացության մակարդակ, հիվանդներ 100,000 բնակչի հաշվով*	*1830.6*	*2019*	*1739*	*2022*	
		Կառավարելի վարակիչ հիվանդությունների հետևանքով մահվան դեպքեր, մահեր 100,000	*7.94*	*2019*	*7.54*	*2022*	

		բնակչի հաշվով					
Մարդու կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող վիճակներում որակյալ շտապ բժշկական օգնության ծառայությունների տրամադրում	*1201 Շտապ բժշկական օգնություն*	*ՇԲՕ մեկ բրիգադի օրական միջին ծանրաբեռնվածություն, կանչ*	*12*	*2019*	*13*	*2022*	Կառավարության քաղաքականությունն ուղղված է լինելու անհատի և հանրային առողջության պահպանմանն ու բարելավմանը՝ ապահովելով արդիական, բարձր որակի և համապարփակ առողջապահական ծառայությունների մատուցումը:
Դեղերի անվտանգության, արդյունավետության և որակի ապահովում, ՀՀ հիմնական դեղերի ցանկում առկա կենսականորեն անհրաժեշտ դեղերի ֆիզիկական և տնտեսական մատչելիության բարձրացում	*1188 Դեղապահովում*	*Առանձին հիվանդություններով դեղեր ստանալու իրավունք ունեցող անձանց դեղերով ապահովվածության ԱՆ գնահատական, տոկոս*	*95*	*2019*	*98*	*2022*	
Առողջապահության համակարգի արդիականացում և զարգացում	*1053 Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավե*	*Վարակիչ հիվանդությունների ց (տուբերկուլյոզ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ) մահացության մակարդակ, մահեր 100,000 բնակչի*	*1.84*	*2019*	*1.65*	*2022*	

	ության բարձրացման ծրագիր	*հաշվով*					
		Ոչ վարակիչ հիվանդությունների սկրինինգային ծրագրերում ընդգրկվածության մակարդակ, տոկոս	*50*	*2019*	*70*	*2022*	
		Արդիականացված բժշկական հաստատությունների քանակ, հատ	*2*	*2019*	*4*	*2022*	
Դատաբժշկական և ախտաբանաանատոմիական հետազոտությունների հիման վրա ախտորոշման և բուժման արդյունավետության բարձրացում	*1142 Դատաբժշկական և ախտաբանաանատոմիական ծառայություններ*	*Դատաբժշկական փորձաքննությունների թիվ, հատ*	*54581*	*2019*	*62132.4*	*2022*	

Բժշկական օգնության կազմակերպման ու որակի բարձրացման կարգավորման մասնագիտական, խորհրդատվական, կազմակերպամեթոդական ապահովում, համակարգի գործունեության արդյունքների գնահատում	*1191 Խորհրդատվական, մասնագիտական աջակցություն և հետազոտություններ*	*Մարզային բժշկական կազմակերպություններ ուղեգրված բժիշկ-մասնագետների թվաքանակ, մարդ*	-	*2019*	*50*	*2022*	
		Առողջապահական վիճակագրությամբ ապահովում, գրառումների քանակ	*4*	*2019*	*4*	*2022*	Կառավարության համար կարևոր է լինելու բուժանձնակազմի մասնագիտական կարողությունների և պատրաստվածության շարունակական բարձրացման ու զարգացման խնդիրը, առողջապահական համակարգում մարդկային ներուժի համապարփակ և համալիր զարգացման, բժշկական օգնության որակի կառավարման և վերահսկման բարելավումը, այդ թվում՝ միջազգային ստանդարտներին համապատասխանող կլինիկական ուղեցույցների, ընթացակարգերի ներդրումը:

		Էլեկտրոնային առողջապահության համակարգում բուժհաստատությունների ընդգրկվածություն, տոկոս	*10.2*	*2019*	*100*	*2022*	Քաղաքացիների համար առողջապահական ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովման համար անհրաժեշտ է հետևողականորեն շարունակել բժշկական ապահովագրության այնպիսի համակարգի ներդրումը, որ բժշկական օգնության և բժշկական սպասարկման անհրաժեշտություն ունեցող յուրաքանչյուր 31 քաղաքացու պատշաճ և ժամանակին տրամադրվեն այդ ծառայությունները՝ անկախ սեռից, տարիքից, բնակության վայրից և սոցիալական կարգավիճակից: Կառավարությունը պետք է մեղմի սոցիալապես անապահով խավերի և որոշակի խմբերի ապահովագրական ծախսերը:

5.4 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՈԼՈՐՏԸ

Սոցիալական պաշտպանությունը պատմականորեն հանդիսացել և շարունակում է հանդես գալ որպես ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումն և ՀՀ բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը: Վերոհիշյալ նպատակին հասնելու համար սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվում է լայնածավալ պետական միջամտություն, որը ուղղակի կամ անուղղակի առնչվում է Կրթության և գիտության, մշակույթի և սպորտի, Առողջապահության, Պաշտպանության, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և այլ նախարարությունների հետ:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Ստորև ներկայացված են սոցիալական քաղաքականության հիմնական թիրախները և դրանց կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված կոնկրետ նպատակների և քաղաքականության թիրախների հետ ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող հիմնական ծրագրերի:

Անապահով սոցիալական խմբերին աջակցության ծրագիր (1011)

ՀՀ կառավարության ծրագրի 4.2-րդ մասով ամրագրված է, որ Կառավարությունը նպատակադրվել է մինչև 2023 թվականը վերացնել ծայրահեղ աղքատությունը, էապես նվազեցնել աղքատությունը: Այս նպատակի իրագործման համար առանցքային նշանակություն են ունենալու բնակչության աղքատ խավի շրջանում կրթության և աշխատանքի քաջալերումը, գործարարությունը խթանող ծրագրերի իրականացումը: Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումը կբարձրացնի սոցիալական պաշտպանության համակարգի կառավարման արդյունավետությունը, ինչպես նաև սոցիալական ծառայությունների որակը, ինչը կապահովվի ընտանիքի (անձի) սոցիալական կարիքներին համապատասխան՝ բազմաբնույթ ու ամբողջական սոցիալական ծառայությունների փաթեթի տրամադրմամբ և անձնակազմի մասնագիտական կարողությունների հզորացմամբ: Խրախուսելով մասնավոր կազմակերպությունների մուտքը սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտ՝ կձևավորվի մրցակցային միջավայր, կներդրվեն ֆինանսավորման այլընտրանքային մոդելներ, կխթանվի սոցիալական ծառայությունների բազմազանությունը:

Ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների և ավանդի փոխհատուցման ծրագրերի նպատակը սոցիալապես անապահով ընտանիքների և առանձին խմբերի ներկայացուցիչների թիրախային դրամական աջակցության տրամադրումն է:

Ժողովրդագրական վիճակի բարելավում (1068)

ՀՀ կառավարության ծրագրի 4.2-րդ մասով ամրագրված է, որ նախորդ ժամանակահատվածում արձանագրված ժողովրդագրական իրավիճակի զարգացման

բացասական միտումները մեղմելու նպատակով մշակվելու և կյանքի են կոչվելու ծնելիության խրախուսման, երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքների աջակցության նոր ծրագրեր, որոնց շրջանակներում, ըստ անհրաժեշտության, կվերանայվեն նաև գործող ծրագրերը:

Ժողովրդագրական վիճակի բարելավումը խթանելու նպատակով իրագործվելու են միջոցառումներ, որոնց արդյունքում ակնկալվում է, որ կավելանա ծնունդների քանակը, կբարձրանա ծնելիության գումարային գործակիցը:

Կենսաթոշակային ապահովություն (1102)

ՀՀ կառավարության ծրագրի 4.2-րդ մասով ամրագրված է, որ պարբերաբար բարձրացվելու են պետական կենսաթոշակների չափերը՝ ապահովելով գնաճի նկատմամբ միջին կենսաթոշակի չափի առաջանցիկ աճ:

Միջին կենսաթոշակի չափի բարձրացումն ապահովելու նպատակով 2020 թվականին նախատեսվում է 10 տոկոսի աճ, որը կպահպանվի հետագա տարիներին, արդյունքում բարձրացվելու են հիմնական կենսաթոշակի, աշխատանքային և զինծառայության ստաժերի մեկ տարվա արժեքների չափերը: Նախատեսվում է ապահովել նվազագույն սպառողական զամբյուղի հետ համադրելի աշխատանքային կենսաթոշակի չափ՝ միաժամանակ բացառելով ծայրահեղ (պարենային) աղքատության գծից ցածր աշխատանքային կենսաթոշակները:

Զբաղվածության ծրագիր (1088)

ՀՀ կառավարության ծրագրի 4.2-րդ մասի դրույթները համահունչ են զբաղվածության ոլորտի համար սահմանված հիմնական թիրախներին, այն է՝ բնակչության աղքատ խավի շրջանում կրթության և աշխատանքի քաջալերումը, գործարարությունը խթանող ծրագրերի իրականացումը, զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության բարձրացումը, նոր ծրագրերի ներդրումը՝ նպատակաուղղված աշխատաշուկան երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց մրցունակության բարձրացմանը, «կրթություն-աշխատաշուկա» փոխառնչությունների խթանմանը, առկա թափուր աշխատատեղերի համալրմանը:

Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց (1032)

ՀՀ կառավարության ծրագրի 4.2 բաժնի 3-րդ պարբերության դրույթները համահունչ են ոլորտի համար սահմանված հիմնական թիրախներին, այն է.

- պետական միջոցների շրջանակում շահառուներին մատուցվող խնամքի ծառայությունների շարունակականության ապահովում՝ խրախուսելով ծառայությունների պատվիրակումը հասարակական կազմակերպություններին մրցութային եղանակով.
- շահառուներին մատուցվող ծառայությունների որակի բարելավում.
- խնամքի ծառայությունների ապաինստիտուցիոնալացման գործընթացի համատեքստում համայնքային այլընտրանքային ծառայությունների ընդլայնում՝ ներգրավելով համայնքի ներուժը.

վերը նշված գործընթացների իրականացումն ապահովելու նպատակով օրենսդրական դաշտի կատարելագործում:

Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն (1160)

ՀՀ կառավարության ծրագրի 4.2 բաժնի 10-րդ պարբերության դրույթները համահունչ են ոլորտի համար սահմանված հիմնական թիրախներին: Ոլորտում իրականացվող ծրագրերն ու միջոցառումները նպաստում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացմանը՝ հնարավորինս բացառելով խտրականության դրսևորումը նրանց հանդեպ: Մյուս կողմից, դրանք կանխարգելում են հաշմանդամություն ունեցող անձանց մուտքը շուրջօրյա խնամքի հաստատություններ:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Անապահով սոցիալական խմբերին տրամադրվող աջակցության հասցեականության բարելավում:
2. Ժողովրդագրական առկա իրավիճակը բարելավում՝ ընտանիքին տրամադրվող պետական աջակցության երկարաժամկետ ընդգրկումով:
3. Պետական կենսաթոշակների չափերի պարբերաբար ավելացում՝ ապահովելով գնաճի նկատմամբ միջին կենսաթոշակի չափի առաջանցիկ աճ:
4. Հավասար հնարավորությունների և աշխատանքի քաջալերում՝ զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության բարձրացում, ծրագրերը նպատակաուղղված կլինեն աշխատաշուկայում երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց մրցունակության բարձրացմանը, «կրթություն-աշխատաշուկա» փոխառնչությունների խթանմանը, առկա թափուր աշխատատեղերի համալրմանը, արդյունքում՝ գործազրկության մակարդակի նվազմանը:
5. Ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովում՝ կարևորելով հաշմանդամություն ունեցող բոլոր երեխաներին մատուցվող ծառայությունների ապաինստիտուցիոնալացում և նրանց խնամքն ընտանեկան միջավայրում կազմակերպելը:
6. Տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներով, մատուցվող խնամքի ծառայությունների ապաինստիտուցիոնալացում և դրան զուգընթաց այլընտրանքային համայնքային ծառայությունների զարգացում:
7. Հավասար և մատչելի պայմանների ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց համար:
8. Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրմամբ սոցիալական պաշտպանության համակարգի կառավարման արդյունավետության, ինչպես նաև սոցիալական ծառայությունների որակի բարձրացում:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գծով 2020-2022 թվականների ՄԺԾԾ-ում ընդգրկված ծախսային ծրագրերի գումարները կազմում են.

2020 թվականի համար՝	486,225,986.5 հազար դրամ,
2021 թվականի համար՝	489,792,990.8 հազար դրամ,
2022 թվականի համար՝	496,417,010.0 հազար դրամ:

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
Օժանդակել անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանը	1011 Անապահով սոցիալական խմբերին աջակցություն	Ծածկույթ բնակչությունից (տոկոս)	13.4	.2019թ	ոչ ավելի քան 14-%	2022թ.	ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման հավելվածի 4.2 բաժին
		Ընտանեկան նպաստի տեսակարար կշիռ ԸԿԲՈՒ նպաստներում (տոկոս)	75.2	2019թ	ոչ պակաս 75%	2022թ.	

«ՎՏԲ-Հայաստանե ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող և նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների փոխհատուցում	1184 Ավանդների փոխհատուցում	Ծննդյան տարեթիվ /իրավունք ունեցողների շրջանակ/	ծնված մինչև 31.12.1934թ. ներառյալ	2019թ	ծնված մինչև 31.12.1938թ. ներառյալ	2022թ.	ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման հավելվածի 4.2 բաժին
Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց բնականոն կենսագոր ծունեութ յան ապահովում	1032 Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց	Խնամքի կարիք ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամք, տնային պայմաններում սոցիալական սպասարկում, անօթևան անձանց ժամանակավոր կացարանի տրամադրում, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի և	5968	2018թ	նվազում 7,5 %-ով	2022թ.	ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման հավելվածի 4.2 բաժին

		սոցիալական աջակցության այլ ծառայություններ ի տրամադրում՝ համաձայն նրանց գնահատված սոցիալական կարիքների /խնամքի ծառայութ յուններ ստացած 18 տարեկանից բարձր տարիքի անձանց թիվը/					
		18 տարին լրացած անձանց ծառայություններ ի տրամադրում՝ համապատասխ ան խնամքի տրամադրման համար սահմանված չափորոշիչների /խնամքի որևէ ծառայություն ստացած 75 տարին լրացած անձանց հարաբերակցությ	46	2018թ.	Ընդգրկվածութ յան մեծացում առնվազն 5-ով՝ 51	2022թ.	

		ունը ծառայություններ ստացած անձանց ընդհանուր թվաքանակում (անձանց թիվը)/					
		Ապաինստիտուցիոնալացում՝ խնամքի այլընտրանքային ծառայությունների ներդնում հանրապետության առնվազն 2 համայնքում /խնամքի այլընտրանքային ծառայություններ ստացած անձանց թվաքանակը ծառայություններ ստացած անձանց ընդհանուր թվաքանակում (տոկոս)/	0,5	2018թ.	Առնվազն 1	2022թ.	

Խթանել ժողովրդագրական վիճակի բարելավումը	1068 Ժողովրդագրական վիճակի բարելավում	Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստանալու իրավունք ունեցողների թվաքանակը /միջին ամսական/	11317	2019	12721	2022	<< կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման հավելվածի 4.2 բաժին
		Ծնելիության գումարային գործակիցը	1556	2019	1.601	2022	
Բնակչության կայուն և ժամանակավոր զբաղվածության ապահովում	1088 Զբաղվածության ծրագիր	Ծրագրի արդյունքում ժամանակավոր զբաղված դարձած անձանց տեսակարար կշիռը տարվա ընթացքում զբաղվածության տարածքային կենտրոններում գործազուրկի կարգավիճակ ստացած անձանց	0.034	2018թ.	48	2022	<< կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման հավելվածի 4.2 բաժին

		թվաքանակում (կանխատեսվում է, որ տարվա ընթացքում գործազուրկի կարգավիճակ ստացած անձանց թիվը նվազելու է շուրջ 3000-ով և կազմելու է 12000), տոկոս					
		Ծրագրի կայուն զբաղվածություն ապահովող միջոցառումների արդյունքում զբաղվածություն ապահովող ծրագրերում ընդգրկված անձանց տեսակարար կշիռը տարվա ընթացքում զբաղվածության տարածքային կենտրոններում գործազուրկի կարգավիճակ ստացած	0.139	2018թ.	25	2022	

		անձանց թվաքանակում (կանխատեսվում է, որ տարվա ընթացքում գործազուրկի կարգավիճակ ստացած անձանց թիվը նվազելու է շուրջ 3000-ով և կազմելու է 12000), տոկոս					
		Ծրագրի կայուն զբաղվածություն ապահովող միջոցառումների արդյունքում աշխատանքի տեղավորված անձանց տեսակարար կշիռը այդ միջոցառումներում ընդգրկված անձանց թվաքանակում, տոկոս	0.7887	2018թ.	80	2022	
Կենսաթոշակի	1102						<<

իրավունքի իրացում	Կենսաթոշակային ապահովություն	Ծայրահեղ աղքատության գծից ցածր աշխատանքային կենսաթոշակ ստացողների թվաքանակ	0	2019	0	2022	կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման հավելվածի 4.2 բաժին
		Միջին աշխատանքային կենսաթոշակի չափը	40140	2019	44154	2022	
Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովում	1141 Ընտանիքների, կանանց և երեխաներին աջակցություն	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների թվի նկատմամբ սոցիալ հոգեբանական վերականգնողական ծառայություններ ստացած երեխաների թվի հարաբերակցությունը Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների թիվը 7956	20 (2019թ.)	2020	40	2022 թ.	ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման հավելվածի 4.2 բաժին

		երեխա, 2019թվականի դրությամբ ծառայություններ է ստանում շուրջ 1500 երեխա					
Աջակցություն հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը հասարակություն	1160 Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն	Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների հասցեականության և արդյունավետության բարձրացում /ծրագրի շահառուների թիվը հաշմանդամություն ունեցող անձանց թվի մեջ (տոկոս)/	6	2018	Ծրագրի շահառուների թվի ավելացում 1.3%-ով	2020	ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման հավելվածի 4.2 բաժին

Մատուցվող սոցիալական պաշտպանության ծառայությունների բարելավում՝ ինչպես նաև ծառայություններ մատուցող գերատեսչություններում վերլուծական՝ մոնիթորինգի և գնահատման գործառույթների ուժեղացում:	1206 Սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումներ	Շահառուի կողմից համալիր սոցիալական ծառայության տարածքային կենտրոնից նպաստներ և ծառայություններ ստանալու հետ կապված ծախսերի կրճատում (միջին ծախս)	3026	2015	2476	2020	<< կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման հավելվածի 4.2 բաժին
		Ամբողջությամբ գործող ՀՍԾՏԿ-ների թիվը	1	2015	36	2020	

5.5 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

ՈԼՈՐՏԸ

Շրջակա միջավայրի պաշտպանություն այդ թվում՝ կենսաբազմազանության և բնության պաշտպանություն, անտառային տնտեսություն:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Շրջակա միջավայրի կառավարման քաղաքականությունն ուղղված է շրջակա միջավայրի և բնակոկան ռեսուրսների համալիր պահպանությանը, բարելավմանը, վերականգնմանը և ողջամիտ օգտագործմանը՝ հավասարակշռելով այն սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության հետ:

Շրջակա միջավայրի կառավարման հիմնական խնդիրն է նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի՝ օդի, կլիմայի, ջրի, հողերի, բուսական և կենդանական աշխարհի վրա վնասակար ազդեցությունները, բացառել բնական ռեսուրսների գերշահագործումը և ապօրինի օգտագործումը, ապահովել կանխարգելման միջոցառումների իրականացումը: Ելնելով նշվածից՝ շրջակա միջավայրի կառավարման առաջնահերթ ուղղություններն են՝

- Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնումը և պահպանությունը, Արարատյան արտեզյան ավազանի և գետային էկոհամակարգերի պահպանությունը և կառավարումը,

- անտառների կայուն կառավարումը, անտառածածկ տարածքների ընդլայնումը, անտառվերականգնումը և անատառապատումը, դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական զարգացումը,

- կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող խնդիրների մեղմման և կանխարգելման, ինչպես նաև հարմարվողականության գործողությունների իրականացումը՝ համաձայն միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների,

- բնության հատուկ պահպանվող տարածքների հզորացումը, հարակից բնակավայրերի կարողությունների զարգացումը,

- կենսաբազմազանության պահպանությունը և կենսաանվտանգության ապահովումը, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների հաշվառումը.

- քիմիական նյութերի և թափոնների (այդ թվում՝ ընդերքօգտագործման) էկոլոգիապես անվտանգ կառավարումը,

- շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական գործընթացի արդյունավետ իրականացումը,

- շրջակա միջավայրի մոնիթորինգի, թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրումը, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարումը,

- կանաչ տնտեսության և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակի խթանմանն ուղղված քաղաքականության մշակումն ու իրականացումը,

- մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային արտադրանքի գործածության աստիճանական կրճատումը և արգելումը,

- շրջակա միջավայրի կառավարման ոլորտում գործող միջազգային կառույցների հետ շարունակական համագործակցության ապահովումը,

- շրջակա միջավայրի կառավարման տնտեսական մեխանիզմների և լծակների ճկուն համակարգի ներդրումը, միջազգային կառույցների հետ համատեղ ֆինանսավորման նորարարական մեխանիզմների (ներառյալ բնապահպանական ծրագրերով պարտավորությունների հաշվանցման մեխանիզմի) մշակումը և ներդրումը,

- բնապահպանական օրենսդրության ներդաշնակեցումը ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի դիրեկտիվներին և այդ համատեքստում միջազգային համագործակցության ընդլայնումը՝ ճանապարհային քարտեզով նախանշված գործողությունների իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով,

-անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում էկոտուրիզմի զարգացումը,

- էկոլոգիական իրազեկման, էկոկրթության, մշակույթի, դաստիարակության լայնածավալ միջոցառումների իրականացումը, էկոլոգիական գիտության դերի բարձրացումը:

Վերոհիշյալ ուղղությունները (թիրախները) բխում են ՀՀ կառավարության 2019թ փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4.8 կետում (Շրջակա միջավայրը) ամրագրված առաջնահերթ ուղղություններից:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման և պահպանանման բնագավառ

Անտառների կառավարման բնագավառ

Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության բնագավառ

Շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացման բնագավառ

Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարման ոլորտ

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ստորև ներկայացված են շրջակա միջավայրի բնագավառի 2020-2022թթ. յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները.

2020 թվականի համար՝ 6,917,223.1 հազար դրամ,

2021 թվականի համար՝ 5,941,918.3 հազար դրամ,

2022 թվականի համար՝ 5,689,248.7 հազար դրամ:

Շրջակա միջավայրի բնագավառի վերջնական արդյունքի ցուցանիշները.

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշ	Ժամ կետը	Ցուցանիշ	Ժամկետը	
Շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված պետական քաղաքականությա ն մշակում և իրականացում	1071 Բնապահպանության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում մոնիտորինգ						

Նպաստել շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների) պահպանությանը	1016 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում մոնիթորինգ	Շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակի վերաբերյալ մշակվող տեղեկատվութ-յան ամբողջա-կանություն, տոկոս	70	2018	86	2022	ՀՀ կառավա-րության 2019թ փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառա-վարության ծրագրի 4.8 կետի թիրախներ
Տնտեսական գործունեության հետևանքով շրջակա միջավայրին և բնակչության առողջությանը պատճառված վնասների մեղմում	1133 Բնապահպա-նական ծրագրերի իրականացում համայնքներում	Բնապահպանա-կան ծրագրեր իրականացնող համայնքների մասնաբաժինը ազդակիր համայնքների նկատմամբ, տոկոս	61	2018	76	2022	ՀՀ կառավա-րության 2019թ փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավա-րության ծրագրի 6.1 կետի թիրախներ
Բնական պաշարների և կենսաբազմազանության արդյունավետ	1155 Բնական պաշարների	Ապօրինի հատված ծառերի քանակի նվազում, հատ	5455	2018	1000	2022	ՀՀ կառավա-րության 2019թ փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավա-

կառավարում և պահպանություն	բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում պահպանում	Որսագողության նվազում, տոկոս	10	2018	23	2022	ության ծրագրի 4.8 կետի թիրախներ
Անտառային տարածքների կայուն կառավարում	1173 Անտառների կառավարում	Կառավարելի անտառային տարածքներում արձանագրված անօրինական անտառհատումնե ի քանակ, հատ	3072	2018	1000	2022	ՀՀ կառավա-ության 2019թ փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավա-ության ծրագրի 4.8 կետի թիրախներ
		Անտառային պաշարների օգտագործումից ստացված եկամուտներ, հազար դրամ	609689.6	2018	297000.0	2022	
		Բնական վերաճի մասնաբաժինը կառավարվող անտառային տարածքներում ընդհանուր տարածքի, տոկոս	8	2018	10	2022	

Նպաստել բնապահպանական աշխարհայացքի ձևավորմանը, բնակչության էկոլոգիական դաս-տիարակությանը	1186 Բնագիտական նմուշների պահպանություն և ցուցադրություն	Բնագիտական նմուշների հանրայնացման և էկոկրթական նախագծերի քանակ, հատ	17	2018	25	2022	ՀՀ կառավա-րության 2019թ փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավա-րության ծրագրի 4.5 կետի թիրախներ

5.6 ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ՈԼՈՐՏԸ

ՀՀ Կառավարությունը նպատակադրվել է Հայաստանը դարձնել բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական երկիր:

Կառավարությունը ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը սահմանում է որպես զինված ուժերի մարտունակության ապահովման և բարձրացման, տնտեսական աճի, գիտական և տեխնոլոգիական առաջընթացի առանցքային գործոններից մեկը:

Բարձր տեխնոլոգիաների և ռազմարդյունաբերության զարգացման համար անհրաժեշտ միջոցառումների շրջանակներում նախատեսվում է՝

- Իրականացնել կադրերի թիրախավորված պատրաստում և վերապատրաստում, հաշվի առնելով շուկայի կտրուկ զարգացումն ու կադրերի նկատմամբ շուկայի պահանջարկի կտրուկ աճը,
- Զարգացնել բարձր տեխնոլոգիական ոլորտի համար անհրաժեշտ էկոհամակարգը ներառյալ թիրախավորված գիտահետազոտական աշխատանքների, ստեղծագործական խմբերի, նորաստեղծ ընկերությունների ֆինանսավորումը, ինչպես նաև միջազգային հայտնի աքսելերացիոն ծրագրերին մասնակցելու համար տրամադրվող աջակցության ապահովումը,
- Հայկական Սփյուռքի ներգրավվածությունն ապահովելու նպատակով նախատեսվում է տարբեր ֆորմատներում շարունակական համագործակցության հարթակ ստեղծել հայկական ընկերությունների, կազմակերպությունների և անհատների հետ, որի շնորհիվ հնարավորություն կստեղծվի օգտագործել Սփյուռքի ոչ միայն ֆինանսական այլ նաև ինտելեկտուալ և շուկայական կապերի ռեսուրսը,
- Ռազմարդյունաբերության զարգացման ուղղությամբ պլանավորվում է շեշտակի ավելացնել նոր տեխնոլոգիական ուղղություններով գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորումը, ինչպես նաև ապահովել արտադրական կարողությունների զարգացումը,
- Կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման, գործարար միջավայրի բարելավման, քաղաքացիների կյանքի որակի բարձրացման և պետական մարմինների հետ առնչվելու դյուրացման, ինչպես նաև միջազգային տնտեսական գործընթացներին արդյունավետ մասնակցելու նպատակով, Հայաստանում նախատեսվում է զանգվածաբար

կիրառել և զարգացնել թվային տեխնոլոգիաներ: Զուգահեռաբար նախատեսվում է բարձրացնել կիբեռանվտանգության և ինտերնետ հասանելիության մակարդակը Հայաստանում:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Ոլորտի հիմնական թիրախներն են.

- Տնտեսության միջնաժամկետ և երկարաժամկետ կայուն աճի շարժիչ ուժը պետք է հանդիսանա նորարարությունը և առաջադեմ տեխնոլոգիաների ստեղծումն ու կիրառումը: Միաժամանակ Հայաստանի զարգացման հենասյունը կրթված, ստեղծագործ և ազատ քաղաքացին է, ուստի գիտելիքահենք տնտեսության զարգացման համար անհրաժեշտ է խրախուսել նորարարությունը և նախաձեռնողականությունը,
- Ապահովել տեխնոլոգիական ընկերությունների կողմից ստեղծված բարձրորակ կրթական ծրագրերի լայն կիառումը ԲՈՒՀ-երում ինչպես նաև Հայաստանի տարբեր քաղաքներում գտնվող տեխնոլոգիական կենտրոններում և կրթական այլ հաստատություններում,
- Խրախուսել գիտության և մասնավոր հատվածի միջև համագործակցությունը, գիտական հետազոտությունների արդյունքների առևտրայնացումը՝ դրամաշնորհային ծրագրերի իրագործման և ներդրողների ներգրավման միջոցով,
- Ստարտափ էկոհամակարգի զարգացման և միջազգային շուկաներում հայկական ընկերությունների առաջխաղացման և ամրապնդման նպատակով օժանդակել ընկերություններին մասնակցել միջազգային հայտնի աքսելերացիոն կազմակերպությունների ուսուցողական ծրագրերին,
- Աջակցել միջազգային շուկաներում հայկական բարձր տեխնոլոգիական ընկերությունների, նրանց ստեղծած արտադրանքի և ծառայությունների պատշաճ ներկայացմանը և միջազգային G2G(կառավարություն-կառավարության) և B2B (բիզնես-բիզնես) համագործակցության պլատֆորմների զարգացմանը,
- ՀՀ մարզերի համահարթ զարգացման նպատակով խթանել մարզերում ժամանակակից հագեցած տեխնոլոգիական կենտրոնների արդյունավետ գործունեությունը, և ձեռնարկել միջոցներ Հանրապետության տարածքում նոր կենտրոնների ստեղծման ուղղությամբ,
- Նպաստավոր պայմաններ ստեղծել միջազգային բարձր տեխնոլոգիական ընկերությունների Հայաստան մուտքի համար՝ գիտահետազոտական, արտադրական և կրթական կենտրոններ հիմնելու նպատակով,

Ռազմարդյունաբերության զարգացման ուղղությամբ պլանավորվում է շեշտակի ավելացնել գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորումը, ինչպես նաև ապահովել Հայաստանում արտադրական կարողությունների զարգացումը՝ աստիճանաբար նվազեցնելով բանակի կախվածությունը ռազմական տեխնիկայի ներկրումներից, ինչպես նաև նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ բարձրացնելով ռազմական միավորների և համակարգերի արդյունավետությունը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիրն ըստ էության բխում է 2019թ փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությունից՝ Հայաստանը դարձնել բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական երկիր:

Ծրագիրն իր մեջ ներառում է հետևյալ 5 միջոցառումները.

1. **Մասնագետների պատրաստման ԲՈՒՀ-մասնավոր հատված համագործակցություն միջոցառումը, որի նպատակն է ԲՈՒՀ-երի և տեխնոլոգիական ոլորտի** ընկերությունների հետ մշակել և իրականացնել համատեղ կրթական/վերապատրաստման արդեն իսկ կիրառված և իրենց արդյունավետությունն ապացուցած ծրագրեր, ներգրավելով ոլորտի պրոֆեսիոնալներին մասնավոր ընկերություններից:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է նաև աջակցել ոլորտի կազմակերպություններին և անհատներին ստանալ որակյալ կրթություն՝ ձեռներեցության, կառավարման, վաճառքի և մարկետինգի ոլորտներում՝ համապատասխան տեղական և միջազգային ծրագրերով:

Միջոցառումների իրականացման արդյունքում կձևավորվի բարձր տեխնոլոգիաների ոլորտում զարգացած և մրցունակ աշխատուժ, ապահովելով արագ զարգացող տեխնոլոգիական ոլորտի պահանջները: Արդյունքում նաև կզարգանան ձեռներեցության և շուկայական գիտելիքներն ու հմտությունները:

2. **«Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհներ** միջոցառումը նախատեսում է դրամաշնորհների տեսքով տրամադրել աջակցություն գիտահետազոտական և փորձարարական խմբերին, ստարտափերին, տեխնոլոգիական ոլորտի կազմակերպություններին՝ անհրաժեշտ թեմաների շուրջ աշխատանքներ իրականացնելու համար:

Մասնավորապես նախատեսվում է՝

- Փոքր դրամաշնորհների տրամադրում համալսարանական խմբերին, գիտահետազոտական և փորձարարական խմբերին, ստարտափ ընկերություններին,
- Համաֆինանսավորման միջոցով դրամաշնորհների տրամադրում ստարտափ ընկերություններին:

Կառավարության հիմնական նպատակներից է ստեղծագործող քաղաքացիներին աջակցելը, նրանց ռիսկը կիսելը, և ստեղծագործելու էլ ավելի լայն հնարավորություններ ստեղծելը, ինչպես նաև Հայաստանը բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական երկիր դարձնելը: Նկարագրված միջոցառումները խրախուսում են ստեղծագործական/գիտական խմբերին՝ դրամաշնորհային միջոցներով կատարել գիտահետազոտական և փորձարարական աշխատանքներ առաջնահերթ ուղղություններով:

Հաջորդ փուլով հնարավորություն է ստեղծվում այդ խմբերի համար գրանցել իրենց ընկերությունները, ներգրավել ֆինանսական այլ միջոցներ և ստանալ համաֆինանսավորում՝ նոր մասնագետներ գրավելու, իրենց գաղափարը պրոդուկտիզացնելու և համաշխարհային շուկա դուրս գալու նպատակով:

3. **«Հայկական վիրտուալ կամուրջ»** միջոցառման նպատակն է Հայաստանը դարձնել բարձր տեխնոլոգիական արդյունաբերական կենտրոն:

Միջոցառումը նախատեսում է՝

- Հայաստանում և արտասահմանում գտնվող հայկական տեխնոլոգիական համայնքների մասնագիտական համագործակցության ապահովման մեխանիզմների ստեղծում,
- Բարձր տեխնոլոգիական ոլորտում գործող ձեռներեցների վերապատրաստման միջոցառումների ապահովում Հայաստանում և արտերկրում,
- Ստարտափ ընկերությունների աքսելերացիայով և ինկուբացիայով զբաղվող միջազգային կազմակերպությունների ներգրավում Հայաստան և աջակցություն տեղական համանման կազմակերպությունների զարգացմանը,

- Արտերկրից դեպի Հայաստան ստարտափերի ներհոսքի ապահովման միջոցառումների իրականացում, դրանց տեղակայման, վերապատրաստման, «Վիրտուալ կամուրջի» բաղկացուցիչ միջոցառումներում ինտեգրման ապահովում,
- Միջազգային ճանաչում ունեցող բարձր տեխնոլոգիական ոլորտի կազմակերպությունների ներգրավում Հայաստան,
- Հայկական ընկերությունների օնլայն տեղեկատվական/առևտրային հարթակի մշակում՝ ներառյալ մասնագիտական ուղղվածություն, կարողություն, վարկանիշ, ապրանքներ, ծառայություններ և այլ անհրաժեշտ տեղեկատվություն,
- Հայաստանի ամբողջ տարածքում աջակցություն տեխնոլոգիական կենտրոններին և նոր կենտրոնների ստեղծում:

4. Շուկաների զարգացում և միջազգային համագործակցություն միջոցառման նպատակն է բարձր տեխնոլոգիական ընկերությունների, ապրանքների և ծառայությունների արտերկրում պատշաճ ներկայացումը եւ թիրախավորված վաճառքի խթանումը:

Միջոցառման իրականացման արդյունքում հայկական ընկերությունները, կարող են մասնակցել ցուցահանդեսներին, սեմինարներին, երկկողմ գործարար ֆորումներին և այլ միջոցառումներին, հնարավորություն ստանալով ներկայացնել իրենց արտադրանքը, ծառայությունները և դուրս գալ միջազգային շուկա:

5.Միասնական թվային հենքի մշակում: Միջոցառման նպատակը պետական բոլոր մարմինների և տնտեսության զարգացման համար միասնական թվային հենքի մշակումն է, որը թույլ կտա ստանդարտացնել թվային գործիքները՝ ծրագրավորման լեզվի, բազաների, միմյանց հետ փոխգործելիության, տվյալների մշակման, ֆունկցիոնալության ավելացման և այլ հնարավորություններով:

Հետազոտական և նախագծային աշխատանքներ պաշտպանության ոլորտում

Ծրագիրն իր մեջ ներառում է «Գիտական և գիտատեխնիկական նպատակային ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ միջոցառումը: Միջոցառման ֆինանսավորման ծավալները 2019թ փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության համաձայն նախատեսվում է շեշտակի ավելացնել 2020 թվականից սկսած:

Ռազմարդյունաբերության համալիրի զարգացում

Ռազմարդյունաբերության ոլորտի զարգացման ծրագիրը նոր նախաձեռնություն է և իր մեջ ներառում է «Արտադրական կարողությունների զարգացում» միջոցառումը: Ծրագրի իրագործումը թույլ կտա զարգացնել կարողությունները մի շարք զինատեսակների, դրանց բաղկացուցիչ մասերի և զինամթերքի արտադրության և բարելավման ուղղությամբ:

Հեռահաղորդակցության ապահովում

Ծրագրի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում հեռահաղորդակցության և կապի ծառայությունների որակի կանոնակարգումն ու բարելավումը, մասնավորապես ՀՀ հաճախականությունների բաշխման աղյուսակի կազմումը, ռադիոեթերի մոնիթորինգի և ազդանշանների տեխնիկական պարամետրերի չափումների անցկացումը, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախության սարքավորումների տեղորոշումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում թվային հեռուստահեռարձակման ապահովման շրջանակներում հանրապետական սփռման մուլտիպլեքսի և արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալումը:

Ծրագիրն իր մեջ ընդգրկում է 2 գործող և 1 նոր միջոցառում:

1. **Հեռահաղորդակցության և կապի կանոնակարգում:** Միջոցառման նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում հեռահաղորդակցության և կապի ծառայությունների որակի կանոնակարգումն ու բարելավումը, մասնավորապես ՀՀ հաճախականությունների բաշխումների աղյուսակի կազմումը, ռադիոեթերի մոնիթորինգի և ազդանշանների տեխնիկական պարամետրերի չափումների անցկացումը, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախության սարքավորումների տեղորոշումը: Միջոցառումն իրականացվում է «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

2. **Թվային հեռուստահեռարձակման ապահովման ծառայություններ**: Միջոցառման նպատակը Հանրապետական սփռման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալումն է՝ համաձայն կնքված պայմանագրի:

3. **ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիտորինգի համակարգի ներդրում:** Միջոցառումը նոր նախաձեռնություն է և նպատակ ունի լուծել տեղական, տարածաշրջանային կամ գլոբալ մաշտաբներով էլեկտրամագնիսական

ռադիոհաճախականային խանգարումներին առնչվող խնդիրները, ապահովել ռադիոհաճախականությունների և հաճախականային շերտերի փաստացի օգտագործմանը վերաբերվող անհրաժեշտ տվյալների տրամադրումը: ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի ներդրման ավարտից և արտադրական շահագործման հանձնումից հետո ակնկալվում է ՀՀ ողջ տարածքի ռադիոմոնիթորինգ և տեղորոշում, որը կբացառի ՀՀ տարածքում չարտոնված ռադիոճառագայթման աղբյուրների գործունեությունը, ի հայտ կբերի բոլոր շեղումները և հատկացված ռադիոհաճախականությունների ոչ նպատակային օգտագործողներին: Միջոցառումը նախատեսվում է ավարտել 2025թ:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ստորև ներկայացված են Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության բնագավառի 2020-2022թթ. յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները

2020 թվականի համար՝	12,470,509.0 հազար դրամ,
2021 թվականի համար՝	13,494,543.7 հազար դրամ,
2022 թվականի համար՝	14,524,889.2 հազար դրամ:

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության բնագավառի վերջնական արդյունքի ցուցանիշները.

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշ	Ժամկետ	Ցուցանիշ	Ժամկետ	
Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության զարգացում	1043 Բարձր տեխնոլոգիական էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր	Բարձր տեխնոլոգիական ոլորտում զբաղվածության աճ, տոկոս	15	2019	15	2020	ՀՀ կառավարության 2019թ փետրվարի 8-ի N 65-Ա որոշման կետ 7.1 Կառավարությունը նպատակադրվել է Հայաստանը դարձնել բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական երկիր:
		Հայաստանի բարձր տեխնոլոգիական ոլորտի շրջանառության աճ, տոկոս	20	2019	20	2020	ՀՀ կառավարության 2019թ փետրվարի 8-ի N 65-Ա որոշման կետ 7.1 Կառավարությունը նպատակադրվել է Հայաստանը դարձնել բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական երկիր:

Հեռահաղորդակցության ապահովում	1164 Հեռահաղորդակցության ապահովում	Եթերի մաքրության ապահովում, տոկոս	92	2019թ.	92	2020	ՀՀ կառավարության 2019թ փետրվարի 8-ի N 65-Ա որոշման կետ 7.2 պետական կառավարման մարմինների կողմից թվային տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետության բարձրացում, ծախսերի կրճատում, ստացվող արդյունքի մաքսիմալացում, քաղաքացիներին տրամադրվող տեղեկատվության և ծառայությունների որակի բարելավում
		ՀՀ բնակավայրերում թվային հեռուստահեռարձակման ապահովում, տոկոս	100	2019թ.	100	2020	ՀՀ կառավարության 2019թ փետրվարի 8-ի N 65-Ա որոշման կետ 7.2 թվային ինտերակտիվ հեռուստատեսության արդիականացում

5.7 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

ՈԼՈՐՏԸ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը մշակում և իրականացնում է.

տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման, Երևանում տարածքային կառավարման իրականացման ապահովման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման միասնական տեղեկատվական համակարգի կազմակերպման, դրա ընդհանրական շահագործմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացման ապահովման, մարզերի և համայնքների համաչափ զարգացմանն ուղղված նորարարական և ներդրումային ծրագրերի մշակման, վարչատարածքային արդյունավետ բաժանման, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխհարաբերությունների ապահովման, համայնքային ծառայության համակարգի զարգացման ապահովման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:

Երկրի ենթակառուցվածքների զարգացումը պետության կայուն և դինամիկ զարգացման նախադրյալներից մեկն է: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ տրանսպորտի ոլորտը կարևորագույններից է, որի միջոցով հնարավոր է դրական ազդեցություն ունենալ տնտեսության մյուս ճյուղերի վրա՝ խթանելով արդյունաբերությունը, առևտուրը, սոցիալական փոխհարաբերությունները և տարատեսակ այլ ծառայությունների մատուցումը: Ներկայումս առաջնային է ներդրումների իրականացումը ռազմավարական նշանակության ենթակառուցվածքներում: Համագործակցելով միջազգային ֆինանսական հաստատությունների հետ, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, աշխատանքներ են տարվում Հայաստանի Հանրապետության ճանապարհային ենթակառուցվածքների պահպանման, կատարելագործման և հետագա զարգացման համար:

Կառավարության քաղաքականությունն էներգետիկայի ոլորտում ուղղված է լինելու երկրի էներգետիկ անկախության ապահովմանն ու անվտանգության բարձրացմանը, տարածաշրջանային ինտեգրման գործընթացի ապահովմանը, էներգետիկ ոլորտի կայուն զարգացմանը՝ հենվելով տեղական առաջնային (վերականգնվող) էներգապաշարների լիիրավ և արդյունավետ օգտագործման, ատոմային էներգետիկայի հետագա զարգացման, էներգակիրների

մատակարարման տարատեսականացման և էներգաարդյունավետ ու նոր տեխնոլոգիաների ներդրման վրա:

Կառավարության քաղաքականությունը հանքարդյունաբերության ոլորտում ուղղված է թափանցիկության, հանրության առջև բարձր հաշվետվողականության ապահովմանը: Բնական պաշարների արդյունավետ և թափանցիկ կառավարման դեպքում երկիրը կարող է ստանալ տնտեսական արդյունքներ, որոնք կօգնեն ապահովել տնտեսական աճ:

Կառավարության քաղաքականությունը խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ինչպես նաև ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ոլորտներում ուղղված է այդ համակարգերի հուսալի և անվտանգ շահագործման ապահովմանը և զարգացմանը:

Միգրացիայի ոլորտն իր մեջ ներառում է բնակչության տեղաշարժերի ընթացքում առաջացող իրավահարաբերությունները, մասնավորապես՝ սահմանային կառավարման համակարգ, վիզային քաղաքականություն, օտարերկրյա քաղաքացիներին կարգավիճակների տրամադրում և քաղաքացիության շնորհում, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ապաստանի հայցի դիտարկում և փախստականի կարգավիճակի տրամադրում, երկարաժամկետ իմիգրանտների ինտեգրում, անկանոն միգրացիայի կանխարգելում և պայքար այդ երևույթի դեմ, ՀՀ քաղաքացի էմիգրանտների իրավունքների և շահերի պաշտպանություն, վերադարձող ՀՀ քաղաքացիների վերաինտեգրման աջակցություն:

Հայաստանի Հանրապետությունում գործում է միգրացիայի կառավարման ապակենտրոնացված մոդելը, երբ միգրացիոն գործառույթները բաժանված են պետական տարբեր մարմինների միջև: Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայությունից բացի միգրացիայի կառավարման ոլորտում իրավասություններ ունեն Արտաքին գործերի, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները, Ոստիկանությունը, Ազգային անվտանգության ծառայությունը:

Կառավարության քաղաքականությունը պետական գույքի կառավարման ոլորտում նպատակ ունի պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացման շնորհիվ նպաստել պետական գույքի մասնավորեցումից, օտարումից, օգտագործումից և սպասարկումից ներկայումս ստացվող և ապագայում՝ ներդրումների իրականացման շնորհիվ եկամուտների և սոցիալական արդյունքների ավելացմանը և գույքի հանրային օգտակարության բարձրացմանը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային կառավարման ոլորտի թիրախներն են՝ ՀՀ տարածքային կառավարման քաղաքականության մշակումը և իրագործման ապահովումը, ՀՀ տարածքային զարգացումը և ենթակառուցվածքների համամասնությունների ապահովումը, ՀՀ տարածքային կառավարման մարմինների կողմից ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրագործման ապահովումը, ՀՀ տարածքային կառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացումը, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման միասնական տեղեկատվական համակարգի կազմակերպման, դրա ընդհանրական շահագործմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացման ապահովումը, միջազգային համագործակցության շրջանակներում նախարարության իրավասությանը վերապահված բնագավառներին առնչվող առաջարկությունների ներկայացումը և միջոցառումների իրականացման ապահովումը, այլ երկրների վարչատարածքային միավորների հետ անդրսահմանային և միջռեգիոնալ համագործակցության կազմակերպումը, տարածքների զարգացմանն ուղղված ինովացիոն և ներդրումային ծրագրերի ձևավորումը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխհարաբերությունների ապահովումը:

ՀՀ տրանսպորտային համակարգի կարևորագույն խնդիրներից է երկրի ճանապարհատրանսպորտային ենթակառուցվածքների գործունեության արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև տնտեսության և ազգաբնակչության պահանջների բավարարման որակի բարձրացման միջոցով՝ անվտանգ և արդյունավետ տրանսպորտային ծառայությունների ապահովումը: ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների, ինչպես նաև դրանց վրա գտնվող տրանսպորտային օբյեկտների (կամուրջներ, թունելներ և այլ արհեստական կառուցվածքներ) վերանորգումը, հիմնական վերակառուցումը և ընթացիկ պահպանումը մշտապես գտնվում է ավտոմոբիլային ճանապարհների կառավարման և տնօրինող մարմինների ուշադրության ներքո:

Ներկայումս էներգահամակարգն ամբողջովին բավարարում է էլեկտրաէներգետիկայի ներքին շուկայի պահանջարկը և ունի էլեկտրաէներգիայի արտահանման ավելացման ներուժ: Ներքին շուկայի կարիքներից ելնելով՝ ներդրումները խթանելու և Վրաստանի ու Իրանի հետ առևտրի հնարավորություններն օգտագործելու նպատակով Կառավարությունը ձեռնամուխ է լինելու՝

- էլեկտրաէներգետիկական համակարգի երկարաժամկետ զարգացման ուղիների մշակմանը.

- ՀՀ էլեկտրաէներգետիկ շուկայի փուլային ազատականացման գործընթացին, ինչպես նաև տարածաշրջանում իրացման նոր էներգետիկ շուկաներ փնտրելուն, ներկրման և արտահանման ակտիվ քաղաքականության միջոցով Հայաստանի էներգետիկ անկախության ապահովմանը.

- նորագույն և բարձր տեխնոլոգիաների ներդրման համար օրենսդրական խթանների ձևավորմանը, էներգետիկայի բնագավառի զարգացմանը և էներգաարդյունավետության միջոցառումների ներդրմանն ուղղված քաղաքականության ապահովմանը.

- հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգմանը և արդիականացմանը, որով կապահովվի հայկական ԱԷԿ-ի արդյունավետ և անվտանգ աշխատանքը՝ շահագործման լրացուցիչ ժամանակահատվածում.

- Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրի մշակմանը՝ հաշվի առնելով հանրապետության էներգետիկ անվտանգության և անկախության մակարդակի պահպանման, ինչպես նաև էներգետիկայի բնագավառի գիտելիքահենք ուղղության կարևորությունը.

- տարածաշրջանային ինտեգրման ապահովման նպատակով՝ Իրան-Հայաստան, Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծերի և համապատասխան ենթակայանների կառուցման ծրագրերի իրականացմանը: Նշված էլեկտրահաղորդման օդային գծերի և համապատասխան ենթակայանների կառուցման ավարտից և շահագործման հանձնելուց հետո Հայաստանի Հանրապետությունը տարածաշրջանում հանդես կգա որպես էլեկտրաէներգետիկ ոլորտի տարածաշրջանային հաբ՝ կապելով Իրանի, Վրաստանի և Ռուսաստանի էլեկտրաէներգետիկական համակարգերը.

- վերականգնվող էներգիայի աղբյուրների արդյունավետ օգտագործմանը և զարգացման խթանմանը:

Էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմները և թողունակությունը գնահատելով՝ կիրականացվեն արևային համակարգային կայանների մրցութային եղանակով կառուցման ծրագրեր՝ մինչև 2022 թվականը ներքին սպառման կառուցվածքում այդ կայանների կշիռը հասցնելով առնվազն 10 տոկոսի:

ՀՀ կառավարությունը մտադիր է շարունակել կայուն էներգետիկայի զարգացումը՝ հաշվի առնելով էներգետիկ կառավարման այնպիսի համակարգի ներդրման անհրաժեշտությունը, որը միտված է հանրային և մասնավոր հատվածի կողմից սեփական էներգասպառման հնարավորությունների ընդլայնմանն ու արդյունավետության բարձրացմանը, մասնավոր-համայնք համագործակցության հնարավորությունների ընդլայնմանը: Անհրաժեշտ է նաև ընդլայնել

միջազգային կառույցների հետ էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի օգտագործման խթանման մեխանիզմների գործարկման նպատակով համագործակցությունը, վերանայել երկարաժամկետ ռազմավարական ծրագրերը՝ սահմանելով թիրախներ էներգախնայողության, վերականգնվող էներգիայի, ինչպես նաև էներգետիկ անվտանգության ցուցանիշների համար:

Ելնելով էներգահամակարգի ռազմավարական դրույթներից, 2020 թվականին էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների համակարգի միջոցառումների վերջնական արդյունքները, որոնց վրա գերատեսչությունը ձգտում է ներազդել, հետևյալն են.

- Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի տեխնիկական վերազինում և տարածաշրջանային ինտեգրացում,
- Շուրջ 50 կմ երկարությամբ «Լալվար» և «Նոյեմբերյան» 110 կՎ օդային գծերի վերակառուցում,
- «Հաղթանակ» 220 կՎ, «Չարենցավան-3» և «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանների 30 և ավելի տարիներ, ինչպես նաև «Զովունի» 220 կՎ ենթակայանի 40 և ավելի տարիներ շահագործման մեջ գտնվող ֆիզիկապես և բարոյապես մաշված սարքավորումների փոխարինում,
- «Աշնակ» 220 կՎ 30 և ավելի տարիներ, ինչպես նաև «Արարատ-2» 220 կՎ 40 և ավելի տարիներ շահագործման մեջ գտնվող ենթակայանների վերակառուցում,
- «Ագարակ-2» և «Շինուհայր» 220 կՎ ենթակայանների վերակառուցում,
- Կարգավարման կառավարման ավտոմատացված համակարգի (SCADA) ընդլայնում,
- Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգում,
- Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացում:

Միջնաժամկետ հատվածում էներգետիկայի ոլորտի միջոցառումների վերջնական արդյունքները ուղղակիորեն կապված են ՀՀ կառավարության որդեգրած նպատակների հետ (Կառավարության ծրագիր՝ կետ 6.2):

Ներկայումս հանքարդյունաբերության ոլորտի համապարփակ քաղաքականության մշակումը հնարավորություն կտա ապահովելու ոլորտի կայուն զարգացում, որը կհավասարակշռի տնտեսական, սոցիալական և բնապահպանական կայունությունը, ինչպես նաև կապահովի ոլորտի թափանցիկությունը, հաշվետվողականությունը և հրապարակայնությունը: Հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացմանը նպաստելու նպատակով Կառավարությունը նախատեսում է.

- մշակել հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարություն և դրանից բխող միջոցառումների ծրագիր,

- իրականացնել հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությանը համահունչ օրենսդրական և ինստիտուցիոնալ կարգավորումներ՝ ապահովելով հանքարդյունաբերությամբ զբաղվելու համար անհրաժեշտ ընթացակարգերի (լիցենզավորում, թույլտվություններ, հողօգտագործման հետ կապված կանոնակարգումներ և այլն) պարզեցում և համալիրություն, ազդակիր համայնքների բնակչության կարծիքի և բիզնեսի շահերի հավասարակշռում,

- բացահայտել ընդերքօգտագործող կազմակերպությունների իրական սեփակա- նատերերին, ստեղծել ու վարել իրական սեփականատերերի ռեգիստրը:

Ջրային ոլորտի քաղաքականության մեջ կարևորվում են ջրամատակարարման որակի բարձրացումը, ծրագրի արդյունքների ուղղակի ազդեցությունը սակագնային քաղաքականության վրա, յուրաքանչյուր սոցիալական խմբի և շահառուի համար ծառայությունների հասանելիության ապահովումը, ոռոգվող հողատարածքների ընդլայնումը, ինչպես նաև ջրային տնտեսության համակարգի զարգացման ու բարեփոխումների շարունակականության, ֆինանսական կայունության համար բավարար հիմքերի ապահովման, ենթակառուցվածքների ու ոլորտային հաստատությունների ինքնաբավ և տնտեսապես անկախ գործունեությանը նպաստող կառավարման նոր համակարգերի ներդրման, ջրային համակարգերի մասով ջրային ոլորտը կարգավորող օրենսդրության բարելավման և շարունակական ինստիտուցիոնալ բարեփոխումների անհրաժեշտությունը: Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում առկա խնդիրները լուծելու, ոլորտում իրականացվող բարեփոխումների շարունակականությունն ապահովելու, պետություն-մասնավոր գործընկերության սկզբունքը զարգացնելու նպատակով հետևողական աշխատանք կիրականացվի, մասնավորապես նաև վարձակալության գործող պայմանագրով նախատեսված ծրագրերը և թիրախային ցուցանիշները ապահովելու համար:

Ոռոգման ոլորտում նախատեսվում է իրականացնել կառուցվածքային բարեփոխումներ, որոնք կնվազեցնեն ջրի կորուստները, կբարձրացնեն ոռոգման ջրի դիմաց հավաքագրման ցուցանիշները, շարունակաբար կիրականացնեն ոռոգման մեխանիկական համակարգերը ոռոգման ինքնահոս համակարգերով փոխարինելու քաղաքականությունը:

ՄԺԾԾ ժամանակահատվածում աշխատանքներ են տարվելու Վեդու, Կապսի ջրամբարների և ոռոգման համակարգի կառուցման ուղղությամբ:

Ոռոգման ոլորտում կիրականացվեն օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ:

ՀՀ ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, գրունտային ջրերի մակարդակների կարգավորման, հողատեսքերի աղակալման, բնակավայրերի ջրակալման և տարափոխիկ հիվանդությունների կանխման, մշակաբույսերի բնականոն աճի ապահովման համար անհրաժեշտ է շարունակաբար իրականացնել խոնավ (գերխոնավ) գյուղատնտեսական հողատարածքների մելիորատիվ վիճակի բարելավման աշխատանքներ:

Ոռոգման ջրի հաշվառման հստակեցման, ջրակորուստների բացահայտման և էլեկտրաէներգիայի ծախսի կրճատման ուղղությամբ վերահսկելիության բարձրացման և համակարգի նորացման նպատակով կգնահատվի և կկազմվի մեխանիկական ջրարտադրության սարքավորումների տեխնիկական վիճակը բարելավելու և կառավարման արդի համակարգերով վերազինելու (փոխարինելու) ծրագիր, ինչպես նաև ոռոգման համակարգերը շարունակաբար կկահավորվեն արդի ջրաչափական սարքավորումներով և տվյալների հավաքման ու վերահսկողական համակարգով:

Ջրօգտագործման ու ջրերի կառավարման ռազմավարական նշանակության խնդիրների լուծման նպատակով կիրականացվի մասնավոր, մասնավոր-հանրային գործընկերությամբ տեղական և հանրապետական նշանակության ջրամբարների կառուցման և շահագործման համար անհրաժեշտ նորմատիվ-իրավական դաշտի մշակում և հնարավոր ներդրողների համար դրանց հասանելիության ու հանրայնացման ապահովում (ջրամբարների հնարավոր տեղակայումների, նրանց տեխնիկատնտեսական նկարագրության, կառուցման ու շահագործման պայմանների, ոռոգման առկա համակարգում դրանց ընդգրկման, մասնավոր (հաստատված սակագներով) շահագործման վերաբերյալ կանոնակարգումներով):

Միգրացիոն ոլորտի քաղաքականության հիմնական թիրախները ներկայացված են ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «6.7 Միգրացիա» բաժնում:

Կառավարության վարած միգրացիոն քաղաքականության հիմնական նպատակը անձանց ազատ և անվտանգ տեղաշարժի ապահովումն է՝ հավասարակշռելով այն երկրի ազգային անվտանգության ապահովման հետ:

Երկրի տնտեսության զարգացման տեսանկյունից Կառավարությունը կարևորում է նաև միգրանտների, այդ թվում՝ վերադարձող միգրանտների տնտեսական և մարդկային ներուժի ուղղորդումը երկրի զարգացման գործին:

Միգրացիոն քաղաքականության ոլորտում ՄԺԾԾ ժամանակահատվածի համար Կառավարությունը սահմանում է հետևյալ առաջնահերթությունները՝

- Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ընդունման մեխանիզմների շարունակական կատարելագործում,

- Հայաստանի Հանրապետություն վերադարձող քաղաքացիների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած և փախստական ճանաչված ու երկարաժամկետ իմիգրանտների ինտեգրման միասնական քաղաքականության մշակում.

- դեպի Հայաստան ուղղված իմիգրացիոն հոսքերի կառավարման և կանոնակարգման նպատակով իմիգրացիոն ամբողջական քաղաքականության մշակում.

- արտագնա աշխատանքի մեկնող ՀՀ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով, մուտքի երկրների պատկան մարմինների հետ համագործակցությամբ և այդ երկրներում գործող սփյուռքի կառույցների ներգրավվմամբ, համակարգված միջոցառումների իրականացում:

Կառավարությունը շարունակելու է ուշադրության կենտրոնում պահել հետվերադարձի (ռեադմիսիայի) և գործընթացների արդյունավետ կազմակերպումը՝ այդ բնագավառում ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան:

Պետական գույքի կառավարման ոլորտում կարևորվում է պետական գույքի կառավարման ռազմավարության մշակումը և իրագործման ապահովումը, այդ թվում պետական գույքի հաշվառման համակարգի և միասնական գրանցամատյանի վարման արմատական բարեփոխումը և անշարժ գույքի մոնիտորինգի ներդրումը, պետական գույքի մասնավորեցման, օտարման գործընթացներում հրապարակայնություն և թափանցիկություն ապահովող վաճառքի կազմակերպման ժամանակակից ձևերի և մեթոդների կիրառումը, պետական գույքի վարձակալության գործընթացի մեկ միասնական կանոնակարգով և մոտեցմամբ իրականացումը, վարչարարության պարզեցումը և կրճատումը, ինչպես նաև անհատույց օգտագործման տրամադրման գործընթացում մրցակցային դաշտի ապահովումը, օգտագործողների շրջանակի և պայմանների հստակ սահմանումը, պետական մասնակցությամբ առևտրային

կազմակերպությունների մեկ միասնական լիազորված մարմնի կողմից կառավարման համակարգումը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ տարածքային կառավարման ոլորտի ծախսային ծրագրերը և ծախսային գերակայությունները բխում են ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N650-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի 218-231 կետերով սահմանված միջոցառումներից:

Տարածքային կառավարման քաղաքականության ոլորտում ՄԺԾԾ ժամանակահատվածի համար սահմանվում է հետևյալ առաջնահերթությունները՝

Հանրապետության տարածքային համաչափ զարգացման, տարածքների սոցիալ-տնտեսական կայունության և հետագա տնտեսական ակտիվության և աճի ապահովում,

Վարչատարածքային բարեփոխումների շարունակականության ապահովում,

Համայնքային ծառայության համակարգի զարգացում,

ՀՀ բնակավայրերում աղբահանության և կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի բարելավում:

Ճանապարհային ոլորտի ծախսային ծրագրերը և ծախսային գերակայությունները բխում են ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N650-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի 279-287 կետերով սահմանված միջոցառումներից:

Ճանապարհային ոլորտի ծախսային ծրագրերը և ծախսային գերակայությունները բխում են ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N650-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի 279-287 կետերով սահմանված միջոցառումներից:

Ճանապարհային քաղաքականության ոլորտում ՄԺԾԾ ժամանակահատվածի համար սահմանվում է հետևյալ առաջնահերթությունները՝

- միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների որակի շարունակական բարձրացում.

- ճանապարհային կահավորանքի բարելավում.

- ճանապարհային անվտանգության պահանջները միջազգային նորմերին համապատասխանեցում.

- ճանապարհների, այդ թվում՝ կամուրջների և թունելների, անձնագրավորում և տվյալների էլեկտրոնային բազայի ստեղծում.

- Ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկության անվտանգության ապահովում.

- Ավտոմոբիլային բետոնածածկ ճանապարհների և արհեստական կառույցների ընթացիկ ամառային և ձմեռային պահպանման աշխատանքների իրականացման գործընթացի արդյունավետության բարձրացում պարբերական պահպանման (միջին նորոգման) ընդլայնման միջոցով.

-անհարթության գործակցի (IRI) բարելավում (կամ նույն մակարդակի պահպանում)

-«Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի իրականացման շարունակություն:

Երկաթուղու ոլորտում ՄԺԾԾ ժամանակահատվածի համար սահմանվում է հետևյալ առաջնահերթությունները՝

-Ենթակառուցվածքի երկաթուղային ցանցի առանձին հատվածներում զգալի տեխնիկական մաշվածություն ունեցող արհեստական կառույցների (կամուրջների, թունելների և այլ) հիմնանորոգում, վերակառուցում և արդիականացում, ինչպես նաև նորերի կառուցում նախատեսում

-Երկաթուղային ենթակառուցվածքի հիմնանորոգում և արդիակացում, երկաթուղային շարժակազմի նորացում:

ՄԺԾԾ ժամանակահատվածում պետական մարմնի կողմից էներգետիկայի և բնական պաշարների ոլորտում իրականցվող հիմնական ծախսային ծրագրերն են՝

Էլեկտրաէներգիա արտադրող հզորությունների ստեղծում և վերազինում,

ՀՀ տարածքում ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների պետական գրանցում, դրանց արդյունքում ստացված տեղեկատվության հաշվառում, պահպանում և տրամադրում,

Ռադիոակտիվ թափոնների փոխադրում, ուսումնասիրում, պահպանում, վնասազերծում և թաղում:

ՀՀ ջրային կոմիտեն իր ոլորտային քաղաքականության վերջնական արդյունքների ապահովման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում կիրականացնի հետևյալ հիմնական ծրագրերը՝

- Ոռոգման համակարգի առողջացում,

- Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում,

- Կոլեկտորադրենաժային ծառայություններ,

Յուրաքանչյուր ծրագրի գծով թիրախների ապահովման նպատակով կիրականացվեն համապատասխան միջոցառումներ, որոնք ըստ գերակայությունների նվազման.

Ոռոգման ծառայություններ մատուցող և ոռոգում-ջրառ իրականացնող ընկերությունների սուբսիդավորում,

Ոռոգման համակարգի զարգացմանն ուղղված միջոցառումներ և ոռոգման համակարգի հիմնանորոգում,

Ջրամբարաշինությանն ուղղված միջոցառումներ,

Կոլեկտորադրենաժային ծառայություններ,

Արփա-Սևան թունելի ջրային համակարգի կառավարում:

Միգրացիոն ոլորտի ծախսային ծրագրերը և ծախսային գերակայությունները բխում են ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի 232-237 կետերով սահմանված միջոցառումներից:

Ոլորտային քաղաքականության թիրախների (վերջնական արդյունքների) ապահովման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության կողմից իրականցվող հիմնական ծրագրերն են՝

Աջակցություն փախստականների ինտեգրմանը.

- Ապաստան հայցողների կեցության խնդիրների լուծման միջոցառումների իրականացում

- Փախստականների բնակվելու հետևանքով Ժամանակավոր կացարաններին պատճառած վնասի հատուցման միջոցառում

- Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց համար քաղաքացիական կողմնորոշման դասընթացների կազմակերպում

- Ապաստանի ընթացակարգում թարգմանչական ծառայությունների ձեռք բերում

- «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում չտեղավորված ապաստան հայցողներին դրամական օգնության տրամադրում

- Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց վարձակալությամբ բնակարանների ձեռքբերման ծախսերի փոխհատուցում:

Պետական գույքի կառավարման ոլորտի ծախսային ծրագրերը և ծախսային գերակայությունները բխում են ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N650-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի 263-266 կետերով սահմանված միջոցառումներից:

- Ոլորտային քաղաքականության թիրախների (վերջնական արդյունքների) ապահովման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում Պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից իրականցվող հիմնական ծրագրերն են՝

-Պետական գույքի կառավարում.

Պետական գույքի կառավարման համակարգման, խորհրդատվության և մոնիտորինգի ծառայություններ

Աճուրդների կազմակերպման և անցկացման ծառայություններ

Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների, գնահատման և սպասարկման աշխատանքների իրականացման ծառայություններ

Էլեկտրոնային աճուրդների կազմակերկման ծրագրի սպասարկում

Պետական գույքի հաշվառման նոր ավտոմատացված ու ամբողջական համակարգի սպասարկում

Կառավարական թիվ 2 շենքում տեղակայված սարքերի սարքավորումների հետերաշխիքային սպասարկում

Պետական գույքի կառավարման կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում

-Արվեստների ծրագիր

Մարզահամերգային համալիրի պահպանություն:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ստորև ներկայացված են Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների բնագավառի 2020-2022թթ.՝ յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները

2020 թվականի համար՝	280,643,179.9 հազար դրամ,
2021 թվականի համար՝	290,179,755.6 հազար դրամ,
2022 թվականի համար՝	285,327,336.4 հազար դրամ:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների բնագավառի վերջնական արդյունքի ցուցանիշները.

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշ	Ժամկետ	Ցուցանիշ	Ժամկետ	
	1212 Տարածքային զարգացում	Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի հանրապետական ցուցանիշի 60 տոկոսը չգերազանցող մեկ շնչի հաշվով ՀՆԱ ունեցող մարզերի թիվ, հատ	3	2019	0	2025	

		Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի հանրապետական ցուցանիշի 70 տոկոսը չգերազանցող մեկ շնչի հաշվով ՀՆԱ ունեցող մարզերի բնակչություն, տոկոս ընդամենը բնակչության մեջ	44.9	2019	30	2025	
Համայնքային ծառայողների, տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների աշխատակիցների վերապատրաստման կազմակերպում	1038 Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մասնագիտական վերապատրաստում և հատուկ ուսուցում	Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում վերապատրաստված աշխատակազմ, տոկոս	30	2019	60	2022	
	1040 Կոշտ թափոնների կառավարում	Թափոնների հավաքման ծածկույթ, տոկոս	16	2019	16	2020	

Քաղաքային ենթակառուցվածքների արդիականացում և բարելավում	1157 Քաղաքային զարգացում	Փողոցների լուսավորման միջին օրական տևողությունը, ժամ	7.36	2019	8	2020	
		Խնայված էներգիայի քանակը Գվտ/ժամ	750		750		
		ՋԳ արտանետումների քանակը, տոննա	75		75		
		Տեղադրված լուսավորության արդյունավետությունը	75		75		
	1189 Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր	ՄՍԿ երկրաշարժի ուժգնության սանդղակի 9 (IX) նշանագծի սեյսմակայունության չափանիշներին համապատասխանող դպրոցական շենքերում սովորող աշակերտներ, տոկոս	13.4		14.1	2020	
		Բարձր խոցելիության դպրոցների թիվ, հատ	426		420	2020	
		Բարձր խոցելիության դպրոցների տեսակարար կշիռը ընդհամենը դպրոցների թվում, տոկոս	33		33	2020	

Փախստականների ինտեգրում հասարակություն	1070 Աջակցություն փախստականների ինտեգրմանը	ՀՀ-ում ապաստան հայցող և փախստական ճանաչված անձանց ՀՀ-ում ինտեգրման ինդեքսի մակարդակ	20	2019	20	2020	
Ընդերքի օգտագործման արդյունավետության բարձրացում	1073 Ընդերքի ուսումնասիրության, օգտագործման և պահպանման ծառայություններ	Ընդերքօգտագործման ֆոնդի ամբողջականություն, տոկոս	100	2020թ.	100	2020թ.	ՀՀ կառավարության 08.02.2019թ. թիվ 65-Ա որոշում 6.2 և 6.3 կետեր ՀՀ կառավարության 16.05.2019թ. թիվ 850-Լ որոշում
Նպաստել էլեկտրաէներգետիկ համակարգի հուսալիության բարձրացմանը և էլեկտրաէներգիայի անխափան մատակարարման ապահովմանը	1167 Էլեկտրաէներգետիկ համակարգի զարգացման ծրագիր	Ենթակայանների սարքավորումների խափանումների տարեկան քանակ, դեպք	33	2020թ.	6	2022թ.	
		Էլեկտրահաղորդման օդային գծի տարեկան անջատումների քանակ, հատ	14	2020թ.	2	2022թ.	

		Ենթակայանների (Ագարակ-2 և Շինուհայր) թողունակություն, ՄՎտ	250	2020թ.	380	2021թ.	
		Տարածքում անջատումների միջին տարեկան հաճախականություն, հոսանքազրկումների քանակը/բաժանորդների թվին	0.31	2020թ.	0.14	2022թ.	
		Կարգավորման համակարգի խափանումների տարեկան տևողություն, րոպե	20	2020թ.	0	2021թ.	
		Էլեկտրահաղորդման օդային գծի թիրախային հատվածի թողունակություն, ՄՎտ	250	2020թ.	310	2022թ.	

		ՎերակառուցվողՀայկակա ն ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի կողմից էներգահամակարգին մատակարարվող էլեկտրաէներգիան, մլն կՎտժ	2400	2020թ.	2800-2900	2022թ.	
Ճանապարհային ցանցի բարելավում	1049 Ճանապարհային ցանցի բարելավման և անվտանգ երթևեկության բարելավում	Համայնքների տրանսպորտային կապի ցուցանիշ: Հիմնական ճանապարհային ցանցի կամ մարզկենտրոնների հետ առնվազն մեկ բավարար կամ ավելի լավ վիճակում գտնվող ճանապարհներ ունեցող բնակավայրերի մասնաբաժինը բնակավայրերի ընդհանուր թվում, տոկոս	65.92	2019	68	2020	ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N 1030-Ն որոշում
		Անհարթության IRI գործակցի միջին թվաբանականը (ա) Միջպետական ճանապարհներ, մ/կմ	6.3	2019	60.3	2020	ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N 1030-Ն որոշում

		Անհարթության IRI գործակցի միջին թվաբանականը (բ) հանրապետական ճանապարհներ, մ/կմ	7.6	2019	7.6	2020	ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N 1030-Ն որոշում
Ընդերքի օգտագործման արդյունավետության բարձրացում	1073 Ընդերքի ուսումնասիրության, օգտագործման և պահպանման ծառայություններ	Ընդերքօգտագործման ֆոնդի ամբողջականություն, տոկոս	100	2020թ.	100	2020թ.	ՀՀ կառավարության 08.02.2019թ. թիվ 65-Ա որոշում 6.2 և 6.3 կետեր ՀՀ կառավարության 16.05.2019թ. թիվ 850-Լ որոշում
Նպաստել էլեկտրաէներգետիկ համակարգի հուսալիության բարձրացմանը և էլեկտրաէներգիայի անխափան մատակարարման ապահովմանը	1167 Էլեկտրաէներգետիկ համակարգի զարգացման ծրագիր	Ենթակայանների սարքավորումների խափանումների տարեկան քանակ, դեպք	33	2020թ.	6	2022թ.	
		Էլեկտրահաղորդման օդային գծի տարեկան անջատումների քանակ, հատ	14	2020թ.	2	2022թ.	
		Ենթակայանների (Ագարակ-2 և Շինուհայր) թողունակություն, ՄՎտ	250	2020թ.	380	2021թ.	

		Տարածքում անջատումների միջին տարեկան հաճախականություն, հոսանքազրկումների քանակը/բաժանորդների թվին	0.31	2020թ.	0.14	2022թ.	
		Կարգավորման համակարգի խափանումների տարեկան տևողություն, րոպե	20	2020թ.	0	2021թ.	
		Էլեկտրահաղորդման օդային գծի թիրախային հատվածի թողունակություն, ՄՎտ	250	2020թ.	310	2022թ.	
		ՎերակառուցվողՀայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի կողմից էներգահամակարգին մատակարարվող էլեկտրաէներգիան, մլն կՎտժ	2400	2020թ.	2800-2900	2022թ.	
Բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանություն ռադիոակտիվ թափոնների վնասակար ազդեցությունից	1171 Ռադիոակտիվ թափոնների կառավարում	Հայտնաբերված ռադիոակտիվ թափոնների վնասազերծման մակարդակ, տոկոս	100	2020թ.	100	2020թ.	

Պետական գույքի համալիր և արդյունավետ կառավարման ապահովում	1079. Պետական գույքի կառավարում	Չօգտագործվող պետական անշարժ գույքի մակերեսը (ք.մ.) և դրա տեսակարար կշիռը ընդհանուր մակերեսի մեջ		2019թ.		2020թ.	
		Համաձայն ,Պետական գույքի մասնավորեցման 2017-2020թթ. ծրագրի մասինե ՀՀ օրենքի՝ 2019թ.-ին մասնավորեցման ծրագրում ընդգրկված առևտրային կազմակերպությունների մասնավորեցման գործընթացի արդյունավետ կազմակերպում	50 և ավելի տոկոս պետական մասնակցությամբ 25 առևտրային կազմակերպություններ	2019թ	50 և ավելի տոկոս պետական մասնակցությամբ 8 առևտր-ային կազմակերպություն-ների մասնավորեցման (մասնավորեցման նախա-պատրաստման) կամ լուծարման գործընթացի կազմակերպում	2020թ	Թիրախային ցուցանիշները ուղղակիորեն կապված ՀՀ կառավարության ծրագրի պետական գույքի կառավարման քաղաքականության հետ՝ պետական գույքի մասնավորեցման և օտարման գործընթացներում ընկերություններ վաճառքի նախապատրաստման, բաժնետոմսերի շուկայական արժեքի որոշման և արդյունքների մասին հանրային իրազեկման հետ:

		Պետական գույքի կառավարմանն առընչվող գործարքների արդյունքում պետական և համայնքային բյուջեների մուտքերի աճ	պետական բյուջեի մուտք՝ 850 000.0 հազ. դրամ, համայնքային բյուջեների մուտք՝ 109 000.0 հազ.դրամ	2019թ	պետական բյուջեի մուտք՝ 1 000 000.0 հազ. դրամ, համայնքային բյուջեների մուտք՝ 128 000.0 հազ.դրամ	2020թ	
Ոռոգման ոլորտի զարգացման և բարեփոխումների շարունակականության, ֆինանսական կայունության համար բավարար հիմքերի ստեղծում, ենթակառուցվածքների և ոլորտային հաստատությունների ինքնաբավ և տնտեսապես անկախ գործունեության ապահովում	1004 Ոռոգման համակարգի առողջացում	Ոռոգման ջրի կորուստ, տոկոս	56.15	2018թ.	56.02	2020թ.	Ոռոգման համակարգերը շարունակաբար կկահավորվեն արդի ջրաչափական սարքավորումներով և տվյալների հավաքման ու վերահսկման համակարգով:
		Փաստացի ոռոգվող հողատարածքների մակերեսի կշիռը ոռոգելի հողատարածքների մակերեսում,տոկոս	53	2018թ.	55	2020թ.	2019-2023 թվականների ընթացքում աշխատանքներ են տարվելու Վեդու ջրամբարի և ոռոգման համակարգի, Կապսի ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման աշխատանքներն իրականացնելու ուղղությամբ:

		Փաստացի ոռոգվող հողատարածքի հաշվով ոռոգման ջրի օգտագործման ծավալ, հա/խմ	5.85	2018թ.	5.8	2020թ.	Կկանոնակարգվեն 'Ջրառ' ՓԲԸ-ՋՕԸ իրավահարաբերությունները, կկատարելագործվի ոռոգման համակարգի կառավարումը՝ նպատակ ունենալով ավելացնել ոռոգելի հողատարածքները:
ՀՀ ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավում, գրունտային ջրերի մակարդակների կարգավորում, հողատեսքերի աղակալման, բնակավայրերի ջրակալման և տարափոխիկ հիվանդությունների կանխում, մշակաբույսերի բնականոն աճի ապահովում	1027 Կոլեկտորադրեն աժային ծառայություններ	Գրունտային ջրերի հեռացման արդյունքում մշակելի դարձած հողատարածքների մակերես, հա	5000	2019թ.	5000	2020թ.	Շարունակաբար կիրականացվեն խոնավ/գերխոնավ/ գյուղատնտեսական հողատարածքների մելիորատիվ վիճակի բարելավման աշխատանքներ:

Ապահովել ‘Վեոլիա Ջուր’ ՓԲԸ-ի կողմից սպասարկվող բնակավայրերում վարձակալության պայմանագրով սահմանված համապատասխան պահանջների կատարում: ‘Վեոլիա Ջուր’ ՓԲԸ-ի կողմից չսպասարկվող բնակավայրերում ըստ առաջնահերթության ջրամատակարարման և ջրահեռացման/ կեղտաջրերի մաքրման/ ծառայությունների որակի բարելավում:	1072 Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում	Խմելու ջրի մշտապես հասանելիություն ունեցող բնակչության մասնաբաժին, տոկոս	97.9	2019թ.	98	2020թ.	Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման /կեղտաջրերի մաքրման/ ոլորտում առկա խնդիրները լուծելու, ոլորտում իրականացվող բարեփոխումների շարունակականությունն ապահովելու, պետություն-մասնավոր գործընկերության սկզբունքը զարգացնելու նպատակով հետևողական աշխատանք կիրականացվի, մասնավորապես նաև վարձակալության գործող պայմանագրով նախատեսված ծրագրերը և թիրախային ցուցանիշները ապահովելու համար:
		Կոյուղու հասանելություն ունեցող բնակչության մասնաբաժին, տոկոս	69.7	*2019թ.*	70	*2020թ.*	
		Ջրի կորուստները ջրամատակարարման համակարգում, տոկոս	76.5	*2019թ.*	76.3	*2020թ.*	

5.8 ԷԿՈՆՈՄԻԿԱ

ՈԼՈՐՏԸ

- Համախառն ներքին արդյունքի 2016-2018թ.թ. միջին աճը կազմել է 4.3%
- Նույն ժամանակահատվածում ՀՆԱ-ն ձևավորող հիմնական ոլորտների ավելացված արժեքների միջին աճերը հետևյալն են՝ արդյունաբերություն՝ 8.4%, առևտուր՝ 10.4%, ծառայություններ՝ 7.3%, գյուղատնտեսություն՝ -6.2%, շինարարություն՝ -3.5%:
- ՀՆԱ կառուցվածքում արդյունաբերության մասնաբաժինը 2016-2018թ. կազմել է համապատասխանաբար 17.9; 18.5 և 18.4%, առևտրինը՝ 9.8; 11.1 և 11.3%, ծառայություններինը՝ 38.1; 37.9 և 39.3%, գյուղատնտեսությանը՝ 16.4; 15.0 և 13.7%, շինարարությանը՝ 7.8; 7.3 և 6.6%:
- Արտաքին առևտրաշրջանառության 2016-2018թ.թ. միջին աճը կազմել է 16.2%, արտահանմանը՝ 17.8%, իսկ ներմուծմանը՝ 15.8%
- Գյուղատնտեսությունը երկրի տնտեսության առանցքային ոլորտներից մեկն է, որն ապահովում է ՀՆԱ-ի շուրջ 15 %-ը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի 97 %-ը ապահովում են շուրջ 317 հազար գյուղացիական տնտեսություններ, որոնցից յուրաքանչյուրին բաժին է ընկնում 1.48 հա հողատարածք: Հանրապետության զբաղվածների 31.3%-ն ընդգրկված է գյուղատնտեսության ոլորտում:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Առաջիկա տարիներին տնտեսական քաղաքականության հիմնական նպատակը լինելու է Հայաստանի քաղաքացիների բարեկեցության բարձրացումը՝ տնտեսական կյանքում նրանց մասնակցային հնարավորությունների ավելացման միջոցով, ինչը դրսևորվելու է մրցունակ մասնավոր հատվածում աշխատատեղերի և յուրաքանչյուր մարդու աշխատանքային եկամուտների զգալի ավելացման ձևով: Նպատակի իրականացմանն ուղղված քաղաքականությունների շրջանակն ամփոփվում է մրցունակության բարձրացման գաղափարի ներքո, որի հիմքում ընկած է արտադրողականության աճը: Ցածր արտադրողականությունը հայաստանյան տնտեսության հիմնական ռիսկն է: Երկրարաժամկետ կտրվածքով բնակչության բարեկեցությունը բարելավելու կարողութունը գրեթե լիովին կախված է լինելու մեկ աշխատողի հաշվով թողարկման մակարդակը բարձրացնելու մեր ունակությունից:

Հայաստանի Հանրապետության ագրարային հատվածում կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը առաջիկա տարիներին կնպատակաուղղվի գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը, գյուղատնտեսական ամբողջ արժեշղթայում ընդգրկված սուբյեկտների՝ գյուղացիական տնտեսությունների, կոոպերատիվների, գյուղատնտեսական մթերքներ վերամշակողների, սպասարկող ենթակառուցվածքների եկամուտների ավելացմանը և երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը:

Տնտեսական քաղաքականության տեսլականը կառուցվում է գլոբալացման, ադյունավետ առևտրատնտեսական հարաբերությունների ու տեխնոլոգիական սրընթաց զարգացումների համատեքստում ազատ մրցակցությամբ ու օրինակելի գործարար միջավայրով երկրի կայացման

առանցքի շուրջ:

Կանխատեսելի և վստահելի գործարար միջավայրը լինելու է ներդրումների ներգրավման հիմնական գրավականը և ապահովելու է ինչպես ներքին գործարար ներուժի իրացման արդյունավետ կենսամիջավայր, այնպես էլ օտարերկրյա ներդրումների կայուն ներհոսք: Մեծ են հավակնությունները օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման ասպարեզում, որոնք ամրապնդվելու են ոչ միայն երկրի ու Կառավարության հանդեպ ձևավորված վստահության աննախադեպ պաշարով, այլև՝ ինստիտուցիոնալ ու օրենսդրական դաշտում նոր նախաձեռնություններ մեկնարկելու և մեկնարկած մի շարք բարեփոխումների գծով արդյունավետ ու արագ ընթացք ապահովելու պատրաստակամությամբ:

Տնտեսական զարգացման շարժիչը լինելու են նորարարությունը և ստեղծագործելու ձիրքը, գործարար նախաձեռնողականությունը, արդյունավետություն փնտրող ներդրումները և տեխնոլոգիական տարածումը՝ այդպիսով ընդլայնելով հնարավորի սահմանները: Հիմնական նպատակը ներքին և արտաքին հնարավորությունները զարգացման իրական ներուժի վերածելու առումով տնտեսության արդյունավետության և ունակության բարձրացումն է:

Տնտեսական զարգացման քաղաքականությունը խարսխվելու է երեք հենասյուների վրա, որոնք ըստ էության նաև լավագույնս արտացոլում են այն լրջագույն մարտահրավերները, որոնց անտեսումը նշանակալի սպառնալիք կդառնա երկրի երկարաժամկետ կայուն զարգացում և տնտեսական անվտանգության ապահովելու տեսակետից: Այսպես, առաջին հենասյուն արտադրողականությունն ու մրցունակությունն է՝ որպես առանցք ունենալով ինովացիոն զարգացման իրական հիմքերի ձևավորումը և ընդլայնելով տնտեսության առանձին ոլորտների՝ տեխնոլոգիական առաջընթացի ձեռքբերումները կլանելու ունակությունը: Հաջորդը ներառականությունն է՝ որպես տնտեսական զարգացման շարժիչ ուժ դիտարկելով ձեռներեցությունը, ինքնազբաղվածությունը, փոքր և միջին ձեռնարկատիրությունը, երկրի ողջ տարածքի ներուժն ու տնտեսական, սոցիալական, աշխարհագրական, բնակլիմայական, պատմամշակութային բազմազանությունը: Մյուս հենասյունը արտահանման ուղղվածությունն է՝ ակտիվացնելով նպատակային ջանքերը, որպեսզի էապես ընդլայնվի տնտեսության ունակությունը՝ օգտագործելու միջազգային առևտրատնտեսական հարաբերությունների հնարավոր օգուտները:

ՀՀ կառավարության ծրագրով նպատակ է դրվել չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային օգտագործումը, ոռոգման ջրի հասանելիության մակարդակի բարձրացումը, ոլորտում նոր տեխնոլոգիաների կիրառումը, մեքենատրակտորային համակազմի թարմացումը և ագրոպարենային համակարգի սարքավորումների, սննդի անվտանգության համակարգերի ներդրման աջակցությունը, տեղական սերմնաբուծության, սերմարտադրության և ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը, կենդանիների և բույսերի հիվանդությունների կանխարգելումը, գյուղական համայնքներում ոչ գյուղատնտեսական գործունեության զարգացումը, ապահովագրական համակարգի ներդրումը և գյուղատնտեսությունում տնտեսվարողների գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծումը:

ՓՄՁ սուբյեկտները, հատկապես սկսնակ գործարարները, ձեռնարկատիրական անհրաժեշտ կրթության և կարողությունների զարգացման կարիք ունեն նոր

տեխնոլոգիաների, շուկայավարման, բիզնես պլանավորման, հաշվապահական հաշվառման, մարդկային ռեսուրսների և ֆինանսական կառավարման և այլ հարցերում: Այս հմտությունների բացակայությունը լուրջ խոչընդոտ է հանդիսանում ոլորտի զարգացման համար, և այն առավել հաճախ հանդիպող պատճառներից է, որի հետևանքով շատ ընկերություններ դադարում են գործել:

Արդյունաբերական արտադրության ներկայիս կառուցվածքը պայմանավորվել է հիմնականում ներքին պահանջարկի բնույթով և արտաքին շուկաներում կոնկրետ ապրանքների մրցունակությամբ, ինչպես նաև՝ արտադրական կարողությունների զարգացման մակարդակով: Տեղական արտադրանքի նկատմամբ արտաքին պահանջարկը հիմնականում պայմանավորվել է մրցունակ արտադրանքի թողարկման առկա հնարավորություններով: Այնինչ, պակաս կարևոր չէ միջազգային շուկաներում հայրենական ապրանքների պատշաճ ներկայացումը և արտահանման հետ կապված լոգիստիկ հիմնախնդիրների լուծումը:

Ագրոպարենային ոլորտի բարեփոխումները կուղղվեն հետևյալ խնդիրների լուծմանը.

- պետության և մասնավոր հատվածի միջև համագործակցության արդյունքում մի շարք պետական աջակցության ծրագրերի համատեղ իրականացում.
- հողային ռեսուրսների նպատակային օգտագործման վիճակի բարելավում և հողատեսքերի խոշորացում.
- գյուղատնտեսությունում տնտեսավարող սուբյեկտների համար գործունեության նպաստավոր պայմանների ստեղծում և մրցունակության բարձրացում.
- գյուղատնտեսության տնտեսավարման ձևերի զարգացում, հատկապես կոոպերացիայի խթանում.
- մատչելի մեխանիզմների կիրառմամբ ագրոպարենային ոլորտի տեխնիկական հագեցվածության վիճակի բարելավում.
- անասնաբուծության և բուսաբուծության մեջ արդի տեխնիկական համակարգերով անասնաշենքերի և ջերմոցային տնտեսությունների հիմնմանը աջակցություն.
- տոհմային կենդանիների տեսակարար կշռի ավելացմանը աջակցություն.
- խորհրդատվական համակարգի կատարելագործում.
- գյուղատնտեսական մթերքների իրացման պայմանների բարելավում, գյուղա-տնտեսական մթերքների արտադրողների և վերամշակողների պայմանագրային հարաբերությունների կատարելագործում.
- ագրարային արտադրական և սպասարկման գործընթացներում արդիական մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման աջակցություն.
- գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման համար նախադրյալների ստեղծում:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՓՄՁ պետական աջակցության շրջանակներում առաջարկվում է միջոցառումների շրջանակ, որի իրականացմամբ տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական համալիր օգնություն կցուվաբերվի ՓՄՁ սուբյեկտներին՝ գործունեության պլանավորման, մեկնարկի, ընթացիկ կառավարման և զարգացման փուլերում՝ օգտագործելով անհատական և խմբային խորհրդատվության/ուսուցման, տեղեկատվության ընդհանրացման և

ստանդարտացման, ինչպես նաև տեղեկատվության տարածման և հեռահաղորդակցության առցանց հնարավորությունները:

Արդյունաբերական քաղաքականության նպատակն է լինելու նպաստել գիտելիքահեն, արտահանելի, ներառական և էկոլոգիապես հաշվեկշռված արդյունաբերության ձևավորմանը՝ լիարժեք օգտագործելով և զարգացնելով առկա մարդկային կապիտալի հնարավորությունները, հնարավորինս խորացնելով ազգային տնտեսությունում արժեքի ստեղծման շղթան, արտաքին շուկաներում բարձրորակ ապրանքային նիշաներում մրցակցելու հայտ ներկայացնելով:

Արդյունաբերության տեխնոլոգիական հենքի արդիականացումն ապահովելու նպատակով կարևորվում է արտադրության պրոցեսում ժամանակակից սարքավորումների և տեխնոլոգիաների կիրառման հասանելիության ապահովումը, հետևապես՝ արդյունավետության տեսակետից կվերլուծվեն և կգնահատվեն կիրառվող սահմանափակ գործիքակազմերը՝ առավել հիմնավոր և համակարգային լուծումներ ունենալու համար:

Նախատեսվում է առանձնացնել զբոսաշրջային մեծ ներուժ ունեցող զբոսաշրջային պրոդուկտներ՝ էկոտուրիզմ, գաստրոտուրիզմ, էնոտուրիզմ, էքստրիմ տուրիզմ, ֆոլկ տուրիզմ՝ համաշխարհային շուկայում Հայաստանը թիրախավորված դիրքավորելու նպատակով: Շարունակվելու է աջակցություն տրամադրել ՀՀ մարզերում ամենամյա ավանդական փառատոնների, տոնակատարությունների և զբոսաշրջային միջոցառումների կազմակերպմանը՝ նպաստելով զբոսաշրջային արդյունքների գրավչության բարձրացմանը և տարածքներում ինքնազբաղվածության ու գործարար ակտիվության բարձրացմանը: Այս ուղղությամբ պետական աջակցությամբ իրականացվող ծրագրերի հիմնական խնդիրներից մեկը պետք է դառնա նման պրոդուկտների վերջնական կայացումը և միջազգային համբավի ձևավորում՝ ի վերջո դրանք վերածելով կոմերցիոն և ինքնաբավ լուրջ գործարար ծրագրերի:

Ագրոպարենային համակարգի զարգացման քաղաքականության մեջ, որպես հիմնական գերակայություններ են դրված՝ գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործումը, պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը, առաջադիմական տեխնոլոգիաների ներդրումը, գյուղատնտեսության ինտենսիվացման մակարդակի բարձրացում, բնակլիմայական ռիսկերի մեղմումն ու տնտեսավարողների եկամուտների ավելացումը:

Ագրարային ոլորտում պետական քաղաքականության նպատակներն ու գերակայությունները համահունչ են ՀՀ կառավարության ծրագրի, «ՀՀ2014-2025թթ հեռանկարային զարգացման ծրագրի» և «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության» դրույթներին: Նախանշված քաղաքականությունը նախադրյալներ կստեղծի ճյուղում տնտեսական աճի ապահովման, գյուղատնտեսությունում առկա հողային, նյութատեխնիկական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների օգտագործման և գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման համար:

Իրականացվող ագրարային քաղաքականության և դրան ուղղված ծրագրերի կենսագործման արդյունքում միջնաժամկետ ժամանակահատվածում նախորդ տարվա նկատմամբ կապահովվի գյուղատնտեսության համախառն արտադրանքի 4.7-6.5 % աճ:

Ստորև ներկայացվում են գերակա ծախսային ուղղությունները՝ ըստ գերակայությունների նվազման՝

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)	Հիմնավորումներ
Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը	ՀՀ կառավարության 16.09.2019թ. N 650-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկ / ՓՄՁ ոլորտի զարգացման ռազմավարության իրականացմամբ ապահովվող ուղենիշային ցուցանիշներ
Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր	ՀՀ կառավարության 08.02.2019թ. N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «5.6. ներդրումների աճը՝ մրցունակության և կայուն աճի նախապայման» մաս
Զբոսաշրջության զարգացման ծրագիր	«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 08.02.2019թ. N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «5.7 Զբոսաշրջություն» մաս
Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում	ՀՀ կառավարության 08.02.2019թ. N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «5.5. արտահանումը՝ տնտեսական աճի հիմնական շարժիչ» մաս
Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում	«Անասնաբուժության մասին» ՀՀ օրենք, «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի N 1476–Ն որոշմամբ իրականացվող միջոցառում, որի իրականացումը հանրապետությունում ապահովում է տարեկան 90% կայուն անսանահամաճարակային իրավիճակ:

Գյուղատնտեսության ոլորտում տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր	ՀՀ կառավարության 08.02.2019թ. N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «5.10. Գյուղատնտեսությունը» մաս, ՀՀ կառավարության 04.11.2010թ. N 1476-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության V-րդ բաժին, 93-րդ կետ, ինչպես նաև ՀՀ կառավարության 27.03.2014թ. N 442-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2014-2025թթ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի կետ 231 (Գյուղատնտեսական նպատակով ցածր տոկոսադրույքով վարկերի տրամադրումը նպաստում է գյուղատնտեսության զարգացմանը և գյուտնտեսական համախառն արտադրանքի մինչև 2022թ-ը թիրախավորված ժամկետում 15% աճի ապահովմանը, ինչպես նաև հնարավորություն է տալիս բարձրացնել սննդամթերքի ինքնաբավության մակարդակը):
Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցություն	ՀՀ կառավարության 08.02.2019թ. N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «5.10. Գյուղատնտեսությունը» մաս (Կառավարության գյուղատնտեսական քաղաքականության առանցքը լինելու է արդի տեխնոլոգիաների ներմուծումը, արտահանման ծավալների ավելացումը, գյուղատնտեսական ամբողջ արժեշղթայում ընդգրկված բոլոր սուբյեկտների՝ փոքր տնային տնտեսությունների, գյուղացիական կոոպերատիվների, վերամշակողների և արտահանողների եկամտաբերության բարձրացումը):
Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորում	
Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագիր	ՀՀ կառավարության 08.02.2019թ. N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «5.10. Գյուղատնտեսությունը» մաս և ՀՀ կառավարության 04.11.2010թ. N 1476-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության V-րդ բաժին, 63-րդ կետ:

Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման ծրագրի իրականացման համար պետական աջակցություն	ՀՀ կառավարության 08.02.2019թ. N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «5.10. Գյուղատնտեսությունը» մաս, ՀՀ կառավարության 04.11.2010թ. N 1476-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտե-սության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կետ 15 (որով գյուղատնտեսական ռիսկերի մեղմման առաջնային ուղղությունը գյուղատնտեսության փոխադարձ ապահովագրության համակարգի ներդրման աջակցությունն է), ինչպես նաև ՀՀ կառավարության 27.03.2014թ. N 442-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2014-2025թթ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի կետ 232 (որով գյուղատնտեսության ոլորտի ռիսկերի մեղմման գործընթացում կարևորվում է ապահովագրական համակարգի ներդրումը):
Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիր	ՀՀ կառավարության 08.02.2019թ. N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «5.10. Գյուղատնտեսությունը» մաս (որով նախատեսվում է իրականացնել տեղական սերմնաբուծության և սերմնարտադրության, ինտենսիվ գյուղատնտեսության, անասնաբուծության զարգացմանն ուղղված պետական աջակցության ծրագրեր, ինչպես նաև աջակցել տոհմաբուծարանների ստեղծմանը):

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ստորև ներկայացված են էկոնոմիկայի բնագավառի 2020-2022թթ. յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները.

2020 թվականի համար՝	27,855,484.6 հազար դրամ,
2021 թվականի համար՝	29,119,880.5 հազար դրամ,
2022 թվականի համար՝	28,684,683.2 հազար դրամ:

Էկոնոմիկայի բնագավառի վերջնական արդյունքի ցուցանիշները.

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցա-նիշը	Ժամ-կետը	Ցուցա-նիշը	Ժամ-կետը	
ՓՄՁ զարգացում և ընդլայնում	1104 «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը»	*ՓՄՁ հատվածի կշիռը ՀՆԱ-ում, %*	*24,6%*	*2017թ*	*27,0*	*2020թ*	*ՀՀ կառավարության 2019-2023 թթ գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկ /ՓՄՁ ոլորտի զարգացման ռազմավարության իրականացմամբ ապահովվող ուղենիշային ցուցանիշ/*
Նոր ոլորտների զարգացման նպաստում՝ արտահանմանն աջակցություն՝ նոր շուկաների ընդլայնման աջակցություն՝ սերտիֆիկացման ծառայությունների փոխհատուցում՝	1165 «Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր»	*Ապրանքների արտահանում/ՀՆԱ, տոկոս*	*19,7%*	*2017թ*	*22,3*	*2020թ*	*ՀՀ կառավարության՝ 8 փետրվարի 2019 թվականի N 65 – Ա ծրագրի «5.6. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՃԸ՝ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԱՃԻ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ»*
		Աջակցություն ստացած մշակող արդյունաբերությունում գործող կազմակերպությունների կողմից ապրանքների արտահանում, մլրդ դրամ	*5,7*	*2017թ*	*7*	*2020թ*	

վարկավորման տոկոսների սուբսիդավորում՝ կարողությունների զարգացում՝ արտահանման խնդիրների հետազոտում		*Օտարերկրյա ուղղակի ներդրումների կշիռը ՀՆԱ-ում*	*2,1%*	*2018թ*	*2,5%*	*2020թ*	
ՀՀ ՏԶՆ նախարարության աշխատակազմի, «Տնտեսական հետազոտությունների կենտրոնի»-ի և ՀՀ առևտրային ներկայացուցիչների պահպանում և զարգացում	1058 «Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտում պետական քաղաքականության մշակում՝ ծրագրերի համակարգում և մոնիտորինգ»	*Մշակված չէ*		*անժամկետ*		*անժամկետ*	*Հայաստանի արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացում, մասնավորապես՝ արտահանման խթանում և ներդրումների ներգրավում* *ՀՀ կառավարության ծրագիր (5.5 և 5.6 բաժիններ)* ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի որոշում, «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման»:
		Մշակված չէ		*անժամկետ*		*անժամկետ*	
		Ոլորտային թեմատիկ հետազոտություններ	*4*	*2018*	*4*	*2022*	
Արտադրանքի, ծառայությունների և գործընթացների անվտանգության	1067 «Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի	Արտադրանքի և ծառայությունների գծով ազգային ստանդարտների մշակում	*30*	*2018*	*30*	*2022*	*ՀՀ կառավարության 2019 թվականի ծրագրի «5.5. ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ*

մակարդակի բարելավում միջազգային ու տարածաշրջանային հացվատարմագրման համակարգերին ինտեգրում	զարգացում»	Հավատարմագրում	*17*	*2018*	*19*	*2022*	*ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՐԺԻՉ»*
Միջազգային զբոսաշրջային այցելությունների աճ	1190 «Զբոսաշրջության զարգացման ծրագիր»	*Հայաստանի գրավչության բարձրացում և զբոսաշրջիկների ավելացում*	*10,5%*	*2018թ*	*Առնվազն 8.0%*	*Յուրաքանչյուր տարի*	*Զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, նոր զբոսաշրջային ձևերի զարգացում,* *Ենթակառուցվածքների բարելավում,*
Մտավոր սեփականության իրավատերերի բացառիկ իրավունքների շրջանառության շարունակական համալրում և վարում	9002 «Աջակցություն մտավոր սեփականության օբյեկտների պաշտպանությանը»	*Գյուտերի և օգտակար մոդելների գրանցում/ Ապրանքային և սպասարկման նշանների գրանցում*	*2906/ 2022*	*2019*	*Հնարավոր չէ կանխատեսել*	*Շարունակական*	
ՀՀ կառավարության ծրագրով միջնաժամկետ ժամանակահատվածի համար նպատակ է դրվել չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի	*1084 Գյուղատնտեսության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ*	*Սահմանվում է առանձին ծրագրերի մասով*					

նպատակային օգտագործումը, ոռոգման ջրի հասանելիության մակարդակի բարձրացումը, ոլորտում նոր տեխնոլոգիաների կիրառումը, մեքենատրակտորային համակազմի թարմացումը և ագրոպարենային համակարգի սարքավորումների, սննդի անվտանգության համակարգերի ներդրման աջակցությունը, տեղական սերմնաբուծության, սերմարտադրության և ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը, կենդանիների և բույսերի		Գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճ, տոկոս	100	2019թ.	15	2022թ.	ՀՀ կառավարության 2019թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 5.10. Գյուղատնտեսությունը բաժնի 1-ին պարբերություն)
	1022 Գյուղատնտեսության խթանման ծրագիր	Պտուղբանջարեղենի և խաղողի վերամշակումից ստացված արտադրանքի ծավալների աճ, տոկոս	100	2019թ	5	2022թ.	ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 5.10. Գյուղատնտեսությունը բաժնի 1-ին պարբերություն
		Օգտագործվող վարելահողերի ավելացում, տոկոս	54	2018թ.	70	2022թ.	ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշման հավելված 5.10 բաժնի 10-րդ պարբերություն
	1026 Սննդի անվտանգության ապահովում	Շրջանառվող սննդամթերքի համապատասխանությունը սննդամթերքի անվտանգության բնագավառը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերի պահանջներին, տոկոս	85	տարեկան	85	տարեկան	

հիվանդությունների կանխարգելումը, գյուղական համայնքներում ոչ գյուղատնտեսական գործունեության զարգացումը, ապահովագրական համակարգի ներդրումը և գյուղատնտեսությունում տնտեսվարողների գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծումը:		Բուսական ծագման մթերքում մնացորդային նյութերի թույլատրելի քանակությունները գերազանցող արտադրավայրերի հայտնաբերում, տոկոս	85	տարեկան	85	տարեկան	
	1059 Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն	Մշակաբույսերի միջին բերքատվության բարձրացում, տոկոս	100	2018թ.	5	2022թ.	ՀՀ կառավարության 2019թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 5.10. Գյուղատնտեսությունը բաժնի 1-ին և 4-րդ պարբերություն)
		Հացահատիկի և հատիկաընդեղենի արտադրության ծավալների ավելացում, տոննա	337 750	2018թ.	410 000	2022թ.	
		Գյուղատնտեսական նշանակության հողատարածքների ագրոքիմիական քարտեզներով ապահովվածություն, տոկոս			100	5 տարի պարբերա կանությա մբ	
	1086 Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում	Մեկ կենդանու կաթի արտադրություն, լիտր/տարի	1420		1700	2020թ.	
		Վաճառված ոչխարների թիվը, գլուխ	56000		67000	2020թ.	
		Վաճառված կովերի թիվը, գլուխ	27500		33000	2020թ.	

		Կաթի, մսի, մրգի և բանջարեղենի տարեկան շուկայահանվող արտադրության աճ, մլն դրամ			*800*	*2020թ.*	
		Արոտավայրերի և անասնապահական համակարգերի կասռավարման արդյունավետության բարելավում, գնահատական (15-84 բալային համակարգ)	*15*		*84*	*2020թ.*	
		Տվյալների բազայում ներառված և պարբերաբար թարմացվող տվյալներ, քանակ			*8*	*2020թ.*	
		Ստեղծված և վերապատրաստված անձնակազմի կողմից կանոնավոր կերպով օգտագործվող քաղաքականության գործիքները, քանակը			*4*	*2020թ.*	
		Նախարարության գործընթացներում ներառված փաստերի վրա հիմնված քաղաքականության մշակման ընթացակարգեր, քանակ			*2*	*2020թ.*	

	1116 Անասնաբուժական ծառայություններ	Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների վարակամերժության ապահովում, տոկոս	90	տարեկան	90	տարեկան	ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշման 5-րդ մասի 5.10-րդ կետի՝ Գյուղատնտեսությունը բաժնի ապահովել կենդանիների և բույսերի հիվանդությունների կանխարգելման արդյունավետ համակարգի ներդրումը:
	1134 Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն	Գյուղական տարածքներում բնակվող թիրախային խմբերի կենսամակարդակի բարելավում, տոկոս		2016թ.	15	2022թ.	
		Հողերի կայուն կառավարման և տեխնոլոգիաների ներդրման արդյունքում թիրախավորված փոքրածավալ արտադրողների և փոքր ու մյիջին ֆերմերների եկամուտների, ակտիվների աճ, տոկոս		2016թ.	20	2022թ.	
		Հողատարածքներում ոռոգման համակարգերի վերականգնում, հեկտար	1574	2016թ.	3200	2022թ.	
		Բարելավված ջրամատակարարում ստացող համայնքներ, քանակ		2016թ.	25	2022թ.	

		Ձեռնարկությունների կարողությունների և մթերման հնարավորությունների ընդլայնման շնորհիվ նպաստել գյուղ մթերք մատակարարող փնտեսավարող սուբյեկտների թվի ավելացմանը, քանակ	800	2016թ.	1500	2022թ.	
		Ստեղծված աշխատատեղեր, քանակ		2016թ.	1450	2022թ.	
		Ծրագրի ընդհանուր շահառու տնտեսություններ, քանակ		2016թ.	29120	2022թ.	
		Վերականգնված դեգրադացված հողեր, հեկտար		2016թ.	61.3	2022թ.	
	1187 Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր	Տոհմային կենդանիների տեսակարար կշիռ, տոկոս	0.5	2019թ.	5	2024թ.	ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 5.10. Գյուղատնտեսությունը բաժնի 1-ին պարբերություն և 7-րդ պարբերության 4-րդ կետ

		Պետական աջակցությամբ ոռոգման արդիական համակարգեր ներդրված հողատարածքներ, հեկտար	1900	2019թ.	9100	2023թ.	Ոռոգման ջրի հասանելիության մակարդակի բարձրացում, նոր տեխնոլոգիաներով ոռոգվող հողատարածքների ավելացում
		Հանրապետության գյուղատնտեսական տեխնիկայի նորացում (միավոր)	220	2018թ.	1100	2023թ.	ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 5.10. Գյուղատնտեսությունը բաժնի 5-րդ պարբերություն: Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությամբ և Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով, որոնցում որպես կարևոր խնդիր է նախանշված գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների զարգացումը և արտադրության տեխնիկական հագեցվածության բարձրացումը:

		Ագրոպարենային ոլորտի նոր սարքավորումներով վերազինում (միավոր)	9	2018թ.	300	2022թ.	ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 5.10. Գյուղատնտեսությունը բաժնի 1-ին պարբերություն և 7-րդ պարբերության 3-րդ կետ
		Ժամանակակից տեխնոլոգիաներով վերամշակվող խաղողի և ինտենսիվ պտղատու այգեպարածքներ, հատապտղանոցներ, հեկտար	1457	2019թ.	2557	2030թ.	Արդի տեխնոլոգիաների ներմուծումը, արտահանման ծավալների ավելացումը, գյուղատնտեսական ամբողջ արժեշղթայում ընդգրկված բոլոր սուբյեկտների՝ փոքր տնային տնտեսությունների, գյուղացիական կոոպերատիվների, վերամշակողների և արտահանողների եկամտաբերության բարձրացումը

5.9 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ՈԼՈՐՏԸ

Քաղաքաշինություն, բնակարանային շինարարության ոլորտ

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

- Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման ամբողջական լուծում:*

- Քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերի միջազգային և եվրոպական նորմերին ու ստանդարտներին համապատասխանեցում,

- Հանրապետության ողջ տարածքը համակցված տարածական պլանավորման փաստաթղթերով ապահովում,

- Ոչ անվտանգ բնակության պայմաններում (վթարային շենքերում, ժամանակավոր կացարաններում, ոչ հիմնական շինություններում և այլն) բնակվող ընտանիքներին անվտանգ, պատշաճ, սանիտարահիգիենիկ պահանջներին բավարարող բնակարաններով ապահովում,

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովում,*

2. Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակումև տեղայնացում,

3. Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակում,

4. Բնակարանային շինարարության ծրագիր (Ապարանի Բաղրամյան 43 հասցեում գտնվող վթարային շենքի փոխարեն նոր բնակելի շենքի կառուցում, ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում 5 բազմաբնակարան շենքերի շինարարություն):

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

2020թ - 4,065,000.0 հազար դրամ,

2021թ – 1,786,114.2 հազար դրամ,

2022թ – 1,331,660.0 հազար դրամ.

*ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով միջոցառման ԲԳԿ-ն հանդիսացել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, կատարող մարմինն ՀՀ կառավարությունը, 2020թ-ի պետական բյուջեի նախնական տարբերակում հիմք է ընդունվել ՀՀ 2019թ-ի պետական բյուջեի ձևաչափը:

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչները	Ելակետը		Թիրախ		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
Քաղաքականության մշակման և դրա կատարման համակարգման, պետական ծրագրերի պլանավորման, մշակման, իրականացման ապահովում	1103 Քաղաքաշինության և ճարտարապե-տության բնագա-վառում պետական քաղաքականության իրականացում և կանոնակարգում	Մշակված նորմատիվատեխնիկական փաստաթղթերի թիվ, տոկոս	43.83	2018թ.	47.24	2022թ.	
		Տարածքային հատակագծման նախագծերով ապահովված միկրոռեգիոնների թիվ, տոկոս	7.90	2018թ.	100	2024թ.	
		Գոտևորման նախագծերով ապահովված բնակավայրերի թիվ, հատ	55	2018թ.	963	2024թ.	
Բազմաբնակարան բնակելի շեքերի (մասնաշենքերի) կառուցում	1216 Բնակարանային շինարարություն	Կառուցված բազմաբանակարանային շենք, հատ	0	2018	6	2021թ.	

Բնակության վայր չունեցող անօթևան անձանց բնակարանային ապահովում	1098 Բնակարանային ապահովում	Բնակարանային ապահովման աջակցություն ստացած անձանց թիվը	4933	2019թ.	5396	2020թ.	

5.10 ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

5.10.1 ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Պաշտպանության ապահովում, Ռազմաբժշկական սպասարկում և առողջապահական ծառայություններ, Ռազմական ուսուցում և վերապատրաստում, Միջազգային ռազմական համագործակցություն, Հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայություններ, Աջակցություն ՀՀ ՊՆ կողմից իրականացվող և ՀՀ զինված ուժերի ռազմաբժշկան վարչության կողմից իրականացվող ծրագրերին (ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ)

5.10.2 ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՈԼՈՐՏԸ

«Ոստիկանության մասին», «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներով ամրագրված հիմնախնդիրներին համահունչ՝ ոստիկանությունը պարտավոր է ապահովել՝ մարդու անվտանգությունը, քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, հանցագործությունների նախականխումը, խափանումը, հայտնաբերումը և բացահայտումը, քրեական գործերով հետաքննությունը, հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգությունը, ճանապարհային երթևեկության անվտանգությունը, սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանությունը, զենքի պահպանման և օգտագործման նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը, անձնագրային ռեժիմի պահպանումը, օրենքով նախատեսված սահմաններում ֆիզիկական և իրավաբանական անձանց, իրենց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելիս, օգնության ցուցաբերումը և այլն:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

ՀՀ կառավարության ծրագրին համահունչ՝ ոստիկանության առաջնահերթ հիմնախնդիրներն են.

- հանցավորության մակարդակի շարունակական նվազումը, կատարված հանցագործությունների բացահայտման մակարդակի շարունակական բարձրացումը,

- ոստիկանության վստահելիության մակարդակի բարձրացումը, համակարգում կոռուպցիայի բացառումը, քաղաքացի-ոստիկան համագործակցության նոր մշակույթի ձևավորումն ու ամրապնդումը,
- ոստիկանության գործունեության բնագավառում բռնության դեպքերի նվազեցման և բացառման ուղղությամբ գործուն միջոցառումների իրականացումը,
- ՀՀ ռազմավարական նշանակության օբյեկտների և ենթակառուցվածքների անվտանգության ապահովումը, անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված խնդիրների և դրանցից բխող միջոցառումների իրականացումը,
- ներպետական և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ արդյունավետ պայքարը, մասնավորապես, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության, մարդկանց թրաֆիքինգի ու շահագործման, ահաբեկչության և փողերի լվացման դեմ պայքարի ոլորտներում համալիր միջոցառումների իրականացումը,
- գործունեության թափանցիկության և հաշվետվոկանության պատշաճ մակարդակի ապահովումը:

Միջնաժամկետ հեռանկարում նախատեսվում է առկա ուժերի և միջոցների կառավարման արդյունավետությունը բարձրացնելու, շահառուներին մատուցվող ծառայությունների որակը բարելավելու, համակարգում կոռուպցիոն ռիսկերը կրճատելու միջոցով էապես նպաստել հասարակական կարգի և անվտանգության, հանցավորության դեմ պայքարի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետության հետագա բարձրացմանը, ոստիկանության նկատմամբ հասարակության վստահության էլ ավելի ամրապնդմանը հասարակության առջև հաշվետվողականության բարելավմանը, ոստիկանի նոր կերպարի ձևավորմանը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ոստիկանության խնդիրների և կանոնադրական գործառույթների համակարգված իրագործումը նախատեսվում է ապահովել ֆունկցիոնալ համապատասխանությամբ խմբավորված, հարաբերականորեն ինքնուրույն և ամբողջական հետևյալ ծախսային ծրագրերով.

1) «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված

ծառայություններ, մոնիտորինգ և վերահսկողություն»,

2) «Հասարակական անվտանգության ապահովում»,

3) «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում»,

4) «Անձնագրերի և վիզաների տրամադրում, բնակչության պետական ռեգիստրի միասնական համակարգի վարում»,

5) «Ոստիկանության կրթական ծառայություններ»,

6) «Ոստիկանության աշխատողների և նրանց ընտանիքների անդամների առողջության պահպանում»:

Նշված հիմնական ծախսային ծրագրերից զատ միջնաժամկետ ծախսերի ծրագրում ներառած են նաև հետևյալ աջակցող ծրագրերը.

1) «Աջակցություն ՀՀ ոստիկանության կողմից պետական պահպանության ծառայությունների մատուցմանը»,

2) «Աջակցություն ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանը»,

3) «Աջակցություն ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության կողմից ծառայությունների մատուցմանը»,

4) «Աջակցություն ՀՀ ոստիկանության բժշկական վարչության կողմից ծառայությունների մատուցմանը»:

ՄԺԾԾ ժամանակահատվածում ոստիկանության ծախսային գերակայություններ են հանդիսանալու.

- Ծառայողներին (աշխատողներին) որակյալ աշխատանքի կամ հատուկ հանձնարարությունների կատարման համար դրամական խրախուսումների առկա համակարգերի ըստ ամենայնի կատարելագործումը, որը կարևորվում է համակարգում ծառայողների (աշխատողների) մոտիվացման, աշխատանքի արդյունավետության բարձրացման և երկարաժամկետ հեռանկարում համակարգում հակակոռուպցիոն ռազմավարության հաջող իրագործման տեսանկյունից,

- Ոստիկանության հիմնականում տարածքային ստորաբաժանումների շենքերի և կառույցների, մեքենաների և սարքավորումների ընթացիկ պահպանման, շահագործման և սպասարկման ծախսերի, ինչպես նաև գրասենյակային, կենցաղային,

տրանսպորտային նյութերի տարեկան առնվազն նվազագույն պահանջարկի ապահովումը՝ պայմանավորված ընթացիկ գործունեության պատշաճ կազմակերպման և իրականացման անհրաժեշտությամբ,

- Ոստիկանության ստորաբաժանումների տեխնիկական հագեցվածության և արդիականացման, առաջնահերթ կարգով գործառույթների ծրագրային ապահովման բարելավումը, քանի որ, ըստ էության, դրանով է պայմանավորված ոստիկանության կարողությունների շարունակական կատարելագործումը, առկա սահմանափակ ուժերի և միջոցների կառավարման արդյունավետությունը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

ՄԺԾԾ ժամանակահատվածում ոստիկանության կողմից իրականացվող ծրագրերին կուղվի 2020 թվականին 64,908.1 մլն դրամ, 2021 թվականին՝ 65,843.0 մլն դրամ և 2022 թվականին՝ 58,654.8 մլն դրամ ֆինանսական միջոցներ:

ԾԱԽՍԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Դասիչը	Ծրագիրը	Ծրագրի վերջնական արդյունքները			
		Չափորոշիչը	Ելակետայի ն ցուցանիշը	Թիրախայի ն ցուցանիշը	Թիրախայի ն ժամկետը
1158	Ոստիկանության ոլորտի քաղաքականությա ն մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն	Հասարակական վստահության մակարդակի աճ, տոկոս	30	60	2020թ.
1014	Հասարակական անվտանգության ապահովում	բացահայտված հանցագործությունների մակարդակի աճ, տոկոս	5	10	2020թ.

		Առավել լատենտային հանցագործությունների (կոռուպցիոն բնույթի հանցագործություններ, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության և մարդու թրաֆիկինգի կամ շահագործման դեպքերի) հայտնաբերման մակարդակի աճ, տոկոս	7	11	2020թ.
1175	Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում	Ծանր հետևանքներով ճանապարհատրանսպորտայի ն պատահարների (3 և ավելի զոհ և/կամ 10 և ավելի վիրավոր) քանակի նվազում, տոկոս	10	12	2020թ.
1083	Անձնագրերի և վիզաների տրամադրում, բնակչության պետական ռեգիստրի միասնական համակարգի վարում	Մեկ պատուհանի սկզբունքի լիարժեք կիրառման նպատակով նոր բիոմետրիկ համակարգի ներդրմամբ անձնագրային ստորաբաժանումներում սպասարկման կետերի ավելացում, հատ	75	185	2021թ.
1101	Ոստիկանության կրթական ծառայություններ	Բակալավրիատի կրթական ծրագրով շրջանավարտների թիվ, տոկոս	69.1	96.4	2022թ.
		Միջին մասնագիտական կրթական ծրագրով շրջանավարտների թիվ, տոկոս	80.8	99.2	2022թ.
		Նախնական մասնագիտական կրթական ծրագրով շրջանավարտների թիվ, տոկոս	100	150	2022թ.
1095	Ոստիկանության աշխատողների և նրանց ընտանիքի անդամների առողջության պահպանում	Ծառայողների (անձանց) աշխատունակության ժամանակավոր կորստով ուղեկցվող հիվանդությունների դեպքերի կրճատում, տոկոս	3	5	2020թ.

5.10.3 ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՈԼՈՐՏԸ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը պետության և հասարակության այնպիսի կացություն է, երբ ապահովված է անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից:

Պետական պահպանության ծառայությունն իրականացնում է պետական պահպանության ենթակա օբյեկտների անվտանգության ապահովման և պետական օբյեկտների պաշտպանության ոլորտի գործառույթ, իրավական, կազմակերպական, պահպանական, ռեժիմային, օպերատիվ-հետախուզական, տեխնիկական և այլ միջոցառումների համակցմամբ:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին անվտանգության ապահովման կարևորագույն նախապայմանն անվտանգության միջավայրի համակողմանի գնահատման հիման վրա արտաքին, ներքին և պաշտպանական քաղաքականության ճկուն գործիքակազմի ձևավորումն է, ինչը հնարավորություն կտա Կառավարության քաղաքական առաջնահերթությունները կյանքի կոչելու համար ստեղծել կայուն և կանխատեսելի մթնոլորտ, իսկ արտաքին անվտանգության ապահովման երաշխիքների համար՝ բավարար կարողություններ: Կառավարության առաջնահերթությունների թվում են Հայաստանի Հանրապետության ռազմավարական նշանակության օբյեկտների և ենթակառուցվածքների անվտանգության ապահովումը, անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված խնդիրների և դրանցից բխող միջոցառումների իրականացումը:

Ազգային անվտանգության ծառայության նպատակներն են հետախուզական գործունեությունը, հակահետախուզական գործունեությունը, ռազմական հակահետախուզական գործունեությունը, պետական սահմանի պահպանությունը և պայքարը հանցագործությունների դեմ: Այս առումով վերջնական արդյունքներն են ՀՀ ազգային անվտանգության սպառնալիքների մասին տեղեկությունների ստացումը և կանխարգելիչ միջոցառումների անցկացումը, օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների և այլ կազմակերպությունների, ինչպես նաև առանձին անձանց հետախուզական գործունեության բացահայտումը, կանխումը և

խափանումը, օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հանցագործությունների բացահայտումը, կանխումը և խափանումը, ՀՀ պետական սահմանի անձեռնմխելիության ապահովումը, սահմանափակումների կանխումը և խափանումը:

Պետական պահպանության ծառայության նպատակներն են՝ իր իրավասության սահմաններում կազմակերպել պետական պահպանության ենթակա օբյեկտների անվտանգությունը, կանխատեսել և բացահայտել այդ օբյեկտներին սպառնացող վտանգը և նրանց կանխարգելման համար իրականացնել համալիր միջոցառումներ, պետական պահպանության օբյեկտների անվտանգությունն ապահովել նրանց մշտական կամ ժամանակավոր գտնվելու վայրում, իր իրավասության շրջանակներում մասնակցել ահաբեկչության դեմ պայքարին, պաշտպանել պահպանվող օբյեկտները, կանխել և խափանել պահպանվող օբյեկտներում հանցագործությունները և այլ իրավախախտումները, ապահովել սահմանված անցագրային ռեժիմն ու կարգը:

Ազգային անվտանգության գերակա վերջնական արդյունքն է ազգային անվտանգության ապահովումը, իսկ պետական պահպանության ծառայության գերակա վերջնական արդյունքն է հատուկ պետական պաշտպանության ենթակա օբյեկտների անվտանգության ապահովումը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ազգային անվտանգության համակարգի զարգացման հիմնական միտումները նպատակաուղղված են ներքին և արտաքին սպառնալիքներից անձի, հասարակության ու պետության անվտանգության ապահովման բարձրացմանը, տնտեսության ոլորտում կատարվող հանցագործությունների, այդ թվում՝ կոռուպցիայի տարբեր դրսևորումների և տնտեսության զարգացմանը խոչընդոտող այլ երևույթների ժամանակին հայտնաբերման ու բացահայտման աշխատանքների ակտիվացմանը, օպերատիվ գործունեության արդյունավետության բարձրացմանը, պետական սահմանի շուրջօրյա հսկման և պահպանման բարելավմանը, այդ թվում նաև էլեկտրոնային համակարգերով և ծառայողական կենդանիներով (շներ, ձիեր և այլն), հետախուզության, հակահետախուզության ոլորտի ընդլայնմանը, օտարերկրյա հատուկ ծառայությունների կողմից օգտագործվող գործակալական ցանցի բացահայտման հետ կապված աշխատանքների զարգացմանը, գաղտնի տեղեկատվության անվտանգություն մակարդակի բարելավմանը, նոր համակարգի ներդրման ապահովմանը:

Պետական պահպանության ծառայության զարգացման հիմնական միտումները նպատակաուղղված են պետական պահպանության ծառայության հատուկ պետական

պաշտպանության ենթակա անձանց, ինչպես նաև մշտական և ժամանակավոր պահպանվող օբյեկտների անվտանգության ապահովման բարձրացմանը, պետական պահպանության ապահովման համար տեխնիկա-տնտեսական բազայի ամրապնդմանը, զենք-զինամթերքի արդիականացմանը և ավելացմանը, անհրաժեշտ նյութական ռեսուրսներով ապահովմանը, զինծառայողների և զինվորական կոչում չունեցող աշխատակիցների ֆինանսական և սոցիալական վիճակի բարելավմանը, սեփական ուսումնական կենտրոնի և նրան կից անհրաժեշտ շինություններով, լրացուցիչ պահեստներով ապահովմանը, ինչպես նաև անձնակազմի մասնագիտական պատրաստականության բարձրացմանը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

ՄԺԾԾ ժամանակահատվածում ազգային անվտանգության ծառայության և պետական պահպանության ծառայության կողմից իրականացվող ծրագրերին 2020 թվականին նախատեսվում է ուղղել 34,541.6 մլն դրամ, 2021 թվականին՝ 34,277.0 մլն դրամ, 2022 թվականին՝ 34,695.3 մլն դրամ:

ԾԱԽՍԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական անդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
Ներքին և արտաքին սպառնալիքների անձի, հասարակության ու պետության անվտանգության ապահովում	1138 Ազգային անվտանգություն	ՀՀ ազգային անվտանգության սպառնալիքների մասին տեղեկությունների ստացում և կանխարգելիչ միջոցառումների անցկացում, տոկոս	95	2018թ.	100	2025թ.	Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին անվտանգության ապահովման կարևորագույն նախապայմանն անվտանգության միջավայրի համակողմանի

		Օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների և այլ կազմակերպություններ, ինչպես նաև առանձին հետախուզական գործունեության բացահայտում, կանխում և խափանում, տոկոս	95	2018թ.	100	2025թ.	գնահատման հիման վրա արտաքին, ներքին և պաշտպանական քաղաքականության ճկուն գործիքակազմի ձևավորումն է, ինչը հնարավորություն կտա Կառավարության քաղաքական առաջնահերթությունները կյանքի կոչելու համար ստեղծել կայուն և կանխատեսելի մթնոլորտ, իսկ արտաքին անվտանգության ապահովման երաշխիքների համար՝ բավարար կարողություններ:
		Օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հանցագործությունների բացահայտում, կանխում և խափանում, տոկոս	95	2018թ.	100	2025թ.	
		ՀՀ պետական սահմանի անձեռնմխելիության ապահովում, սահմանափակումների կանխում և խափանում, տոկոս	100	2018թ.	100	2025թ.	

5.10.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

ՈԼՈՐՏԸ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման կարևորագույն ոլորտներից մեկը՝ արտակարգ իրավիճակների համակարգը, իրականացնում է հանրապետությունում քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության մշակման, բնական, արհեստական և տեխնածին աղետներ առաջացնող երևույթների ուսումնասիրության, կանխարգելման, հակազդման, հետևանքների վերացման, բնակչության վաղաժամ իրազեկման և ուսուցման գործառույթները:

Արտակարգ իրավիճակներին դիմագրավելու համար ոլորտում գործում են Փրկարար ծառայությունը, Պետական ռեզերվների գործակալությունը, Սեյսմիկ պաշտպանության ծառայությունը, Հիդրոօդերևութաբանության ծառայությունը, Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը, Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան, Աղետների բժշկության կենտրոնը և Ռուս հայկական մարդասիրական կենտրոնը: Նպատակը՝ աղետների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցումն է, ինչպես նաև բնակչությանը և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված գործառություններն են:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Ոլորտի հիմնական թիրախներն են՝ արտակարգ իրավիճակների բնագավառի պետական քաղաքականության մշակում՝ ծրագրերի համակարգում, արտակարգ իրավիճակների արդյունավետ արձագանքում, արտակարգ իրավիճակների կանխում, հնարավոր հետևանքների նվազեցում և վերացում, քաղաքացիական պաշտպանություն, բնակչության և տնտեսության օբյեկտների (տարածքների) պաշտպանություն, փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, հրդեհաշիջման և այլ աշխատանքների իրականացում, սեյսմիկ ռիսկերի գնահատում և նվազեցում, հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթներից և կլիմայական ռիսկերից բնակչության և տնտեսության պաշտպանություն, արտադրական վտանգավոր օբյեկտների շահագործմամբ պայմանավորված տեխնածին վթարների և դրանց հետևանքով

հասարակությանը և տնտեսությանը պատճառվող վնասների ռիսկերի նվազեցում, ճգնաժամային կառավարման կարողությունների զարգացում, արտակարգ իրավիճակներում ռազմավարական նշանակության պաշարներով ապահովում և այլն, որոնք ներառված էն աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրում:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արտակարգ իրավիճակների բնագավառի գերակա խնդիրն է բնական և տեխնածին աղետների արդյունավետ կանխատեսումը, վաղ ազդարարումը, դրանց արագ արձագանքման համակարգի կատարելագործումը, արտակարգ իրավիճակներում բնակչության իրազեկվածության ու կրթվածության մակարդակի բարձրացումը: Ոլորտի նպատակաուղղվածության միջոցառումների ցանկը ներառված է ՀՀ Կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկում: Ոլորտային քաղաքականության թիրախների (վերջնական արդյունքների) ապահովման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրականցվում են հետևյալ ծրագրերը.

- Փրկարարական ծառայություններ
- Պետական ռեզերվների պահպանում
- Սեյսմիկ պաշտպանություն
- Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ
- Հիդրոօդերևութաբանական ծառայություններ
- Արտակարգ իրավիճակների արձագանքելու կարողությունների զարգ

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ստորև ներկայացվում է արտակարգ իրավիճակների բնագավառի 2020-2022 թվականների յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները.

2020 թվականի համար՝ 12,715,623.4 հազ. դրամ,

2021 թվականի համար՝ 12,736,611.4 հազ. դրամ,

2022 թվականի համար՝ 12,757,961.1 հազ. դրամ:

Արտակարգ իրավիճակների բնագավառի վերջնական արդյունքի ցուցանիշները

	Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
			Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
				Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
	Հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթներից և կլիմայական ռիսկերից բնակչության և տնտեսության պաշտպանություն	1020 Հիդրոօդերևութաբանական ծառայություններ	Վտանգավոր աղետալի երևույթների վերաբերյալ բնակչության իրազեկման մակարդակի ինքնագնահատական, իրազեկված բնակչության տոկոս	80	2019թ.	90	2020թ,	08. 02.,2019թ N 65-Ա «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին » որոշման 2.2 կետ, ըստ որի Կառավարությունը կարևորում է բնական և տեխնածին աղետների արդյունավետ կանխատեսումն ու վաղ ազդարարումը, դրանց արագ արձագանքման համակարգի կատարելագործումը, արտակարգ իրավիճակներում բնակչության
			Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության դեպքերը արձանագրված ընդամենը վտանգավոր երևույթների նկատմամբ, տոկոս	0	2019թ.	60	2020թ,	
	Արտադրական վտանգավոր օբյեկտների շահագործմամբ պայմանավորված		Տեխնածին վթարների և արտադրական պատահարների թվաքանակի կրճատման տեմպ, տոկոս	50	2019թ.	60	2020թ,	

	տեխնածին վթարների և դրանց հետևանքով հասարակությանը և տնտեսությանը պատճառվող վնասների ռիսկերի նվազեցումը	1028 Տեխնիկական անվտանգության կանոնակարգում	Տեխնածին վթարների և արտադրական պատահարների արդյունքում մահացու կամ ծանր ելքերով դեպքերի թիվ, հատ	8	2019թ.	8	2020թ,	իրազեկվածության ու կրթվածության մակարդակի բարձրացումը:
	Արտակարգ իրավիճակների և ճգնաժամային կառավարման կարողությունների զարգացում	1085 Արտակարգ իրավիճակների արձագանքման կարողությունների զարգացում	տեղեկացված և գիտակ բնակչության թվաքանակի աճ,տոկոս	5	2019թ.	10	2020թ.	
	Սեյսմիկ ռիսկերի գնահատում և նվազեցում	1089 Սեյսմիկ պաշտպանություն	Գնահատված օբյեկտների քանակի աճ, տոկոս	5	2019թ.	10	2020թ.	
	Արտակարգ իրավիճակների արդյունավետ արձագանք	1090 Փրկարարական ծառայություններ	Արտակարգ դեպքերի և պատահարների ընդհանուր ահազանգերին արձագանքման տոկոսը	89	2019թ.	92	2020թ.	
	Արտակարգ իրավիճակներում ռազմավարական	1107 Ռազմավարական նշանակության	Պետական պահուստների համակարգի կառավարման արդյունավետության		2019թ.		2020թ.	Պետական պահուստի արդյունավետ կառավարման նպատակով անհրաժեշտ է առավելագույնս իրականացնել

	նշանակության պաշարներով ապահովում	պաշարների կառավարում	ինքնագնահատական, 1-10 բալային համակարգ					նյութական արժեքների պետական պահուստի պահպանման թարմացման, սպասարկման ու արդիականացման համար ֆինանսական միջոցների ուղղորդման միջոցառումները: Վերջինիս արդյունավետ իրագործման նպատակով անհրաժեշտ է ներդնել կառավարման ճկուն մեխանիզմներ և ապահովել դրանց պարբերական կատարելագործումը՝ արդի մարտահրավերներին համահունչ:

5.11 ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՈԼՈՐՏԸ

ՀՀ արդարադատության նախարարությունը մշակում և իրականացնում է արդարադատության, այդ թվում՝ հարկադիր կատարման, քրեակատարողական, պրոբացիայի, սնանկության, փաստաբանության, հաշտարարության, նոտարական գործունեության, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման և հաշվառման, անհատ ձեռնարկատերերի հաշվառման, զանգվածային լրատվության միջոցների հաշվառման, անձնական տվյալների պաշտպանության, շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման, իրավական փորձաքննության, միջազգային իրավական փոխօգնության, հակակոռուպցիոն և պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակների գործունեության ոլորտներում Կառավարության քաղաքականությունը, ապահովում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարաններում Հայաստանի Հանրապետության շահերի պաշտպանությունը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Վերոնշյալ ոլորտների շրջանակներում նախարարությունը առանձնացնում է ոլորտային քաղաքականության հիմնական թիրախները և դրանք արտացոլում Կառավարության ծրագրում: Մասնավորապես՝ հիմնական թիրախային ուղղությունները տեղ են գտել Կառավարության միջոցառումների ցանկում: Առանձնացվել է դատահիրավական բնագավառը, որի զարգացման նպատակով իրականացվելու են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում առաջիկա 5 տարիների կտրվածքով իրականացվելիք իրավական և դատական բարեփոխումների պլանավորումը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը, Վճռաբեկ դատարանի վարչական պալատի ստեղծումը, Դատավորների թվակազմի ավելացումը, Դատավորների վարձատրության բարձրացումը, Կատարողական վարույթի բարեփոխումը, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության բարեփոխումը: Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվելու են մասնավորապես՝ Մարդու իրավունքների պաշտպանվածության և մարդու ազատ ստեղծագործելու, արժանապատիվ ու երջանիկ ապրելու համար նպաստավոր պայմանների ստեղծում, բոլորի՝ օրենքի առջև հավասարության երաշխավորում, խտրականությանդրսևորումների կանխում, ինչպես նաև հավասար իրավունքների իրագործում Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների առավել արդյունավետ պաշտպանություն, օրենսդրական երաշխիքների ամրագրում, անվճար իրավաբանական օգնության տրամադրման շրջանակների ընդլայնում: Կոռուպցիայի դեմ շարունակական պայքար լինելու է առաջնային, այդ թվում ապահովելով՝ **հանրային ծառայության մեջ գտնվող անձանց գործունեության գույքի և եկամուտների թափանցիկությունը, Տնտեսական գործունեության թափանցիկությունը: Միջոցառումներ են նախատեսված քրեաիրավական արդարադատության, անչափահասների արդարադատության և էլեկտրոնային արդարադատության ոլորտներում:**

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ոլորտային քաղաքականության թիրախների (վերջնական արդյունքների) ապահովման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում հիմնական ծախսային գերակայություններն են.

1.Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում, խորհրդատվության և մոնիտորինգի իրականացում, նախարարության գործունեության արդյունավետության, նպատակաուղղվության և բարձրացման, հանրությանը մատուցվող ծառայութունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումներ

2. Քրեակատարողական համակարգի կատարելագործում,քրեակատարողական հիմնարկների օպտիմալացում և արդիականացում, արտաքին աշխարհի հետ կապի ամրապնդման, պահման պայմանների բարելավման, դատապարտյալների վերահսկողություն՝ քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների կացության ապահովում

3.Քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատազրկվածներին բժշկական ծառայությամբ ապահովում, տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարձրացում

4. Պրոբացիայի ծառայության գործունեության արդյունավետության բարձրացում

5. Օրենսդրությամբ սահմանված դեպքերում քաղաքացիներին անվճար իրավաբանական ծառայությունների տրամադրում, անվճար իրավաբանական օգնության տրամադրման շրջանակների ընդլայնում

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ստորև ներկայացվում է արդարադատության ոլորտում 2020-2022 թվականների յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները.

2020 թվականի համար՝ 17,144,596.1 հազ. դրամ,

2021 թվականի համար՝ 17,230,568.7 հազ. դրամ,

2022 թվականի համար՝ 17,311,045.3 հազ. դրամ:

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԾՈՎ
ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Դասիչը	Ծրագիրը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետային ցուցանիշը	Ելակետային ժամկետ	Թիրախային ցուցանիշը	Թիրախային ժամկետը	
1057	Արդարադատության ոլորտում քաղաքականության, խորհրդատվության, մոնիտորինգի, գնման և աջակցության իրականացում	դատաիրավական բարեփոխումների ռազմավարությունից բխող կարճաժամկետ միջոցառումներ, տոկոս	50	2019	100	2020	դատավարական օրենսդրության կատարելագործում, վարչական իրավախախտումների համար պատասխանատվություն նախատեսող օրենսդրական կարգավորումների վերանայում, սահմանադրական դատարանի որոշումների և ՄԻԵԴ վճիռների պատշաճ կատարումն ապահովելու գործուն մեխանիզմների ներդրում, իրավահավասարության ապահովման վերաբերյալ համապարփակ օրենսդրության
		դատաիրավական բարեփոխումների ռազմավարության մշակում /երկարաժամկետ միջոցառումներ/ տոկոս	0	2019	100	2023	

		իրավաբանական անձանց պետական գրանցման և հաշվառման տվյալների հարապարակայնացում, տոկոս	0	2019	100	2020	ներկայացում
		կոռուպցիայի ընկալման համաթվի աստիճանական նվազեցում					
1052	Քաղաքացիական կացության ակտերի գրանցում	Վկայականների և տեղեկանքների տրամադրման ավտոմոտացման մակարդակը, տոկոս	100		100		քաղաքացիներին տրամադրվող տեղեկատվության և ծառայությունների որակի բարելավում
		Արխիվային ակտային գրանցումների թվայնացում,տոկոս	5	2019	100	2039	պետական կառավարման մարմինների կողմից տնօրինվող տեղեկատվության թվայնացման, միասնական և համապարփակ տեղեկատվական շտեմարանների ձևավորում

1093	Դատական և հանրային պաշտպանություն	Հանրային պաշտպանի ծառայությունների վերաբերյալ շահառուների գոհունակության գնահատական (1-4 բալային համակարգ)*	4	2019	4	2020	Օրենքի առջև բոլորի հավասարություն, արդարադատությունը և մարդու իրավունքների պաշտպանություն
1120	Քրեակատարողական ծառայություններ	Կալանավորվածների և դատապարտյալների անձնական և մշակութային, կրթական ու հոգևոր զարգացման պատշաճ պայմանների ապահովում, սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների կազմակերպում,տոկոս	75	2019	80	2020	վերականգնողական արդարադատության սկզբունքների արմատավորում, ազատությունից զրկված անձանց իրավունքների անխոչընդոտ իրացում, ազատազրկման ավանդական գաղափարախոսությունից անցում դեպի վերասոցիալականացման և վերականգնողական արդարադատության գաղափարախոսության, ազատությունից զրկված անձանց վերասոցիալականացման գործընթացի արդյունավետության բարձրացում
		Կալանավորվածների և դատապարտյալների զբաղվածության ապահովում, տոկոս	30	2019	35	2020	
1123	Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում	Հանրության իրավական իրազեկվածության մակարդակի բարձրացում, տոկոս					իրազեկվածության ու կրթվածության մակարդակի բարձրացում

1149	Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում	Արդարադատության համակարգի վերապատրաստված աշխատակիցների տեսակարար կշիռը, տոկոս	30	2019	30	2020	անկախ, արհեստավարժներով հագեցած և արդյունավետ դատական համակարգ,ազատությունից զրկված անձանց վերասոցիալականացման գործընթացի արդյունավետության
1182	Հարկադիր կատարման ծառայություններ	Կարճված կատարողական վարույթների քանակի փոփոխությունը, տոկոս	29.2	2019	29.2	2020	հարկադիր կատարման ոլորտում բարեփոխումներ՝ ուղղված պարտադիր կատարման ենթակա ակտերի հարկադիր կատարումը՝ սահմանված պահանջների պահպանմամբ, արդյունավետ, համաչափորեն, սեղմ ժամկետներում և կողմերի իրավունքների ապահովմամբ, իրականացնելուն
		Ավարտված կատարողական վարույթների քանակի փոփոխությունը, տոկոս	50	2019	50	2020	

5.12 ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՈԼՈՐՏԸ

Արտաքին քաղաքականության ոլորտ.

Արտաքին գործերի նախարարությունը մշակում և իրականացնում է արտաքին գործերի, դիվանագիտական ծառայության, միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերի և իրավունքների ներկայացման, օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության, Հայաստանի Հանրապետության միջազգային իրավապայմանագրային հարաբերությունների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ դիվանագիտական կամ հյուպատոսական հարաբերությունների իրականացման, համաշխարհային քաղաքական և տնտեսական իրադրության, օտարերկրյա պետությունների արտաքին ու ներքին քաղաքականության, միջազգային կազմակերպությունների գործունեության վերլուծության հիման վրա համապատասխան առաջարկությունների ներկայացման, համաշխարհային և տարածաշրջանային հիմնախնդիրների լուծման գործում Հայաստանի Հանրապետության դերի բարձրացման, Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգի ապահովման, պետական մարմիններին իրենց գործունեության համար արտաքին քաղաքականության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը: »[31]:

Հատումը այլ ոլորտների հետ՝ պաշտպանության և անվտանգության, տնտեսական զարգացման և ներդրումների, սփյուռքի հետ կապերի, ֆինանսավարկային, կրթության, գիտության և մշակույթի:

[31] «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենք, 23-ը մարտի 2018 թ.,

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (8 փետրվարի, 2019 թվական, որոշում N 65–Ա) ՀՀ արտաքին քաղաքականությունն ուղղված է ՀՀ ինքնիշխանության պաշտպանությանը, Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովմանը, Հայաստանի միջազգային հեղինակության բարձրացմանը, բոլոր պետությունների հետ փոխշահավետ և և իրավահավասար հարաբերությունների շարունակական զարգացմանը, միջազգային և տարածաշրջանային գործընթացներին Հայաստանի ներգրավվածության ավելացմանը, երկկողմ և բազմակողմ ձևաչափերում համագործակցության խորացմանը՝ Հայաստանի կայուն զարգացմանը և տնտեսության արդիականացմանը, նոր շուկաներ մուտքի ապահովմանը, դեպի Հայաստան և Արցախ օտարերկրյա ներդրումների ավելացմանը:

Համաձայն կառավարության ծրագրի և նրանից բխող հնգամյա միջոցառումների ցանկի՝ ՀՀ ԱԳՆ գործունեության նպատակներն ու հիմնական թիրախներն են՝

- ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափում ղարաբաղյան խնդրի բացառապես խաղաղ կարգավորումը՝ հիմնված միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մասնավորապես՝ ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի վրա: Արցախի կարգավիճակը և անվտանգությունը բանակցային գործընթացում առաջնային գերակայություններ են:
- Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում և դատապարտում:
- Երկկողմ և բազմակողմ կապերի ակտիվացում՝ ելնելով Հայաստանի տնտեսական զարգացման օրակարգից. աշխատանք նպատակաուղղված օտարերկրյա ուղղակի ներդրումների աճին, միջազգային լավագույն օրինակների և փորձի փոխառմանը, հայրենական արտադրանքի համար նոր շուկաների բացահայտմանը և արտահանման ավելացմանը, դեպի Հայաստան զբոսաշրջության խթանմանը, սփյուռքի գործարար ներուժի լիարժեք ներգրավմանը, միջազգային տնտեսական ինտեգրացիոն կառույցների շրջանակում ՀՀ տնտեսական շահերի առաջմղմանը:

• Հայաստանում և միջազգային ասպարեզում ժողովրդավարական կառույցների առավել ամրապնդում, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության, իրավունքի գերակայության և արդյունավետ կառավարման բնագավառներում միջազգային կազմակերպությունների և կառույցների հետ սերտ համագործակցություն:

• Ակտիվ մասնակցություն գլոբալ խաղաղության և անվտանգության ապահովման ուղղությամբ միջազգային հանրության ջանքերին, այդ թվում՝ չտարածման և սպառազինությունների վերահսկման, ահաբեկչության և անդրազգային սպառնալիքների դեմ պայքարի, միջազգային խաղաղության ամրապնդմանն ուղղված գործողությունների շրջանակում:

• Ցեղասպանության և մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելմանն ուղղված ակտիվ գործունեություն միջազգային ասպարեզում, այդ թվում՝ էթնիկ, կրոնական, ռասայական հողի վրա խտրականության և անհանդուրժողականության դեմ պայքարի ուղղությամբ:

• Հայ ժողովրդի ինքնության պահպանման, քաղաքակրթական արժեքների և ժառանգության պաշտպանություն և հանրահռչակում:

• Օտարերկրյա պետություններում Հայաստանի քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու շահերի պաշտպանություն: Արտակարգ իրավիճակներում հայտնված հայրենակիցներին աջակցության ցուցաբերում:

• Համագործակցության բազմակողմ ձևաչափերում.

- Եվրասիական տնտեսական միությանը և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը Հայաստանի անդամակցության արդյունավետության բարձրացում,

- ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում, ԵԽ-ում և միջազգային այլ կառույցներում Հայաստանի առավել ակտիվ ներգրավվածություն,

- ԱՊՀ շրջանակներում համագործակցությանն ակտիվ մասնակցություն: ԱՊՀ երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացում,

- ՆԱՏՕ-ի հետ քաղաքական երկխոսության շարունակում, Անհատական գործընկերության ծրագրի հետևողական իրագործում,

- Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությանը Հայաստանի ներգրավվածության խորացում, ՖՄԿ –ում Հայաստանի նախագահության բարձր մակարդակի իրականացում:

• Երկկողմ հարաբերություններում.

- Ռուսաստանի Դաշնության հետ ամենատարբեր բնագավառներում ռազմավարական-դաշնակցային հարաբերությունների զարգացում,
- ԱՄՆ-ի հետ տարբեր ոլորտներում բարեկամական գործընկերության հետևողական ամրապնդում և խորացում,
- Եվրոպական երկրների հետ բարեկամական և գործընկերական հարաբերությունների խորացում և ընդլայնում: ԵՄ-ի հետ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ամբողջական կիրարկում,
- Իրանի և Վրաստանի հետ առանձնահատուկ բարիդրացիական հարաբերությունների զարգացում՝ փորձելով դրանք զերծ պահել աշխարհաքաղաքական գործընթացների ազդեցությունից,
- Չինաստանի հետ բարեկամական հարաբերություններին բնորոշ բազմաոլորտ լայն համագործակցության զարգացում,
- Հնդկաստանի և Ճապոնիայի հետ բարեկամական և փոխշահավետ փոխգործակցության զարգացում և խորացում,
- Փոխգործակցության ընդլայնում Մերձավոր Արեւելքի գործընկեր երկրների հետ,
- Համագործակցության զարգացում Ամերիկայի, Ասիայի, Աֆրիկայի եւ Օվկիանիայի պետությունների հետ:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ արտաքին գործերի նախարարության ծախսային գերակայություններն են.

• ՀՀ կառավարության արտաքին քաղաքականության մշակումը և իրականացումը,

- ՀՀ դիվանագիտական և հյուպատոսական ծառայության կազմակերպումը և ղեկավարումը,
- անդամակցությունը միջազգային կառույցներին (համագործակցությունն այլ ձևաչափերով), դրանից բխող պարտավորությունների կատարումը,
- միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատումը և զարգացումը,
- Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգի ապահովումը,
- Դիվանագիտական կադրերի պատրաստումը, և վերապատրաստումը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Արտաքին քաղաքականության ոլորտային թիրախների (վերջնական արդյունքների) ապահովման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում Արտաքին գործերի նախարարության կողմից իրականացվում են հետևյալ ընդհանուր ծախսերը՝

2020 թվական՝ 15,532,193.7 հազ. դրամ:

2021 թվական՝ 15,697,828.5 հազ. դրամ:

2022 թվական՝ 15,894,143.0 հազ. դրամ:

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
Դիվանագիտական և պետական ծառայության արդյունավետության բարձրացում	1050 Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում	Դիվանագիտական ծառայության համալրում նոր և որակյալ մասնագետներով, պետական ծառայության, այդ թվում՝ դիվանագիտական ծառայողների վերապատրաստում, մասնակիցների քանակ, մարդ	66	2018թ.	65	2020թ.	ՀՀ կառավարության ծրագիր 2019թ. 4.4 Կրթությունը և գիտությունը «Առանցքային են կրթության բովանդակության արդիականացումը՝ ուղղված կրթություն-գիտություն-աշխատաշուկա կապի ամրապնդմանը:»

ՀՀ ինքնիշխանության պաշտպանություն, Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովում, ՀՀ միջազգային հեղինակության բարձրացում, ՀՀ կայուն զարգացմանն ուղղված միջազգային և տարածաշրջանային համագործակցություն	1061 Արտաքին գործերի ոլորտում Կառավարության քաղաքականության մշակում և իրականացում	ՀՀ միջազգային երկկողմ հարաբերությունների ընդլայնում. ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատած օտարերկրյա պետությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների քանակ, հատ	176	2018թ.	178	2020թ.	ՀՀ կառավարության ծրագիր 2019թ. 2.3 Արտաքին քաղաքականությունը «Կառավարության արտաքին քաղաքականությունը նպատակաուղղված է ՀՀ ինքնիշխանության պաշտպանությանը, Հայաստանի և Արցախի անվտանգության

		ՀՀ միջազգային բազմակողմ հարաբերությունների ընդլայնում. միջազգային կազմակերպությունների քանակ, որոնց ՀՀ-ը անդամակցում է կամ այլ կարգավիճակով՝ փոխգործակցում, հատ	97	2018թ.	114	2020թ.	ապահովմանը, Հայաստանի միջազգային հեղինակության բարձրացմանը, բոլոր պետությունների հետ փոխշահավետ և իրավահավասար հարաբերությունների զարգացմանը, միջազգային և տարածաշրջանային գործընթացներին Հայաստանի ներգրավվածության ավելացմանը, երկկողմ և բազմակողմ ձևաչափերում համագործակցության խորացմանը, Հայաստանի կայուն զարգացմանը և տնտեսության արդիականացմանը, նոր շուկաներ մուտքի ապահովմանը և դեպի Հայաստան ու Արցախ օտարերկրյա ներդրումների ավելացմանը:»

	1118 Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ	Անդամակցվող միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ մասնագիտացված մարմինների, ծրագրերի և կոնվենցիաների թվաքանակ, հատ	98	2018թ.	101	2020թ.	ՀՀ կառավարության ծրագիր 2019թ. 2.3 Արտաքին քաղաքականությունը «Կայուն զարգացմանն ուղղված միջազգային և տարածաշրջանային համագործակցություն»
	1128 Օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության կազմակերպում և իրականացում	Օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններ (բացառությամբ մասնագիտացված միջազգային կազմակերպություններում ՀՀ ներկայացուցիչների և ներկայացուցչությունների), հատ	58	2018թ.	62	2020թ.	ՀՀ կառավարության ծրագիր 2019թ. 2.3 Արտաքին քաղաքականությունը «Բոլոր պետությունների հետ փոխշահավետ և իրավահավասար հարաբերությունների շարունակական զարգացում»

Հայաստանի Հանրապետության բարձր մակարդակի ներկայացուցչականության ապահովում	1178 Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացում	Արարողակարգային միջոցառումների կազմակերպման և իրականացման որակի ԱԳՆ գնահատական, 1-ից 10 բալային համակարգում	10	2018թ.	10	2020թ.	

5.13 ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՈԼՈՐՏԸ

ՀՀ ֆինանսների նախարարությունը մշակում և իրականացնում է պետության եկամուտների ձևավորման, պետական ֆինանսների կառավարման բնագավառներում ՀՀ կառավարության քաղաքականությունը: ՀՀ ֆինանսների նախարարության հիմնական խնդիրներներն են հանրային ֆինանսների կառավարման ոլորտներում կառավարության միասնական պետական քաղաքականության ապահովումը, պետական ֆինանսների և պետական պարտքի արդյունավետ կառավարումը, հարկաբյուջետային քաղաքականության մշակումը և իրականացման ապահովումը, ներառյալ՝ բյուջետային գործընթացի կառավարումը, պետական գնումների արդյունավետության բարձրացմանն ուղղված շարունակական բարեփոխումների իրականացումը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

«Հանրային ֆինանսների կառավարման բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի նպատակն է հարկաբյուջետային քաղաքականության մշակումը և իրականացման ապահովումը, հանրային ֆինանսների արդյունավետ կառավարումը: Ծրագրի գծով 2020-2022թթ. համար սահմանվել են հետևյալ թիրախային ցուցանիշներ:

Դրանք են.

Չափորոշիչը	Ցուցանիշի մակարդակը
Հարկաբյուջետային ազդակ	1.6
Կառավարության պարտք/ՀՆԱ (100000 մարդու հաշվով), տոկոս	1.68
Կապիտալ ծախս (առանց ՌԴ վարկի)/ՀՆԱ (100000 մարդու հաշվով), տոկոս	0.23
Fitch-ի սուվերեն վարկունակության երկարաժամկետ միջազգային վարկանիշ	BB- կայուն հեռանկարով
Moody's-ի սուվերեն վարկունակության երկարաժամկետ միջազգային վարկանիշ	Ba- կայուն հեռանկարով

«Պետական պարտքի կառավարում» ծրագրի նպատակն է կառավարության ֆինանսական կարիքների բավարարման մշտական հնարավորության ապահովումը՝ երկարաժամկետ հատվածում նվազեցնելով պարտքի սպասարկման մեծությունը: Ծրագրի վերջնական արդյունքն է կառավարության պարտքի օպտիմալ կառուցվածքի ձևավորումը՝ հաշվի առնելով պոտենցիալ ռիսկերը:

«Պետական պարտքի կառավարում» ծրագրի գծով 2020-2022թթ. համար սահմանվել են հինգ թիրախային ցուցանիշներ, որոնք բխում են կառավարության պարտքի կառավարման 2020-

2022թթ. միջնաժամկետ ռազմավարական ծրագրից: Դրանք են.

Չափորոշիչը	**Ցուցանիշի մակարդակը (2022թ.)**
ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը,	8-11 տարի
Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին)	20 տոկոս
ՀՀ կառավարության ֆիքսված տոկոսադրույքով պարտքի նվազագույն կշիռն ընդամենը պարտքի մեջ	80 տոկոս
ՀՀ կառավարության ներքին պարտքի նվազագույն կշիռն ընդամենը պարտքի մեջ	20 տոկոս
ՀՀ կառավարության ՀՀ դրամով ներգրավված պարտքի նվազագույն կշիռն ընդամենը պարտքի մեջ	20 տոկոս

«Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստում» ծրագրի նպատակն է հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների աշխատանքի արդյունավետության բարելավումը, հանրային ֆինանսների կառավարման նոր գիտելիքների և փորձի յուրացումը: Նախատեսվում է,որ ծրագրի շրջանակներում շարունակական վերապատրաստում կանցնեն և արդյունքում կապահովվի որակավորված ներքին աուդիտորների, ֆինանսական և ծրագրային մասնագետների, ինչպես նաև գնումների համակարգողների ամբողջական ընդգրկվածություն համապատասխան վերապատրաստման միջոցառումներում:

«Գնումների գործընթացի կարգավորում և համակարգում» ծրագրի նպատակն է հանրային միջոցների ծախսման արդյունավետության բարձրացումը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը: Ծրագրի գծով 2020-2022թթ. համար սահմանվել են հետևյալ թիրախային ցուցանիշներ որոնք բխում են կառավարության ՀՀ կառավարության ծրագրից (գլուխ 8.2):

Չափորոշիչը	**Ցուցանիշի մակարդակը (2022թ.)**
Պետական բյուջետային, ինչպես նաև արտաբյուջետային միջոցների հաշվին մրցակցային եղանակով (բացառությամբ երկփուլ մրցույթի) գնման ընթացակարգերի իրականացում էլեկտրոնային համակարգով, տոկոս	100
Մրցակցային ընթացակարգերով կատարվող պետական գնումների ծավալ	47
Գնումների մրցույթների մասնակիցների միջին թիվ, իրավաբանական անձ	5

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԺԾԾ ժամանակահատվածում հիմնական ծախսային գերակայություններն են.

1. Սահմանված ժամանակահատվածում, ինչպես նաև նախորդող և հաջորդող տարիներին թիրախային նպատակը համարվում է առկա վարկանիշի բարելավումը՝ միջազգային հարթակում տնտեսական վարկանիշի դիրքի ամրապնդման համար, ինչը իր հերթին թե՛ միջազգային ներդրողների և թե՛ դոնոր ընկերությունների համար արտացոլում է հուսալի և գրավիչ բիզնես միջավայրի ստեղծում
2. Ավելացնել փոխառու միջոցների հաշվին պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորման կառուցվածքում ներքին աղբյուրներից ներգրավվող փոխառությունների ծավալը և կշիռը: Նախատեսվում է, որ 2022թ. ֆինանսավորման զուտ ծավալը կկազմի 130 մլրդ դրամ (2018թ. 48 մլրդ դրամի դիմաց), իսկ կշիռը՝ 55% (2018թ. 36%-ի դիմաց)
3. Շարունակել միջազգային ֆինանսական շուկայի մասնակիցների հետ տարվող աշխատանքները:
4. Արտաքին աղբյուրներից ներգրավող վարկերի հաշվին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման կառուցվածքում նվազեցնել բյուջետային աջակցության վարկերի ծավալը (հրաժարվելով դրանցից սկսած 2021 թվականից)՝ նախապատվությունը տալով առավել բարենպաստ պայմաններով տրամադրվող և ենթակառուցվածքմերի զարգացմանը ուղղված ծրագրային վարկերին:
5. Բարեփոխումների պահանջներին համապատասխանող կարողություններով հանրային հատվածի ֆինանսական և բյուջետային գործընթացում ներգրավված մասնագետների կարողությունների զարգացում:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ստորև ներկայացված են ֆինանսների բնագավառի 2020-2022թթ. յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները.

2020 թվականի համար՝	186,999,057.5. հազար դրամ,
2021 թվականի համար՝	192,815,091.3 հազար դրամ,
2022 թվականի համար՝	211,182,108.3 հազար դրամ:

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
		Հարկաբյուջետային ազդակ	-2.3	2018թ	1.6	2020թ	
		Կառավարության պարտք/ՀՆԱ (100000 մարդու հաշվով), տոկոս	1.73	2018թ	1.68	2023թ	
Հարկաբյուջետային քաղաքականության մշակում և իրականացման ապահովում, հանրային ֆինանսների արդյունավետ կառավարում	1108 Հանրային ֆինանսների կառավարման բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	Կապիտալ ծախս (առանց ՌԴ վարկի)/ՀՆԱ (100000 մարդու հաշվով), տոկոս	0.09	2018թ	0.23	2022թ	
		Fitch-ի սուվերեն վարկունակության երկարաժամկետ միջազգային վարկանիշ	B+դրական հեռանկարով	2018թ.հուլիս	BB- կայուն հեռանկարով	2025թ.	

		Moody's-ի սուվերեն վարկունակության երկարաժամկետ միջազգային վարկանիշ	B1 դրական հեռանկարով	2018թ.հուլիս	Ba- կայուն հեռանկարով	2025թ.	
Կառավարության ֆինանսական կարիքների բավարարման մշտական հնարավորության ապահովումը՝ երկարաժամկետ հատվածում նվազեցնելով պարտքի սպասարկման մեծությունը,	1006 Պետական պարտքի կառավարում	ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի	8.7	2018թ	8-11	2022թ	-
		Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին), տոկոս	12.9	2018թ	20	2022թ	-
		ՀՀ կառավարության ֆիքսված տոկոսադրույքով պարտքի նվազագույն կշիռն ընդամենը պարտքի մեջ, տոկոս	85	2018թ	80	2022թ	-

		ՀՀ կառավարության ներքին պարտքի նվազագույն կշիռն ընդամենը պարտքի մեջ, տոկոս	21.8	2018թ	20	2022թ	-
		ՀՀ կառավարության ՀՀ դրամով ներգրավված պարտքի նվազագույն կշիռն ընդամենը պարտքի մեջ, տոկոս	19.1	2018թ	20	2022թ	-
Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների աշխատանքի արդյունավետության բարելավում, հանրային ֆինանսների կառավարման նոր	1031 Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստում	Մասնագիտական վերապատրաստում անցած որակավորված ներքին աուդիտորների թիվը	240	2018թ.	280	2022թ.	«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետ ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի օգոստոսի 21-ի «Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման կարգը հաստատելու մասին» N 541-Ն հրաման

գիտելիքների և փորձի յուրացում							ՀՀ կառավարության 18/02/2016թ. նիստի N 6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ՊՖԿ համակարգի բարեփոխումների 2016-2020թթ իրականացվելիք գործողությունների ծրագրի 4.2.1 բաղադրիչ

		Ծրագրային բյուջետավորման վերապատրաստում անցած ֆինանսական և ծրագրային մասնագետների թիվ, մարդ	300	2019թ.	350	2022թ.	1. ՀՀ Կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի նիստի <<Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման հմակարգի ամբողջական ներդրման ռազմավարությանը հավանություն տալու մասին>> N 38 արձանագրային որոշում, 2. ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի N 442-Ն որոշման հավելված (կետ 29.3) 3. ՀՀ կառավարության 2010թ. հոկտեմբերի 28-ի նիստի N 42 արձանագրային որոշման Հավելված 1(կետ 9)

							1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ
		Մասնագիտական վերապատրաստում անցած գնումների համակարգողների թիվը ընդամենը	257	2018թ.	510	2019թ.	2. ՀՀ Կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի <<Գնումների համակարգողների որակավորման շնորհման և նրանց շարունակական վերապատրաստման կարգը հաստատելու մասին>> N 759 որոշում

Հանրային միջոցների ծախսման արդյունավետության բարձրացում և կոռուպցիոն ռիսկերի նվազեցում	1137 Գնումների գործընթացի կարգավորում և համակարգում	Պետական բյուջետային, ինչպես նաև արտաբյուջետային միջոցների հաշվին մրցակցային եղանակով (բացառությամբ երկփուլ մրցույթի) գնման ընթացակարգերի իրականացում էլեկտրոնային համակարգով, տոկոս	100	2018թ.	100	2022թ.	ՀՀ կառավարության ծրագիր գլուխ 8.2. ՊԵՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ Ծախսային քաղաքականության արդյունավետության բարձրացման գործում կարևորվելու են նաև պետական գնումների բարեփոխումները: Մասնավորապես, ներդրվելու է պետական գնումների արդար և թափանցիկ էլեկտրոնային համակարգ: Օրենսդրորեն ամրագրվելու են ապրանքների և ծառայությունների նկարագրման միասնական և չափելի ստանդարտներ: Էլեկտրոնային եղանակով մշտադիտարկվելու է ապրանքների և ծառայությունների՝ սահմանված ժամկետներում, նախանշված որակով և կարգով մատակարարումը: Շեղումների դեպքում արձանագրված խնդիրների

		Մրցակցային ընթացակարգերով կատարվող պետական գնումների ծավալ	45	2018թ.	47	2022թ.	հիման վրա շարունակաբար կատարելագործվելու է օրենսդրական դաշտը՝ անհրաժեշտ փոփոխություններն արտացոլելով նաև գնումների էլեկտրոնային համակարգով:
		Գնումների մրցույթների մասնակիցների միջին թիվ, իրավաբանական անձ	5	2018թ.	5	2022թ.	

5.14 ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

ՈԼՈՐՏԸ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ընդգրկում է ՀՀ հարկային և մաքսային մարմինները: Ոլորտի ընդգրկման շրջանակներն են.

• Հարկային և մաքսային միասնական պետական քաղաքականության իրականացում, հարկային և մաքսային օրենսդրության ամբողջական և համահավասար կիրառումը;
• ՀՀ ՊԵԿ-ի կողմից վերահսկվող՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների ապահովումը;
• Արդյունավետ հարկային և մաքսային հսկողության իրականացումը;
• ՀՀ տնտեսական անվտանգությանը նպաստումը;
• Հարկ վճարողների և արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների կողմից պարտավորությունների օրինաչափ և հարմարավետ կատարման նպատակով՝ ժամանակակից և մրցունակ համակարգերի միջոցով որակյալ ծառայությունների մատուցումը և սպասարկումը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Կառավարությունը համոզված է, որ հասարակության ու պետության կյանքի վրա ամենակործանարար ազդեցություն ունեցող երևույթներից մեկը կոռուպցիան է, հետևաբար կոռուպցիայի դեմ պայքարը հիմնական առաջնահերթություններից է, և այս պայքարում Կառավարությունը լինելու է վճռական, հաստատակամ, անզիջում և անհանդուրժող: Առանձնահատուկ կարևորվում է կոռուպցիան ծնող պատճառների վերհանմանը և դրանց վերացմանը միտված գործողությունների իրականացումը: Կառավարությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության ընձեռած հնարավորությունների սահմաններում անզիջում պայքար կմղի կոռուպցիայի դեմ՝ այս ընթացքում ակնկալելով լայն հանրային աջակցություն և համագործակցություն իրավապահ մարմինների հետ: Կոռուպցիան պետք է արժանանա լայն հանրային արգահատանքի: Ոչ թափանցիկ աղբյուրներից գույք ձեռք բերած պաշտոնյաները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատժին զուգահեռ, պետք է արժանանան հանրային արհամարհանքի և դատապարտման: Հակակոռուպցիոն պայքարի արդյունավետության համար անհրաժեշտ է երաշխավորել փոխզսպումների և հակակշիռների սկզբունքի կիրարկումը, հնարավորինս նվազեցնել օրենսդրական կարգավորումներում երկակի մոտեցումներ կիրառելու հնարավորությունները, ինչպես նաև ներդնել նոր գործիքակազմ: Ընդ որում, պայքարը պետք է իրականացվի ինչպես ռազմավարական միջոցառումների իրականացմամբ, այնպես էլ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի զարգացման և վերափոխման միջոցով: Էական նշանակություն կարող են ունենալ նաև տարբեր ոլորտների իրավական կարգավորումների պարզեցումը և հստակեցումը:

Հայաստանից ապօրինի դուրս բերված ակտիվները վերադարձնելու նպատակով Կառավարությունը մտադիր է վերանայել ակտիվների վերադարձի ինստիտուտի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը և ամրապնդել միջազգային համագործակցությունը:

1.Ստվերային տնտեսության կրճատմանն ու մրցունակ բիզնես միջավայրի ձևավորմանն ուղղված հարկային քաղաքականությունը: Պետության կողմից իրականացվող հարկային քաղաքականությունը պետք է ուղղվի տնտեսության ներդրումային գրավչության բարձրացմանն ու տնտեսական ակտիվության մակարդակի բարելավմանը՝ դրանով իսկ ստեղծելով կայուն նախադրյալներ՝ արտահանման և երկարաժամկետ տնտեսական աճի, հանրային բարիքի վերաբաշխման և հարկաբյուջետային կայունության ամրապնդման համար: Այս նպատակների իրականացման տեսանկյունից կարևորվելու է ներդրողների համար արդար, ընկալելի և կանխատեսելի միջավայրի ձևավորումը:

2. Կառավարությունը երկարաժամկետ տնտեսական աճին նպաստելու նպատակով իրականացնելու է ուղղակի հարկերի բեռի նվազեցում՝ ի հաշիվ անուղղակի հարկերի: Այսպիսի քաղաքականությունը թույլ կտա բարձրացնել տնտեսության մրցունակությունը: Ըստ այդմ՝ հեռանկարային զարգացման տեսանկյունից կարևոր՝ արտահանելի հատվածում կաճեն շահութաբերությունը և ներդրումների իրականացման խթանները: Մասնավորապես, Կառավարությունն իջեցնելու է շահութահարկի դրույքաչափը, սահմանելու է եկամտային հարկի համահարթ դրույքաչափ՝ աստիճանաբար իջեցնելով այն, օտարերկրացի ֆիզիկական անձանց շահաբաժինները հարկվելու են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների շահաբաժինների հարկման միևնույն՝ ավելի ցածր դրույքաչափերով, աստիճանաբար բարձրացվելու են ակցիզային հարկի դրույքաչափերը:

3.Արդարացի հարկման նպատակով ձեռնարկվելու են քայլեր հարկային բեռը դեպի «վճարունակ հարկ վճարողներ» տեղափոխելու ուղղությամբ, մասնավորապես սահմանվելու են անշարժ գույքի հարկը գույքի իրական՝ շուկայական արժեքի հիման վրա հաշվարկելու ընթացակարգեր, միաժամանակ սահմանվելու է հավաքագրումների նկատմամբ հանրային հսկողության առցանց գործիքակազմ՝ ուղղված սոցիալական արդարության վերականգնմանը:

4.Միջազգային առևտրատնտեսական հարաբերությունները զարգացնելու նպատակով Կառավարությունն ընդլայնելու է կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի աշխարհագրությունը: Երկրի ներսում ձևավորվող հարկման բազաների պաշտպանության նպատակով ներդրվելու են տրանսֆերային գնագոյացման կարգավորումներ և հարկման նպատակով տեղեկատվության փոխանակման համակարգեր:

5.Հարկային քաղաքականությանը զուգահեռ՝ հարկային համակարգի վարչարարության պարզեցման միջոցով Կառավարությունը պետք է նպաստի ստվերի կրճատմանը և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների

գեներացմանը՝ առանց հավելյալ խոչընդոտներ ստեղծելու տնտեսական գործունեության իրականացման համար: Այս նպատակների իրագործման համար Կառավարությունը, Հարկային օրենսգրքի բարելավմամբ, սահմանելու է ընկալելի և կանխատեսելի հարկային կանոններ, որոնք ներդրումային ծրագրերի, ծախսերի և եկամուտների տնօրինման գործընթացներում նպաստելու են արդյունավետ որոշումների կայացմանը:

6.Հարկային մարմինը պատմականորեն ընկալվում է որպես Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հարկային եկամուտներն ապահովող կամ հավաքագրող (հարկահավաք), որի խնդիրն է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հարկային մուտքերի ծրագրային ցուցանիշի՝ պլանի կատարումը, որն իրականում խնդրահարույց է հարկային մարմնի առաքելության տեսակետից:

7.Հարկային վարչարարության թիրախը պետք է լինի հարկ վճարողների կողմից հարկային պարտավորությունների՝ ամբողջ ծավալով և ժամանակին հայտարարագրման ու կատարման ապահովումը:

8.Կոռուպցիան և հարկային ստվերը համակարգային ռիսկեր են, որոնք ուղղակիորեն հակասում են պետության և հասարակության ընդհանրական շահերին ու խոչընդոտում են բնականոն զարգացումը: Հետևաբար, հարկային մարմինը պետք է գործի այնպես, որ հարկ վճարողները չկարողանան և չձգտեն թաքցնել հարկերը:

9.Հարկային մարմնի կողմից պետք է մատուցվեն որակյալ ծառայություններ և իրականում պետք է ապահովվի հարկային վարչարարության ոչ խտրական լինելը: Հարկային մարմինը չպետք է միջամտի օրինապահ հարկ վճարողների գործունեությանը՝ հաճախակի ստուգումներով կամ գերավճարներով ու կանխավճարներով ծանրաբեռնելով: Օրինապահ հարկ վճարողը պետք է չնկատի հարկային վարչարարությունը, թեև անգամ օրինապահները պետք է ենթարկվեն մշտադիտարկման, որպեսզի երաշխավորվի վերջիններիս օրինապահ լինելը:

10.Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ սոցիալական, քաղաքական կամ որևէ այլ պատճառաբանությամբ հարկ չվճարող և դրա հաշվին օգուտ ստացող յուրաքանչյուր ոք ընդամենն օրինախախտ է, իսկ մեղմ վարչարարությունը պետք է տարածվի բացառապես օրինապահ հարկ վճարողների վրա:

11.Հարկային մարմնի գործունեության արդյունքում հարկ վճարողները պետք է գիտակցեն, որ՝

– բացի պարտադիր լինելուց, հարկ վճարելը նաև պատվաբեր է.

– հարկ չվճարելը ձեռնտու չէ, քանի որ կիրառվող պատասխանատվության միջոցներն անխուսափելի, անհամաչափ խիստ և թանկ են.

– հարկ թաքցնող գործարարն օրինախախտ է և ենթարկվելու է պատասխանատվության.

– չկան երաշխավորման այնպիսի մեխանիզմներ կամ անձինք, որոնք օրինախախտ

հարկ վճարողին կապահովագրեն պատասխանատվության անխուսափելիությունից:

12.Այդպիսով կարմատավորվի հարկային պարտավորությունները կամավորության սկզբունքով կատարելու՝ հարկ վճարողների վարքագիծը:

13.Ստվերային շրջանառությունները կրճատելու համար առանձնակի կարևորվելու է տնտեսությունում բոլոր գործարքների լիարժեք փաստաթղթավորման ապահովումը, որը հնարավորություն կտա նաև լրացուցիչ եկամուտներ ապահովելու, ինչպես նաև նպաստելու հավասար մրցակցային պայմանների ձևավորմանը:

14.Մաքսային վարչարարության պարզեցմամբ սահմանվելու են միջազգային առևտրային հոսքերի գրավիչ պայմաններ: Էլեկտրոնային կամ ազդարարման այլ հարթակների կիրառմամբ գործարար համայնքը մշտապես իրազեկվելու է բարեփոխումների բովանդակության և Հայաստանի մրցակցային առավելությունների վերաբերյալ: Ներդրումային գրավչության բարձրացման նպատակով հնարավորին չափ պարզեցվելու է մաքսային սահմանի անցման գործընթացը, և նվազեցվելու է սահմանի անցման համար պահանջվող ժամանակը:

15.Այս առումով կարևորվում է <<Մեկ կանգառ, մեկ պատուհան>> համակարգի վերջնական ներդրումը՝ մաքսային սահմանի անցման կետերում իրականացվող գործընթացների բարելավման մասով: Նշված համակարգի ներդրմամբ արտաքին առևտրի ոլորտում ներկայացվող տեղեկատվությունն ամբողջությամբ լինելու է էլեկտրոնային եղանակով, իսկ այն տեղեկատվությունը, որն արդեն առկա է համակարգում, չի պահանջվելու մյուս պետական մարմինների իրականացրած գործառույթների համար:

16.Նշված քայլերով Կառավարությունը հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման և ստվերային տնտեսության կրճատման ճանապարհով նախատեսում է ապահովել հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճ առավելագույն հնարավորի սահմաններում:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ոլորտային քաղաքականության թիրախների (վերջնական արդյունքների) ապահովման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում ՀՀ ՊԵԿ-ի կողմից իրականացվող հիմնական ծրագրերը և միջամտության ուղղություններն են (ըստ գերակայությունների նվազման հաջորդականության).

1. ՀՀ հարկային և մաքսային մարմինների կողմից իրականացվող վարչարարություն՝ Հարկային և մաքսային քաղաքականության մշակումը, պլանավորումը, մոնիտորինգը, ծրագրերի համակարգումը, գանձման, վերահսկողության և աջակցության ծառայությունները նպաստում են ՀՀ-ում արդյունավետ հարկային և մաքսային վարչարարության իրականացմանը:

2. ՀՀ տնտեսվարող սուբյեկտներին ակցիզային դրոշմանիշներով և դրոշմապիտակներով ապահովում՝ ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար տնտեսվարող սուբյեկտներին ակցիզային դրոշմանիշերով ապահովման դերը էական է հարկային եկամուտների հավաքագրման տեսանկյունից: Ինչպես նաև «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի և Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի համաձայն պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար դրոշմապիտակների տրամադրումն ունի ռազմավարական նշանակություն հարկերի հավաքագրման և բյուջետային եկամուտների ապահովման տեսանկյունից:

3. ՀՀ ՊԵԿ կարիքների համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով ապահովում՝ Հարկային և մաքսային ծառայությունների համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով ապահովումը նպաստում է ՀՀ ՊԵԿ բնականոն գործունեության անխափան ընթացքին: Իսկ ռենտգենյան սարքավորումների կիրառումը կանխում է մաքսանենգության ցանկացած փորձ:

4. Փորձաքննությունների իրականացում և եզրակացությունների տրամադրում, անվճարունակ քաղաքացիներին իրավական ծառայությունների տրամադրում և հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստում՝ Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Համաձայն ՀՀ Սամանադրության իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին: Յուրաքանչյուր տարի հարկային և մաքսային ծառայողների առնվազն մեկ երրորդը ենթակա է պարտադիր վերապատրաստման: Վերջիններիս մասնագիտական որակների կատարելագործումը միմիայն կնպաստի առավել որակյալ կադրային ապահովվածության իրականացմանը և որակյալ ծառայությունների մատուցմանը հասարակությանը:

5. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային ապահովվածության և առկա պայմանների բարելավում՝ ՀՀ ՊԵԿ-ի նոր շենքերի և շինությունների շինարարությունը նպաստում է համակարգի գործունեության ընդլայնմանը, կապիտալ վերանորոգումը բարելավում է աշխատակիցների աշխատանքային պայմանները, իսկ ազատ տնտեսական գոտիների ընդլայնումը խթան է հանդիսանում ՀՀ-ում ներդրումային միջավայրի գրավչության բարձրացման համար:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ստորև ներկայացվում է պետական եկամուտների կոմիտեի 2020-2022 թվականների յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները.

2020 թվականի համար՝ 28,946,156.6 հազ. դրամ,

2021 թվականի համար՝ 29,955,656.0 հազ. դրամ,

2022 թվականի համար՝ 30,286,091.0 հազ. դրամ:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
Հարկային և մաքսային միասնական քաղաքականության իրականացում, հարկային և մաքսային օրենսդրության ամբողջական և համահավասար կիրառում:	1023			2018 թվական**		2025 թվական	ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019 թվականի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշման 8.1 կետով սահմանված հարկային համակարգի նպատակներն ու թիրախները:
	Հարկային և մաքսային ծառայություններ	Հարկային եկամուտների կշիռը ոչ գյուղատնտեսական ՀՆԱ-ում, տոկոս	24.2	2018 թվական	27.6	2025 թվական	
		Հարկային եկամուտների կշիռը ՀՆԱ-ում, տոկոս	20.9	2018 թվական	24.0	2025 թվական	
		Վարչարարության արդյունավետության գործակից*	1.39	2018 թվական	1.12	2025 թվական	

5.15 ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈԼՈՐՏԸ

ՀՀ հաշվեքննիչ պալատն արտաքին պետական հաշվեքննություն իրականացնող անկախ պետական մարմինն է:

Հաշվեքննիչ պալատի գործունեության նպատակը հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների և վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության վերաբերյալ Ազգային ժողովին և հանրությանը ժամանակին, մասնագիտական և անկողմնակալ տեղեկատվություն ներկայացնելն է:

Նշված նպատակի ապահովման համար հաշվեքննիչ պալատն իրականացնում է հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննություն (ստուգում) պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացված փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ:

Հաշվեքննության նպատակն է պարզել հաշվեքննության առարկայի օրինականության ու տնտեսման, նպատակային և ծախսային արդյունավետության սկզբունքների պահպանումը:

Հաշվեքննությունն իրականացվում է պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցներից ֆինանսավորվող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և հիմնարկներում: Իրավաբանական անձանց մոտ ստուգում իրականացվում է հատուկ դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Նկատի ունենալով սահմանադրորեն և օրենքով Հաշվեքննիչ պալատի անկախության համար սահմանված սկզբունքը, Հաշվեքննիչ պալատն ինքնուրույն է սահմանում իր հիմնական թիրախները, այնուամենայնիվ դրանք, ըստ էության, փոխկապակցված են հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում ՀՀ կառավարության հիմնական նպատակների և թիրախների հետ: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրում հստակ ընդգծված են հանրային ռեսուրսների կառավարման օրինականության և արդյունավետության,

օգտավետության և խնայողությամբ սկզբունքների պահպանման պահանջը, և այդ մասով Հաշվեքննիչ պալատը նպատակադրված է հաշվեքննությունների միջոցով պարզել հաշվեքննության առարկայի օրինականության ու տնտեսման, նպատակային և ծախսային արդյունավետության սկզբունքների պահպանումը:

Այդ նպատակով Հաշվեքննիչ պալատն, իր գործունեության տարեկան ծրագրի հիման վրա իրականացնում է ֆինանսական, համապատասխանության և կատարողականի հաշվեքննություններ, իսկ հաշվեքննության թիրախները սահմանվում են ռիսկերի գնահատման մեթոդաբանությամբ: Այս առումով Հաշվեքննիչ պալատի գերակայություններից է ավելացնել հաշվեքննության թիրախների քանակը, որի իրականացման համար անհրաժեշտ են լրացուցիչ ռեսուրսներ:

Հաշվեքննիչ պալատի ֆինանսական, հսկողության և կառավարչական գործընթացների հետ կապված ռիսկերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հաշվեքննիչ պալատը նպատակադրված է ներսում ներդնել և զարգացնել որակի կառավարման համակարգ, ինչի իրագործման համար նույնպես պետք է ներգրավվի լրացուցիչ ֆինանսական, մարդկային և նյութական ռեսուրսներ, ինչպես նաև պետք է բարձրացվի Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի մասնագիտական կարողությունները:

Նպատակային թիրախներն ապահովելու և ծրագիրը հաջող ավարտելու նպատակով Հաշվեքննիչ պալատը ձգտում է հասնել վերջնական արդյունքներին հետևյալ ուղղությունների սահմաններում.

- Արտաքին պետական հաշվեքննության ոլորտի վերաբերյալ ՀՀ օրենսդրության բարելավում՝ նկատի ունենալով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) ստանդարտներով սահմանված ֆինանսական, գործառնական և կազմակերպչական անկախության հարցերը (Կառավարության 2019թ. ծրագիր, էջ 6, 2-րդ մաս, 3-րդ կետ):
- Հաշվեքննության գործընթացի որակի բարձրացում՝ նկատի ունենալով նաև Հաշվեքննիչ պալատի SS ենթակառուցվածքների զարգացման հարցերը (Կառավարության 2019թ. ծրագիր, էջ 6, 2-րդ մաս, 3-րդ կետ):
- Ազգային ժողովի, կառավարության և այլ շահառուների հետ համագործակցության զարգացում՝ հատկապես նկատի ունենալով հաշվեքննությունից հետո տարվող աշխատանքները՝ follow-up գործընթաց (Կառավարության 2019թ. ծրագիր, էջ 68, 8.2.մաս, 2-րդ

պարբերություն):

- Հաշվեքննիչ պալատում մասնագիտական կարողությունների շարունակական զարգացում (Կառավարության 2019թ. ծրագիր, էջ 7, 3-րդ պարբերություն):

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվեքննության ոլորտային քաղաքականության թիրախների (վերջնական արդյունքների) ապահովման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում Հաշվեքննիչ պալատի համար գերակա համարվող ուղղություններն են.

- Արտաքին պետական հաշվեքննության ոլորտի վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը բարելավում:
- Հաշվեքննիչ պալատում մասնագիտական կարողությունների շարունակական զարգացում:
- Հաշվեքննության գործընթացի որակի բարձրացում՝ նկատի ունենալով նաև Հաշվեքննիչ պալատի SS ենթակառուցվածքների զարգացման հարցերը:
- Ազգային ժողովի, կառավարության և այլ շահառուների հետ համագործակցության զարգացում՝ հատկապես նկատի ունենալով հաշվեքննությունից հետո տարվող աշխատանքները (follow-up գործընթաց):

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

2020 թվականի համար՝ 1,135,506.3 հազ. դրամ:

2021 թվականի համար՝ 1,152,282.1 հազ. դրամ:

2022 թվականի համար՝ 1,172,036.2 հազ. դրամ:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության տարեկան ծրագրի կատարողականի ինքնագնահատական՝ Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության Հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական և համանքային բյուջեների միջոցների, ստացված փոխառությունների և վար-կերի,պետական և համանքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավ-ետության վերաբերյալ Ազգային ժողովին և հանրությանը ժամանակին,մասնագիտական և անկողմնակալ տեղեկատվություն ներկայացնելն է:	1161 Հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննություն	ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության տարեկան ծրագրի կատարողականը՝ Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) մեթոդաբանության հիման վրա (SAI PMF)	Գնահատականը 1-2 միջակայքում	2016թ.	Ակնկալվող գնահատականը 2-3 միջակայքում	2020թ.	ՀՀ կառավարության 2019թ.փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հաստատված կառա-վարության ծրագրում ընդգրկված են հանրային ռեսուրս-ների կառավարման օրինականության և արդյունավետության, օգտավետության և խնայողությամբ սկզբունքների պահ-պանման պահանջը՝ մասնավորապես էջ 6,2-րդ մաս,3-րդ կետ, էջ 68, 8.2 մաս, 2-րդ պարբերություն և էջ 7. 3-րդ պարբերություն:

5.16 ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՈԼՈՐՏԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) սահմանադրական կարգավիճակով օժտված անկախ պետական մարմին է, որը կազմակերպում է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ:

Հանձնաժողովի աշխատանքներն ուղղված են ընտրական գործընթացների պատշաճ կազմակերպմանն ու անցկացմանը, դրանց բարելավմանն ու կատարելագործմանը, ընտրական իրավունքի և ընտրական գործընթացների վերաբերյալ ուսուցումների և դասընթացների կազմակերպմանը, դասավանդման նոր մեթոդաբանության, ուսուցման նոր հարթակների մշակմանն ու ներդրմանը և ընտրական գործընթացների վերաբերյալ հանրային իրազեկման ապահովմանն ու ընդլայնմանը:

Վերոգրյալի ապահովման համար իրականացվում են վերլուծություններ, ուսումնասիրություններ, կազմակերպվում են Հանձնաժողովի անդամների և Հանձնաժողովի աշխատակիցների վերապատրաստումներ, անցկացվում են սեմինարներ, կոնֆերանսներ, ապահովվում են շփումներ շահագրգիռ մասնակիցների հետ (կուսակցությունների ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպություններ, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ, տարածքային ընտրական հանձնաժողովներ և այլն):

Հանձնաժողովը անդամակցում է Եվրոպայի ընտրական իշխանությունների ասոցիացիա (ACEEEO) կազմակերպությանը:

Հանձնաժողովը համագործակցել է՝

1) 2016-2017 թվականներին՝ Միավորված Ազգերի Զարգացման Ծրագիր «Աջակցություն ընտրական գործընթացին Հայաստանում» ծրագրի շրջանակներում

2) 2018-2020 թվականներին՝ Միավորված Ազգերի Զարգացման Ծրագիր «Հայաստանում ընտրական գործընթացի աջակցություն» ծրագրի շրջանակներում:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կանոնադրության համաձայն՝ Հանձնաժողովի նպատակն է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, ինչպես նաև հանրաքվեների կազմակերպումն ու անցկացումը:

Հանձնաժողովի խնդիրներն են՝

1) կազմակերպել և անցկացնել Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, ամփոփել արդյունքները,

2) կազմակերպել և անցկացնել հանրաքվեները, ամփոփել արդյունքները,

3) վերահսկողություն իրականացնել ընտրությունների և հանրաքվեների կազմակերպման և անցկացման օրինականության նկատմամբ:

Հանձնաժողովը համագործակցում է հասարակական կազմակերպությունների հետ՝ հաշվանդամություն ունեցող անձանց համար ընտրական գործընթացներն առավել մատչելի դարձնելու ուղղությամբ: Նշված աշխատանքները կնպաստեն նաև ՀՀ կառավարության ծրագրով սահմանված նպատակին, ըստ որի՝«վերահաստատելով հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված հետևողական ջանքերը՝ Կառավարությունը շարունակելու է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ բացառելու համար հաշմանդամության հիմքով խտրականությունը կյանքի բոլոր ոլորտներում», և ՀՀ կառավարության ծրագրով սահմանված՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանությանը և նրանց սոցիալական ներառման ապահովման խնդրի լուծմանը:

2016-2020 թվականների «Աջակցություն ընտրական գործընթացներին Հայաստանում» և «Հայաստանում ընտրական գործընթացների աջակցություն» ծրագրերի շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվել են ծրագրատեխնիկական միջոցներ:

Նախատեսվող և մշակման փուլում են գտնվում հեռահար ուսուցման, մասնագիտական դասընթացների անցկացման, ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումների (VAD) ռեեստրի վարման ավտոմատացված համակարգերը, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի Տվյալների կենտրոնի ծրագրատեխնիկական (սերվերային հավաքածու) միջոցների, դյուրակիր համակարգիչների (notebook) և

բազմաֆունկցիոնալ տպող սարքերի ձեռք բերման նախագիծը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ծախսային գերակայություններն են՝

1.Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության ապահովում և ընտրական ծրագրերի համակարգման, կազմակերպման, անցկացման, մոնիտորինգի ծառայություններ ընտրությունների կազմակերպման և անցկացման ծախսերը.

2.Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման

ծասխերը.

3 Ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպման ծախսերը.

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ոլորտային թիրախների (վերջնական արդյունքների) ապահովման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից իրականցվում են հետևյալ ընդհանուր ծախսերը

2020 թվականի համար՝ 1,157,826.3 հազ. դրամ,

2021 թվականի համար՝ 1,163,321.1 հազ. դրամ,

2022 թվականի համար՝ 1,168,898.3 հազ. դրամ:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
Օրինական և թափանցիկ ընտրական գործընթացների կազմակերպում և ապահովում	1096 - Ընտրական գործընթացների համակարգում, կանոնակարգում և տեղեկատվության տրամադրում	Ընտրությանը մասնակիցների թվաքանակ ընդամենը ընտրության իրավունք ունեցողների նկատմամբ, տոկոս	50	2019թ.	60	2022թ.	Հանձնաժողովը համագործակցում է հասարակական կազմակերպությունների հետ՝ հաշվանդամություն ունեցող անձանց համար ընտրական գործընթացներն առավել մատչելի դարձնելու ուղղությամբ: Նշված աշխատանքները կնպաստեն նաև ՀՀ կառավարության ծրագրով սահմանված՝ հաշվանդամություն ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանությանը և նրանց սոցիալական ներառման ապահովման խնդրի լուծմանը:
		ՀՀ ԿԸՀ որոշումների և գործողությունների դատական կարգով ոչ իրավաչափ ճանաչված դեպքերի քանակ, հատ	0	2019թ.	0	2022թ.	

		Ոլորտի կարգավորման վերաբերյալ հանրային գոհունակության գնահատական, 1-10 բալային համակարգում, (ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշպանության հարցերով զբաղվող նվազագույնը 30 հասարակական կազմակերպությունների շրջանում անցկացված հարցման արդյունքներով)	առկա չէ	2019թ.	7	2022թ.	

5.17 ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՈԼՈՐՏԸ

Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) սահմանված նպատակի համաձայն՝ տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում պետական քաղաքականություն իրականացնող մարմին է: Հանձնաժողովը համաձայն որդեգրված հրամայականի՝ ամրագրում է տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը, 2020-2022 թվականների ընթացքում իրականացվելիք մրցակցային քաղաքականության գերակա ուղղությունները, առկա հիմնախնդիրների հիման վրա սահմանում են ապրանքային շուկաներում մրցակցության խթանման համար անհրաժեշտ միջոցառումները, արդի պայմաններում մրցակցության խրախուսմանն ու զարգացմանն ուղղված կարգավորման մեխանիզմները: Հայաստանի Հանրապետությունում տնտեսական զարգացման բնագավառի հիմնական գերակա ուղղությունը շարունակում է մնալ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումն ու աջակցումը: Ծրագիրն ապահովում է Հանձանաժողովի 2019-2021 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի շարունակությունը: Ծրագրի մշակման համար իրավական հիմք են հանսդիսացել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (հոդված 8), Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրքը (հոդված 12), «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Հանձնաժողովը, համաձայն ծրագրային բյուջետավորման գործընթացի, յուրաքանչյուր տարի պարտավոր է իրականացնել լայն սպառման պարենային և ոչ պարենային հինգ շուկաների ուսումնասիրություններ, որի արդյունքում պետք է պարզի մրցակցային միջավայրին վերաբերող մի շարք ցուցանիշներ: Մասնավորապես, նախատեսվում է դիտարկել ապրանքային շուկաների կառուցվածքը, շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների մասնաբաժինները, չհայտարարագրված և արգելված համակենտրոնացման, գերիշխող դիրքի չարաշահման, հակամրցակցային համաձայնության կայացման, անբարեխիղճ մրցակցության դեպքերի, վարչական վարույթների

հարուցման, պատասխանատվության միջոցների կիրառման, Հանձաժողովի որոշումների բողոքարկման ցուցանիշները:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հանձնաժողովը պետք է ունենա ապարատի պահպանման ծախսերի բավարար ծավալ, որպեսզի կարողանա պատշաճ մակարդակով իրագործել ներկայացված ծրագրի դրույթները: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն հրավիրել աշխատակազմի աշխատանքի համար լիարժեք պայմանների ստեղծմանը, որը ներառում է ինչպես յուրաքանչյուր աշխատողի ժամանակակից, օպտիմալ շրջանակներում տեխնիկապես հագեցած, բարվոք աշխատանքային պայմանների և աշխատատեղերի ստեղծումը, այնպես էլ ներքին և արտաքին ցանցերով իրական տեղեկատվական բազայով և տեղեկատվական կենտրոնով ապահովումը:

Աշխատակիցների կողմից շահագործվող համակարգչային տեխնիկայի խմբաքանակները, ինչպես նաև կահույքը, մաշվել են և ֆիզիկապես, և բարոյապես, այդ իսկ պատճառով խիստ անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու ժամանակակից սերնդի համակարգչային տեխնիկա, գրասենյակային բազկաթոռներ և այլ կահույք:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ոլորտային թիրախների (վերջնական արդյունքի) ապահովման նպատակով 2020-2022թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով Հանձնաժողովի կողմից կանխատեսվում է իրականացնել հետևյալ ընդհանուր ծախսերը.

2020 թվականի համար՝ 403,303.9 հազ. դրամ,

2021 թվականի համար՝ 410,960.2 հազ. դրամ,

2022 թվականի համար՝ 417,041.4 հազ. դրամ:

5.18 ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՈԼՈՐՏԸ

Ատոմային էներգիայի օգտագործման ոլորտի միջուկային և ճառագայթային անվտանգության կարգավորում:

Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման լիցենզավորում՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Ճառագայթային աղբյուրներ պարունակող ախտորոշիչ սարքերի լիցենզավորում:

Միջուկային տեղակայնքների և միջուկային նյութերի ֆիզիկական պաշտպանություն՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության հետ:

Սահմանային անցակետերում միջուկային նյութերի և ճառագայթային աղբյուրների չարտոնված տեղափոխման հսկողություն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետ:

Բնակչության և ՀԱԷԿ-ի անձնակազմի պաշտպանություն միջուկային և ճառագայթային վթարների դեպքում, այդ թվում միջուկային տեղակայնքների հրդեհի առաջացման դեպքում ՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

ՀՀ միջուկային օրենսդրության համապատասխանեցումը Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) անվտանգության ստանդարտներին, Եվրոպական միության անվտանգության դիրեկտիվների՝ այդ թվում Արևմտաեվրոպական երկրների կարգավորող մարմինների ասոցիացիայի (WENRA) անվտանգության պահանջներին, Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման լիցենզավորումը, «Ատոմային էներգիայի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի մշակումը, միջուկային և ճառագայթային անվտանգության նոր նորմերի, կանոնների, պահանջների, ուղեցույցների, մեթոդների մշակումը, գործող նորմերի ու կանոնների վերանայումը, լրամշակումը, անվտանգությանը վերաբերվող փաստաթղթերի քննարկումը, վերլուծությունը և գնահատումը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն իրականացնում է «Միջուկային և ճառագայթային անվտանգության կարգավորում» ծրագիրը

Ծրագրի վերջնական արդյունքն է՝ ՀՀ բնակչության համար թույլատրելի տարեկան արդյունարար դոզայի արժեքի չգերազանցումը սահմանված չափաքանակներից:

Վերջնական արդյունքին հասնելու գերակա ուղղությունները՝

- շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգի ժամանակակից համակարգի ներդրումը՝ շրջակա միջավայրի հնարավոր ռադիոակտիվ աղտոտմամբ պայմանավորված բնակչության ճառագայթահարումը վերահսկելու համար

- կոմիտեի գիտատեխնիկական աջակցության զարգացում

- մասնագիտական և տեսչական անձնակազմի որակավորման բարձրացումը, (փորձի փոխանակում, վերապատրաստում, դասընթացներ)

- միջուկային զենքի չտարածման ռեժիմի ուժեղացում, միջուկային նյութի հաշվառման և վերահսկման պետական համակարգի կատարելագործումը

- վթարային հակազդման կենտրոնի համապատասխանեցում ժամանակակից պահանջներին

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ոլորտային թիրախների (վերջնական արդյունքների) ապահովման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի կողմից իրականցվում են հետևյալ ընդհանուր ծախսերը

2020 թվականի համար՝ 327,894.1 հազ. դրամ:

2021 թվականի համար՝ 332,812.5 հազ.դրամ:

2022 թվականի համար՝ 337,804.7 հազ. դրամ:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անվտանգության պետական կարգավորման ապահովում	1054 Միջուկային և ճառագայթային անվտանգության կարգավորում	ՀՀ բնակչության համար թույլատրելի տարեկան արդյունարար դոզայի արժեքի չգերազանցումը, mSv	≤ 1	2018թ.	≤ 1	2019թ.	Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անվտանգության ապահովում և շրջակա միջավայրի պաշտպանություն՝ 1.Համագործակցություն ԱՄՆ միջուկային կարգավորման կոմիտեի հետ: (2.3 Արտաքին քաղաքականություն <<Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ բարեկամական գործընկերության հետևողական զարգացման ուղղությամբ: Կառավարությունը նպատակադրված է խորացնելու գործակցությունը Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ>>)
							2.ՀՀ միջուկային օրենսդրության համապատասխանեցումը Եվրոպական միության անվտանգության դիրեկտիվների՝ այդ թվում Արևմտաեվրոպական երկրների կարգավորող մարմինների ասոցիացիայի (WENRA) անվտանգության պահանջներին: (2.3 Արտաքին քաղաքականություն <<Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) կիրարկումը դիտվում է որպես Հայաստանի զարգացմանն ուղղված Կառավարության բարեփոխումների օրակարգին նպաստող նշանակալից գործոն:>>)

							3.Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների կարգավորող վերահսկողության և տեսչական ստուգումների անցկացումը, շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգի ժամանակակից համակարգի ներդրումը՝ շրջակա միջավայրի հնարավոր ռադիոակտիվ աղտոտմամբ պայմանավորված բնակչության ճառագայթահարումը վերահսկելու համար: (4.8 Շրջակա միջավայր <<Շրջակա միջավայրի կառավարման հիմնական խնդիրն է նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի՝ օդի, կլիմայի, ջրի, հողերի, բուսական և կենդանական աշխարհի վրա վնասակար ազդեցությունները, բացառել բնական ռեսուրսների գերշահագործումը և ապօրինի օգտագործումը, ապահովել կանխարգելման միջոցառումների իրականացումը:>>)
							4. Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման և նոր միջուկային էներգաբլոկի կառուցման լիցենզավորում: (6.2 Էներգետիկ բնագավառ <<Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգմանը և արդիականացմանը, որով կապահովվի հայկական ԱԷԿ-ի արդյունավետ և անվտանգ աշխատանքը՝ շահագործման լրացուցիչ ժամանակահատվածում, Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրի մշակմանը՝ հաշվի առնելով հանրապետության էներգետիկ անվտանգության և անկախության մակարդակի պահպանման, ինչպես նաև էներգետիկայի բնագավառի գիտելիքահենք ուղղության կարևորությունը>>)

5.19 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՈԼՈՐՏԸ

Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) հանդիսանում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն», «Հայաստանի հանրային ռադիոընկերություն», «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն», «Շիրակի հանրային հեռուստառադիո» և «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների (այսուհետ՝ Ընկերություններ) կառավարման մարմինը, որն իր աշխատանքները կազմակերպում է աշխատակազմի միջոցով: Խորհրդի աշխատակազմը «Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի» աշխատակազմ» պետական հիմնարկն է: ՀՀ կառավարության 2019 թվականի հունվարի 31-ի N 55-Ա և N 60-Ա որոշումներով մեկնարկեցին «Շիրակի հանրային հեռուստառադիո» և «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունները լուծարելու գործընթացները:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի հիմնական թիրախներն են.

- Հայ հասարակությանը մատուցել արդիական, բազմակողմանի, որակյալ տեղեկատվություն և աուդիովիզուալ բովանդակություն: Ապահովել բազմակարծության և հասարակական համաձայնության հարթակ, թելադրել հանդուրժողականության և քաղաքակիրթ բանավեճի նորմեր: Բարձրացնել հասարակության վստահությունը Հանրային հեռարձակման հանդեպ:
- Հանրային հեռուստաընկերության միջազգային ալիքի միջոցով շարունակել Սփյուռքի համար նպատակային հաղորդումների հեռարձակումը, բարձրացնել փոխադարձ ճանաչելիությունը՝ ներկայացնելով սփյուռքի մեր հայրենակիցներին Հայաստանի նոր նկարագիրը:
- Ներկայացնել առցանց հանրային հեռուստաձրագիր և լինել ինտերնետ հարթակներում առավել ներկայացված, Հոգևոր-մշակութային ալիքի ինտենսիվ վերակազմակերպում (ռեբրենդինգ) և հոգևոր-մշակութային հաղորդումների անհրաժեշտ քանակի ապահովում :

Արդյունք. Հասարակությանը տրամադրել անկախ, օբյեկտիվ և անաչառ տեղեկատվություն, ինչպես նաև ապահովել հեռուստառադիոհաղորդումների բովանդակային

բազմամազանություն :

Հիմք. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք :

ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2020-2022 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի քաղաքականության հիմք է հանդիսանում «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին ամրագրված լիազորությունների իրականացումը՝ մասնավորապես օրենքով սահմանված թեմատիկ ուղղություններով հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման ապահովումը: 2020-2022 թվականներին հեռուստառադիոհաղորդումների գերակա ուղղություններն են.

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար	Հիմնավորումներ
Ստեղծել և գործարկել առցանց հանրային հեռուստածրագիր, որի բովանդակությունը հիմնականում կտարբերվի Առաջին ալիքի հեռարձակվող ծրագրից:	Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 26-34 և 47 հոդվածների պահանջներով: Ծրագրի նպատակները անմիջականորեն կապված են ՀՀ Կառավարության ծրագրի գրեթե բոլոր ուղղությունների հետ՝ լուսաբանման և հանրայնացման իմաստով: Մասնավորապես՝ Հանրայինի արբանյակային հեռարձակումը աջակցում է Սփյուռքի հետ կապերի զարգացմանը՝ ՀՀ Կառավարության ծրագրում նշված խնդիրների լուծմանը: Հեռուստածրագրերի մոտ 40 տոկոսն ունի կրթական, մշակութային, մարզական, գիտակրթական ուղղվածություն:
Հանրային հեռուստաընկերության միջազգային ալիքի համար մշակել նոր եթերացանց և պատրաստել այնպիսի նոր հաղորդաշարեր, որոնք կնպաստեն Հայաստանից դուրս ապրող հայերին Հանրային ալիքների մշտական հանդիսատեսը դարձնելուն:	
Հոգևոր-մշակութային ալիքի ինտենսիվ վերակազմակերպում (ռեբրենդինգ) և հոգևոր-մշակութային հաղորդումների անհրաժեշտ քանակի ապահովում:	

2020-2022 թվականների ՄԺԾԾ ժամանակահատվածում Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից իրականացվելու է «Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում» բյուջետային ծրագիրը, որի միջոցառումներն են.

- «Հանրային հեռուստառադիոընկերության

կառավարում, համակարգում և մոնիտորինգ»,

- «Հեռուստատեսային ծառայություններ»,
- «Ռադիո ծառայություններ»,
- «Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ»,
- «Միջազգային կազմակերպություններին անդամակցություն»,
- «Ներդրումներ տեխնիկական վերազինման նպատակով»,
- «Ներդրումներ շենք-շինությունների հիմնանորոգման նպատակով»:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից իրականացվող միջոցառումների համար 2020-2022 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված հատկացումները կազմում են.

2020 թվականի համար՝ 7,390,913.3 հազար դրամ,

2021 թվականի համար՝ 6,832,269.1 հազար դրամ,

2022 թվականի համար՝ 7,034,406.6 հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
Հայ հասարակությանը մատուցել արդիական, բազմակողմանի, որակյալ տեղեկատվություն և աուդիովիզուալ բովանդակություն: Ապահովել բազմակարծության և հասարակական համաձայնության հարթակ, թելադրել հանդուրժողականության և քաղաքակիրթ բանավեճի նորմեր: Բարձրացնել հասարակության վստահությունը Հանրային				2019	7-10	2020	Հանրային հեռուստառադիոընկերության Խորհրդի ծրագրի նպատակները անմիջականորեն կապված են ՀՀ Կառավարության ծրագրի գրեթե բոլոր ուղղությունների հետ՝ լուսաբանման և հանրայնացման իմաստով: Մասնավորապես Հանրայինի արբանյակային հեռարձակումը աջակցում է Սփյուռքի հետ կապերի զարգացմանը՝ ՀՀ Կառավարության ծրագրում նշված խնդիրների լուծմանը: Հեռուստածրագրերի մոտ 40 տոկոսն ունի կրթական, մշակութային, մարզական, գիտակրթական
				2019	48-52	2020	

հեռարձակման հանդեպ: Հանրային հեռուստաընկերության միջազգային ալիքի միջոցով հեռարձակել Սփյուռքի համար նպատակային հաղորդումներ՝ բարձրացնելով փոխադարձ ճանաչելիությունը և ներկայացնելով սփյուռքի մեր հայրենակիցներին Հայաստանի նոր նկարագիրը: Ներկայացնել առցանց հանրային հեռուստածրագիր և լինել ինտերնետ հարթակներում առավել ներկայացված,				2019	45-48	2020	ուղղվածություն:

5.20 ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՒՂՈՐՏԸ

ՀՀ Սահմանադրության 196-րդ հոդվածի համաձայն՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությունը:

Հանձնաժողովի հիմնական գործառույթներն են՝

1) թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստածրագրերի և ռադիոծրագրերի հեռարձակման, ինչպես նաև մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթների անցկացում.

2) հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակման լիցենզավորման իրականացում.

3) հեռուստածրագրերի և ռադիոծրագրերի եթերային հեռարձակման, հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակման, ինչպես նաև մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզիաների տրամադրում.

4) սեփական արտադրության հեռուստառադիոծրագրերի հեռարձակման և ոչ սեփական հեռուստառադիոծրագրերի վերահեռարձակման, ինչպես նաև բաժանորդային հեռարձակման թույլտվությունների տրամադրում.

5) հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկում իրականացում.

6) հեռուստառադիոհաղորդումների տեսագրությունների և ձայնագրությունների ընտրանքային դիտարկման միջոցով օրենսդրության և լիցենզիայի պահանջներին դրանց համապատասխանության ստուգում.

7) հեռուստառադիոհաղորդումների պատրաստման տեխնիկական չափանիշների, ինչպես նաև տեխնիկական միջոցների համապատասխանության վերահսկում.

8) «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի խախտման, լիցենզիայի պայմանները կամ իր որոշումները չկատարելու դեպքում պատասխանատվության միջոցների կիրառում.

9) հեռուստառադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված կարգի պահպանման վերահսկում.

10) հեռուստառադիոընկերությունների գործունեության վերաբերյալ բողոքների, առաջարկությունների և հարցումների ուսումնասիրում և պատասխանում.

11) «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում ստուգումների և ուսումնասիրությունների իրականացում.

12) հանրային հեռուստատեսությունում և ռադիոյում տեղեկատվական, կրթական, մշակութայի և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վերաբերյալ ուսումնասիրության իրականացում.

13) օրենքով սահմանված դեպքերում կարգերի, մեթոդաբանությունների և այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունում:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Հանձնաժողովի հիմնական նպատակն է մասնավոր մուլտիպլեքսի ներդրման միջոցով նպաստել հեռուստածրագրերի հեռարձակման թվայնացման համակարգի կայուն գործարկմանը, ինչպես նաև հետագայում ռադիոծրագրերի հեռարձակման թվայնացման ներդրմանը, ինչը հնարավորություն կտա առավել արդյունավետ օգտագործել հաճախականությունների տիրույթը. ավելացնել հեռարձակվող հեռուստածրագրերի և ռադիոծրագրերի քանակը, հեռուստառադիոհեռարձակմանը հարակցել տեղեկատվական բարձր տեխնոլոգիական այլ ծառայություններ: Ներկայումս թվային հեռարձակումը Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվում է հանրային մուլտիպլեքսորի

կողմից: «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է հանրային ցանցից անկախ ստեղծել մասնավոր հեռարձակման ցանց, որի շահագործումը իրականացվելու է մասնավոր մուլտիպլեքսորի կողմից: Հանձնաժողովին, որպես ոլորտը կարգավորող մարմնի, վերապահված է իրականացնել մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորումը: Այս նպատակը համահունչ է ՀՀ կառավարության ծրագրի հետ, ըստ որի կապի և թվայնացման ոլորտում նախանշված քայլերից է թվային ինտերակտիվ հեռուստատեսության արդիականացումը (ՀՀ կառավարության ծրագիր, 7-րդ մաս, 7.2 բաժին, 2-րդ պարբերություն):

Հանձնաժողովի նպատակներից է նաև հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովումը, հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեության կարգավորումը, մասնավորապես ապահովել հանրային հեռուստատեսությունում և ռադիոյում տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանությունը, հեռարձակվող հեռուստառադիոհաղորդումների լեզվի անաղարտությունը, օրենքով սահմանված ծավալով հայրենական արտադրության հեռուստառադիոհաղորդումների հեռարձակումը, հեռուստածրագրերում խուլ հանրության համար հնարավոր տեղեկատվության ստացման մատչելիություն: Վերոնշյալ նպատակները ևս համահունչ են ՀՀ կառավարության ծրագրի հետ, որի համաձայն մշակույթի ոլորտում որպես թիրախ սահմանված է՝ «Հեռուստատեսային եթերը պետք է մաքրվի հանրային հարաբերություններին փոխադարձ արհամարհանքի և ագրեսիվության ենթատեքստ հաղորդող բովանդակությունից, ինչպես նաև լեզվական ցածրորակ արտադրանքից: Կրթական և մշակութային քաղաքական առանցքային նպատակը պետք է լինի գրական հայերենի տարածումը, նախադպրոցական և դպրոցական ցածր տարիքի լսարանի համար հատուկ ծրագրերի (ուսումնական, ճանաչողական հաղորդումներ, ֆիլմեր, մուլտֆիլմեր և այլն) միջոցով գրական հայերենի (այդ թվում՝ արևմտահայերենի) իմացության ամրապնդումը Հայաստանում և սփյուռքում:» (ՀՀ կառավարության ծրագիր, 4-րդ մաս, 4.5 բաժին, 5-րդ պարբերություն):

ՀՀ կառավարության ծրագրում կառավարության խնդիրների թվում սահմանված «հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանությունը և նրանց սոցիալական ներառման ապահովումը» (ՀՀ կառավարության ծրագիր, 1-ին մաս, 3-րդ կետ, 3-րդ պարբերություն) ևս համահունչ է Հանձնաժողովի՝ հեռուստածրագրերում խուլ հանրության համար հնարավոր տեղեկատվության ստացման մատչելիության ապահովման նպատակի հետ: «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի համաձայն «Հանրային հեռուստաընկերությունը և Հայաստանի Հանրապետությունում գործող այն մասնավոր հեռուստաընկերությունները, որոնք հեռարձակում են նաև մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել խուլ հանրության համար հնարավոր տեղեկատվության ստացման մատչելիությունը, օրվա եթերաժամում առնվազն մեկական մանկական և լրատվական հեռուստահաղորդում հեռարձակել ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրով»:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԺԾԾ ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից իրականացվելիք հիմնական ծրագրեր՝

1. Մասնավոր մուլտիպլեքսի ներդրում, ինչը կնպաստի հեռուստածրագրերի հեռարձակման թվայնացման համակարգի կայուն գործարկմանը:
2. Մշտադիտարկման արդյունավետ իրականացման համակարգի ներդրում, ինչը հնարավորություն կտա բարձրացնել վերահսկողության արդյունավետությունը.
3. Թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստածրագրերի հեռարձակման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգի ընդունում, ինչը հնարավորություն կտա լիցենզավորումը դարձնել ավելի թափանցիկ և ապահովել մրցակցային հավասար պայմաններ.
4. Թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստածրագրերի հեռարձակման լիցենզավորման 26 մրցույթների անցկացում:

Հարկ է նշել, որ հեռուստատեսության և ռադիոյի ոլորտի օրենսդրությունը կարիք ունի փոփոխությունների, ինչի արդյունքում հնարավոր կլինի ապահովել վերջնական արդյունքները՝ Հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության բարձր մակարդակ, մրցակցային հավասար պայմաններ, վարչարարության արդյունավետություն, հեռուստառադիոծրագրերի հեռարձակման ոլորտում օրինախախտումների նվազեցում, տրված լիցենզիաների պայմանների կատարում հեռարձակող ընկերությունների կողմից, հեղինակային իրավունքների պահպանություն, հեռուստառադիոհեռարձակման ոլորտի համաչափ զարգացում:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ոլորտային թիրախների (վերջնական արդյունքի) ապահովման նպատակով 2020-2022թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից կանխատեսվում է իրականացնել հետևյալ ընդհանուր ծախսերը.

2020 թվականի համար՝ 320,668.0 հազ. դրամ,

2021 թվականի համար՝ 325,478.0 հազ. դրամ,

2022 թվականի համար՝ 330,361.0 հազ. դրամ:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
	1007						
1. հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախությոն և բազմազանության ապահովում, հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությոն վերահսկում և կարգավորում.	Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառի կանոնակարգում	Հեռուստառադիոծրագրերի հեռարձակման ոլորտում օրինախախտում ների նվազեցում (տոկոս)					ՀՀ կառավարության ծրագիր, 4-րդ մաս, 4.5 բաժին, 5-րդ պարբերություն՝ -հեռուստատեսային եթերը պետք է մաքրվի հանրային հարաբերություններին փոխադարձ արհամարհանքի և ագրեսիվության ենթատեքստ

2. հանրային հեռուստատեսությունում և ռադիոյում տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովում.		հաղորդումների բազմազանության ապահովում (տոկոս)					հաղորդող բովանդակությունից, ինչպես նաև լեզվական ցածրորակ արտադրանքից: -կրթական և մշակութային քաղաքական առանցքային նպատակը պետք է լինի գրական հայերենի տարածումը, նախադպրոցական և դպրոցական ցածր տարիքի լսարանի համար հատուկ ծրագրերի (ուսումնական, ճանաչողական հաղորդումներ, ֆիլմեր, մուլտֆիլմեր և այլն) միջոցով գրական հայերենի (այդ թվում՝ արևմտահայերենի) իմացության ամրապնդումը Հայաստանում և սփյուռքում:
3. հայրենական արտադրության հեռուստառադիո հաղորդումների հեռարձակման ապահովում.		հայրենական արտադրության հեռուստառադիո հաղորդումների օրենքով սահմանված ծավալի հեռարձակման ապահովում (տոկոս)					

4. Հեռուստածրագրերում խուլ հանրության համար հնարավոր տեղեկատվության ստացման մատչելիության ապահովում		ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրով հեռուստահաղորդումների օրենքով սահմանված քանակի հեռարձակման ապահովում (տոկոս)					ՀՀ կառավարության ծրագիր, 1-ին մաս, 3-րդ կետ, 3-րդ պարբերություն՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանությունը և նրանց սոցիալական ներառման ապահովումը.
5. մասնավոր մուլտիպլեքսորի ներդրման ապահովում		մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորում (տոկոս)					ՀՀ կառավարության ծրագիր, 7-րդ մաս, 7.2 բաժին, 2-րդ պարբերություն՝թվային ինտերակտիվ հեռուստատեսության արդիականացում

5.21 ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՈԼՈՐՏԸ

Համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) Գլուխ 3-ի հոդված 7-ի (ընդունված է 2018թ. մարտի 21-ին, ուժի մեջ է 2018թ. ապրիլի 9-ից, ՀՕ-194-Ն), ՀՀ վիճակագրական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) ՀՀ կառավարությանը ենթակա պետական մարմին է, որն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է, ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, սույն օրենքով և այլ իրավական ակտերով:

Կոմիտեն որոշակի քաղաքական ուղղվածությամբ պետական ինստիտուտներից արմատապես տարբերվող պետական մարմին է: Քաղաքական, վարչական, գերատեսչական շահերի միջև առկա բախումներում պաշտոնական վիճակագրությունը չներքաշելու երաշխիքները սահմանված են պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներով:

Պաշտոնական վիճակագրության մշակման, արտադրության և տարածման գործառույթների մասով ազգային վիճակագրական համակարգի, այդ թվում՝ Կոմիտեի կառավարման բարձրագույն մարմինը, բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ վիճակագրության պետական խորհուրդն է:

Կոմիտեն ՀՀ պաշտոնական վիճակագրության գլխավոր արտադրողն է և համակարգում է ազգային վիճակագրական համակարգում պաշտոնական վիճակագրության մշակմանը, արտադրությանը և տարածմանն ուղղված ողջ գործունեությունը, բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի:

Կոմիտեն գործունեությունն իրականացնում է իր կենտրոնական գրասենյակի, տարածքային և գործառնական ստորաբաժանումների միջոցով:

Կոմիտեն ֆինանսավորվում է պետական բյուջեի, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

Պարբերական ընտրանքային հետազոտությունների միջոցով պաշտոնական վիճակագրության արտադրությունն ապահովելու նպատակով Կոմիտեն յուրաքանչյուր տարի պետական բյուջեով հատկացված միջոցների հաշվին իրականացնում է վիճակագրական տեղեկատվության հավաքման ծրագիրը:

Կոմիտեի վրա չեն կարող դրվել պարտականություններ, որոնք հակասում են սույն հոդվածին, ինչպես նաև Օրենքի 6-րդ հոդվածով սահմանված հիմնարար սկզբունքներին: ՀՀ տարածքում պաշտոնական վիճակագրության իրագործման հիմքը վիճակագրական ծրագրերն են (Օրենքի հոդված 14, մաս 1):

Համաձայն Օրենքի Գլուխ 10-ի հոդված 33-ի, Կոմիտեն իր իրավասությունների շրջանակում ակտիվորեն մասնակցում է վիճակագրական ստանդարտների և ուղեցույցների

մշակմանն ու ներդրմանն ուղղված միջազգային գործունեությանը, համակարգում է պաշտոնական վիճակագրության բնագավառում միջազգային համագործակցության բոլոր միջոցառումները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների կողմից Կոմիտեին տրվող բոլոր այն գնահատականները, որոնք վերաբերում են պաշտոնական վիճակագրությանը՝ անկախ վիճակագրության ոլորտից և արտադրողից:

Կոմիտեն համակարգում է պաշտոնական վիճակագրության տվյալների փոխանցումը միջազգային և այլ կազմակերպությունների:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

- ✓ Ազգային պաշտոնական վիճակագրության արտադրություն և տարածում՝ միջազգային վիճակագրական ստանդարտների (ներառյալ՝ Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների տարածման հատուկ ստանդարտը) պահանջներին համապատասխան (այդ թվում՝ ռեսուրսների մասով, Օրենքի հոդված 13, մաս 1 և հոդված 14, մաս 2 և 3),
- ✓ Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2020-2022թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում Կոմիտեի գոյություն ունեցող ծախսային ծրագրերն են.

1. Ազգային պաշտոնական վիճակագրության արտադրություն և տարածում (1143),

2. Վիճակագրական համակարգի ամրապնդման ազգային ռազմավարական ծրագիր (1209):

«Ազգային պաշտոնական վիճակագրության արտադրություն և տարածում» ծրագրի (դասիչ՝ 1143) նպատակն է տնտեսական և հասարակական գործընթացների վերաբերյալ պաշտոնական վիճակագրության մշակումը, արտադրումն ու տարածումը: Որպես վերջնական արդյունք, նախատեսվում է ծրագրով նախատեսված ժամկետներով և պարբերականությամբ ամբողջական, համադրելի, արդիական և օգտատերերին հավասար մատչելիությամբ հասանելի պաշտոնական վիճակագրության ապահովում:

«Վիճակագրական համակարգի ամրապնդման ազգային ռազմավարական ծրագրի» (դասիչ՝ 1209) նպատակն է միջազգային չափանիշներին համապատասխան Հայաստանի վիճակագրական համակարգի զարգացումը: Որպես վերջնական արդյունք, նախատեսվում է Հայաստանի վիճակագրական համակարգի կարողությունների և Կոմիտեի անձնակազմի մասնագիտական կարողությունների զարգացումը: Ծրագրի կատարող է հանդիսանում ՀՀ ֆինանսների նախարարությունը:

ՄԺԾԾ ժամանակահատվածում ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից իրականցվող գերակա ծախսային ուղղություններն հետևյալն են.

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)	Հիմնավորումներ
Վիճակագրական կոմիտեի միջազգային համագործակցության ընդլայնում, տեղեկատվության տարածման միջազգայնորեն ընդունված չափանիշների ներդրման ու կիրառման շարունակականության ապահովում:	Վիճակագրական մեթոդաբանության միջազգային չափանիշների հետ ներդաշնակեցման ու միասնականացման, ինչպես նաև համադրելիության ապահովում:
Վիճակագրական հրապարակումների կատարելագործում, դրանց կազմի, բովանդակության ու թեմատիկ ընդգրկման ընդլայնում: Վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքի անխափան աշխատանք և տեղեկատվության կազմի ու որակի, ինչպես նաև մեթոդաբանական տվյալների պարբերական արդիականացում:	Վիճակագրական տեղեկատվության օգտագործողների պահանջարկի առավել ամբողջական բավարարում, վիճակագրական տվյալների որակի և թափանցիկության ապահովում:
Վիճակագրական դիտարկման փաստաթղթերում արտացոլված ցուցանիշների կազմի ու բովանդակության վերանայում: Տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման ու կոդավորման միասնական համակարգի մաս կազմող ազգային դասակարգիչների մշակման ու ներդրման, կիրառվող դասակարգիչների կատարելագործման ապահովում: Տարածքային վիճակագրության վարման համար անհրաժեշտ ցուցանիշների կազմի ու բովանդակության, ըստ սեռի վարվող վիճակագրական ցուցանիշների համակազմի կատարելագործում և ընդլայնում:	Վիճակագրության մեթոդաբանության զարգացում:
Տեղեկատվության հավաքման ընտրանքային եղանակների, ինչպես նաև վարչական ռեգիստրների միջոցով տեղեկատվության հավաքման մեխանիզմի կիրառման ընդլայնում: Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ և կիրառմամբ տեղեկատվության էլեկտրոնային հավաքում:	Ցուցանիշների մշակման յուրաժամանակության ապահովում, ինչպես նաև ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցում:

Օգտագործողների պահանջների և կարիքների ավելի խորն ուսումնասիրման և վիճակագրության համապատասխան իրավական դաշտի ու տվյալների տարածման կատարելագործում:	Նպաստել վիճակագրական տեղեկատվության նկատմամբ վստահության աճին:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

ՀՀ վիճակագրական կոմիտեի գծով 2020-2022 թվականներին ՄԺԾԾ-ում ընդգրկված ծախսային ծրագրերի գումարները կազմում են.

2020թ.՝ 4,402,901.2 հազար դրամ,

2021թ.՝ 2,106,824.3 հազար դրամ,

2022թ.՝ 2,118,046.8 հազար դրամ:

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
Տնտեսական և հասարակական գործընթացների վերաբերյալ պաշտոնական վիճակագրության մշակում, արտադրում ու տարածում	*1143 Ազգային պաշտոնական վիճակագրության արտադրություն և տարածում*	*Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ)Տվյալների տարածման հատուկ ստանդարտներին համապատասխանություն, տոկոս*	*100*	*2019թ.*	*100*	*2022թ.*	*Համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի Գլուխ 3-ի հոդված 7-ի (ընդունված 21.03.2018թ., ուժի մեջ՝ 09.04.2018թ., ՀՕ-194-Ն), Կոմիտեն ՀՀ կառավարությանը ենթակա պետական մարմին է, որն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է, ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, սույն օրենքով և այլ իրավական ակտերով: Կոմիտեն որոշակի քաղաքական ուղղվածությամբ պետական ինստիտուտներից արմատապես տարբերվող պետական մարմին է:*
Միջազգային չափանիշներին համապատասխան Հայաստանի վիճակագրական համակարգի զարգացում	*1209 Վիճակագրական համակարգի ամրապնդման ազգային ռազմավարական ծրագիր*	*Վիճակագրական արտադրանքների վերաբերյալ ներդրված մեթոդվյալների համակարգ, որակի հոչակագրեր*	*139*	*2019թ.*	*140*	*2021թ.*	
		Միջազգային ստանդարտների և դասակարգումների կիրառում, քանակ	*15*	*2019թ.*	*16*	*2021թ.*	

		Տարածման և հաղորդակցության ռազմավարության և քաղաքականության մշակում, քանակ	0	2019թ.	1	2020թ.	Քաղաքական, վարչական, գերատեսչական շահերի միջև առկա բախումներում պաշտոնական վիճակագրությունը չներքաշելու երաշխիքները սահմանված են պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներով: Կոմիտեի վրա չեն կարող դրվել պարտականություններ, որոնք հակասում են սույն հոդվածին, ինչպես նաև սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված հիմնարար սկզբունքներին: ՀՀ տարածքում պաշտոնական վիճակագրության իրագործման հիմքը վիճակագրական ծրագրերն են (հոդված 14, մաս 1):
		Էլեկտրոնային առցանց հաշվետվությունների համակարգի ներդրում, համակարգ	0	2019թ.	1	2021թ.	

5.22 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ ՈԼՈՐՏԸ

Վերջին տարիներին անշարժ գույքի կադաստրի վարման միջազգային առաջադեմ փորձի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ուսումնասիրված երկրներում անշարժ գույքի կադաստրի համակարգերի անվիճելի առավելությունը դրանց վարման գործընթացներում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման չափազանց բարձր մակարդակն է, որի առումով Հայաստանը տվյալ ոլորտում դեռևս բավականին զիջում էր այդ երկրներին: Համոզված լինելով, որ համակարգի հետագա զարգացումը, գործառույթների իրականացման որակի բարձրացումը և համակարգի գործունեության թափանցիկության ապահովումը, համակարգում կոռուպցիոն ռիսկերի նվազեցումն ու քաղաքացիների և իրավաբանական անձանց սպասարկման որակի բարձրացումը հնարավոր չէ առանց համակարգում արմատական բարեփոխումների իրականացման: Բարեփոխումների լույսի ներքո էլ ավելի կարևորվեց էլեկտրոնային արխիվի նշանակությունը անշարժ գույքի կադաստրի վարման գործառույթներում: Համակարգում ներդրված պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման գործառույթների իրականացման ավտոմատացված համակարգի ներքո էլեկտրոնային արխիվը նպաստում է ոչ միայն կադաստրային փաստաթղթերի պահպանմանը, այլ դարձել է ամենօրյա աշխատանքի կարևորագույն գործիքներից մեկը, որի օգնությամբ է իրականացվում համակարգի ներքին էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը: Ավելին, եթե նախկինում էլեկտրոնային արխիվի ստեղծման աշխատանքները ունեին, այսպես կոչված, «ետգործառույթային բնույթ», այսինքն՝ փաստաթղթերն էլեկտրոնային արխիվ մուտքագրվում և տեսաներածվում էին դրանց թղթային օրինակների ստեղծումից հետո, ապա այսօր էլեկտրոնային արխիվի ստեղծումն իրականացվում է անմիջապես պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման գործառույթների իրականացման ընթացքում՝ հանդիսանալով դրանց անբաժանելի մասը, իսկ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանումների կողմից այդ գործառույթների իրականացման ընթացքում տրամադրվող բոլոր ավարտական փաստաթղթերը (գրանցման վկայականներ, տեղեկանքներ) ի սկզբանե կազմվում են էլեկտրոնային եղանակով և հաստատման պահից ներառվում են էլեկտրոնային արխիվի կազմում: Այդ իսկ պատճառով էլեկտրոնային արխիվի տվյալների պահպանման, թարմացման և դրանց անվտանգության ապահովման խնդիրներն այսօր գտնվում են մեր ամենօրյա ուշադրության և հոգածության ներքո:

Առկա էր նաև աշխատանքային և նյութատեխնիկական ռեսուրսների օգտագործման օպտիմալացման խնդիր: Նախկին տարածքային ստորաբաժանումների տեղակայման վայրերում

սպասարկման գրասենյակների, այլ օպերատորների և անշարժ գույքի միասնական ստորաբաժանման միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրմամբ, ինչպես նաև անշարժ գույքի չափագրման իրականացումն ամբողջությամբ մասնավոր հատվածին վերապահելով, մի կողմից հնարավորություն ընձեռվեց օպտիմալացնել տարածքային ստորաբաժանումների քանակը, մյուս կողմից դիմողներին հնարավորություն տրվեց իրավունքների գրանցման ու տեղեկատվության տրամադրման դիմումները ներկայացնել և փաստաթղթերը ստանալ իրենց ընտրությամբ՝ կադաստրի համակարգի ցանկացած սպասարկման գրասենյակում (և նույնիսկ առանց սպասարկման գրասենյակ ներկայանալու՝ էլեկտրոնային փոստով)՝ անկախ անշարժ գույքի գտնվելու վայրից: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման և գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման գործառույթների իրականացման համար գույքի պարտադիր չափագրման (տեղազննման) անհրաժեշտությունը սահմանափակվեց՝ այն թողնելով միայն նոր գույքի առաջացման, գրանցված գույքը փոփոխությունների ենթարկելու ու դիմողի պահանջի դեպքերում, միաժամանակ դիմողներին այս ոլորտում նույնպես ընտրության հնարավորություն ապահովվեց և, վերջապես, վերացնելով պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման բուն գործառույթն իրականացնող կադաստրի համակարգի պաշտոնատար անձանց ու կադաստրի ծառայություններից օգտվող քաղաքացիների անմիջական շփման անհրաժեշտությունը, համակարգում զգալիորեն նվազեցվեց կոռուպցիոն ռիսկերի առաջացման վտանգը: Ընթացող բարեփոխումների արդյունքում սկզբունքորեն նոր մոտեցում ձևավորվեց նաև անշարժ գույքի նկատմամբ գործարքների իրավական ձևակերպման հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման ոլորտում, մասնավորապես՝ վերացվեց Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված անշարժ գույքի գործարքների պարտադիր նոտարական վավերացման պահանջը (բացառությամբ միակողմ գործարքների) և այդ մասով ներմուծվեց կադաստրի համակարգի կողմից ստորագրությունների իսկության ճանաչմամբ՝ գործարքների կնքման ինստիտուտ, որը ներկայումս կիրառվում է Երևան քաղաքում, ընդ որում, նշված կարգով գործարքների կնքումը կադաստրի համակարգում իրականացվում է անվճար:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Հասարակության տեղեկատվական պահանջները բավարարելու նպատակով կոմիտեն 2020-2022 թվականների զարգացման հատվածում կփորձի ամբողջապես անցնել առցանց ծառայությունների ինքնաշխատ համակարգի՝ հրաժարվելով թղթային փաստաթղթաշրջառանությունից: Այս, ինչպես նաև համակարգում առկա կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով կիրականացվեն կառուցվածքային բարեփոխումներ, որի ռազմավարական նպատակները և գերակա վերջնական արդյունքները առցանց, ինքնաշխատ, անթուղթ անշարժ գույքի կադաստրի ստեղծումն է՝ նպաստելով տեղեկատվության տրամադրման գործընթացի դյուրացում, առցանց տրամադրվող տեղեկատվության նկատմամբ պահանջարկի խթանում, տրամադրման ժամկետների կրճատում և ծավալների էական ավելացում:

Բյուջետային ծրագրերում կատարվող հիմնական փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում միասնական տարածագնահատման նոր գոտևորման սահմանման նպատակով Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում հողամասերի շուկայական գնահատումների, համակարգված դիտարկումների իրականացումն է լինելու, որը հնարավորություն կընձեռի Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի հարկով արդարացի հարկման մեխանիզմներ ներդնել, ապահովել անշարժ գույքի շուկայի գնային իրավիճակի վերաբերյալ վերլուծական տեղեկատվության ապահովում, խթանել պարապուրդում գտնվող գույքի մասնակցությունը անշարժ գույքի շուկայում և նպաստել ավելացված արժեքի աճին, ինչպես նաև հիմք հանդիսանալ Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի միասնական հարկման համակարգի ստեղծմանն ու ներդրմանը՝ որի իրականացումը հնարավորություն կտա նաև հարկման առավել արդարացի դաշտի ձևավորմանը, անշարժ գույքի հարկման վարչարարության պարզեցմանը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նշված ռազմավարության պահանջների խթանումը գեոդեզիական, քարտեզագրական և երկրատեղեկատվական համակարգի հիման վրա Հայաստանի Հանրապետության ինտեգրված, միասնական կադաստրի ստեղծումն է, որի նպատակը տեղեկատվական տեխնոլոգիաների նորագույն լուծումներով ոլորտի կադաստրների համակարգի արդիականացումն է, որն էլ իր հերթին կնպաստի տարածական որոշումների օպերատիվության բարձրացմանը և հողային քաղաքականության պատշաճ վարմանը:

Կապիտալ բնույթի հինմական միջոցառումները ինտեգրված (միասնական) կադաստրի ստեղծումն է՝ 2020-2022 թվականներին 2019 թվականին հիմք դրված և շարունակական նոր տեխնոլոգիաների պահանջով արդիականացվող Հայաստանի Հանրապետության բազային երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի, աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի վարման և թարմացման, հիմնարար ոլորտային քարտեզագրական արտադրանքի աշխատանքները: Որպես հիմք հանդիսանալու է ՄԺԾԾ 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքի օդալուսանկարների (օրթոլուսանկարների- GSD-20cm) ստեղծումը և արդիականացնելու ու զարգացնելու իրական ժամանակում գործող ռեֆերենց GNSS կայանների ցանցը:

Շարունակվում են իրականացվել Հայաստանի Հանրապետության քաղաքների բազային երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի ստեղծման աշխատանքները, որոնք կծառայեն տնտեսության տարբեր բնագավառներում աշխատանքների արդյունավետության բարձրացման կարևոր նախադրյալ:

Ստեղծված քարտեզագեոդեզիական հիմքով երկրատեղեկատվական համակարգը հանդիսանալու է գերատեսչական տարբեր ոլորտների, այդ թվում քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերական, անշարժ գույքի կադաստրի, տարածքների պլանավորման, գյուղատնտեսական հողերի հաշվառման, հողերի միավորման, հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաների կազմման, գույքահարկի և գնահատման բազաների ճշգրտման, վարչական և տնտեսական գործունեության, մելիորացիայի, երկրաբանական հետախուզական աշխատանքների, անտառտնտեսության, արտակարգ իրավիճակների ժամանակ օպտիմալ և օպերատիվ որոշումների կայացման, հանրապետության մարզերի, համայնքների և առանձին տարածքների զարգացման ու արդյունավետ պլանավորման համար որպես բազա:

2020 թվականին նախատեսված ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կուղղվեն նաև կոմիտեի միասնական արխիվի ստեղծման, ամբողջականացման համար արխիվային տարածքի շինարարությանը:

2020-2022 թվականներին իրականացնելու են գյուղատնտեսական նշանակության հողերի գույքագրման և կադաստրային քարտեզներում տեղ գտած անճշտությունների ուղղման աշխատանքներ:

Գույքագրման աշխատանքների նպատակն է ստանալ ճշտված տվյալներ գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման վիճակի, զբաղեցրած սահմանների, հողատեսքերի

փոփոխության, բազմամյա տնկարկների և ոռոգվող հողերի առկայության վերաբերյալ, որոնց հիման վրա համապատասխան ճշտումներ կատարել համայնքների կադաստրային քարտեզներում, հողային հաշվեկշիռներում և հողի հարկի բազայում: Արդյունքում հնարավորություն կընձեռվի ունենալ ճշտված կադաստրային քարտեզներ, վերացնել համայնքների, քաղաքացիների և իրավաբանական անձանց միջև առկա սահմանային վեճերը, կոորդինատների անճշտությունները և այլ վերադրումները:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Անշարժ գույքի կադաստրի վարման բնագավառում պետական քաղաքականության իրականացման ծախսերը.

2020 թվականի համար՝ 5,200,000.0 հազար դրամ

2021 թվականի համար՝ 5,700,000.0 հազար դրամ

2022 թվականի համար՝ 6,300,000.0 հազար դրամ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՈԼՈՐՏԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
	1012 Անշարժ գույքի կադաստրի վարման բնագավառում պետական քաղաքականության իրականացում	ՀԲ Գործարարությամբ զբաղվելու համաթվի «Սեփականության գրանցման» բաղադրիչի Հայաստանի միջազգային համամետական դիրքը	14		14		
		ՀԲ Գործարարությամբ զբաղվելու համաթվի «Սեփականության գրանցման» բաղադրիչի Հայաստանի ցուցանիշի	86.97		86.97		

5.23 ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈԼՈՐՏԸ

ՀՀ սահմանադրական դատարանը Հայաստանի Հանրապետության իրավակարգում ապահովելով Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը, որպես ռազմավարական առաջնահերթ խնդիր Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է սահմանադրական արդարադատություն:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

ՀՀ սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով շարունակելու է որոշել օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, ՏԻՄ որոշումների, մինչև միջազգային պայմանագրերի վավերացումը նրանցում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը ՀՀ սահմանադրությանը, ինչպես նաև լուծելու է հանրահավաքների արդյունքների ու պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում ծրագրով նախատեսված ՀՀ սահմանադրական դատարանի առաջնահերթ ռազմավարական նպատակներն են.

. բարձրացնել սահմանադրական արդարադատության արդյունավետությունը, ապահովել Հայաստանի Հանրապետությունում սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը,

. իր գործունեությամբ նպաստել սահմանադրության և նրանում ամրագրված իրավունքների ու պարտավորությունների նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը,

. սահմանված կարգով որոշում կայացնել օրենքների, Ազգային ժողովի որոշումների և այլ նորմատիվ ակտերի սահմանադրությանը համապատասխանության մասին,

. շարունակել Հանրապետությունում իրավունքի գերակայության ապահովման ուղղությամբ գործունեությունը:

Հիմնական գերակա վերջնական արդյունքները, որոնց վրա գերատեսչությունը ձգտում է ներազդել, նրանց իրագործման ռազմավարությունով ՀՀ սահմանադրական դատարանը հետամուտ կլինի հետևյալ արդյունքներին, մասնավորապես՝

Օրենքով սահմանված կարգով որոշել օրենքների, Ազգային ժողովի որոշումների, այլ նորմատիվ ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը, մինչև վավերացումը որոշել միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը ՀՀ սահմանադրությանը, լուծել հանրաքվեների հետ կապված վեճերը:

Սահմանադրական դատարանի այս լիազորությունը սահմանված է Սահմանադրությամբ և առաջնահերթ է հանդիսանում առաջիկա տարիների համար:

ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում ծրագրի իրականացման արդյունքնում ակնկալվում է ՝ Օրենքով սահմանված կարգով լուծելով ընդունված որոշումների, օրենքների, իրավական այլ ակտերի սահմանադրությանը համապատասխանությունը՝ ապահովելով նրանց արդյունավետ գործողությունը

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ոլորտային թիրախների (վերջնական արդյունքների) ապահովման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում ՀՀ սահմանադրական դատարանի կողմից իրականցվում են հետևյալ ընդհանուր ծախսերը

2020 թվական՝ 728,909.8 հազ. դրամ:

2021 թվական՝ 742,843.4 հազ. դրամ:

2022 թվական՝ 750,941.1 հազ. դրամ:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
	1092						
ՀՀ-ում սահմանադրական արդարադատության իրականացումը և սահմանադրության գերակայության ապահովում	*ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում*	*Սահմանադրական իրավունքի խախտման դեպքերի բացահայտում, քանակ հատ*	*16*	*2018թ*	*7*	*2022թ*	ՀՀ-ում սահմանադրականության իրավունքի գերակայություն

5.24 ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՈՐՏԸ

Հատուկ քննչական ծառայությունը կազմակերպում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական ծառայություն իրականացնող անձանց իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախաքննություն:

Անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կարող է քննչական այլ մարմինների քննիչների վարույթից վերցնել և Հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթին հանձնել քրեական գործեր, որոնք առնչվում են պաշտոնատար անձանց հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործություններին, կամ որոնցով այդ անձինք ճանաչված են որպես տուժող, ինչպես նաև ցանկացած այլ քրեական գործ, եթե դրա փաստական հանգամանքներով պայմանավորված՝ առկա է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը երաշխավորելու անհրաժեշտություն:

ՈՒՂՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

ՀՀ հատուկ քննչական ծառայությունը՝ որպես նախաքննություն իրականացնող մարմին, պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի իր գործունեության արդյունքում քրեական օրենսգրքերով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի:

ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչները քրեական գործի պատշաճ քննությունն ու դրա արդյունավետությունն ապահովելու նպատակով կատարում են մի շարք քննչական գործողություններ, այդ թվում՝ նշանակում փորձաքննություններ, դատավարական փաստաթղթերը ներկայացնում թարգմանության և այլն:

ՀՀ հատուկ քննչական ծառայության կառուցվածքային ստորաբաժանումներն են՝ Կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնեական հանցագործությունների քննության վարչությունը, Ընդհանուր բնույթի հանցագործությունների քննության վարչությունը, Խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունը, որոնց գործունեության միջոցով ապահովվում է հանցավորության, հատկապես՝ կոռուպցիայի դեմ պայքարը, որը բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի ծրագրի 3-րդ (Կոռուպցիայի

դեմ պայքարը) և 4.1-րդ (Օրենքի առջև բոլորի հավասարությունը, արդարադատությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը) բաժիններից:

ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների հանձնարարությամբ կամ խնդրանքով օտարերկրյա պետության տարածքում հարցաքննության, զննության, առգրավման, խուզարկության, փորձաքննության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլ դատավարական գործողությունների կատարումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

Հետևաբար՝ ՀՀ հատուկ քննչական ծառայությունն առաջնորդվում է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի դրույթներով, ինչպես նաև ՀՀ-ի կողմից վավերացված մի շարք միջազգային պայմանագրերով ամրագրված կարգավորումներով, մասնավորապես՝ ՄԱԿ-ի «Անդրազգային հանցավորության դեմ պայքարի» կոնվենցիայով, «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Մինսկի և Քիշնևի կոնվենցիաներով, «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով և այլն:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից իրականացվող գործունեության հիմնական նպատակն է քրեական գործերի քննությունը, որի շրջանակներում կարող է անհրաժեշտություն առաջանալ նշանակել մի շարք փորձաքննություններ, իրավական օգնության համար կազմել և ուղարկել միջազգային հարցումներ՝ համապատասխան երկրի պաշտոնական լեզվով, քննիչներին վերապատրաստելու և հատուկ ուսուցումը կազմակերպելու համար նրանց ներգրավել մի շարք դասընթացներում, համապատասխան վերապատրաստման ծրագրերում և այլն:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ոլորտային թիրախների (վերջնական արդյունքների) ապահովման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում ՀՀ հատուկ քննչական ծառայություններ ծրագրի համար նախատեսվում է.

2020 թվական՝ 749,581.0 հազ. դրամ:

2021 թվական՝ 761,030.9 հազ. դրամ:

2022 թվական՝ 773,784.3 հազ. դրամ:

ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
Օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական ծառայություն իրականացնող անձանց մասնակցությամբ կատարված հանցագործությունների և ընտրական գործընթացներին առնչվող քրեական գործերի օբյեկտիվ՝ արդյունավետ նախաքննության իրականացում	1062 ՀՀ հատուկ քննչական ծառայություններ	Ենթադրյալ հանցագործությունների նախաքննությունների թիվը	781	2018թ.	830	2020թ.	ՀՀ կառավարության ծրագրի 2-րդ մասի 2.2 կետ, 3-րդ մաս, 4-րդ մասի 4.1 կետ

5.25 ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՈԼՈՐՏԸ

ՀՀ Քննչական կոմիտեի լիազորություններն են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով իր իրավասությանը վերապահված՝ ենթադրյալ հանցագործությունների կապակցությամբ նախաքննության կազմակերպումը և իրականացում: Որպես միչդատական վարույթ իրականացնող մարմին ՀՀ քննչական կոմիտեն սերտ փոխհամագործակցում է իրավապահ մյուս մարմինների հետ, ինչպես նաև մասնավորապես հետաքննության մարմինների, ինչպես նաև ՀՀ և դատախազության հետ: Դատախազությունը հսկողություն է իրականացնում միչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

ՀՀ քննչական կոմիտեն՝ որպես նախաքննություն իրականացնող մարմին պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի իր գործունեության արդյունքում քրեական օրենսգրքերով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի: ՀՀ քննչական կոմիտեի քննիչները քրեական գործի պատշաճ քննությունն ու դրա արդյունավետությունն ապահովելու նպատակով կատարում են մի շարք քննչական գործողություններ, այդ թվում՝ նշանակում փորձաքննություններ, դատավարական փաստաթղթերը ներկայացնում թարգմանության և այլն: Քննված քրեական գործերով հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառների ու պայմանների պարզումը և դրանք վերացնելու և կանխելու ուղղված միջոցների ձեռնարկելու նպատակով՝ համապատասխան մարմիններին միջնորդագրերի ներկայացնելը, հանցագործությունների քննության մեթոդիկայի ուսումնասիրությունը, քննության դրական փորձի ներդրումը քննչական պրակտիկայում, ստացված դիմումների և բողոքների քննարկումն ու լուծումը, ինչը վերջնական արդյունքում ձգտում է՝ քննության որակի, բազմակողմանիության, լրիվության, օբեկտիվության և արդյունավետության ապահովում, մարդու և քաղաքացու իրավունքների, հիմնարար ազատությունների, անձնական անձեռնմխելիության և մյուս իրավունքների պաշտպանության ապահովում, նախաքնության ժամկետների անհարկի ձգձգումների բացառում, պետությանը և քաղաքացիներին պատճառված վնասի վերականգնման ապահովում, ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու հարցերի լուծում, կոռուպցիոն երևույթների ծագման, դրանց պատճառների և նպաստող

պայմանների բացահայտման ու դրանց կանխմանն ուղղված գործողությունների իրականացումը որը բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի ծրագրից:

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցա-նիշը	Ժամ-կետը	Ցուցա-նիշը	Ժամ-կետը	
Հանցագործությունների օբյեկտիվ և արդյունավետ նախաքննության իրականացում	1180 ՀՀ քննչական ծառայություններ	Ենթադրյալ հանցագործություններով քրեական վարույթների թիվը	*25675*	*2018թ*	*28000*	*2020թ*	ՀՀ կառավարության ծրագրի 2-րդ մասի 2.2 կետի 3-րդ մաս և 4-րդ մասի 4.1 կետ

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ քննչական կոմիտեի կողմից իրականացվող գործունեության հիմնական նպատակն է քրեական գործերի քննությունը, որի շրջանակներում կարող է անհրաժեշտություն առաջանալ նշանակել մի շարք փորձաքննություններ, դատավարական փաստաթղթերը ներկայացնել թարգմանության, իրավական օգնության համար կազմել և ուղարկել միջազգային հարցումներ՝ համապատասխան երկրի պաշտոնական լեզվով, քննիչներին վերապատրաստելու և պատրաստելու ուսուցումը կազմակերպելու համար ներգրավել մի շարք դասընթացներում, համապատասխան վերապատրաստման ծրագրերում, մասնագիտական պատրաստում անցնել ունկնդիրներին կրթաթոշակի տրամադրում և ՀՀ քննչական կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

ՀՀ քննչական ծառայություններ ծրագրի համար 2020 թվականին պետական բյուջեից նախատեսում է 7,876,765.0 հազ. դրամ, 2021 թվականին՝ 8,011,262.0 հազ. դրամ և 2022 թվականին 8,135,233.0 հազ. դրամ:

5.26 ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՈԼՈՐՏԸ

«Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքով ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական վերահսկողության ոլորտում գործող վարչապետին ենթակա մարմին է, որն իրականացնում է սույն օրենքով իրեն վերապահված վերահսկողական լիազորություններ:

Ծառայությունը պետական վերահսկողության շրջանակներում և սույն օրենքով սահմանված կարգով՝

1) պետական կառավարման համակարգի մարմիններում և պետական հիմնարկներում իրականացնում է ուսումնասիրություններ.

2) Սահմանադրությամբ և օրենքներով ստեղծված, պետական կառավարման համակարգի մարմին չհանդիսացող մարմիններում իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոցների կառավարման օրինականության վերահսկողության նպատակով.

3) տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոցների տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով.

4) պետական միջոցների ձևավորման գործառույթ իրականացնող լիազորված անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոցների ձևավորման օրինականության վերահսկողության նպատակով.

5) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ իրավաբանական անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ Հայաստանի Հանրապետության մասնակցությունից ծագող և լիազոր մարմնի, ինչպես նաև կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմնում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի լիազորություններից բխող վերահսկողության իրականացման նպատակով.

6) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ քաղաքացիաիրավական գործարքների կողմ հանդիսացող անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ քաղաքացիաիրավական գործարքներից բխող և դրանց պայմանների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման նպատակով, բացառությամբ պայմանագրից բխող ցուցումներ տալու, որն իրականացվում է պայմանագրով Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող լիազոր մարմնի միջոցով.

7) պետությունից, համայնքից, պետական, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններից, պետության, համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններից նվիրաբերության կամ դրամաշնորհի կարգով միջոցներ ստացած իրավաբանական անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության նպատակով.

8) Հայաստանի Հանրապետությունից սուբսիդիա և դրամաշնորհ ստացած անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոց տրամադրելու համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով.

9) պետական միջոցների կառավարման և ձևավորման հակաօրինական գործողությունների, չարաշահումների վտանգի և հնարավոր վնասների առաջացման ռիսկերի դեպքերում նշված ռիսկերի հիմնավորվածությունը պարզելու, գնահատելու կամ դրանք նվազագույնի հասցնելու նպատակով վարչապետի համաձայնությամբ իրավասու է առաջարկելու կասեցնել գործարքների կատարումը, ինչպես նաև դրանց կնքմանն ուղղված ընթացակարգերը կամ գործողությունները.

10) վարչապետի հանձնարարությամբ իրականացնում է կարգապահական վարույթներ.

11) ստացված դիմումները, բողոքները և առաջարկությունները հասցեագրում է իրավասու պետական կառավարման համակարգի մարմիններին և վերահսկում դրանց ընթացքը.

12) իրականացնում է հանդիպակաց ուսումնասիրություններ սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով.

13) ներկայացնում է վերահսկողության արդյունքներից բխող պահանջվող միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ և իրականացնում դրանց իրականացման նկատմամբ հսկողություն.

14) համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների համապատասխան կառույցների հետ.

15) առաջարկություններ է ներկայացնում պետական կառավարման ոլորտում իրավական ակտերի նախագծերի և փոփոխությունների (լրացումների) վերաբերյալ:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության նպատակների և թիրախների հետ կապը կոռուպցիայի դեմ պայքարն է:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության քաղաքականության հիմնական թիրախներից է՝ ՀՀ պետական միջոցների կառավարման, ձևավորման և օգտագործման արդյունավետության և օրինականության բարձրացումը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից կատարվող աշխատանքների գերակայություններն են.

1) պետական կառավարման համակարգի մարմիններում և պետական հիմնարկներում իրականացնում է ուսումնասիրություններ.
2) Սահմանադրությամբ և օրենքներով ստեղծված, պետական կառավարման համակարգի մարմին չհանդիսացող մարմիններում իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոցների կառավարման օրինականության վերահսկողության նպատակով.
3) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ իրավաբանական անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ Հայաստանի Հանրապետության մասնակցությունից ծագող և լիազոր մարմնի, ինչպես նաև կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմնում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի լիազորություններից բխող վերահսկողության իրականացման նպատակով.
4) Հայաստանի Հանրապետությունից սուբսիդիա և դրամաշնորհ ստացած անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոց տրամադրելու համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ոլորտային թիրախների (վերջնական արդյունքի) ապահովման նպատակով 2020-2022թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից կանխատեսվում է իրականացնել հետևյալ ընդհանուր ծախսերը.

2020 թվականի համար՝ 669,690.0 հազ. դրամ,

2021 թվականի համար՝ 679,735.0 հազ. դրամ,

2022 թվականի համար՝ 689,931.0 հազ. դրամ:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները				Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ	
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
Վերահսկվող օբյեկտի գործունեությունը օրենսդրությանը համապատասխանության գնահատում	1203 Պետական վերահսկողական ծառայություններ	Ոլորտի կագավորման վերաբերյալ ՀՀ վարչապետի կողմից գոհունակության գնահատական 1-10 բալային համակարգում	7	2019թ.	8	2020թ.	Կոռուպցիայի դեմ պայքար

ԳԼՈՒԽ 6. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ներածություն

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագիրը ներկայացնում է ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման համար անհրաժեշտ փոխառու միջոցների ներգրավման, ինչպես նաև ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ռիսկերի կառավարման ռազմավարությունը: Այն եռամյա ծրագիր է, որը վերանայվում և հրապարակվում է տարեկան պարբերականությամբ՝ նպաստելով կառավարության պարտքի կանխատեսելի և թափանցիկ կառավարման ապահովմանը:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը պարզաբանում է պարտք ներգրավելու քաղաքականությունը՝ ներառելով կառավարության պարտքի կառավարման ուղենշային ցուցանիշները, բացահայտում և գնահատում է կառավարության պարտքի կառավարման հետ կապված ռիսկերը, ինչպես նաև նախանշում է այն սկզբունքները, նպատակադրումներն ու իրականացվելիք միջոցառումները, որոնց ներքո կառավարությունը չի վտանգի հարկաբյուջետային կայունությունը:

Պարտքի կառավարումը նշանակալի տեղ ունի պետական հատվածի ֆինանսների կառավարման գործընթացում, որտեղ ռեսուրսների սահմանափակության պայմաններում կառավարությունը պարտք է ներգրավում երկարաժամկետ և կայուն տնտեսական աճին նպաստող հարկաբյուջետային քաղաքականություն իրականացնելու նպատակով:

ՀՀ կառավարության պարտքի ընդունելի պորտֆելի ձևավորման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվում են ծախսերի և ռիսկերի վերլուծություններ՝ կիրառելով նաև միջազգային լավագույն փորձի հիման վրա հեղինակավոր միջազգային ֆինանսական կառույցների կողմից մշակված մոտեցումները: Վերլուծությունները հնարավորություն են ընձեռում գնահատել ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի ու ռիսկերի ցուցանիշները և դրանց վրա հնարավոր շոկերի ազդեցությունները: Ռազմավարությունը կազմելիս հաշվի են առնվել նաև ՀՀ կառավարության պարտքի կառավարման այնպիսի սահմանափակումներ, ինչպիսիք են ներքին շուկայի կարողությունը կամ արտաքին վարկերից օգտվելու հնարավորությունները:

Ընդհանուր առմամբ, ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը ներկայացնում է ծախսերի և ռիսկերի համադրման հնարավոր տարբերակներից նախընտրելին, որն այլ կերպ անվանվում է հիմնական հնարավոր սցենար, և որի ընտրության հիմքում ընկած է ընդունելի ծախսերով ֆինանսական կարիքի բավարարումը և պարտքի կայունությունը:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության նպատակները և ընդգրկման շրջանակը

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը մշակվում է 2008թ. ընդունված «Պետական պարտքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան:

«Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ կառավարության պարտքի կառավարման հիմնական նպատակը կառավարության ֆինանսական կարիքների բավարարման մշտական հնարավորության ապահովումն է՝ երկարաժամկետ հատվածում նվազեցնելով պարտքի սպասարկման մեծությունը: Կառավարության պարտքի կառավարման նպատակներն են.

1) կառավարության պարտքի օպտիմալ կառուցվածքի ձևավորումը՝ հաշվի առնելով պոտենցիալ ռիսկերը,

2) պետական պարտքի կառավարման և դրամավարկային քաղաքականությունների համակարգումը:

Այլ կերպ ասած, պարտքի կառավարման ռազմավարության նպատակը պարտքի պորտֆելի ցանկալի կառուցվածքի ձևավորումն է՝ հաշվի առնելով պարտքի պորտֆելի ծախսերի և ռիսկերի հետ կապված ՀՀ կառավարության նախապատվությունները:

«Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքով սահմանվել են նաև պետական պարտքի ներգրավման հետևյալ նպատակները.

1) պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը և ընթացիկ իրացվելիության ապահովումը,

2) վճարային հաշվեկշռի աջակցությունը և պահուստների համալրումը,

3) ներքին պետական պարտքի շուկայի պահպանումը և զարգացումը:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունն ընդգրկում է միայն ՀՀ կառավարության պարտքը (ներառյալ ՀՀ կառավարության կողմից տրամադրված երաշխիքները), և կատարված վերլուծությունները չեն ներառում ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը: Վերջինս ստանձնվում է ՀՀ կենտրոնական բանկի անունից և կողմից: Ավելին, «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի համաձայն Կենտրոնական բանկի պարտքի կառավարման նպատակները սահմանվում են «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունում ներկայացվում և վերլուծվում են ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի շուկայական՝ փոխարժեքի, վերաֆինանսավորման, տոկոսադրույքի ռիսկերը, ինչպես նաև ոչ շուկայական՝ գործառնական ռիսկը:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ոլորտում 2018թ. տարեսկզբից արձանագրված զարգացումները

- 2018թ. տարեվերջին ՀՀ կառավարության պարտք / ՀՆԱ ցուցանիշը կազմել է 51.3%, որը պակաս է ծրագրային ցուցանիշից 2.9 տոկոսային կետով:
- ՀՀ կառավարության պարտքի կառավարման արդյունքում 2019-2021թթ. ռազմավարական ծրագրով սահմանված ուղենշային ցուցանիշներից չորսը գտնվել են նախանշված միջակայքերում, իսկ «ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ» ցուցանիշը նախորդ տարվա նկատմամբ բարելավվել է 0.7 տոկոսային կետով.

	Ուղենիշ	**31.12.2018թ. փաստ**
Վերաֆինանսավորման ռիսկ		
Մինչև մարում միջին ժամկետը	8 – 11 տարի	8.7 տարի
Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին)	առավելագույնը 20%	12.9 %
Տոկոսադրույքի ռիսկ		
Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 80%	85.0 %
Փոխարժեքի ռիսկ		

Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 20%	21.8 %
ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 20%	19.1 %

- 2018թ. դեֆիցիտի ֆինանսավորումը ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների) կազմել է 48.0 մլրդ դրամ, իսկ արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին՝ 85.3 մլրդ դրամ:
- ՀՀ ֆինանսների նախարարի՝ 2018 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 445-Ա հրամանով հաստատվել է ՀՀ ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության «Գործառնական ռիսկերի կառավարման շրջանակը» և «Բիզնես գործընթացների շարունակականության ծրագիրը»՝ կառավարելու այն գործառնական ռիսկերը, որոնք կարող են վտանգել կամ վնասել ՀՀ կառավարության պարտքի կառավարման գործառնությունների իրականացումը:
- 2018թ. ընթացքում պետական գանձապետական պարտատոմսերի գծով իրականացվել են հետևյալ գործառնությունները.

2018թ.	Տեղաբաշխված ծավալը	Տեղաբաշխումից մուտքը	Մարման և հետգնման ծավալը	Վճարված տոկոսագումարը
Պետական գանձապետական պարտատոմսեր, մլրդ դրամ	158.1	166.2	118.2	64.0

- 2018թ. արտաքին վարկերի գծով կատարված գործառնություններն ունեն հետևյալ տեսքը.

2018թ.	Ստացման ծավալը	Մարման ծավալը	Վճարված տոկոսագումարը
Արտաքին վարկեր, մլն ԱՄՆ դոլար	319.7	141.8	89.0
Արտաքին վարկեր, մլրդ դրամ	154.5	69.2	43.2

- 2018թ. ընթացքում արտարժութային պետական պարտատոմսերի գծով իրականացված գործառնությունները.

2018թ.	Թողարկման ծավալը	Մարման և հետգնման ծավալը	Վճարված տոկոսագումարը
Արտարժութային պետական պարտատոմսեր, մլն ԱՄՆ դոլար	0.0	0.0	65.8
Արտարժութային պետական պարտատոմսեր, մլրդ դրամ	0.0	0.0	31.8

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի նկարագիրը և վերջինիս ծախսերի ու ռիսկերի վերլուծությունը

ՀՀ կառավարության պարտքի ծավալի ու ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերակցությունը ներկայացված է գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1. ՀՀ կառավարության պարտքի ծավալի ու ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերակցությունը 2000-2018թթ.

2000 թվականից մինչ 2008թ. ՀՀ կառավարության պարտք / ՀՆԱ ցուցանիշն աստիճանաբար նվազել է՝ 39.8%-ից հասնելով 14.9%-ի, որին ՀՀ կառավարության պարտքի դանդաղ աճին զուգահեռ նպաստել է նաև այդ ժամանակահատվածում դրամի արժևորումը և ՀՆԱ-ի երկնիշ աճի տեմպը: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքով ՀՀ կառավարության պարտք / ՀՆԱ ցուցանիշը 2009 թվականից կտրուկ աճ արձանագրեց՝ 2008թ. 14.9% դիմաց կազմելով 34.6%: ՀՀ կառավարության պարտքի ծավալի աճի տեմպն արագացավ նաև 2014թ. տեղի ունեցած արտաքին տնտեսական շոկերի պայմաններում դրամի արժեզրկման, ինչպես նաև փոխառու միջոցների հաշվին պակասուրդի զուտ ֆինանսավորման ծավալների աճի արդյունքում, և 2017թ. տարեվերջին ՀՀ կառավարության պարտք / ՀՆԱ ցուցանիշը կազմեց 53.7%: ՀՀ կառավարության կողմից հարկաբյուջետային կանոնների նոր համարգին համահունչ 2018թ. ՀՀ կառավարության պարտք / ՀՆԱ ցուցանիշը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 2.4 տոկոսային կետով՝ կազմելով 51.3%:

2000 թվականից ի վեր պետական գանձապետական պարտատոմսերի կշիռը ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում աստիճանաբար ավելացել է՝ 2018թ. դրությամբ կազմելով 19.1%:

Գծապատկեր 2. ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ գործիքակազմի

2013թ. Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային կապիտալի շուկա մուտք գործելուց հետո թողարկված արտարժութային պետական պարտատոմսերի կշիռը 2018թ. դրությամբ կազմել է ՀՀ կառավարության պարտքի 15.7%-ը:

2000 թվականից ի վեր SDR-ով ներգրաված պարտքի կշիռն աստիճանաբար նվազել է, իսկ ԱՄՆ դոլարով ներգրաված պարտքի կշիռն աճել է՝ 2018թ. դրությամբ համապատասխանաբար կազմելով 24.1% և 43.7%:

Գծապատկեր 3. ՀՀ կառավարության պարտքի արժութային կառուցվածքը

ՀՀ կառավարության պարտքի արժութային կառուցվածքում 2018թ. դրությամբ ՀՀ դրամով ներգրաված պարտքի կշիռը կազմել է 19.1%:

2000 թվականից ի վեր ՀՀ կառավարության ներքին պարտքի կշիռն աստիճանաբար աճել է՝ 2018թ. դրությամբ կազմելով 21.8%:

Գծապատկեր 4. ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ ռեզիդենտության

2000 թվականից մինչ 2008թ. ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն աստիճանաբար աճել է մինչև 98.4%-ի, որից հետո 2009թ, համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը մեղմելու նպատակով ՀՀ կառավարությունը Ռուսաստանի Դաշնությունից 500 միլիոն ԱՄՆ դոլարի լողացող տոկոսադրույքով վարկ ներգրավելու հետևանքով, այդ ցուցանիշն էապես նվազել է և կազմել է 75.3%: 2013թ. ֆիքսված տոկոսադրույքով եվրապարտատոմսերի թողարկման և վերը նշված լողացող տոկոսադրույքով վարկն ամբողջությամբ մարելու արդյունքում ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռը կրկին աճել է:

Գծապատկեր 5. ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի տեսակի

Միջազգային վարկատուների կողմից վերջին տարիներին վերանայվել են նախկինում տրամադրված և, հատկապես, նոր տրամադրվող վարկերի պայմանները՝ մեծացնելով լողացող տոկոսադրույքով վարկերի կշիռը: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում 2018թ. դրությամբ ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռը կազմել է 85.0%:

Գծապատկեր 6. ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ շուկայական և ոչ շուկայական գործիքակազմի*

*Շուկայական գործիքակազմով պարտք են համարվել արտարժութային պարտատոմսերը և գանձապետական պարտատոմսերը, բացառությամբ խնայողական պարտատոմսերի, իսկ ոչ շուկայական պարտք՝ արտաքին վարկերը (որոնք ունեն արտոնյալության որոշակի աստիճան), խնայողական պարտատոմսերը, արտաքին և ներքին երաշխիքները:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում 2013թ. և 2015թ. թողարկված եվրապարտատոմսերի և 2013թ. Ռուսաստանի Դաշնության վարկի մարման գործոններն էապես նպաստել են 2013 թվականից ի վեր շուկայական գործիքակազմով պարտքի կշռի ավելացմանը, որը 2018թ. դրությամբ կազմել է 34.6%:

ՀՀ կառավարության վարկերի և փոխառությունների կառուցվածքում գերակշռում են միջազգային կազմակերպություններից ներգրաված վարկերը, որոնց կշիռը 2018թ. տարեվերջին կազմել է 76.9%:

Գծապատկեր 7. ՀՀ կառավարության վարկերի և փոխառությունների կառուցվածքն ըստ վարկատուների

Գանձապետական պարտատոմսերի կառուցվածքում դեռևս գերակշռում են բանկ ներդրողները, որոնց կշիռը 2018թ. տարեվերջին կազմել է 54.6%:

Գծապատկեր 8. Պետական գանձապետական պարտատոմսերի կառուցվածքն ըստ ներդրողների*

*ՀՀ

*կենտրոնական բանկի կշիռը ներառում է ռեպո գործառնությունների համար գրավադրված պարտատոմսերի ծավալը:

2009 թվականից հետո պետական գանձապետական պարտատոմսերի կառուցվածքում աստիճանաբար ավելացել են ոչ բանկ ներդրողները, որոնց կշիռը 2018թ. դրությամբ կազմել է 20.5%:

2018թ. տարեվերջին ՀՀ կառավարության ծախսերի և ռիսկերի ցուցանիշներն ունեցել են հետևյալ տեսքը.

Աղյուսակ 1. ՀՀ կառավարության պարտքի ծախսերի և ռիսկերի ցուցանիշները 31.12.2018թ. դրությամբ

		Արտարժութային պարտք	**Դրամային պարտք**	**Ընդամենը**
ՀՀ կառավարության պարտքի ծավալը (մլրդ դրամ)		2,494.8	588.1	3,082.9
ՀՀ կառավարության պարտքի ծավալը (մլն ԱՄՆ դոլար)		5,157.1	1,215.7	6,372.9
ՀՀ կառավարության պարտք / ՀՆԱ, (%)		41.5	9.8	51.3
Ծախսի ցուցանիշներ	Տոկոսավճար / ՀՆԱ, (%)	1.3	1.0	2.3
	Միջին կշռված տոկոսադրույքը (%)	3.2	10.3	4.7
Վերաֆինանսավորման ռիսկ	Մինչև մարում միջին ժամկետը (տարի)	8.6	9.1	8.7
	Մեկ տարվա ընթացքում մարվող պարտքի կշիռը (% ընդամենի մեջ)	3.2	13.0	5.0
Տոկոսադրույքի ռիսկ	Մինչև վերաֆիքսում միջին ժամկետը (տարի)	6.7	9.1	7.1
	Առաջիկա տարում վերաֆիքսվող պարտքի կշիռը (% ընդամենի մեջ)	21.4	13.0	19.8
	ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռը (% ընդամենի մեջ)	81.4	100.0	85.0
Փոխարժեքի ռիսկ	Արտարժութային պարտքի կշիռը (% ընդամենի մեջ)	-	-	80.9
	Արտարժութային կարճաժամկետ պարտք (մարումներ և տոկո-սագումարներ) / միջազգային պահուստներ, (%)	-	-	7.2

Կառավարության պարտքի ծախսերը բնութագրելու համար կիրառվել են հետևյալ ցուցանիշները՝ ա) պարտքի պորտֆելի միջին կշռված տոկոսադրույքը, բ) տոկոսավճարի կշիռը պետական բյուջեի եկամուտների մեջ և գ) տոկոսավճարի կշիռը ՀՆԱ-ի մեջ:

2018թ. ընթացքում ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի միջին տոկոսադրույքը (պարտքի տոկոսավճարի հարաբերությունը նախորդ տարվա վերջի դրությամբ պարտքի մնացորդին) կազմել է 4.7%: Նույն մեթոդով հաշվարկված ՀՀ կառավարության արտաքին պարտքի միջին տոկոսադրույքը կազմել է 3.2%՝ նախորդ տարվա 3.1%-ի դիմաց: Այս տոկոսադրույքն ունի աճման միտում, որովհետև միջին եկամուտ ունեցող երկրների շարքին դասվելու արդյունքում Հայաստանին այլևս հասանելի չեն միջազգային կառույցների կողմից տրամադրվող արտոնյալ վարկերը և Համաշխարհային բանկի ու Ասիական զարգացման բանկի կողմից իրականացվել է նախկինում տրամադրված արտոնյալ վարկերի տոկոսադրույքների վերանայում՝ բարձրացման ուղղությամբ: Ինչ վերաբերում է ներքին պարտքի միջին տոկոսադրույքին, ապա այն կազմել է 10.3%՝ նախորդ տարվա 10.6%-ի դիմաց:

ՀՀ կառավարությունը 2018թ. ընթացքում պարտքի գծով վճարել է 139.0 մլրդ դրամ տոկոսավճար, որը կազմել է պետական բյուջեի եկամուտների 10.4%-ը, պետական բյուջեի ծախսերի 9.6%-ը և ՀՆԱ-ի 2.3%-ը: Երեք ցուցանիշներն էլ արտահայտում են ՀՀ կառավարության պարտքի ծախսերի չափավոր մակարդակ: ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճար / պետական բյուջեի եկամուտներ և ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճար / պետական բյուջեի ծախսեր ցուցանիշները միջնաժամկետ հատվածում նվազում են՝ ժամանակահատվածի վերջում կազմելով համապատասխանաբար 10.1% և 9.3%, իսկ ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճար / ՀՆԱ ցուցանիշը ժամանակահատվածի վերջում կկազմի 2.5%:

ՀՀ կառավարությունը պարտքի արդյունավետ կառավարման խնդիրը լուծելու տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունի ռիսկերի կառավարումը: Ռիսկերի կառավարման նպատակը չնախատեսված կորուստներից խուսափումն ու գործառնությունների անընդհատության ապահովումն է:

Փոխարժեքի ռիսկ

ՀՀ կառավարության պարտքի առկա պորտֆելում շուկայական ռիսկերից ամենաէականը փոխարժեքի ռիսկն է: Փոխարժեքի ռիսկը հիմնականում չափվում է հետևյալ երկու ցուցանիշներով՝ ա) արտարժութային պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ և բ) արտարժութային կարճաժամկետ պարտքի կշիռը միջազգային պահուստների մեջ:

ՀՀ կառավարության պարտքի ներկայիս պորտֆելը կրում է փոխարժեքի մեծ ռիսկ, քանի որ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքի գերակշիռ մասը՝ 80.9%-ը ներգրավված է արտարժույթով (նախորդ տարվա համեմատ նվազել է 0.7 տոկոսային կետով):

Գծապատկեր 9. ՀՀ կառավարության արտարժութային և դրամային պարտքերի հարաբերակցությունը 2017-2018թթ.

ՀՀ կառավարության արտարժույթով ներգրավված պարտքի պորտֆելի արտարժութային կառուցվածքը ներկայացված է ստորև.

Գծապատկեր 10. ՀՀ կառավարության արտարժութային պարտքի պորտֆելի կառուցվածքը 2018թ. տարեվերջին

Աջ գծապատկերը ցույց է տալիս արտարժութային պարտքի պորտֆելի կառուցվածքը՝ SDR-ի համապատասխան արտարժույթների կշիռներով բաշխմամբ:

Արտարժութային պարտքի մեծ կշիռը հետևանք է պարտքի պորտֆելում երկկողմ և բազմակողմ արտաքին վարկատուների կողմից տրամադրված փոխառությունների գերակայության, որոնց մեծ մասը երկարաժամկետ, արտոնյալ ժամկետով և ֆիքսված տոկոսադրույքով փոխառություններ են: 2018թ. արտարժութային կարճաժամկետ պարտքի կշիռը միջազգային պահուստների մեջ ցուցանիշն աճել է նախորդ տարվա նկատմամբ 1.2 տոկոսային կետով և կազմել է 7.2%:

Վերաֆինանսավորման ռիսկ

Կառավարության պարտքի պորտֆելի վերաֆինանսավորման ռիսկը գնահատվում է հիմնականում երեք ցուցանիշներով՝ ա) մեկ տարվա ընթացքում մարվող պարտքի կշիռը, բ) մինչև մարում միջին ժամկետը և գ) կառավարության պարտքի պորտֆելի մարման գրաֆիկը:

ՀՀ կառավարության պարտքի առկա պորտֆելը կրում է վերաֆինանսավորման ցածր ռիսկ, քանի որ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առաջիկա տարվա ընթացքում մարվող պարտքի կշիռը կազմել է 5.0%՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 0.3 տոկոսային կետով: Ընդ որում ՀՀ

կառավարության արտաքին պարտքի մեկ տարվա ընթացքում մարման կշիռը կազմել է ընդամենը 3.3%, իսկ ներքին պարտքի համար այն կազմել է 11.4%: Սակայն, ներքին պարտքի կշռի փոքր լինելու արդյունքում, վերաֆինանսավորման ռիսկը ներքին պարտքի համար ևս չափավոր է:

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետի ցուցանիշը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 8.7 տարի: Ընդ որում, ՀՀ կառավարության արտաքին պարտքի մինչև մարում միջին ժամկետը կազմել է 8.8 տարի՝ նախորդ ժամանակահատվածի 9.0 տարվա դիմաց, իսկ ներքին պարտքինը՝ 8.4 տարի՝ նախորդ ժամանակահատվածի 7.4 տարվա դիմաց: Այս ցուցանիշը նույնպես հաստատում է ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի վերաֆինանսավորման ռիսկի չափավոր լինելը:

Վերաֆինանսավորման ռիսկն առավել պատկերավոր է ներկայացված մարման գրաֆիկի միջոցով, որտեղ 2020թ. և 2025թ. մարման մեծ ծավալները պայմանավորված են թողարկված երկու եվրապարտատոմսերի մարումներով, որոնք համապատասխանաբար կազմում են տվյալ տարում մարվող պարտքի 58.4%-ը և 60.0%-ը:

Գծապատկեր 11. Կառավարության պարտքի մարումների գրաֆիկն ըստ գործիքակազմի 31.12.2018թ. դրությամբ

2018թ. տարեվերջին ձևավորված կառավարության արտաքին պարտքի մարումները սփռված են մինչև 2054թ., իսկ ներքին պարտքինը՝ մինչև 2047թ.:

Կառավարության պարտքի մարումների գրաֆիկն ըստ ներքին և արտաքին պարտքերի տարանջատման, այսինքն ըստ ռեզիդենտության, ունի հետևյալ տեսքը.

Գծապատկեր 12. Կառավարության պարտքի մարումների գրաֆիկը 31.12.2018թ. դրությամբ

Տոկոսադրույքի ռիսկ

Կառավարության պարտքի պորտֆելի տոկոսադրույքի ռիսկը գնահատվում է հիմնականում երեք ցուցանիշներով՝ ա) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ, բ) առաջիկա տարում վերաֆիքսվող պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ, գ) մինչև վերաֆիքսում միջին ժամկետը:

ՀՀ կառավարության պարտքի 85.0%-ը ֆիքսված տոկոսադրույքով է, ընդ որում արտաքին պարտքի 80.8%-ն է ֆիքսված տոկոսադրույքով, իսկ ներքին պարտքն՝ ամբողջությամբ: Այս պարագայում լողացող տոկոսադրույքով պարտքի տոկոսադրույքների աճը չի կարող հանգեցնել ծախսերի նշանակալի աճի:

Այնուամենայնիվ, ՀՀ կառավարության պարտքի 19.8%-ը ենթակա է վերաֆիքսման 2019թ-ին և պարունակում է չափավոր տոկոսադրույքի ռիսկ:

Մինչև վերաֆիքսում միջին ժամկետի ցուցանիշը 2018թ. վերջին կազմել է 7.1 տարի, որը պարունակում է պարտքի պորտֆելի տոկոսադրույքի ռիսկի ցածր մակարդակ: Այս ցուցանիշն ավելի փոքր է, քան մինչև մարում միջին ժամկետի ցուցանիշը, քանի որ պարտքի 15.0%-ը լողացող տոկոսադրույքով է, որը ևս ենթակա է վերաֆիքսման 2019թ. ընթացքում:

ՀՀ կառավարության պարտքի առկա պորտֆելի ծախսերի և ռիսկերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պարտքի առկա պորտֆելը ամենաշատը կրում է փոխարժեքի ռիսկի ազդեցությունը:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2020-2022թթ. ռազմավարությունը

Մակրոտնտեսական ենթադրությունները և հիմնական ռիսկերի գործոնները

Պարտքի ռազմավարության մշակման ժամանակ կիրառվող մակրոտնտեսական ցուցանիշները պետք է համադրելի լինեն հարկաբյուջետային քաղաքականության մշակման ժամանակ կանխատեսվող մակրոտնտեսական շրջանակի հետ: Այդ պատճառով ՀՀ կառավարության պարտքի ռազմավարության հիմքում ընկած են 2020-2022թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հետ համահունչ մակրոտնտեսական կանխատեսումներ: Մակրոտնտեսական ցուցանիշներն ու դրանց հետ կապված ռիսկերի վերլուծությունները մանրամասն ներկայացված են 2020-2022թթ. ՄԺԾԾ-ի «Մակրոտնտեսական վերլուծություններ և կանխատեսումներ» բաժնում:

Մակրոտնտեսական իրատեսական կանխատեսումների մուտքագրումը պարտքի ծախսերի և ռիսկերի վերլուծության ժամանակ առանցքային նշանակություն ունի, քանի որ դրանց շեղումները կարող են էականորեն փոխել ռիսկերի ցուցանիշների մակարդակը և ուղղվածությունը: Այլ կերպ ասած, ինչպես շուկայական փոփոխականների, այնպես էլ մակրոտնտեսական ցուցանիշների տատանումները կարող են նշանակալի ազդեցություն ունենալ ՀՀ կառավարության պարտքի ռիսկի ցուցանիշների վրա:

2020-2022թթ. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության հիմքում ընկած հիմնական ցուցանիշներն արտացոլված են ստորև ներկայացվող աղյուսակում:

Աղյուսակ 2. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության հիմքում ընկած հիմնական ցուցանիշները 2019-2022թթ. (մլրդ դրամ)

	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2022թ. կանխ.
ՀՆԱ (անվանական)	6,455.3	6,975.4	7,615.7	8,320.6
Իրական ՀՆԱ ինդեքս, %	105.4	104.9	105.0	105.1
ՀՆԱ դեֆլյատոր, %	102.0	103.0	104.0	104.0
Պետական բյուջեի եկամուտներ	1,496.5	1,710.6	1,858.8	2,051.1
Պետբյուջեի ծախսեր	1,648.1	1,868.2	2,027.7	2,235.5
Պետական բյուջեի առաջնային ծախսեր	1,490.1	1,685.2	1,838.1	2,027.5
Պետբյուջեի առաջնային պակասուրդ	6.4	25.4	20.6	23.5
Պետբյուջեի պակասուրդ	151.6	157.6	169.0	184.4

2020-2022թթ. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության հիմքում ընկած են մակրոտնտեսական իրավիճակի որոշակի բարելավման և դրամավարկային մեղմ պայմանների պահպանման վերաբերյալ ենթադրություններ, սակայն արտաքին տնտեսական միջավայրից բխող շոկերի ի հայտ գալը որոշակի ռիսկեր կարող է առաջացնել ռազմավարությամբ նախատեսվող նպատակադրումների ապահովման տեսակետից:

<u>Նպատակադրումներն ու իրականացվելիք միջոցառումները</u>

- Միջնաժամկետ հատվածում ՀՀ կառավարության պարտք / ՀՆԱ հարաբերակցությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ չի գերազանցի «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված 60 տոկոս սահմանային շեմը: Կանխատեսվում է, որ 2019-2022թթ. ընթացքում յուրաքանչյուր տարվա վերջին ՀՀ կառավարության պարտք / ՀՆԱ ցուցանիշը գերազանցելու է 40%-ը, ուստի, համաձայն «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ

հոդվածի 7-րդ կետի, կիրառվելու են «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված հարկաբյուջետային կանոնները:

Աղյուսակ 3. ՀՀ կառավարության պարտքի ցուցանիշները 2019-2022թթ.

	2019թ. պետբյուջեի ծրագիր	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2022թ. կանխ.
ՀՀ կառավարության պարտք (մլրդ դրամ)	3,361	3,370.6	3,636.7	3,909.7	4,204.9
% ՀՆԱ-ի նկատմամբ	49.7	52.2	52.1	51.3	50.5

- Միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում, շուկայի մասնակիցների կազմի ու կառուցվածքի նպատակաուղղված փոփոխության և թվաքանակի էական մեծացման պայմաններում, կաճի պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներում ներքին փոխառու միջոցների տեսակարար կշիռը: Այն միտված կլինի նվազեցնել փոխարժեքի ռիսկը, ինչպես նաև հիմքեր կստեղծի ֆինանսական շուկայում նոր գործիքների (լողացող, ինդեքսավորվող, նպատակային և այլն) կիրառման ու շուկայի հետագա զարգացման համար: Կենսաթոշակային և ապահովագրական բարեփոխումների ընթացքով պայմանավորված՝ հնարավոր կլինի արագացնել պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներում ներքին փոխառու միջոցների տեսակարար կշռի մեծացման գործընթացը:
- Որպես ներքին պետական պարտքի կառավարման նպատակադրում՝ կշարունակվի դիտարկվել պետական գանձապետական պարտատոմսերի իրացվելիության աճը՝ մեծացնելով շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը:
- Ֆինանսական շուկաներում բարենպաստ զարգացումների պայմաններում կդիտարկվի ֆինանսական միջոցների որոշակի կուտակման և բուֆերի ապահովման հնարավորությունը: Ներքին և արտաքին շուկաներում անցանկալի գործընթացների դեպքում այն թույլ կտա ՀՀ պետական բյուջեի կատարումն իրականացնել առանց ցնցումների, ինչպես նաև հարկ եղած

դեպքում ճշգրտել պետական գանձապետական պարտատոմսերով դեֆիցիտի ֆինանսավորման չափը:

- Միջազգային լավագույն փորձին համապատասխան կվերանայվի պարտքային գործառ-նությունները կարգավորող օրենսդրությունը:
- Պարտքի արդյունավետ կառավարման կարևորագույն գործոններից է թափանցիկության ու հասարակության հետ մշտական հաղորդակցության ապահովումը: Այդ նպատակով կառավարությունը կշարունակի ներդրողների ու հանրության հետ բաց ու հրապարակային աշխատանքները և պարտքի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը:
- 2020թ. մարվող եվրապարտատոմսերը վերաֆինանսավորելու նպատակով կիրականացվի նոր եվրապարտատոմսերի տեղաբաշխում:
- ՀՀ ֆինանսների նախարարությունը կշարունակի պետական գանձապետական պարտատոմսերի հետգնումների, փոխանակումների իրականացումը՝ նպատակ ունենալով հարթեցնել պարտքի մարման գրաֆիկը և նվազեցնել վերաֆինանսավորման ռիսկը, ինչպես նաև բարձրացնել տեղաբաշխվող պարտատոմսերի իրացվելիությունը և նպաստել երկրորդային շուկայի զարգացմանը:
- Կներդրվի պետական գանձապետական պարտատոմսերի փոխանակման աճուրդների կազմակերպման էլեկտրոնային համակարգ:
- Կարևորելով պետական գանձապետական պարտատոմսերի մանրածախ շուկայի զարգացումը՝ քայլեր կձեռնարկվեն խնայողական պարտատոմսերի ներդրողների շրջանակը մեծացնելու և ժամկետայնությունը երկարացնելու ուղղությամբ: Այս առումով, կառավարության նկատմամբ վստահության ամրապնդման ուղղությամբ քայլերին զուգահեռ, կիրականացվեն հանրային իրազեկման աշխատանքներ պոտենցիալ ներդրողների շրջանում:
- Համագործակցությունն արտաքին վարկատուների հետ կշարունակվի և կխորացվի՝ նախա-պատվությունը տալով վարկավորման առավել բարենպաստ պայմաններով և ազատ փոխարկելի արժույթով փոխառու միջոցներ տրամադրող վարկատուների հետ համագործակցությանը:

Ուղենշային ցուցանիշները

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի արդյունավետ կառավարման նպատակով անհրաժեշտ է բացահայտել և գնահատել ՀՀ կառավարության պարտքի պորտֆելին բնորոշ ռիսկերը: Այդ պատճառով ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը սահմանում է պարտքի պորտֆելի ռիսկերի ուղենշային ցուցանիշներ, որոնց նպատակն է որոշակի սահմանափակումների միջոցով պահպանել փոխարժեքի, տոկոսադրույքի և վերաֆինանսավորման ռիսկերը վերահսկելիության շրջանակներում: Ուղենշային ցուցանիշները սահմանվել են՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության պարտքի կառավարման միջավայրին բնորոշ առանձնահատկություններն ու սահմանափակումները:

Աղյուսակ 4. ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի 2020-2022թթ. ուղենշային ցուցանիշները

	Ուղենիշ
Վերաֆինանսավորման ռիսկ	
Մինչև մարում միջին ժամկետը	8 – 11 տարի
Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին)	առավելագույնը 20%
Տոկոսադրույքի ռիսկ	
Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 80%
Փոխարժեքի ռիսկ	
Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 20%
ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 20%

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության ընտրությունը

ՀՀ կառավարության պարտքի կառավարման հիմնական ռիսկերը կառավարելիության շրջանակներում պահելու, և հատկապես բարձր փոխարժեքի ռիսկը նվազեցնելու նպատակով որպես ռազմավարական նպատակադրում դիտարկվում է ներքին պետական պարտքի շուկայի զարգացումը և կառավարության պարտքի մեջ ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշռի ավելացումը:

Ստորև ներկայացվում է համադրելի միջազգային վարկանիշ ունեցող որոշ երկրների «Կառավարության արտարժութային պարտքի կշիռն ընդհանուր պարտքի մեջ» ցուցանիշի համեմատականը:

Գծապատկեր 13. Համադրելի միջազգային վարկանիշ ունեցող երկրների կառավարությունների արտարժութային պարտքի ծավալները 2018թ. տարեվերջի դրությամբ

Աղբյուրը. Պարտքի ցուցանիշների մասով՝ համապատասխան երկրների ֆինանսների նախարարությունների կայքէջեր և վարկանիշի մասով՝ https://tradingeconomics.com/country-list/rating կայք:

Ընդ որում, ԱՄՀ-ի կողմից հրապարակված (մայիսի 9, 2013թ.) կապիտալի շուկա մուտք ունեցող երկրների պետական պարտքի կայունության ուղեցույցում զարգացող երկրների համար պարտքի պորտֆելի ուղենշային ցուցանիշների շարքում ոչ ռեզիդենտների նկատմամբ պետական պարտքի մասնաբաժնի ռիսկային համարվող մակարդակը 60%-ն է:

Ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորումն իրականացվելու է մինչև մեկ տարի մարման ժամկետով պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսեր, 3 և 5 տարի մարման ժամկետով միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր, 10 և 30 տարի մարման ժամկետով երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր, ինչպես նաև 6 ամիս, 1, 2 և 3 տարի մարման ժամկետով խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր տեղաբաշխելու միջոցով:

Արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորումն իրականացվելու է երկկողմ և բազմակողմ միջազգային վարկատուներից նպատակային և բյուջետային աջակցության վարկեր ներգրավելու միջոցով:

Ստորև ներկայացվում է ծախսերի և ռիսկի տեսակետից ընտրված սցենարի (Ռ1) ու այլընտրանքային երկու սցենարների արդյունքները: Որպես այլընտրանքային երկրորդ սցենար (Ռ2) է դիտարկվել ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի կրկնակի ավել ծավալներով ֆինանսավորումը՝ ընտրված սցենարի նկատմամբ, և որպես այլընտրանքային երրորդ սցենար (Ռ3) է դիտարկվել ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի կրկնակի պակաս ծավալներով ֆինանսավորումը, կամ որ նույնն է՝ արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին ավելի մեծ ծավալներով դեֆիցիտի ֆինանսավորումը: Արդյունքում ստացվել է հետևյալը.

Գծապատկեր 15. ՀՀ կառավարության պարտք / ՀՆԱ ցուցանիշը 2022թ.

Գծապատկերը ցույց է տալիս, որ նշված երեք ռազմավարություններից ակնհայտ ոչ նախընտրելին Ռ2-ն է, քանի որ ՀՀ կառավարության պարտք / ՀՆԱ ցուցանիշն ամենաբարձրն է և միաժամանակ 2020թ. կիրառված փոխարժեքի 30% շոկի դեպքում ամենամեծ ռիսկը պարունակում է Ռ2 ռազմավարությունը: Առաջին հայացքից կարող է թվալ, որ ամենանախընտրելին Ռ3 ռազմավարությունն է (Ռ1 հիմնական սցենարի նկատմամբ 0.04 տոկոսային կետով պակաս ծախս և 0.01 տոկոսային կետով պակաս ռիսկ), սակայն ռազմավարությունների ընտրությունը կատարվում է ծախսերի և ռիսկերի ցուցանիշների մի ամբողջ համակարգի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում: Մասնավորապես, եթե Ռ3 և Ռ1 սցենարների նկատմամբ կիրառենք 30% փոխարժեքի շոկ՝ 2020թ. արժեզրկելով ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի, եվրոյի և SDR-ի նկատմամբ, ապա ՀՀ կառավարության պարտք / ՀՆԱ հարաբերակցությունը 2022թ. տարեվերջին Ռ3 սցենարի համար կկազմի 61.8%՝ ավել լինելով Ռ1 սցենարից 0.1 տոկոսային կետով: Ռ3 ռազմավարությունը ենթադրում է արտարժութային պարտքի կշռի ավելացում, հետևաբար ավելի մեծ փոխարժեքի ռիսկ, որն արդեն իսկ կառավարության առկա պարտքի գծով ամենաէական ռիսկն է:

Ավելացնենք, որ փոխարժեքի 30% արժեզրկման շոկը Համաշխարհային բանկի և ԱՄՀ կողմից մշակված պարտքի միջնաժամկետ ռազմավարության վերլուծական գործիքում կիրառվող ներքին արժույթի արժեզրկման տիպային առավելագույն շոկն է: ՀՀ դրամի պատմական առավելագույն

արժեզրկման մեծությունը կազմել է 23.6% (հիմք է ընդունվել ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի տարեվերջի դրությամբ ձևավորված փոխարժեքները):

Վերը նշված վերլուծությունը հավաստում է, որ անհրաժեշտ է զարգացնել ներքին պետական պարտքի շուկան և աստիճանաբար ավելացնել փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման մեջ ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման կշիռը՝ հաշվի առնելով պոտենցիալ ռիսկերը: Ուստի, համադրելով բոլոր գործոնները, նախընտրելի է համարվել Ռ1 ռազմավարությունը (հիմնական սցենարը):

Ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման կառուցվածքը նախատեսելիս հաշվի են առնվել տնտեսությունում մակրոմիջավայրի բարելավման միտումները, իրացվելիության առկա մակարդակն ու պետական գանձապետական պարտատոմսերի նկատմամբ ձևավորված կայուն պահանջարկը:

2019-2022թթ. համար պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին նախատեսվում է իրականացնել հետևյալ կերպ.

Աղյուսակ 5. Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին 2019-2022թթ (մլրդ դրամ)

	2019թ. պետբյուջեի ծրագիր	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2022թ. կանխ.
Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին	225.4	215.6	219.0	236.3
որից՝				
Ներքին փոխառու զուտ միջոցներ (առանց մուրհակների)	70.0	90.0	110.0	130.0
Արտաքին փոխառու զուտ միջոցներ	155.4	125.6	109.0	106.3

Գծապատկեր 14. Ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման կառուցվածքը 2017-2022թթ.

ՀՀ կառավարության արտաքին պարտքն աստիճանաբար ներքինով փոխարինելու դեպքում պարտքի սպասարկման ծախսերի էական աճ չի սպասվում: Ավելին, հաշվի առնելով այն, որ արտաքին աղբյուրներից ստացվող վարկային միջոցների արտոնյալությունը գնալով նվազում է, իսկ ներքին պարտքի կազմում արդեն իսկ առկա են մինչև 30 տարի ժամկետայնությամբ պարտատոմսեր, ապա ներքին պարտքի կշռի աստիճանական ավելացումը դրական է անդրադառնում նաև վերաֆինանսավորման ռիսկի ցուցանիշի վրա: Քանի որ վերաֆինանսավորման ռիսկը գտնվում է չափավոր մակարդակում, ապա այն հնարավոր է պահպանել կառավարելիության շրջանակներում՝ պարտքի կառավարման տարբեր գործիքների կիրառման միջոցով:

<u>Ընտրված ռազմավարության ծախսերի և ռիսկերի վերլուծությունը</u>

Կանխատեսված մակրոտնտեսական միջավայրի պայմաններում ՀՀ կառավարության պարտքի ծախսի ցուցանիշները էապես չեն փոխվի կանխատեսվող ժամանակահատվածում:

Աղյուսակ 6. ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի ցուցանիշների կանխատեսումները

	2019թ. պետբյուջեի ծրագիր	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2022թ. կանխ.
ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի միջին տոկոսադրույքը (%)	5.3	5.3	5.4	5.2	5.3
Տոկոսավճար / պետական բյուջեի եկամուտներ(%)	10.6	10.6	10.7	10.2	10.1
Տոկոսավճար / պետական բյուջեի ծախսեր (%)	9.6	9.6	9.8	9.4	9.3
Տոկոսավճար / ՀՆԱ (%)	2.3	2.4	2.6	2.5	2.5

Ընդհանուր առմամբ, կանխատեսվող ժամանակահատվածում տեղի կունենա ՀՆԱ-ի առաջանցիկ աճ պարտքի ծավալի աճի նկատմամբ՝ հանգեցնելով ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նվազմանը, որը 2022թ. տարեվերջին կանխատեսվում է 50.5%: ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը կանխատեսվող ժամանակահատվածի վերջում կկազմի 5.3%: Կանխատեսվող տոկոսավճարների մակարդակը 2022թ. կկազմի ՀՆԱ-ի 2.5%-ը՝ կանխատեսվող ժամանակահատվածի սկզբի նկատմամբ արձանագրելով 0.2 տոկոսային կետով աճ:

Ռիսկերի կառավարման տեսակետից կարևորվում են փոխարժեքի, վերաֆինանսավորման, տոկոսադրույքի ու գործառնական ռիսկերը:

Փոխարժեքի ռիսկ

Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ ցուցանիշի մակարդակը միջնաժամկետ հատվածում կգտնվի սահմանված ուղենշային տիրույթում՝ ժամանակահատվածի վերջում հասնելով 25.6%-ի:

Աղյուսակ 7. ՀՀ կառավարության ներքին պարտքի և ՀՀ դրամով ներգրաված պարտքի տեսակարար կշիռներն ընդամենը պարտքում

	2019թ. պետբյուջեի ծրագիր	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2022թ. կանխ.
Ներքին պարտք / Ընդամենը պարտք (%)	21.8	22.2	23.0	24.2	25.6
ՀՀ դրամով ներգրավված պարտք / Ընդամենը պարտք (%)	19.5	19.4	20.5	21.9	23.4

2022թ. վերջին արտարժութային պարտքի տեսակարար կշիռը միջնաժամկետ հատվածում նվազում է՝ կազմելով 76.6%, սակայն ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի փոխարժեքի ռիսկը առաջիկա տարիներին դեռևս կմնա որպես հիմնական ռիսկ:

Աղյուսակ 8. ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կառուցվածքը 2019-2022թթ. տարեվերջի դրությամբ *(տոկոս)*

	2019թ. պետբյուջեի ծրագիր	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2022թ. կանխ.
USD	56.8	56.9	57.5	58.4	60.1
SDR	26.7	26.9	24.5	22.1	20.0
EUR	12.1	11.6	13.8	15.7	16.4
JPY	3.9	4.1	3.7	3.4	3.1
AED	0.1	0.1	0.1	0.1	0.0
CNY	0.4	0.4	0.4	0.4	0.3

Այս ռիսկը որոշ չափով մեղմվում է պայմանավորված այն հանգամանքով, որ կառավարության արտարժութային պարտքի կառուցվածքում ծավալով երկրորդը SDR-ով արտահայտված պարտքն է (2019թ. տարեվերջի դրությամբ կազմել է 26.7%):

Եթե SDR-ը, որը կազմված է հինգ արժույթներից, հետևաբար՝ ավելի քիչ տատանողական է, տարանջատում ենք այդ արժույթների կշիռներին համապատասխան՝ USD – 41.73%, EUR – 30.93%, GBP – 8.09%, JPY – 8.33% և CNY – 10.92%, ապա ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կառուցվածքը ստանում է հետևյալ տեսքը՝

Աղյուսակ 9. ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կառուցվածքը 2019-2022թթ. տարեվերջի դրությամբ՝ SDR-ի տարանջատմամբ *(տոկոս)*

	2019թ. պետբյուջեի ծրագիր	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2022թ. կանխ.
USD	67.9	68.1	67.8	67.6	68.4
EUR	20.4	19.9	21.4	22.5	22.6
GBP	2.9	2.9	2.7	2.4	2.2
JPY	6.1	6.2	5.7	5.2	4.7
AED	0.1	0.1	0.1	0.1	0.0
CNY	2.6	2.7	2.4	2.2	2.0

Փոխարժեքի ռիսկի նվազման և արդյունավետ կառավարման նպատակով նոր վարկերի պայմանները քննարկելիս հնարավորության դեպքում կնվազեցվի մեկ կամ մի քանի արժույթներից կախվածությունը: Միաժամանակ չի բացառվում, որ ապագայում օգտագործվեն հեջավորման տարբեր մոտեցումներ (օրինակ՝ արտարժութային սվոփներ):

Գծապատկեր 16. ՀՀ կառավարության արտարժութային պարտքի գծով վճարումների կշիռը ՀՀ ԿԲ արտարժութային միջին տարեկան պահուստներում 2019-2022թթ.

ՀՀ կառավարության արտարժութային պարտքի գծով վճարումների կշիռն արտարժութային միջին տարեկան ակտիվների ծավալի նկատմամբ 2020թ. էապես աճում է՝ պայմանավորված 500 մլն ԱՄՆ դոլար եվրապարտատոմսերի մարմամբ, որի մասնաբաժինը կազմում է 17.9 տոկոսային կետ: Այս ցուցանիշը գնահատում է ՀՀ կառավարության հնարավորությունը սպասարկելու արտարժութային պարտքի մարումներն ու տոկոսագումարների վճարումները՝ արտարժութային ակտիվների բավարար ծավալի առկայության տեսանկյունից:

Վերաֆինանսավորման ռիսկ

Վերաֆինանսավորման ռիսկը կարևորվում է՝ պայմանավորված առաջիկա տարիներին ՀՀ կառավարության պարտքի մարումների ծավալներով և միջազգային ու ներքին ֆինանսական շուկաներում հնարավոր բացասական զարգացումներով: Նոր պարտքի ներգրավման ընթացքում ՀՀ կառավարությունը ջանում է հարթեցնել մարումների գրաֆիկը և մեղմել վերաֆինանսավորման ռիսկը: Վերաֆինանսավորման ռիսկի նվազեցման նպատակով կիրառվում են նաև հետգնումներ:

Աղյուսակ 10. ՀՀ կառավարության պարտքի վերաֆինանսավորման ռիսկի ցուցանիշները 2019-2022թթ.

	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2022թ. կանխ.
ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, (տարի)	**8.1**	**8.4**	**8.0**	**7.7**
ՀՀ կառավարության արտաքին պարտքի մինչև մարում միջին ժամկետը, (տարի)	8.3	8.6	8.1	7.7
ՀՀ կառավարության ներքին պարտքի մինչև մարում միջին ժամկետը, (տարի)	7.3	7.7	7.6	7.8
Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության պարտքի կշիռը (%)	13.3	6.6	6.6	7.1
Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության արտաքին պարտքի կշիռը (%)	11.6	4.4	4.8	5.3
Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության ներքին պարտքի կշիռը (%)	19.3	13.9	12.1	12.4

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի մինչև մարում միջին ժամկետի ցուցանիշը 2022թ. վերջին կնվազի մինչև 7.7 տարի, սակայն վերաֆինանսավորման ռիսկը կմնա չափավոր:

Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ ցուցանիշը 2022թ. տարեվերջին կկազմի 7.1%, ընդ որում մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության արտաքին պարտքի կշիռը արտաքին պարտքում կկազմի 5.3%, իսկ մեկ տարվա

ընթացքում մարվող ՀՀ կառավարության ներքին պարտքի կշիռը ներքին պարտքում՝ 12.4%: 2019թ. այս ցուցանիշի էական աճը բացատրվում է 2020թ. մարվող եվրապարտատոմսերի մեծ կշռով:

Ստորև ներկայացվում է նաև ՀՀ կառավարության պարտքի գծով վճարումների ցուցանիշը, որն իրենից ներկայացնում է տարվա ընթացքում մարումների և տոկոսավճարների հանրագումարը:

Գծապատկեր 17. ՀՀ կառավարության պարտքի գծով վճարումները 2017-2022թթ. ընթացքում (մլրդ դրամ)

ՀՀ կառավարության պարտքի գծով վճարումների ցուցանիշը միջնաժամկետ հատվածում աճում է՝ 2020թ. կազմելով 683.6 մլրդ դրամ, որի 42.9%-ը կազմում է 2020թ. եվրապարտատոմսերի մարումը:

Աղյուսակ 11. ՀՀ կառավարության պարտքի գծով վճարումներն ըստ գործիքակազմի

(մլրդ դրամ)

	2019թ. պետբյուջեի ծրագիր	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2022թ. կանխ.
ՀՀ կառավարության պարտքի գծով վճարումներն ըստ գործիքակազմի, որից՝	356.9	349.3	683.6	469.6	500.6
արտաքին վարկեր և փոխառություններ	142.3	142.3	181.1	206.2	220.9
տոկոսավճար	57.2	57.2	61.5	64.9	69.4
մարում	85.2	85.2	119.6	141.3	151.5
պետական գանձապետական պարտատոմսեր	182.5	175.0	209.3	226.0	241.6
տոկոսավճար	68.8	68.8	79.1	87.3	100.4
մարում	113.7	106.2	130.2	138.7	141.2
արտարժութային պետական պարտատոմսեր	32.0	32.0	293.2	37.4	38.1
տոկոսավճար	32.0	32.0	42.4	37.4	38.1
մարում	-	-	250.8	-	-

ՀՀ կառավարությունը պարտքի և կանխիկ հոսքերի կառավարման գործիքների (հետգնումներ, ՀՀ կենտրոնական բանկում միջոցների ավանդադրում և այլն) կիրառմամբ վերահսկում է վերաֆինանսավորման հետ կապված ռիսկերը:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի հետ կապված ռիսկերը արժանի են մեծ ուշադրության, քանի որ շուկայական պայմաններով ներգրավվող փոխառու միջոցների կշիռը գնալով աճում է: Տոկոսադրույքի ռիսկի կառավարման նպատակն է ապահովել կառավարության պարտքի այնպիսի կառուցվածք, որի դեպքում ֆինանսական շուկաներում տոկոսադրույքների փոփոխությունը հնարավորինս քիչ ազդեցություն կունենա կանխատեսվող տոկոսագումարների մակարդակի վրա: ՀՀ կառավարության

պարտքի պորտֆելի տոկոսադրույքի ռիսկի ցուցանիշները կանխատեսվող ժամանակահատվածում մի փոքր վատթարանում են, սակայն մնում են կառավարելի:

Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռը 2022թ. տարեվերջին նվազում է մինչև 76.5%: Չնայած ՀՀ կառավարության կողմից կանխատեսվող ժամանակահատվածում թողարկվելու է նախորդ տարիների համեմատ ավելի շատ ֆիքսված տոկոսադրույքով ներքին պարտք, շրջանառության մեջ գտնվող պետական գանձապետական պարտատոմսերի ծավալի կշիռը դեռևս էական չի լինելու և 2022թ. այն կկազմի ՀՀ կառավարության պարտքի ընդամենը 23.4%-ը: Մյուս կողմից, միջազգային վարկատուներն ավելի շատ լողացող տոկոսադրույքով նոր վարկեր են տրամադրելու, որի արդյունքում ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռը նվազելու է: Անհրաժեշտության դեպքում, տոկոսադրույքի ռիսկը կառավարելու նպատակով, արտաքին վարկատուների կողմից սահմանված ընթացակարգերի համաձայն, կիրականացվի լողացող տոկոսադրույքով ներգրավված վարկերի տոկոսադրույքի ֆիքսում:

Աղյուսակ 12. ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ֆիքսված և լողացող տոկոսադրույքով վարկերի տեսակարար կշիռը 2019-2022թթ.

(տոկոս)

	2019թ. պետբյուջեի ծրագիր	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2022թ. կանխ.
ՀՀ կառավարության պարտք,	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում՝					
Ֆիքսված տոկոսադրույքով	83.9	82.6	80.3	78.3	76.5
Լողացող տոկոսադրույքով	16.1	17.4	19.7	21.7	23.5
ՀՀ կառավարության արտաքին պարտք	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում					
Ֆիքսված տոկոսադրույքով	79.5	77.6	74.4	71.3	68.4
Լողացող տոկոսադրույքով	20.5	22.4	25.6	28.7	31.6
ՀՀ կառավարության ներքին պարտք	100.0	100.0	100.0	100.0	100.0

այդ թվում					
Ֆիքսված տոկոսադրույքով	100.0	100.0	100.0	100.0	100.0
Լողացող տոկոսադրույքով	0.0	0.0	0.0	0.0	0.0

ՀՀ կառավարության պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետի ցուցանիշը ևս նվազում է՝ ժամանակահատվածի վերջում կազմելով 5.6 տարի: Լողացող տոկոսադրույքով պարտքի կշռի աճի արդյունքում մեծանում է մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ՀՀ կառավարության պարտքի մասնաբաժինը՝ 2022թ. կազմելով 29.0%:

Աղյուսակ 13. ՀՀ կառավարության պարտքի տոկոսադրույքի ռիսկի ցուցանիշները 2019-2022թթ.

	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2022թ. կանխ.
ՀՀ կառավարության պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը, (տարի)	**6.3**	**6.5**	**6.0**	**5.6**
ՀՀ կառավարության արտաքին պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը, (տարի)	6.1	6.1	5.4	4.8
ՀՀ կառավարության ներքին պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը, (տարի)	7.3	7.7	7.6	7.8
Մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ՀՀ կառավարության պարտքի կշիռը (%)	**30.2**	**25.3**	**26.9**	**29.0**
Մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ՀՀ կառավարության արտաքին պարտքի կշիռը (%)	33.2	28.7	31.6	34.7
Մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ՀՀ կառավարության ներքին պարտքի կշիռը (%)	19.3	13.9	12.1	12.4

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը սահմանվում է որպես արտաքին գործոնների, տեխնոլոգիաների արդյունք, ինչպես նաև անձնակազմի, կազմակերպության, գործընթացների անբավարար գործու-

նեության հետևանք: Գործառնական ռիսկը կառավարելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունի տեղեկատվության անվտանգության ապահովումը՝ ներառյալ փաստաթղթերը և տեխնոլոգիական համակարգերը: Անհրաժեշտ է ապահովել պարտքի գրանցման և հաշվառման տվյալների բազայի այլընտրանքային պահպանումը՝ ֆորս մաժորային իրավիճակներում ամբողջական տեղեկատվության պահպանման և աշխատանքների ընթացքը չխաթարելու, պարտքային պարտավորությունները ժամանակին և անթերի իրականացնելու համար: ՀՀ կառավարության պարտքի կառավարման հետ կապված գործառնական ռիսկերը բացահայտելու, գնահատելու, կառավարելու և նվազեցնելու նպատակով կիրականացվեն ՀՀ ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության «Բիզնես գործընթացների շարունակականության ծրագրով» նախատեսված միջոցառումները:

Զգայունության վերլուծություններ

Մինչ այժմ կատարված ծախսերի և ռիսկերի վերլուծությունը հիմնված է եղել կանխատեսված մակրոտնտեսական և հարկաբյուջետային ցուցանիշների վրա և իրենից ներկայացնում է ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության հիմնական սցենար: Ստորև ներկայացվում է շուկայական փոփոխականների նկատմամբ կիրառված տարբեր շոկերի արդյունքում ծախսերի և ռիսկերի ցուցանիշների շեղման չափը հիմնական սցենարի արդյունքներից:

Գծապատկեր 18. ՀՀ կառավարության պարտք / ՀՆԱ ցուցանիշը 2019-2022թթ.

Գծապատկեր 19. Տոկոսավճար / ՀՆԱ ցուցանիշը 2019-2022թթ.

Փոխարժեքի շոկ

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելը պարունակում է փոխարժեքի էական ռիսկեր: Կիրառելով 30% շոկ՝ 2020թ-ին արժեզրկելով ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի, եվրոյի և SDR-ի նկատմամբ, ՀՀ

կառավարության պարտք / ՀՆԱ հարաբերակցությունը 2022թ. տարեվերջին հասնում է 61.7%-ի, որը 11.2 տոկոսային կետով ավելի է հիմնական սցենարի նույն ցուցանիշից:

Եթե 01.04.2019թ. դրությամբ ձևավորված փոխարժեքները, որոնց հիման վրա ՀՀ կառավարության արտարժութային պարտքը փոխարկվել է ԱՄՆ դոլարի, փոփոխվեն 1%-ի չափով, ապա 2020-2022թթ. ընթացքում ՀՀ կառավարության արտաժութային պարտքը կփոփոխվի միջին հաշվով տարեկան 28.8 մլրդ դրամով կամ ՀՆԱ-ի 0.4%-ով:

Տոկոսադրույքի շոկ

Վերլուծելով արտաքին աղբյուրներից ներգրավվող փոխառու միջոցների տոկոսադրույքների 250 բազիսային կետի և ներքին աղբյուրներից ներգրավվող փոխառու միջոցների 500 բազիսային կետի չափով աճի շոկային սցենարը՝ պարզ է դառնում, որ տոկոսադրույքի շոկի ազդեցությունը ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի վրա մնում է չափավոր: ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2022թ. տարեվերջին հիմնական սցենարի նույն ցուցանիշի նկատմամբ ավելանալով 1.7 տոկոսային կետով՝ կազմում է 52.2%: Տոկոսավճար / ՀՆԱ հարաբերակցությունն այս պարագայում կարող է ավելանալ 0.8 տոկոսային կետով:

Զուգահեռաբար ենթադրվել է նաև էական՝ 500 բազիսային կետի չափով արտաքին աղբյուրներից ներգրավվող փոխառու միջոցների տոկոսադրույքների և 1000 բազիսային կետի չափով ներքին աղբյուրներից ներգրավվող փոխառու միջոցների նկատմամբ շոկային սցենար, որի տեղի ունենալու հավանականությունը բավականին ցածր է: Տոկոսադրույքների նման շոկը ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը բազային սցենարի նկատմամբ կավելացնի 3.5 տոկոսային կետով՝ 2022թ. տարեվերջին հասցնելով 54.0%-ի: ՀՀ կառավարության պարտքի սպասարկման տեսակետից այսպիսի էական շոկը 2022թ. տարեվերջին Տոկոսավճար/ՀՆԱ ցուցանիշը կարող է ավելացնել 1.7 տոկոսային կետով:

Փոխարժեքի և տոկոսադրույքի համակցված շոկ

Կիրառելով 15% փոխարժեքի (2020թ-ին արժեզրկելով ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի, եվրոյի և SDR-ի նկատմամբ) և տոկոսադրույքի առաջին սցենարում նկարագրված համակցված շոկ՝ ՀՀ կառավարության պարտք / ՀՆԱ հարաբերակցությունը 2022թ. տարեվերջին հասնում է 58.0%-ի, որը 7.5 տոկոսային կետով ավելի է հիմնական սցենարի նույն ցուցանիշից: Տոկոսավճար / ՀՆԱ հարաբերակցությունն այս դեպքում կարող է ավելանալ 1.1 տոկոսային կետով:

Ստորև ներկայացվում է նաև լողացող տոկոսադրույքով պարտքի մեկ տոկոսային կետով աճի և ներքին տոկոսադրույքների մեկ տոկոսային կետով աճի ազդեցությունները:

Լողացող տոկոսադրույքների՝ 6-ամսյա ԱՄՆ դոլարի լիբորի և 6-ամսյա եվրիբորի մեկ տոկոսային կետի փոփոխության դեպքում 2020-2022թթ. ՀՀ կառավարության արտաքին պարտքի գծով տոկոսային ծախսերը միջին հաշվով կփոփոխվեն տարեկան 7.5 մլրդ դրամով: Մասնավորապես, լողացող տոկոսադրույքներից յուրաքանչյուրի ազդեցությունը ՀՀ կառավարության արտաքին պարտքի սպասարկման ծախսերի վրա կանխատեսվող ժամանակաշրջանում կլինի հետևյալը.

Աղյուսակ 14. Լողացող տոկոսադրույքների 1 տոկոսային կետի փոփոխության ազդեցությունը ՀՀ կառավարության արտաքին պարտքի տոկոսավճարների վրա

	2020թ.	2021թ.	2022թ.
ՀՀ կառավարության արտաքին պարտքի տոկոսավճարի փոփոխությունը (մլրդ դրամ)	6.4	7.3	8.7
այդ թվում			
6-ամսյա ԱՄՆ դոլարի Libor	5.7	6.3	7.4
6-ամսյա Euribor	0.7	1.0	1.2
ՀՀ կառավարության արտաքին պարտքի տոկոսավճարի փոփոխությունը (%)	10.5	11.2	12.5
ՀՀ կառավարության արտաքին պարտքի տոկոսավճարի փոփոխության կշիռը պետբյուջեի սեփական եկամուտներում (առանց դրամաշնորհի) (%)	0.4	0.4	0.4

Ներքին պարտքի շուկայում, միջնաժամկետ հատվածի սկզբում, եկամտաբերության կորի մեկ տոկոսային կետով աճը 2020-2022թթ. ընթացքում կավելացնի պարտքի տոկոսավճարները տարեկան միջինը 3.3 մլրդ դրամով:

Աղյուսակ 15. Միջնաժամկետ հատվածի սկզբում ՀՀ կառավարության ներքին պարտքի տոկոսադրույքի մեկ տոկոսային կետի փոփոխության ազդեցությունը ՀՀ կառավարության ներքին պարտքի տոկոսավճարի վրա

	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2022թ. կանխ.
ՀՀ կառավարության ներքին պարտքի տոկոսավճարի փոփոխությունը (մլրդ դրամ)	1.1	3.2	5.5
ՀՀ կառավարության ներքին պարտքի տոկոսավճարի փոփոխությունը (%)	1.4	3.7	5.4
ՀՀ կառավարության ներքին պարտքի տոկոսավճարի փոփոխության կշիռը պետբյուջեի սեփական եկամուտներում (առանց դրամաշնորհ) (%)	0.1	0.2	0.3

Զգայունության վերլուծությունները թույլ են տալիս ենթադրել, որ ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի վրա փոխարժեքի շոկի ազդեցությունը շատ ավելի մեծ է, քան տոկոսադրույքի շոկի ազդեցությունը: Դա պայմանավորված է ՀՀ կառավարության պարտքի պորտֆելում արտարժութային պարտքի մեծ տեսակարար կշռով և ֆիքսված տոկոսադրույքով պարտքի գերակայությամբ:

Եզրակացություններ

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի և ռիսկերի վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ պարտքի պորտֆելն ամենաշատը ենթակա է փոխարժեքի ռիսկի ազդեցությանը:

Այդ իսկ պատճառով, ՀՀ կառավարությունն առաջնային է համարում պետական գանձապետական պարտատոմսերի շուկայի շարունակական զարգացումը և ներքին շուկայից փոխառությունների ներգրավման ծավալի աճը: 2020-2022թթ. ժամանակահատվածում նախատեսվում է ավելացնել ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման կշիռը՝ 2022թ. այն հասցնելով մինչև 55.0%:

Կարևոր է նշել, որ միայն ՀՀ կառավարության պարտքի կառավարման ոլորտում իրակա-նացվող միջոցառումները բավարար չեն ՀՀ կառավարության ներքին պարտքի շուկան էականորեն զարգացնելու համար: Ներքին պարտքի շուկայի զարգացման և ներդրողների բազայի ընդլայնման նախապայմաններից է նաև ֆինանսական շուկայի այլ հատվածների(կենսաթոշակային, ապահովագրական և այլն) հետագա զարգացումը:

ՀՀ կառավարությունը միջնաժամկետ հատվածում շարունակելու է ՀՀ կառավարության պարտքի մարման գրաֆիկի հարթեցման և վերաֆինանսավորման ռիսկի նվազեցմանն ուղղված գործողությունները՝ կիրառելով իրացվելիության կառավարման այնպիսի գործիքներ, ինչպիսիք են կանխիկի բուֆերի ձևավորումը, հետգնումների ու փոխանակումների իրականացումը:

ԳԼՈՒԽ 7. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ 2019-2023թթ. ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԾՐԱԳԻՐ

1. Ներածություն և իրավական հիմքեր

Այս ծրագիրը հանդիսանում է արդիականացված հարկաբյուջետային կանոնների համակարգի վրա հիմնվող ՀՀ կառավարության պարտքի նվազեցման 2019-2023թթ ծրագրի վերանայումը, որը մշակվել և ներկայացվել էր 2019-2021թթ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմում, և նախատեսում էր հինգ տարիների ընթացքում նվազեցնել կառավարության պարտքը ՀՆԱ 50%-ից: Հարկաբյուջետային կանոնների արդիականացված համակարգը ձևավորվել է 2017թ-ի դեկտեմբերի 20-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված և 2018թ. հունվարի 27-ից ուժի մեջ մտած «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Պետական պատքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարող օրենքների նախագծերով, և ամբողջականացվել 2018թ-ի օգոստոսի 23-ին՝ ՀՀ կառավարության N 942-Ն որոշմամբ:

Հարկաբյուջետային կանոններն իրենց արտացոլումն են գտել «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.2, 8.3 և 8.4 մասերում, «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերում, ինչպես նաև կառավարության համապատասխան որոշման մեջ: Սույն ծրագրի ներկայացումը բխում է վերոնշյալ իրավական կարգավորումներից, մասնավորապես՝ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.4 մասի «ա» կետից և ՀՀ կառավարության 2018թ-ի օգոստոսի 23-ի N 942-Ն որոշումից:

Կանոնների արդիականացված համակարգն ուղղված է արդյունավետ հակացիկլիկ հարկաբյուջետային քաղաքականության համար հիմքերի ստեղծմանը և պետական պարտքի կայունացմանը, առավել ճկուն է և ուղենիշներ է պարունակում երկարաժամկետ տնտեսական աճը խթանող հարկաբյուջետային քաղաքականության համար: Համակարգի հիմնական կանոններն են.

- Երբ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցում է 40%-ը, կապիտալ ծախսերը չպետք է փոքր լինեն պետական բյուջեի պակասուրդից:
- Կառավարության պարտք/ՀՆԱ 50-60% միջակայքում ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճով, ինչպես նաև հաջորդ տարում կազմվող Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում Կառավարությունը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ համախառն ներքին արդյունքի նկատմամբ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծը 5 տարիների ընթացքում 50 տոկոսից նվազեցնելու համար:

- Երբ Կառավարության պարտքը գերազանցում է ՀՆԱ 60%-ը, ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճից 0.5 տոկոսային կետով նվազեցված ցուցանիշով, ընթացիկ ծախսերը սահմանափակվում են հարկերի և տուրքերի մեծությամբ, ինչպես նաև Կառավարությունը Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային ու տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների քննարկմանը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ ՀՆԱ նկատմամբ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծը 5 տարիների ընթացքում 60 տոկոսից նվազեցնելու համար:
- Ներկայացված սահմանափակումները չեն գործում կառավարության որոշմամբ սահմանված բացառիկ դեպքերում՝ ելնելով խոշորածավալ տարերային և տեխնածին աղետների, պատերազմական գործողությունների, տնտեսությունը խաղաղ ժամանակաշրջանից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման, տնտեսական ցնցման հանգամանքներով պայմանավորված բացասական տնտեսական զարգացումների առկայությամբ:

2. ՀՀ կառավարության պարտքը: Պատմական ակնարկ

Վերջին տասնամյակում երկու խոշոր տնտեսական ցնցումներին հակազդելու նպատակով խթանող հարկաբյուջետային քաղաքականության իրականացման արդյունքում ՀՀ կառավարության պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ աճի միտում է դրսևորել: Սակայն 2018թ-ին ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը սկսել է նվազման միտում դսրևորել՝ պայմանավորված իրականացվող հարկաբյուջետային կոնսոլիդացիայի քաղաքականությամբ:

Գծապատկեր 1. ՀՀ կառավարության պարտքի դինամիկան 2000-2018թթ.[32]

[32] Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն և վիճակագրական կոմիտե:

Նախաճգնաժամային շրջանում տնտեսական բարձր աճի տեմպերի պայմաններում նվազման միտում դրսևորելուց հետո ՀՀ կառավարության պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ կտրուկ աճեց 2009թ-ին, երբ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի՝ ՀՀ մակրոտնտեսական զարգացումների վրա ունեցած բացասական ազդեցություններին հակազդելու համար ՀՀ կառավարությունն իրականացրեց հակապարբերաշրջանային հարկաբյուջետային քաղաքականություն և պետական պակասուրդի հաշվին մեծածավալ լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներարկեց տնտեսության մեջ: Տնտեսության անկմանը հակազդելու համար կառավարությունն ընդլայնել է թե՛ ամբողջական պահանջարկը՝ մեծացնելով պետական սպառման և ներդրումների կշիռը ՀՆԱ-ում և թե՛ ամբողջական առաջարկը՝ օժանդակելով տարբեր մակարդակներում գործարարությանը: Այս գործողությունների արդյունքում ՀՀ կառավարության պարտքը 2009թ-ին ավելացավ գրեթե 1.5 մլրդ ԱՄՆ դոլարով՝ հասնելով ՀՆԱ-ի 32.4%-ին:

2014-2016թթ կառավարության պարտքի նշանակալի աճի հաջորդ ժամանակահատվածն էր, երբ պարտքը 3 տարվա ընթացքում աճեց ՀՆԱ-ի մեջ շուրջ 15.6 տոկոսային կետով՝ պայմանավորված տարածաշրջանային բացասական զարգացումների պայմաններում Հայաստանի տնտեսություն ներթափանցած շոկերին հակապարբերաշրջանային հարկաբյուջետային քաղաքականությամբ արձագանքելու հանգամանքով:

2017թ. տնտեսության վերականգնման բարձր տեմպերի պայմաններում ՀՀ կառավարության կողմից իրականացված հարկաբյուջետային կոնսոլիդացիայի քաղաքականությունը թույլ

տվեց էականորեն զսպել ՀՀ կառավարության պարտքի աճի տեմպը: Նախորդ տարիներին իրականացված խթանող քաղաքականությունները էականորեն նվազեցրին արտաքին ցնցումներին բացասական հետևանքները և նպաստեցին տնտեսության վերականգնմանը: Այս զարգացումները թույլ տվեցին, որ ՀՀ կառավարությունը պարտքի կայունացման նպատակով անցում կատարի զսպող հարկաբյուջետային քաղաքականության: Արդյունքում հնարավոր դարձավ նվազեցնել հետճգնաժամային տարիներին ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի աճի տեմպը՝ հիմքեր ստեղծելով հետագա կայունացման և նվազման համար (կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2017թ-ին կազմեց 53.7%):

2018թ-ին ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը նվազել է 2.4 տոկոսային կետով և կազմել 51.3 տոկոս: Ցուցանիշի նվազումն արձանագրվել է մի կողմից ՀՀ կառավարության կողմից պլանավորված հարկաբյուջետային կոնսոլիդացիայի, մյուս կողմից՝ սպասվածից էլ ավելի զսպող քաղաքականության իրականացման շնորհիվ, որի արդյունքում բյուջեի առաջնային հաշվեկշիռը կազմել է ՀՆԱ 0.6 տոկոսը:

ՀՀ կառավարության պարտքի գործոնային վերլուծությունը ցույց է տալիս, որ հետճգնաժամային շրջանում դրա աճի հիմնական գործոններն են եղել պետական բյուջեի առաջնային պակասուրդը և դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկումը, իսկ ինչպես հետճգնաժամային, այնպես էլ պատմական ժամանակահատվածի համար պարտքը նվազեցնող հիմնական գործոնը եղել է տնտեսական աճը:

Գծապատկեր 2. ՀՀ կառավարության պարտքը առաջացնող գործոնների դինամիկան, % ՀՆԱ-ում[33]

[33] Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներ:

2009թ. ճգնաժամին արձագանքման հետևանքով՝ պետական բյուջեի առաջնային պակասուրդի աճը դարձավ ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ-ի աճի հիմնական գործոնը: Պարտքի աճին նպաստեցին նաև տնտեսական խորը անկումը և փոխարժեքի արժեզրկումը:

2014թ-ին արտաքին ցնցումների ազդեցությամբ ՀՀ դրամը կտրուկ արժեզրկվեց, և չնայած կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ նվազեց, դրամային արտահայտությամբ աճեց մոտ 15 տոկոսով, իսկ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը աճեց 3 տոկոսային կետով՝ գրեթե ամբողջությամբ այդ գործոնով պայմանավորված:

2015-2016թթ. մակրոտնտեսական կայունության ապահովման նպատակով պետական բյուջեի առաջնային պակասուրդը ավելացվեց, ինչով բացատրվում է ՀՀ կառավարության պարտքի աճի հիմնական մասը: Իսկ 2016թ. բացի առաջնային պակասուրդից, այդ տարվա ընթացքում պարտքի ավելացմանն էականորեն նպաստեց նաև իրական տոկոսադրույքի աճը, և կառավարության պարտքը հասավ ՀՆԱ-ի 51.9 տոկոսին:

2017թ. ՀՀ կառավարության պարտքի աճին հակազդեց հետճգնաժամային ժամանակա-հատվածի համար աննախադեպ՝ 7.5 տոկոս տնտեսական աճը, սակայն դրական առաջնային պակասուրդի և իրական տոկոսադրույքի պայմաններում պարտքը շարունակեց աճել, սակայն՝ ավելի փոքր տեմպով, և կազմեց ՀՆԱ 53.7 տոկոսը:

2018թ-ին ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը նվազման մեջ ամենամեծ դերակատարում է ունեցել տնտեսական աճը, այնուհետև առաջնային հաշվեկշիռը:

3. Ծրագրի ամփոփ նկարագիրը

Հաշվի առնելով ՀՀ կառավարության պարտքի հետճգնաժամային միտումները և գործոնային վերլուծությունը՝ այս Ծրագրի վերանայման հիմքում ընկած է այնպիսի հարկաբյուջետային սցենար, որը թույլ կտա շարունակել ՀՀ կառավարության պարտքի նվազեցման գործընթացը կանխատեսվող ժամանակահատվածում՝ տնտեսական աճի ստեղծման և սեփական եկամուտների աստիճանական բարելավման միջոցով հարկաբյուջետային կոնսոլիդացիայի իրականացման ճանապարհով: Համաձայն ՀՀ կառավարության պարտքի նվազեցման 2019-2023թթ ծրագրի ՀՀ կառավարության պարտքը պետք է նվազեցվեր ՀՆԱ 50% մակարդակից ներքև 5 տարիների ընթացքում, որով պայմանավորված՝ Ծրագրի սույն վերանայմամբ կանխատեսումները ներկայացվում են 4 տարվա հորիզոնով:

Ինչպես արդեն նշվեց, 2018թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը դեռ շարունակում է գերազանցել ՀՆԱ 50%-ը՝ կազմելով 51.3%: Այս պայմաններում, վերոնշյալ իրավական ակտերով ամրագրված հարկաբյուջետային կանոններին և ՀՀ կառավարության պարտքի նվազեցման 2019-2023թթ ծրագրին համահունչ նախատեսվում է, որ ՀՀ կառավարության պարտքը մինչև 2023թ. կնվազեցվի ՀՆԱ-ի 50%-ից, որին համապատասխան բյուջեի եկամուտների, ծախսերի և մյուս ցուցանիշների կանխատեսումները ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում: Ընդ որում, ծրագրի ցուցանիշներից 2019թ-ը ՀՀ ֆինանսների նախարարության սպասումներն են, 2020-2022թթ. կանխատեսումները այս ՄԺԾԾ հիմքում ընկած կանխատեսումներն են, իսկ 2023թ. ցուցանիշները՝ ՀՀ ֆինանսների նախարարության կանխատեսումները:

Մասնավորապես, Ծրագրով նախատեսվում է աստիճանաբար բարելավել եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը՝ հիմնականում հարկային եկամուտների միջոցով: Իսկ ծախսային մասում նախատեսվում է ՀՆԱ-ի մեջ աստիճանաբար ավելացնել երկարաժամկետ տնտեսական աճ ստեղծող կապիտալ ծախսերը և միաժամանակ նվազեցնել ընթացիկ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը: Այսպիսով,

միջնաժամկետում նախատեսվում է շարունակել հարկաբյուջետային կոնսոլիդացիան, որն ապահովվելու է հիմնականում հարկային եկամուտների բարելավման միջոցով:

ԱՂՅՈՒՍԱԿ 21.1. ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ՀՆԱ-ի նկատմամբ %	**2019**	**2020**	**2021**	**2022**	**2023**
Պետական բյուջեի եկամուտներ	24.1	24.5	24.4	24.7	25.0
Պետական բյուջեի ծախսեր	26.5	26.8	26.6	26.9	27.2
Ընթացիկ ծախսեր	22.3	21.2	20.6	20.2	19.9
Կապիտալ ծախսեր	4.1	5.6	6.0	6.7	7.3
Պետական բյուջեի պակասուրդ	-2.3	-2.3	-2.2	-2.2	-2.2
Կառավարության պարտք	52.3	52.1	51.3	50.5	49.7

ՀՀ կառավարության պարտքի 2019-2023թթ. ծրագրի սույն վերանայմամբ պետական բյուջեի ինչպես եկամուտների, այնպես էլ ծախսերի կանխատեսումները ճշգրտվել են բարելավման ուղղությամբ՝ ավելի բարձր պակասուրդի կանխատեսումների պայմաններում: Կանխատեսումները և դրանց ճշգրտումները ինչպես 2019-2021թթ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և 2019-2023թթ պարտքի նվազեցման ծրագրի, այնպես էլ 2019թ-ի պետական բյուջեի նախագծի նկատմամբ ներկայացված են Ներգիր 1-ում:

Բյուջեի եկամուտներ		**2019**	**2020**	**2021**	**2022**	**2023**
ՄԺԾԾ 2019-2021 (2022 և 2023թթ՝ պարտքի նվազեցման 2019-2023թթ ծրագիր)		21.9	21.9	22.2	22.6	22.9
Բյուջե 2019		22.1				
ՄԺԾԾ 2020-2022 (2023թ.-ը՝ պարտքի նվազեցման 2019-2023թթ ծրագրի վերանայում)		24.1	24.5	24.4	24.7	25.0
Ճշգրտում դեպի վերև(+)/ներքև(-)	ՄԺԾԾ 2019-2021-ից ՄԺԾԾ 2020-2022	2.2	2.6	2.2	2.1	2.0

	Բյուջե 2019-ից ՄԺԾԾ 2020-2022	2				

Ընթացիկ ծախսեր		**2019**	**2020**	**2021**	**2022**	**2023**
ՄԺԾԾ 2019-2021 (2022 և 2023թթ՝ պարտքի նվազեցման 2019-2023թթ ծրագիր)		21.1	20.5	19.9	19.6	19.4
Բյուջե 2019		21.1				
ՄԺԾԾ 2020-2022 (2023թ.-ը՝ պարտքի նվազեցման 2019-2023թթ ծրագրի վերանայում)		22.3	21.2	20.6	20.2	19.9
Ճշգրտում դեպի վերև(+)/ներքև(-)	ՄԺԾԾ 2019-2021-ից ՄԺԾԾ 2020-2022	1.2	0.7	0.7	0.6	0.5
	Բյուջե 2019-ից ՄԺԾԾ 2020-2022	1.2				

Կապիտալ ծախսեր		**2019**	**2020**	**2021**	**2022**	**2023**
ՄԺԾԾ 2019-2021 (2022 և 2023թթ՝ պարտքի նվազեցման 2019-2023թթ ծրագիր)		3.1	3.7	4.2	4.4	4.7
Բյուջե 2019		3.3				
ՄԺԾԾ 2020-2022 (2023թ.-ը՝ պարտքի նվազեցման 2019-2023թթ ծրագրի վերանայում)		4.1	5.6	6.0	6.7	7.4
Ճշգրտում դեպի վերև(+)/ներքև(-)	ՄԺԾԾ 2019-2021-ից ՄԺԾԾ 2020-2022	1.0	1.9	1.8	2.3	2.7
	Բյուջե 2019-ից ՄԺԾԾ 2020-2022	0.8				

Պակասուրդ	**2019**	**2020**	**2021**	**2022**	**2023**
ՄԺԾԾ 2019-2021 (2022 և 2023թթ՝ պարտքի նվազեցման 2019-2023թթ ծրագիր)	-2.3	-2.3	-1.9	-1.3	-1.1
Բյուջե 2019	-2.2				
ՄԺԾԾ 2020-2022 (2023թ.-ը՝ պարտքի նվազեցման 2019-2023թթ ծրագրի վերանայում)	-2.3	-2.3	-2.2	-2.2	-2.2

Ճշգրտում դեպի վերև(+)/ներքև(-)	ՄԺԾԾ 2019-2021-ից ՄԺԾԾ 2020-2022	0.0	0.0	0.3	0.9	1.1
	Բյուջե 2019-ից ՄԺԾԾ 2020-2022	0.1				

Կառավարության պարտք		**2019**	**2020**	**2021**	**2022**	**2023**
ՄԺԾԾ 2019-2021 (2022 և 2023թթ՝ պարտքի նվազեցման 2019-2023թթ ծրագիր)		54.1	53.2	51.6	50.7	49.8
Բյուջե 2019		49.8				
ՄԺԾԾ 2020-2022 (2023թ.-ը՝ պարտքի նվազեցման 2019-2023թթ ծրագրի վերանայում)		52.3	52.1	51.3	50.5	49.7
Ճշգրտում դեպի վերև(+)/ներքև(-)	ՄԺԾԾ 2019-2021-ից ՄԺԾԾ 2020-2022	-1.8	-1.1	-0.3	-0.2	-0.1
	Բյուջե 2019-ից ՄԺԾԾ 2020-2022	2.5				

3. Ծրագրի ռիսկերը

Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի ամենահավանական հետագիծը և կանխատեսումների շուրջ անորոշությունը պատկերելու համար կառուցվել է կանխատեսումների հավանականային բաշխման գրաֆիկ (fan chart): Գրաֆիկը կառուցվել է ՀՀ կառավարության պարտքի վրա ազդեցություն ունեցող համապատասխան մակրոտնտեսական փոփոխականների (բյուջեի առաջնային պակասուրդ, տնտեսական աճ, պարտքի իրական տոկոսադրույք, իրական փոխարժեք) վրա ցուցանիշների պատմական էվոլյուցիայից պրոյեկտված շոկերի սիմուլյացիաներով, և ցույց է տալիս կանխատեսվող ժամանակահատվածում պարտք/ՀՆԱ հարաբերակցության որոշակի միջակայքերում գտնվելու հավանականությունները:Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի հավանական հետագծերը կառուցվել են՝ հաշվի առնելով նշված փոփոխականների պատմական

ժամանակային շարքերի վիճակագրական հատկությունները և փոխադարձ կապերը, ինչպես նաև վերջիններիս կանխատեսումները[34]:

Ստորև պատկերված հավանականությունների բաշխման գրաֆիկը ցույց է տալիս Ծրագրի վերանայված սցենարի՝ մինչև 2023թ-ը Կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության մինչև 49.7% նվազեցման ռիսկերը:

Գծապատկեր 21.3. ՀՀ կառավարության պարտքի կանխատեսումների հավանականային բաշխման գրաֆիկը (Fan Chart)[35]

Համաձայն իրականացված սիմուլյացիաների, 10%-ից 90% հավանականային միջակայքում ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2023թ-ին կգտնվի 31.6%-ից 72.9% միջակայքում, իսկ 25%-

[34] Գրաֆիկը կառուցման մեթոդաբանության վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս ԱՄՀ կողմից հրապարակված «Staff Guidance Note For Public Debt Sustainability Analysis In Market-Access Countries» (2013) փաստաթղթում, հետևյալ հղմամբ՝ https://www.imf.org/external/np/pp/eng/2013/050913.pdf:

[35] Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներ:

ից 75% հավանականային միջակայքում՝ 39.3%-ից 61.5%: 50%-ից մի փոքր բարձր հավանանությամբ ՀՀ կառավարության պարտքը 2023թ-ին չի գերազանցի ՀՆԱ 50%-ը:

Հավանականությունների բաշխմանը կարելի է ծանոթանալ նաև ներքոհիշյալ աղյուսակում:

ԱՂՅՈՒՍԱԿ 21.2. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔ/ՀՆԱ ՀԵՏԱԳԾԻ ՀԱՎԱՆԱԿԱՆԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ

Հավանականային միջակայքը	Տրված հավանականային միջակայքում կառավարության պարտք/ՀՆԱ առավելագույն մակարդակը				
	2019	**2020**	**2021**	**2022**	**2023**
Մինչև 10%	43.5	39.9	36.9	33.3	31.6
10%-25%	47.4	45.2	43.0	40.8	39.3
25%-50%	52.0	52.0	50.7	50.6	49.3
50%-75%	57.1	58.9	59.7	61.0	61.5
75%-90%	61.9	66.7	68.9	70.9	72.9

Ծրագրի ռիսկերի ուսումնասիրությունը կառավարության պարտքը ձևավորող գործոնների պատմական միտումների հիման վրա ցույց տվեց, որ ծրագրված սցենարը ռիսկեր է պարունակում պարտքի թիրախային ցուցանիշի ապահովման տեսանկյունից: Այդ ռիսկերը նվազեցնելու համար ՀՀ կառավարությունը ներկայացնում է կանխատեսվող ժամանակահատվածի համար ծրագրված միջոցառումները, որոնք վերաբերում են պետական բյուջեի եկամուտների ձևավորմանը, ծախսերի իրականացմանը և պետական բյուջեի պակասուրդի ֆինասավորմանը: Ներկայացվող միջոցառումները միտված են մի կողմից կանխատեսվող հորիզոնում կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի թիրախային ցուցանիշի ապահովմանը, մյուս կողմից՝ երկարաժամկետ տնտեսական աճին և հարկաբյուջետային կայունության ամրապնդմանը՝ ապահովելու պարտքի կայունությունը երակարաժամկետ հատվածում:

4. Ծրագրի հիմնական միջոցառումները

Ծրագրի հիմքում ընկած կանխատեսումների սցենարին համահունչ ստորև ներկայացվում են Ծրագրի հիմնական միջոցառումների ուղղությունները:

4.1. Պետական բյուջեի եկամուտներ

ՀՀ կառավարությունը պետական պարտքի նվազեցման վերանայված Ծրագրի իրականացման նպատակով ծրագրավորում է իրականացնել պետական բյուջեի եկամուտների քաղաքականության միջոցոցառումներ, որոնք ներառում են հարկային օրենսդրությունը և հարկային վարչարարությունը: Հարկային օրենսդրության միջոցառումները ներառում են ակցիզային հարկի, եկամտային հարկի, շահութահարկի, շրջանառության հարկի և պետական տուրքի միջոցառումներ, որոնց նպատակը տնտեսության վրա նվազագույն խեղաթյուրող ազդեցություններով արտահանելի հատվածի և երկարաժամկետ տնտեսական աճի խթանումն է, ինչը հեռանկարում թույլ կտա նվազեցնել պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը[36]: Հարկային օրենսդրության միջոցառումների զուտ

[36] Հիմնական միջոցառումներն են. եկամտային հարկի մասով ՝ դրույքաչափերի համահարթեցումը և աստիճանական նվազեցումը մինչև 20%-ի, շահութահարկի մասով՝ դրույքաչափի 2 տոկոսային կետով նվազեցումը և որոշ տեսակի գործունեությունների տեղափոխումը շահութահարկով հարկման դաշտ, շրջանառության հարկի մասով՝ հարկման շեմի պահպանումը 115 մլն դրամի մակարդակում, ակցիզային հարկի գծով՝ մի շարք ապրանքատեսակների գծով դրույքաչափերի աստիճանական բարձրացումը, պետական տուրքի մասով՝ որոշ տեսակի գործունեությունների համար գանձվող պետական տուրքի չափի բարձրացումը: Հարկային օրենսդրության նշված միջոցառումները

ազդեցությունը հարկային եկամուտների վրա բացասական է, որը փոխհատուցվում է հարկային վարչարարության միջոցառումների իրականացմամբ: Ծրագրված հարկային վարչարարության միջոցառումները թույլ են տալիս միաժամանակ արձանագրել հարկերի և տուրքերի շարունակական բարելավում ՀՆԱ նկատմամբ՝ հնարավորություն տալով պարտքի երկարաժամկետ կայունությանը նպաստելուն զուգահեռ վերանայված Ծրագրով սահմանված ժամանակահատվածում հասնել կառավարության պարտք/ՀՆԱ թիրախային ցուցանիշին:

ԱՂՅՈՒՍԱԿ 21.3. ՀԱՐԿԵՐԻ ԳԾՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԸՍՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

	2020	2021	2022	2023	Ընդամենը ավելացում, %-ային կետ
Բյուջեի եկամուտների ավելացում, %-ային կետ ՀՆԱ-ում	0.40	(0.10)	0.30	0.30	0.90
Հարկերի և տուրքերի ավելացում, %-ային կետ ՀՆԱ-ում	0.56	0.23	0.43	0.41	1.64
Հարկային օրենսդրություն, %-ային կետ ՀՆԱ-ում	(0.05)	(0.21)	(0.19)	(0.15)	(0.60)
Հարկային վարչարարություն, %-ային կետ ՀՆԱ-ում	0.62	0.44	0.63	0.56	2.24

4.2. Պետական բյուջեի ծախսեր

ՀՀ կառավարությունը պարտքի նվազեցման վերանայված ծրագրի իրականացման համար ծրագրում է 2020-2023թթ նվազեցնել պետական բյուջեի ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում՝ գումարային առումով 0.6 տոկոսի չափով: Սակայն ծախսերի նվազեցումն իրականացվում է ընթացիկ ծախսերի գծով՝ գումարային ՀՆԱ 2.4%-ային կետի չափով, մինչդեռ կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում աճում է՝ նպաստելու երկարաժամկետ տնտեսական աճին և այս կերպ հեռանկարում նվազեցնելու պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը:

արդեն իսկ արտացոլվել են ՀՀ հարկային օրենսգրքում՝ 2019թ-ի հունիսի 25-ին ընդունված և հունիսի 27-ին ստորագրված օրենքով, որը ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից՝ բացառությամբ հոդված 71-ով սահմանված դեպքերի:

ԱՂՅՈՒՍԱԿ 21.4. ԸՆԹԱՑԻԿ և ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐՎԱԾ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

	2020	2021	2022	2023	Ընդհանուր նվազեցում, %-ային կետ ՀՆԱ-ում
Պետական բյուջեի ծախսերի կրճատում, %-ային կետ ՀՆԱ-ում	-0.3	0.2	-0.3	-0.2	**-0.6**
ընթացիկ ծախսերի գծով	1.1	0.6	0.4	0.3	**2.4**
կապիտալ ծախսերի գծով	-1.5	-0.4	-0.7	-0.5	**-3.1**

4.4. Բյուջեի պակասուրդի ֆինանսավորում

ՀՀ կառավարությունը ծրագրում է կառավարության պարտքի նվազեցման վերանայված Ծրագրի իրականացման համար պակասուրդի նվազեցումը ծրագրում է իրականացնել արտաքին աղբյուրների գծով պակասուրդի ֆինանսավորման կրճատմամբ, մինչդեռ ներքին աղբյուրների գծով պակասուրդի ֆինանսավորումը նախատեսվում է ավելացնել՝ արձանագրելու Կառավարության պարտքի կառուցվածքի որակական բարելավում և պարտքի պորտֆելի ռիսկերի նվազեցում: Պակասուրդի ֆինանսավորման ծրագրված միջոցառումները բերված են Աղյուսակում:

ԱՂՅՈՒՍԱԿ 21.5. ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐՎԱԾ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

	2020	2021	2022	Ընդամենը նվազեցում
Պակասուրդի նվազեցում, %-ային կետ ՀՆԱ-ում	0.09	0.04	0.00	**0.13**
Ներքին աղբյուրների գծով	-0.57	-0.33	-0.15	0.35
Արտաքին աղբյուրների գծով	0.66	0.37	0.15	-0.33

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ 2017-2018ԹԹ. ՓԱՍՏԱՑԻ, 2019Թ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԵՎ 2019-2022ԹԹ. ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Աղյուսակ 16. ՀՀ կառավարության պարտքի հիմնական ցուցանիշները 2017-2022թթ (մլրդ դրամ)

	2017թ. փաստ.	2018թ. փաստ.	2019թ. պետբյուջեի ծրագիր	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2022թ. կանխ.
Կառավարության պարտք	2,988.4	3,082.9	3,361	3,370.6	3,636.7	3,909.7	4,204.9
% ՀՆԱ-ի նկատմամբ	53.7	51.3	49.7	52.2	52.1	51.3	50.5
Ըստ ռեզիդենտության							
կառավարության ներքին պարտք	619.5	672.4	731.2	748.8	837.9	947.2	1,078.1
կառավարության արտաքին պարտք	2,368.9	2,410.4	2,629.7	2,621.7	2,798.8	2,962.5	3,126.8
Ըստ գործիքակազմի							
արտաքին վարկեր և փոխառություններ	1,946.6	2,002.7	2,210.8	2,210.0	2,378.8	2,534.1	2,689.5
պետական գանձապետական պարտատոմսեր	549.7	588.1	655.6	655.6	745.6	855.6	985.6
արտարժութային պետական պարտատոմսեր	484.1	483.8	486.6	496.9	506.3	515.9	525.7
արտաքին երաշխիքներ	3.6	3.9	3.9	3.9	4.0	4.1	4.1
ներքին երաշխիքներ	4.4	4.4	4.1	4.2	2.1	0.2	0.0
Կառավարության պարտքի տոկոսավճար	122.1	139.0	158.0	158.0	183.0	189.6	207.9
Տոկոսավճար / պետական բյուջեի ծախսեր (%)	8.1	9.6	9.6	9.6	9.8	9.4	9.3
Տոկոսավճար / պետական բյուջեի սեփական (առանց դրամաշնորհներ) եկամուտներ (%)	10.0	10.4	10.8	10.8	10.8	10.3	10.2
Տոկոսավճար / ՀՆԱ (%)	2.2	2.3	2.3	2.4	2.6	2.5	2.5

Աղյուսակ 17. Պետական պարտատոմսերի ցուցանիշները 2017-2022թթ.

	2017թ. փաստ.	2018թ. փաստ.	2019թ. պետբյուջեի ծրագիր	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2022թ. կանխ.
Պետական գանձապետական պարտատոմսեր, մլրդ դրամ	549.7	588.1	655.6	655.6	745.6	855.6	985.6
% ՀՆԱ-ի նկատմամբ	9.9	9.8	9.7	10.2	10.7	11.2	11.8
ըստ մարման մնացած օրերի, մլրդ դրամ							
Մինչև 1 տարի	90.1	76.1	91.5	91.5	115.0	115.5	134.0
1-5 տարի	222.6	224.5	298.5	298.5	314.2	409.6	452.5
5-ից ավելի տարի	237.1	287.5	265.5	265.5	316.4	330.4	399.0
ըստ մարման մնացած օրերի կշիռը (%)	100	100	100	100	100	100	100
Մինչև 1 տարի	16.4	12.9	14.0	14.0	15.4	13.5	13.6
1-5 տարի	40.5	38.2	45.5	45.5	42.1	47.9	45.9
5-ից ավելի տարի	43.1	48.9	40.5	40.5	42.4	38.6	40.5
Միջին տոկոսադրույք (%)	13.1	12.3	12.0	12.0	11.5	11.3	11.1
Միջին ժամկետայնություն (տարի)	7.6	9.1	10.1	10.1	10.2	10.3	10.4
Արտարժութային պետական պարտատոմսեր, մլն ԱՄՆ դոլար	1,000.1	1,000.1	1,000.1	1,000.1	1,000.0	1,000.0	1,000.0
% ՀՆԱ-ի նկատմամբ	8.7	8.1	7.2	7.7	7.3	6.8	6.3
Միջին տոկոսադրույք (%)	6.9	6.9	6.9	6.9	7.5	7.5	7.5
Միջին ժամկետայնություն (տարի)	5.0	4.2	3.0	3.0	6.9	5.9	4.9

Աղյուսակ 18. ՀՀ կառավարության վարկերի և փոխառությունների ցուցանիշները 2017-2022թթ.

(մլն ԱՄՆ դոլար)

	2017թ. փաստ.	2018թ. փաստ.	2019թ. պետբյուջեի ծրագիր	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2022թ. կանխ.
Կառավարության վարկեր և փոխառություններ	4,021.0	4,140.0	4,543.8	4,448.1	4,698.6	4,911.9	5,116.1
% ՀՆԱ-ի նկատմամբ	35.0	33.4	32.7	34.2	34.1	33.3	32.3
Ըստ ռեզիդենտության							
արտաքին վարկեր և փոխառություններ	4,021.0	4,140.0	4,543.8	4,448.1	4,698.6	4,911.9	5,116.1
ներքին վարկեր և փոխառություններ	-	-	-	-	-	-	-
Ըստ վարկատուի							
միջազգային ֆինանսական կառույցներից	3,167.2	3,185.7	3,357.0	3,294.7	3,480.7	3,652.9	3,849.2
օտարերկրյա պետություններից	829.2	931.6	1,166.0	1,132.8	1,199.1	1,242.4	1,252.5
առևտրային բանկերից	24.6	22.7	20.8	20.5	18.8	16.6	14.5
Միջին տոկոսադրույք (%)	2.1	2.4	2.8	2.7	2.7	2.7	2.7
Միջին ժամկետայնություն (տարի)	10.4	9.7	9.2	9.2	8.8	8.4	8.1

ՀԱՎԵԼՎԱԾ N 2. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

1. Ներածություն

Ենթակառուցվածքային ոլորտներում, մասնավորապես, էներգետիկայի, տրանսպորտի և ջրային տնտեսության ոլորտների թվով քսան կազմակերպությունների (Ընկերություններ) գործունեությանն առնչվող հարկաբյուջետային ռիսկերի գնահատականը:

2. Հարկաբյուջետային ռիսկերի գնահատման նպատակը

Հարկաբյուջետային ռիսկերի այս գնահատման նպատակն է ֆինանսական վիճակի վերլուծության միջոցով գնահատել Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման հավանականությունը, որը կարող է հանգեցնել պետական բյուջեից Ընկերություններին չնախատեսված փոխառությունների, սուբսիդիաների տրամադրման, սեփական կապիտալի համալրման կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտության, ինչպես նաև Ընկերությունների կողմից պետական բյուջե կանխատեսված շահութաբաժինների, ստացված վարկային միջոցների օգտագործման դիմաց հաշվարկված տոկոսների չվճարման և մայր գումարների չմարման:

2.1 Հարկաբյուջետային ռիսկերի գնահատման մեթոդաբանություն

Ընկերությունների կողմից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառվել է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից հրապարակված՝ «Կորպորատիվ հատվածից առաջացող ֆիսկալ ռիսկերի կառավարման ուղեցույց»-ում (այսուհետ՝ ԱՄՀ ուղեցույց), ինչպես նաև Ասիական զարգացման բանկի խորհրդատուի հետ մշակված և ՀՀ ֆինանսների նախարարի 14.02.2018թ. N439-Ա հրամանով հաստատված «Ֆիսկալ ռիսկերի գնահատման ձեռնարկ»-ում ներկայացված մեթոդաբանությունը, որի համաձայն Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակը կանխատեսելու համար հաշվարկվել է սնանկացման կանխատեսման Է. Ալթմանի «Z-միավոր» կոչվող հսկիչ ցուցանիշը1, որը միջազգայնորեն կիրառվում է Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականության կանխատեսման նպատակով: Զուգահեռաբար Ընկերությունների

1 Է. Ալթմանի «Z-միավոր» կոչվող ցուցանիշը միջազգայնորեն կիրառվում է կորպորացիաների ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը կանխատեսելու նպատակով: Այն իրենից ներկայացնում է գործակիցներով կշռված՝ գործունեության հինգ կամ չորս ընդհանուր հարաբերակցությունների գծային զուգակցում: Գործակիցները հաշվարկվել են ֆինանսական ծանր վիճակում գտնվող ընկերությունների միջազգայնորեն որոշված ընտրանքի հիման վրա):

ֆինանսական հուսալիության մասին լրացուցիչ տեղեկատվության ստացման, ինչպես նաև «Z-միավոր»-ի ստուգաճշտման համար կիրառվել են լրացուցիչ ֆինանսական գործակիցներ (շահութաբերության, իրացվելիության, վճարունակության հաշվարկման համար), որոնք արտացոլում են կապը Ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների տարբեր հոդվածների միջև:

3. Էներգետիկայի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերություններ

Էներգետիկայի ոլորտի դիտանցման ենթարկված պետական մասնակցությամբ ընկերությունների (Ընկերություններ) գործունեության արդյունքում հարկաբյուջետային ռիսկերն են.

Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում որպես ժամանակավոր օգնություն չնախատեսված բյուջետային վարկերի տրամադրման կամ սեփական կապիտալի համալրման համար բյուջետային հատկացումների անհրաժեշտության առաջացում,

Ընկերություններին սուբսիդիաների չնախատեսված գումարների տրամադրում կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտություն,

Ընկերություններից պետական բյուջեի մուտքերի կազմում նախատեսված շահութաբաժինների չստացում,

ՀՀ պետական բյուջեից Ընկերություններին տրամադրված վարկային միջոցների օգտագործման դիմաց հաշվարկված տոկոսների չվճարում և մայր գումարների չմարում:

2018թ. ընթացքում (այսուհետ՝ հաշվետու ժամանակաշրջան) էներգետիկայի ոլորտի (այսուհետ՝ Ոլորտ) թվով ութ Ընկերությունների հիմնական գործունեությունից ստացված հանրագումարային եկամուտները կազմել են 124.7 մլրդ. դրամ՝ 2017թ. (այսուհետ՝ նախորդ ժամանակաշրջան) 112.9 մլրդ. դրամի դիմաց, կամ 11.8 մլրդ. դրամով ավել (10.5%-ով): Հաշվետու ժամանակաշրջանում այդ Ընկերությունների հանրագումարային ծախսերը կազմել են 122,8 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 100.0 մլրդ. դրամի դիմաց՝ կամ 22.8 մլրդ դրամով ավել (22.8%-ով):

Ընկերությունների հանրագումարային 124.7 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 122,8 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում շահույթը կազմել է 1.9 մլրդ դրամ, իսկ զուտ շահույթը կազմել է 2.9 մլրդ դրամ, նախորդ ժամանակաշրջանի 5.2 մլրդ դրամ վնասի դիմաց (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Էներգետիկայի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային զուտ շահույթը (վնասը) ըստ տարիների.

հազ. դրամ

		2016թ.	2017թ.	2018թ.
		Փաստ.	Փաստ.	Փաստ.
	Էներգետիկայի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային շահույթը հարկումից հետո	(2,676,365.7)	(5,214,707.0)	2,877,833.8
1	«Հայկական ատոմակայան» ՓԲԸ	(3,467,510.0)	(3,682,342.0)	(2,765,702.0)
2	«Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	676,661.0	5,621,887.0	3,370,279.0
3	«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն (ՋԷԿ)» ՓԲԸ	125,197.3	(7,123,321.0)	2,206,620.8
4	«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ	1,180.0	1,242.0	5,740.0
5	«Էներգակարգաբերում» ՓԲԸ	4,796.0	2,848.0	6,449.0
6	«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ	4,769.0	25,315.0	31,990.0
7	«Հայատոմ» ՓԲԸ	(28,140.0)	(48,096.0)	11,872.0
8	«Անալիտիկ» ՓԲԸ	6,681.0	9,353.0	10,585.0

Հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ Ընկերությունների հանրագումարային սեփական կապիտալը ավելացել է 3.4 մլրդ դրամով (4.2%-ով): Ընդ որում Ընկերությունների հանրագումարային պարտավորությունները 4.1 անգամ գերազանցում են սեփական կապիտալի հանրագումարային մեծությանը (տես աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Էներգետիկայի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային հաշվապահական հաշվեկշիռը 2016թ. դեկտեմբերի 31-ի, 2017թ. դեկտեմբերի 31-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Հաշվեկշռային հոդվածներ	2016թ.	2017թ.	2018թ.
1. Ընդամենը ակտիվներ	351,416,729.2	374,591,875.0	435,287,267.9
- Ընթացիկ ակտիվներ	70,518,744.3	81,579,395.0	79,960,062.9
- Ոչ ընթացիկ ակտիվներ	280,897,984.9	293,012,480.0	355,327,205.0
2. Ընդամենը պարտավորություններ	265,885,178.2	292,908,638.0	350,159,009.6
- Ընթացիկ պարտավորություններ	56,696,779.5	74,564,883.0	66,335,523.5
- Ոչ ընթացիկ պարտավորություններ	209,188,398.7	218,343,755.0	283,823,486.1
3. Սեփական կապիտալ (զուտ ակտիվներ)	85,531,551.0	81,683,237.0	85,128,259.0

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունները չունեն ժամկետանց վարկային պարտավորություններ, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից բյուջետային երաշխիքներ չեն ստացել: Ընդ որում «Երևանի ՋԷԿ», «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ները հանդիսանում են միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների աջակցությամբ իրականացվող նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ենթավարկային պայմանագրերով Ոլորտին տրամադրված վարկային միջոցների խոշորագույն ստացողներից:

Ընկերությունները ներգրավված չեն այնպիսի տեղական կամ միջազգային դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ այդ Ընկերությունների ֆինանսական վիճակի վրա:

Հաշվետու ժամանակաշրջանում որոշ Ընկերությունների ֆինանսական կատարողականի փոքր-ինչ բարելավման արդյունքում ստացված շահութաբաժինները կազմել են 48.9 մլն դրամ՝ կանխատեսվող 79.0 մլն դրամի փոխարեն: Հետևաբար, 2018թ. փաստացի շահութաբաժինների գումարը 30.1 մլն. դրամով նվազել է կանխատեսվող ցուցանիշը:

Ընկերությունների հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառված ֆինանսական գործակիցների ամփոփ արդյունքները և պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Էներգետիկայի ոլորտի պետական ընկերությունների հանրագումարային ֆինանսական ցուցանիշները.

Ցուցանիշ	2016թ.	2017թ.	2018թ.	Թույլատրելի սահմանային նորմա
Ծախսերի վերականգնման գործակից	1.0	1.1	1.0	Առնվազն 1
Զուտ շահույթի մարժա (%)	(2.6)	(4.6)	2.4	Առնվազն 8%
Արագ իրացվելիության գործակից	0.6	0.5	0.3	Առնվազն 1
Դեբիտորական պարտքերի շրջանառություն (օր)	73.6	70.3	36.1	Առավելագույնը՝ 60 օր
Պարտքի սպասարկման գործակից	0.3	0.1	0.3	Առավելագույնը՝ 0.5
Վերաֆինանսավորման գործակից	7.4	3.1	3.9	Առավելագույնը՝ 1
Z- միավոր	1.14	0.72	0.8	Ապահով գոտի՝ Z>2.6, Գորշ գոտի՝ 1.1<Z<2.6, Ծանր գոտի՝ Z<1.1

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից, հաշվետու ժամանակաշրջանում սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի բարձր հավանականության մասին (գործակիցը՝ Z=0,8, գտնվում է սահմանված ծանր գոտում՝ Z<1.1):

Ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից երեքը չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային և վկայում են ֆինանսական ծանր վիճակի բարձր հավանականության մասին:

Զուտ շահույթի մարժան բնութագրում է բիզնեսի գործառնական արդյունավետությունը: Այն հաշվետու ժամանակաշրջանում 2.4% է, որը Ոլորտի որոշ Ընկերությունների վնասով աշխատելու արդյունք է և դեռևս ցածր է միջազգային պրակտիկայում կիրառվող շեմային մակարդակից:

Արագ իրացվելիության գործակիցը հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 0.2 կետով և կազմել 0.3, դեռևս ցածր մնալով միջազգային պրակտիկայում կիրառվող շեմային մակարդակից, որը փաստում է, որ որոշ Ընկերություններ կարող են արագ

իրացվելի ընթացիկ ակտիվների հաշվին մարել ընթացիկ պարտավորությունների ընդամենը 30 տոկոսը:

Դեբիտորական պարտքերի վերադարձելիության միջին ժամանակաշրջանի ցուցանիշը հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի ցուցանիշի նկատմամբ ցուցաբերել է նվազման դինամիկա և հաշվետու տարում արդեն ցածր է սահմանային նորմայից (հաշվետու տարում նախորդ տարվա նկատմամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերը նվազել են 8.5 մլրդ դրամով կամ 58.6%-ով): Այսինքն Ոլորտի որոշ ընկերությունների դեբիտորական պարտքերի կուտակումը չնայած ունի նվազման դինամիկա, այնուամենայնիվ այն դեռևս բարելավման կարիք ունի:

Վերաֆինանսավորման գործակիցը հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ փոփոխվել է և կազմել 3.9, որը դեռևս բավականին բարձր է միջազգային պրակտիկայում կիրառվող շեմային մակարդակից: Դա փաստում է, որ որոշ Ընկերություններ ի վիճակի չեն գործառնություններից ստացվող դրամական հոսքերի հաշվին կատարել իրենց ընթացիկ պարտավորությունները:

Հաշվի առնելով, որ հաշվետու և միջանկյալ ժամանակաշրջաններում Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատող Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի բարձր հավանականության մասին, այս դեպքում, անկախ լրացուցիչ գործակիցներից, Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականության վերջնական գնահատականն է «բարձր»:

Ինչ վերաբերում է Ընկերությունների ֆիսկալ ռիսկերի նյութականացման ազդեցության քանակական գնահատմանը, ապա այն նույնպես բարձր է համարվում2:

3.1 Մասնավոր ընկերություններ

Էներգետիկայի ոլորտի դիտանցման ենթարկվող մասնավոր Ընկերությունների գործունեության արդյունքում հարկաբյուջետային ռիսկերն են.

---

2 Հաշվի առնելով, որ Ընկերությունների ընդհանուր պարտավորությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ կազմում է 5.2 տոկոս՝ ԱՄՀ-ի կողմից կիրառվող մոտեցման համաձայն, եթե Ընկերության ընդհանուր պարտավորությունների մեծությունը ՀՆԱ-ի 0.5 տոկոսից փոքր է, ապա ֆիսկալ ռիսկի նյութականացման ազդեցությունը համարվում է ցածր, եթե ընդհանուր պարտավորությունների մեծությունը գտնվում է ՀՆԱ-ի 0.5 տոկոսից մինչև 1 տոկոսի միջակայքում, ապա ֆիսկալ ռիսկի նյութականացման ազդեցությունը համարվում է միջին և, եթե ընդհանուր պարտավորությունների մեծությունը ՀՆԱ-ի 1 տոկոսից մեծ է, ապա ֆիսկալ ռիսկերի նյութականացման ազդեցությունը համարվում է բարձր (մասնավոր Ընկերությունների դեպքում ընդհանուր պարտավորությունների փոխարեն կիրառվում են պետության կողմից տրամադրված կամ երաշխավորված պարտավորությունները):

ՀՀ պետական բյուջեից մասնավոր Ընկերություններին չնախատեսված փոխառությունների տրամադրում կամ սեփական կապիտալի համալրում,

Մասնավոր Ընկերություններին սուբսիդիաների տրամադրում կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտություն,

ՀՀ պետական բյուջեից մասնավոր Ընկերություններին տրամադրված վարկերի դիմաց տոկոսների չվճարում և մայր գումարների չմարում:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում էներգետիկայի ոլորտի դիտանցման ենթարկված մասնավոր ընկերությունների (թվով հինգ) հիմնական գործունեությունից ստացված հանրագումարային եկամուտները նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ ավելացել են 37.8 մլրդ դրամով և կազմել 467.6 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունների հանրագումարային ծախսերը կազմել են 437.4 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 403.1 մլրդ դրամի դիմաց՝ ավելանալով 34.3 մլրդ դրամով (8.5%-ով):

Ընկերությունների 467.6 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 437.4 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում շահույթը կազմել է 30.2 մլրդ դրամ:

Աղյուսակ 4. Էներգետիկայի ոլորտի մասնավոր ընկերությունների հանրագումարային զուտ շահույթն ըստ տարիների.

հազ. դրամ

Մասնավոր ընկերություններ	2016թ.	2017թ.	2018թ.
	Փաստ.	Փաստ.	Փաստ.
ԸՆԴԱՄԵՆԸ	27,896,985.0	(1,298,881.0)	16,154,475.0
1. «Հրազդան ՋԷԿ» ԲԲԸ	2,619,185.0	1,248,326.0	2,835,161.0
2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	1,666,000.0	(9,364,000.0)	14,920,000.0
2.1 «Տրանսգազ» ՍՊԸ*	(15,506.0)	64,049.0	(5,811.0)
3. Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ	327,282.0	98,744.0	(12,353,723.0)
4. Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	23,284,518.0	6,654,000.0	10,753,037.0

*«Տրանսգազ» ՍՊԸ-ի ցուցանիշները ներառված են «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի ցուցանիշների մեջ:

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունները չունեն ժամկետանց վարկային պարտավորություններ, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից բյուջետային երաշխիքներ չեն ստացել: Ընդ որում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ները հանդիսանում են միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների աջակցությամբ իրականացվող նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ենթավարկային պայմանագրերով ոլորտին տրամադրված վարկային միջոցների խոշորագույն ստացողներից:

Ընկերությունները ներգրավված չեն այնպիսի տեղական կամ միջազգային դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ այդ Ընկերությունների ֆինանսական վիճակի վրա:

Ընկերությունների հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառված ֆինանսական գործակիցների ամփոփ արդյունքները և պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները ներկայացված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Էներգետիկայի ոլորտի մասնավոր ընկերությունների հանրագումարային ֆինանսական ցուցանիշները.

Ցուցանիշ	2016թ.	2017թ.	2018թ.	Թույլատրելի սահմանային նորմա
Ծախսերի վերականգնման գործակից	1.1	1.1	1.1	Առնվազն 1
Զուտ շահույթի մարժա (%)	6.3	(0.3)	3.7	Առնվազն 8%
Արագ իրացվելիության գործակից	0.4	0.4	2.8	Առնվազն 1
Դեբիտորական պարտքերի շրջանառություն (օր)	75.2	58.3	54.6	Առավելագույնը 60 օր
Պարտքի սպասարկման գործակից	0.1	0.2	0.1	Առավելագույնը 0.5
Վերաֆինանսավորման գործակից	1.4	1.3	1.0	Առավելագույնը 1
Z միավոր	0.03	(0.06)	1.23	Ապահով գոտի՝ Z>2.6, Գորշ գոտի՝ 1.1< Z<2.6, Ծանր

				գոտի՝ Z<1.1

Ինչպես երևում է աղյուսակ 5-ից հաշվետու ժամանակաշրջանում սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական միջին ծանրության վիճակի հավանականության մասին (Z=1.23 գտնվում են սահմանված գորշ գոտում 1.1< Z<2.6):

Հաշվետու ժամանակաշրջանում ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից երկուսը, չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային և վկայում են ֆինանսական ոչ ծանր վիճակի հավանականության մասին:

Զուտ շահույթի մարժան բնութագրում է բիզնեսի գործառնական արդյունավետությունը: Հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ այս ցուցանիշը ցուցաբերել է դրական դինամիկա և 4.3 տոկոսային կետով պակաս է պրակտիկայում կիրառվող նվազագույն նորմայից:

Արագ իրացվելիության գործակիցը հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ ևս ցուցաբերել է դրական դինամիկա և կազմել 2.8 (1.8 տոկոսային կետով բարձր մնալով միջազգային պրակտիկայում կիրառվող շեմային մակարդակից), որը փաստում է, որ Ընկերությունները արագ իրացվելի ընթացիկ ակտիվների հաշվին կարող են մարել իրենց ընթացիկ պարտավորությունները:

Վերաֆինանսավորման գործակիցը հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 0.3 կետով և կազմել է 1.0, որը փաստում է, որ որոշ Ընկերություններ ի վիճակի են գործառնություններից ստացվող իրենց դրամական հոսքերի հաշվին կատարել իրենց ընթացիկ պարտավորությունները:

Հաշվի առնելով, որ հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատող Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական միջին վիճակի հավանականության մասին (Z=1.23), իսկ լրացուցիչ վեց գործակիցներից մեկը չի համապատասխանում միջազգային պրակտիկայում կիրառվող շեմային մակարդակին, հետևաբար Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականության վերջնական գնահատականն է «միջին»:

Միաժամանակ բյուջետային վարկավորման արդյունքում Ընկերությունների կողմից պետությանը վճարման ենթակա ընդհանուր գումարի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ կազմում է 0.3 տոկոս, հետևաբար ֆիսկալ ռիսկերի նյութականացման ազդեցությունը քանակական գնահատման տեսանկյունից ցածր է (տես տողատակի 2-րդ ծանոթագրությունը):

4. Տրանսպորտի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերություններ

Տրանսպորտի ոլորտի դիտանցման ենթարկվող պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեության արդյունքում հարկաբյուջետային ռիսկերն են.

Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում որպես ժամանակավոր օգնություն չնախատեսված բյուջետային վարկերի տրամադրման կամ սեփական կապիտալի համալրման համար բյուջետային հատկացումների անհրաժեշտության առաջացում,

Ընկերություններին սուբսիդիաների չնախատեսված գումարների տրամադրում կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտություն,

Ընկերություններից պետական բյուջեի մուտքերի կազմում նախատեսված շահութաբաժինների չստացում,

ՀՀ պետական բյուջեից Ընկերություններին տրամադրված վարկային միջոցների օգտագործման դիմաց հաշվարկված տոկոսների չվճարում և մայր գումարների չմարում:

Հաշվետու ժամանակաշրջանում տրանսպորտի ոլորտի երեք պետական մասնակցությամբ ընկերությունների (այսուհետ՝ Ընկերություններ) հիմնական գործունեությունից ստացված հանրագումարային եկամուտները կազմել են 11.8 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 10.4 մլրդ դրամի դիմաց կամ 1.4 մլրդ դրամով ավել (13.5%):

Հաշվետու ժամանակաշրջանում այդ Ընկերությունների հանրագումարային ծախսերը կազմել են 8.4 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 8.0 մլրդ դրամի դիմաց՝ կամ ավել 0.4 մլրդ դրամով (5.0%):

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունների 11.8 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 8.4 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում շահույթը կազմել է 3.4 մլրդ դրամ, իսկ զուտ շահույթը՝ 2.7 մլրդ դրամ (աղյուսակ 6):

Աղյուսակ 6. Տրանսպորտի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային շահույթը (վնասը) ըստ տարիների.

հազ. դրամ

		2016թ.	2017թ.	2018թ.
		Փաստ.	Փաստ.	Փաստ.
N	Տրանսպորտի ոլորտի պետական	1,458,739.0	2,461,067.0	2,701,095.0

	մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային շահույթը հարկումից հետո			
1	«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	839,269.0	2,486,394.0	1,794,986.0
2	«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ	622,110.0	(27,650.0)	825,467.0
3.	«Հայավտոկայարան» ՓԲԸ	(2,640.0)	2,323.0	80,642.0

Աղյուսակ 7. Տրանսպորտի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային հաշվապահական հաշվեկշիռը.

հազ. դրամ

Հաշվեկշռային հոդվածներ	Տրանսպորտի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերություններ		
	2016թ.	2017թ.	2018թ.
1. Ընդամենը ակտիվներ	25,060,334.0	28,147,379.0	28,261,773.0
- Ընթացիկ ակտիվներ	4,300,646.00	7,595,950.00	7,416,624.0
- Ոչ ընթացիկ ակտիվներ	20,795,688.00	20,551,429.00	20,845,149.0
2. Ընդամենը պարտավորություններ	15,023,710.0	16,145,792.0	14,098,044.0
- Ընթացիկ պարտավորություններ	1,046,648.00	1,809,989.00	2,290,818.0
- Ոչ ընթացիկ պարտավորություններ	13,977,062.00	14,335,803.00	11,807,226.0
3. Սեփական կապիտալ (զուտ ակտիվներ)	10,036,623.00	12,001,587.00	14,163,729.0

Հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանների նկատմամբ Ընկերությունների հանրագումարային սեփական կապիտալն ավելացել է 2.2 մլրդ դրամով ՝ (18.0%):

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունները չունեն ժամկետանց վարկային պարտավորություններ, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից բյուջետային երաշխիքներ չեն ստացել:

Հարկ է նաև նշել, որ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ին ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիայի հաշվարկներում ներառված են նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի շրջանակներում այս ընկերությանը ենթավարկային պայմանագրերով տրամադրված վարկերի մայր գումարների և հաշվարկված տոկոսների մարումները:

Ընկերությունները ներգրավված չեն այնպիսի տեղական կամ միջազգային դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ իրենց ֆինանսական վիճակի վրա:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ պետական բյուջե շահութաբաժիններ վճարվել է միայն «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից՝ 559.2 մլն դրամ, կանխատեսված 316.3 մլն դրամի փոխարեն:

Ընկերությունների հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառված ֆինանսական գործակիցների ամփոփ արդյունքները և պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները ներկայացված են աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8. Տրանսպորտի ոլորտի պետական ընկերությունների հանրագումարային ֆինանսական ցուցանիշները.

	2016թ.	2017թ.	2018թ.	Թույլատրելի սահմանային նորմա
Ծախսերի վերականգնման գործակից	1.0	1.3	1.4	Առնվազն 1
Զուտ շահույթի մարժա (%)	19.4	25.8	26.0	Առնվազն 8%
Արագ իրացվելիության գործակից	3.4	3.8	2.9	Առնվազն 1
Դեբիտորական պարտքերի շրջանառություն (օր)	41.3	65.1	59.0	Առավելագունը 60 օր
Պարտքի սպասարկման գործակից	0.03	0.02	0.02	Առավելագույնը 0.5
Վերաֆինանսավորման գործակից	0.38	0.44	0.55	Առավելագույնը 1

	2016թ.	2017թ.	2018թ.	Թույլատրելի սահմանային նորմա
Z միավոր	2.5	3.6	3.9	Ապահով գոտի՝ Z>2.6, Գորշ գոտի՝ 1.1< Z<2.6, Ծանր գոտի՝ Z<1.1

Ինչպես երևում է աղյուսակ 8-ից հաշվետու ժամանակաշրջանում սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի ցածր հավանականության մասին (գործակիցը՝ Z=3.9, գտնվում է սահմանված ապահով գոտում՝ Z>2.6):

Հաշվետու ժամանակաշրջանում ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցները հիմնականում ապահովել են միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները և վկայում են ֆինանսական ծանր վիճակի ցածր հավանականության մասին:

Հաշվի առնելով, որ հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատող Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի ցածր հավանականության մասին, իսկ ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական գործակիցները ապահովել են միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները և վկայում են ֆինանսական ծանր վիճակի ցածր հավանականության մասին, հետևաբար այս երկու նախնական գնահատումների զուգակցման արդյունքում Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատվում է ցածր:

5. Ռոգման ոլորտ

Ռոգման ոլորտի դիտանցման ենթարկված պետական մասնակցությամբ երկու ընկերությունների գործունեության արդյունքում հարկաբյուջետային ռիսկերն են.

Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում որպես ժամանակավոր օգնություն չնախատեսված բյուջետային վարկերի տրամադրման կամ սեփական կապիտալի համալրման համար բյուջետային հատկացումների անհրաժեշտության առաջացում,

Ընկերություններին սուբսիդիաների չնախատեսված գումարների տրամադրում կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտություն,

Ընկերություններից պետական բյուջեի մուտքերի կազմում նախատեսված շահութաբաժինների չստացում,

ՀՀ պետական բյուջեից Ընկերություններին տրամադրված վարկային միջոցների օգտագործման դիմաց հաշվարկված տոկոսների չվճարում և մայր գումարների չմարում:

Հաշվետու ժամանակաշրջանում ոռոգման ոլորտի երկու պետական մասնակցությամբ ընկերությունների (Ընկերություններ) հիմնական գործունեությունից ստացված հանրագումարային եկամուտները կազմել են 3.62 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 3.08 մլրդ դրամի դիմաց կամ 0.54 մլրդ դրամով ավել (17.5%):

Հաշվետու ժամանակաշրջանում այդ Ընկերությունների հանրագումարային ծախսերը կազմել են 7.74 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 5.64 մլրդ դրամի դիմաց՝ կամ ավել 2.1 մլրդ դրամով (37.2%):

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունների հանրագումարային 3.62 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 7.74 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում վնասը կազմել է 4.18 մլրդ դրամ, իսկ զուտ վնասը նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ ավելացել է 1.61 մլրդ դրամով (62.9%) ((աղյուսակ 9):

Աղյուսակ 9. Ոռոգման ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային զուտ շահույթը (վնասը) ըստ տարիներ.

հազ. դրամ

		2016թ.	2017թ.	2018թ.
		Փաստ.	Փաստ.	Փաստ.
	Ոռոգման ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային շահույթը հարկումից հետո	(2,136,445.0)	(2,563,748.0)	(4,175,612.0)
1	«Ջրառ» ՓԲԸ	(2,125,020.0)	(2,519,003.0)	(4,170,199.0)
2	«Մելիորացիա» ՓԲԸ	(11,425.0)	(44,745.0)	(5,413.0)

Հաշվետու ժամանակաշրջանում ոլորտի մասով արձանագրված վնասի առաջացման պատճառները հիմնականում պայմանավորված են ՀԾԿՀ-ի կողմից դեռևս 2007թ. հաստատված սակագներով, որոնց հաշվարկների մեջ ներառված չեն ամորտիզացիոն մասհանումները:

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունները չունեն ժամկետանց վարկային պարտավորություններ, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից բյուջետային երաշխիքներ չեն ստացել:

Ընկերությունները ներգրավված չեն այնպիսի տեղական կամ միջազգային դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ իրենց ֆինանսական վիճակի վրա:

Ընկերությունների հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառված ֆինանսական գործակիցների ամփոփ արդյունքները և պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները ներկայացված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10. Ոռոգման ոլորտի պետական ընկերությունների հանրագումարային ֆինանսական ցուցանիշները.

Ցուցանիշ	2016թ.	2017թ.	2018թ.	Թույլատրելի սահմանային նորմա
Ծախսերի վերականգնման գործակից	0.5	0.5	0.5	Առնվազն 1
Զուտ շահույթի մարժա (%)	(144.5)	(151.1)	(211.7)	Առնվազն 8%
Արագ իրացվելիության գործակից	0.1	1.0	7.7	Առնվազն 1
Դեբիտորական պարտքերի շրջանա-ռություն (օր)	16.8	292.3	388.6	Առավելագույնը 60 օր
Պարտքի սպասարկման գործակից	0.0	0.0	(0.0)	Առավելագույնը 0.5
Վերաֆինանսավորման գործակից	0.4	0.5	0.2	Առավելագույնը 1
Z միավոր	48.1	48.4	38.3	Ապահով գոտի՝ Z>2.6, Գորշ գոտի՝ 1.1< Z<2.6, Ծանր գոտի՝ Z<1.1

Ինչպես երևում է աղյուսակ 10-ից հաշվետու ժամանակաշրջաններում սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի բավականին ցածր հավանականության մասին (գործակիցը՝ Z=38.3 գտնվում է սահմանված ապահով գոտում՝ Z>2.6):

Հաշվետու ժամանակաշրջանում ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից երեքը չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային

նորմային, իսկ Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատող Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի ցածր հավանականության մասին, հետևաբար այս երկու նախնական գնահատումների զուգակցման արդյունքում Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատվում է միջին:

Ինչ վերաբերում է Ընկերությունների ֆիսկալ ռիսկերի նյութականացման ազդեցության քանակական գնահատմանը, ապա այն համարվում է ցածր3:

6. Պետական-մասնավոր գործընկերություն (ՊՄԳ)

Տրանսպորտի և ջրային տնտեսության ոլորտներում ՊՄԳ սխեմայի ներքո գործում են «Հարավկովկասյան երկաթուղի» և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ները:

6.1 «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ

ՀՀ կառավարության 07.02.2008թ. N83-Ա որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի և «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի միջև 13.02.2008թ. կնքվել է «Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ փոխանցելու մասին» կոնցեսիոն պայմանագիրը:

Հաշվետու ժամանակաշրջանում «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդամենը եկամուտները կազմել են 23.0 մլրդ դրամ նախորդ ժամանակաշրջանի 20.4 մլրդ դրամի դիմաց կամ ավել 12.7%-ով (2.6 մլրդ դրամով), որը հիմնականում պայմանավորված է բեռնափոխադրումների, ուղևորափոխադրումների և այլ մատուցվող ծառայությունների ծավալների ավելացման հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության ծախսերը կազմել են 22.8 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 20.1 մլրդ դրամի դիմաց՝ կամ ավել 2.7 մլրդ դրամով (13.4%):

Ընկերության 23.0 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 22.8 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում շահույթը կազմել է 0.2 մլրդ դրամ, իսկ զուտ շահույթը՝ 551.3 մլն դրամ:

3 Դիտարկել 2-րդ ծանոթագրությունը, հաշվի առնելով, որ Ընկերությունների ընդհանուր պարտավորությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ կազմում է 0.025%:

Ընկերության հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառված ֆինանսական գործակիցների ամփոփ արդյունքները և պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները ներկայացված են աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11. «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ֆինանսական ցուցանիշները

Ցուցանիշ	2016թ.	2017թ.	2018թ.	Թույլատրելի սահմանային նորմա
Ծախսերի վերականգնման գործակից	1.0	1.0	1.0	Առնվազն 1
Զուտ շահույթի մարժա (%)	0.3	0.9	2.6	Առնվազն 8%
Արագ իրացվելիության գործակից	0.8	1.3	2.1	Առնվազն 1
Դեբիտորական պարտքերի շրջանառություն (օր)	21.3	23.8	13.1	Առավելագույնը 60 օր
Պարտքի սպասարկման գործակից	0.0	0.0	0.0	Առավելագույնը 0.5
Վերաֆինանսավորման գործակից	1.0	1.1	1.4	Առավելագույնը 1
Z միավոր	23.8	19.8	18.8	Ապահով գոտի՝ Z>2.6, Գորշ գոտի՝ 1.1< Z<2.6, Ծանր գոտի Z<1.1

Ինչպես երևում է աղյուսակ 11-ից հաշվետու ժամանակաշրջանում սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերության ֆինանսական ծանր վիճակի բավականին ցածր հավանականության մասին (գործակիցը՝ Z=18.8, գտնվում է սահմանված ապահով գոտում՝ Z>2.6):

Հաշվետու ժամանակաշրջանում ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից երկուսը չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային և վկայում են ֆինանսական ծանր վիճակի միջին հավանականության մասին:

Հաշվետու ժամանակաշրջանում զուտ շահույթի մարժան 5.4 տոկոսային կետով պակաս է պրակտիկայում կիրառվող նվազագույն նորմայից, արագ իրացվելիության գործակիցը հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 0.8-ով և կազմել 2.1, այսինքն Ընկերությունը կարող է առանց պաշարների մեծության արագ իրացվելի ակտիվների հաշվին մարել ընթացիկ պարտավորությունները:

Հաշվի առնելով, որ հաշվետու ժամանակաշրջանում սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերության ֆինանսական ծանր վիճակի ցածր հավանականության մասին, իսկ հաշվետու ժամանակաշրջանում ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից երկուսը չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային և վկայում են ֆինանսական ծանր վիճակի միջին հավանականության մասին, հետևաբար այս երկու նախնական գնահատումների զուգակցման արդյունքում Ընկերության ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատվում է ցածր:

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունը չունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ենթավարկային պայմանգրերով նախատեսված վարկային պարտավորություններ:

Ընկերությունը ներգրավված չի այնպիսի տեղական կամ միջազգային դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ընկերության ֆինանսական վիճակի վրա:

Հարկ է նաև նշել, որ կոնցեսիոն պայմանագրով նախատեսված է, որ կոնցեդենտը սուբսիդավորում է (մասնակի փոխհատուցում է) համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումների կոնցեսիոների (Ընկերության) տարեկան վնասը կոնցեսիոների կողմից անկախ աուդիտորի կողմից այդ վնասների հաստատված հաշվարկների ներկայացման պարագայում:

Սուբսիդիայի համաձայնեցված չափը կազմում է 2015թ. 25%, 2016թ. մինչև 2038թ. 30 տոկոս (2015թ. համար 344.1 մլն դրամ, 2016թ.՝ 312.8 մլն դրամ, իսկ 2017թ-ին 301.7 մլն դրամ, 2018թ-ին փաստացի վճարվել է 347.0 մլն դրամ):

Միաժամանակ կոնցեսիոն պայմանագրով նախատեսված է նաև, որ կոնցեսիոները կոնցեդենտին պետք է վճարի տարեկան կոնցեսիոն վճար՝ համախառն հասույթի 2%-ի չափով (2015թ.՝ 344.1 մլն դրամ, 2016թ.՝ 312.8 մլն դրամ, 2017թ.՝ 301.7 մլն դրամ, իսկ 2018թ. փաստացի վճարվել է 347.0մլն դրամ):

Հետևաբար հաշվի առնելով, որ ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիայի և Ընկերության կողմից վճարվող կոնցեսիոն վճարի չափերը համեմատելի են, ուստի Ընկերության կողմից ՀՀ

պետական բյուջեի վճարվող կոնցեսիոն վճարի չվճարման ռիսկը գնահատվում է բավականին ցածր:

Միաժամանակ հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծության արդյունքները՝ ՀՀ պետական բյուջեից Ընկերությանը չնախատեսված փոխառությունների, սուբսիդիաների (այդ թվում լրացուցիչ) տրամադրման, սեփական կապիտալի համալրման կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտության, ինչպես նաև Ընկերության կողմից ՀՀ պետական բյուջե վճարվող կոնցեսիոն վճարի չվճարման ռիսկը գնահատվում է բավականին ցածր:

6.2 «Վեոլիա Ջուր» ՓԲԸ

21.11.2016թ. ՀՀ կառավարության և «Վեոլիա Օ Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» կոմանդիտային բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքվել է «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագիր՝ 15 տարի ժամկետով (Վարձակալական պայմանգիր):

Վարձակալական պայմանգրի 9-րդ հոդվածի համաձայն Ընկերության կողմից մատուցվող ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայությունների սակագները կարգավորվում և հաստավում են Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:

Միաժամանակ Վարձակալության պայմանագրի 8-րդ հոդվածի համաձայն Ընկերությունը պարտավոր է յուրաքանչյուր կիսամյակ վճարել վարձակալության վճար՝ համաձայն նախատեսված վարձակալության վճարի վճարման ժամանակացույցի: Վարձակալության վճարի ամբողջական գումարը կազմում է 89.7 մլրդ ՀՀ դրամ, որից 2019թ. 2.94 մլրդ դրամ (յուրաքանչյուր կիսամյակում 1.47 մլրդ դրամ):

Հաշվետու ժամանակաշրջանում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդամենը եկամուտները կազմել են 21.4 մլրդ դրամ նախորդ ժամանակաշրջանի 17.7 մլրդ դրամի դիմաց՝ կամ ավել 20.9%-ով (3.7 մլրդ դրամով):

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության ծախսերը կազմել են 19.4 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 18.1 մլրդ դրամի դիմաց՝ կամ ավել 7.2%-ով (1.3 մլրդ դրամով):

Ընկերության 21.4 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 19.4 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում շահույթը կազմել է 0.4 մլրդ դրամ, իսկ զուտ վնասը 3.0 մլրդ դրամ:

Ընկերության հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառված ֆինանսական գործակիցների ամփոփ արդյունքները և պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները ներկայացված են Աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12. «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ֆինանսական ցուցանիշները

Ցուցանիշ	2016թ.	2017թ.	2018թ.	Թույլատրելի սահմանային նորմա
Ծախսերի վերականգնման գործակից	0.9	1.0	1.1	Առնվազն 1
Զուտ շահույթի մարժա (%)	(17.8)	(2.2)	(14.1)	Առնվազն 8%
Արագ իրացվելիության գործակից	141.9	3.7	0.6	Առնվազն 1
Դեբիտորական պարտքերի շրջանառություն (օր)	0.4	79.3	72.3	Առավելագույնը 60 օր
Պարտքի սպասարկման գործակից	0.0	0.0	0.1	Առավելագույնը 0.5
Վերաֆինանսավորման գործակից	0.0	1.2	5.3	Առավելագույնը 1
Z միավոր	0.3	1.1	(1.3)	Ապահով գոտի՝ Z>2.6, Գորշ գոտի՝ 1.1< Z<2.6, Ծանր գոտի Z<1.1

Ինչպես երևում է Աղյուսակ 4-ից հաշվետու ժամանակաշրջաններում սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերության ֆինանսական գորշ վիճակի հավանականության մասին (գործակիցը՝ Z=-1.3 գտնվում է սահմանված գորշ գոտում՝ 1.1<Z<2.6):

Հաշվետու ժամանակաշրջանում ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից չորսը չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային և վկայում են ֆինանսական ծանր վիճակի հավանականության մասին:

Հաշվետու ժամանակաշրջանում զուտ շահույթի մարժան 22.1 տոկոսային կետով պակաս է պրակտիկայում կիրառվող նվազագույն նորմայից:

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունը չունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ենթավարկային պայմանգրերով նախատեսված վարկային պարտավորություններ:

Ընկերությունը ներգրավված չի այնպիսի տեղական կամ միջազգային դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ընկերության ֆինանսական վիճակի վրա:

Հաշվի առնելով, որ հաշվետու ժամանակաշրջաններում սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերության ֆինանսական ծանր վիճակի բարձր հավանականության մասին, իսկ Հաշվետու ժամանակաշրջանում ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից չորսը չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային և վկայում են ֆինանսական ծանր վիճակի հավանականության մասին, հետևաբար այս երկու նախնական գնահատումների զուգակցման արդյունքում Ընկերության ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատվում է բարձր:

Հավելված N 3

ՀՀ 2020-2022 թվականների պետական բյուջեների հաշվին կատարվող ծախսերի ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակները՝ ըստ բյուջետային գլխադասային մարմինների և ծրագրերի

հազար դրամներով

Ծրագիր	Բյուջետային գլխադասային մարմինների, ծրագրերի անվանումները	2020 թվական	2021 թվական	2022 թվական
1	2	3	4	5
Ծրագիր	**ԸՆԴԱՄԵՆԸ**	**1,871,676,695.7**	**2,027,746,008.6**	**2,235,466,753.9**
	ՀՀ Նախագահի աշխատակազմ	**1,631,507.8**	**1,594,853.0**	**1,618,370.8**
1154	Հանրապետության նախագահի լիազորությունների իրականացման ապահովում	1,631,507.8	1,594,853.0	1,618,370.8
	ՀՀ Ազգային ժողով	**6,310,675.1**	**6,470,098.5**	**6,677,028.5**
1024	ՀՀ Ազգային ժողովի լիազորությունների իրականացման ապահովում	6,310,675.1	6,399,241.8	6,489,137.0
Նոր նախաձեռնություններ		-	70,856.7	187,891.5
	ՀՀ վարչապետի աշխատակազմ	**22,583,894.9**	**13,998,382.9**	**14,052,581.1**
1018	Պետական հատվածի արդիականացման ծրագիր	8,446,524.5	-	-
1033	Աջակցություն քաղաքական կուսակցություններին՝ հասարակական կազմակերպություններին և արհմիություններին	310,575.4	310,575.4	310,575.4
